ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ՊԱՐՍԿԵՐԵՆ ԿԱԼՎԱԾԱԳՐԵՐԸ

ПЕРСИДСКИЕ КУПЧИЕ МАТЕНАДАРАНА

قبالجات فارسی ماتنادران

I

01
Մ-33

«МАТЕНАДАРАН»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

ПЕРСИДСКИЕ ДОКУМЕНТЫ МАТЕНАДАРАНА

II

КУПЧИЕ

ВЫПУСК ПЕРВЫЙ

(XIV — XVI вв.)

Составил
А. Д. ПАПАЗЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1968

«Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն»
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՉՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

II

ԿԱԼՎԱԾԱԳՐԵՐ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

(ԺԴ—ԺՋ դդ.)

Կազմեց՝
Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

2450



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1968

«Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Կալվածագրեր» շարքի այս անդրանիկ հատորը պարունակում է XIV—XVI դդ. պարսկերեն, մասամբ նաև արաբերեն 27 արժեքավոր կալվածագրերի նմանահանություններն (ֆաքսիմիլե) ու վերծանված բնագրերը՝ հայերեն ու ռուսերեն թարգմանությամբ, տեքստաբանական ու պատմա-բանասիրական բնույթի ծանոթագրություններով և բնագրերում հանդիպող վարչա-տնտեսական, ազգարային տերմինների հարուստ բառարանով։

Հատորի առաջաբանում քննության են առնված XIV—XVII դդ. ֆեոդալական հողատիրության ու ագրարային հարաբերությունների պատմությանը վերաբերող բազմաթիվ հարցեր։

Ա Ր Ա Ջ Ա Բ Ա Ն

«Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի Ա և Բ պրակների հրատարակումից հետո, ներկա հատորով սկիզբ է դրվում նույն մատենաշարի «Կալվածագրեր» շարքի զուգահեռ հրատարակությանը։

Եռապատերազմյան 20 տարիների ընթացքում պարսկերեն պաշտոնական պատմական վավերագրերի հրատարակության բնագավառում լուրջ հաջողություններ են արձանագրվել։ «Հրովարտակների» Ա պրակի առաջաբանում համառոտակի անդրադարձել ենք մինչև 1956 թ. կատարված հրապարակումներին, որից հետո սակայն, վերջին 10 տարիների ընթացքում ևս թե՛ մեզ մոտ և թե՛ արտասահմանյան երկրներում լույս են տեսել, ինչպես առանձին վավերագրեր, այնպես նաև վավերագրերի մեծ ու փոքր ժողովածուներ։ Հրատարակված վավերագրերի մեջ, մեծ տեղ են գրավում XVI—XVII դարերի թագավորական հրովարտակներն ու հրամանագրերը (ֆերմաններ և հոքմեր)[1]։

---

1 Հայտնի են Սովետական Միության Անդրկովկասյան և միջինասիական հանրապետություններում և արտասահմանյան երկրներում կատարված հետևյալ հրապարակումները։

Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I — Հրովարտակներ, կազմեց Հ. Դ. Փափազյան, պրակ Բ (1600—1650 թթ.), Երևան, 1959 (այսուհետև՝ Հրովարտակներ I, II).

Źարսული ისტორიული საბუთები საქართველოს წიგნთსაცავებში, წიგნი I, ნაკეთი 1. თბილისი, 1961, ნაკვ. 2, 1962, ნაკვ. 3, 1965.

Материалы по истории Ура-Тюбе, Сборник актов XVIII — XIX вв. составление, перевод и предисловие *А. Мухтарова,* под редакцией А. А. Семенова и О. Д. Чехович, изд. Института истории АН Тадж. ССР, М., 1963.

Т. Мусәви. Орта әср Азәрбајчан тарихинә даир фарс дилиндә јазылмыш сәнәдләр, Бакы, 1965.

Jean Aubin, Note sur quelques documents. Aq-qoyunlu, „Archives Persanes commentées", I, Mélanges Louis Massignon I, Damas, 1956.

Անհամեմատ ավելի սակավ են հողի և անշարժ կալվածների առուծախին և այլ գործարքների վերաբերող շարիաթական-նոտարական արձանագրությունների ու կալվածագրերի հրապարակումները: Այս ուղղությամբ ուշագրավ աշխատանքներ են կատարված Ուզբեկստանի գիտությունների ակադեմիայում: 1954 թ. հրատարակած XVII—XIX դդ. վավերագրերի ստվար ժողովածուից հետո[2] О. Դ. Չեխովիչը ուսումնասիրության է ենթարկել ավելի վաղ շրջանի վավերագրերը: Նրա աշխատասիրությամբ լույս են տեսել XIV—XV դդ. արժեքավոր վավերագրեր (վակֆնամաներ)[3] և ապա «XIV դ. Բուխարայի վավերագրերը» խորագրով Շեյխ-Յահյա Բոխարզիի, Կազի Աբուլ-Համիդ Մուհամմադի և Խոջա-Մաջնունի հնագույն վակֆնամաների ժողովածուն[4]: О. Դ. Չեխովիչի հրապարակումները կատարված են գիտական բարձր մակարդակով և կարևոր ներդրում են շարիաթական-տնտեսական փաստաթղթերի գիտական հրատարակության գործում: Ուզբեկստանի գիտությունների ակադեմիայի պատմության և հնագիտության ինստիտուտում ագրարային հարաբերությունների պատմությամբ է զբաղվում Ռ. Գ. Մուկմինովան, որը հրատարակել է Շեյբանի խանի (1488—1510 թթ.) ընդարձակ «վակֆնամեն», այդ արժեքավոր բնագրին կցելով XVI դարի ագրարային հարաբերությունների պատմությանը նվիրված հետաքրքիր ուսումնասիրություն[5]:

Այս համեմատությամբ խիստ աննշան են արտասահմանում կատարված հրապարակումները: Եղած հրապարակումներից առավել ուշադրության արժանի է գերմանացի արևելագետ Հերբերտ Հորստի աշխատասիրությամբ լույս տեսած Շեյխ Սաֆի-էդ-դին Սարդաբիլիի որդի Խոջա-Ալիին Լանկ Թեմուրի կողմից 1403—1404 թթ. կատարած նվիրատվությանը վերաբերող վակֆնամաի մի ընդօրինակության լուսանկարային բնագիրը[6]:

Շարիաթական-նոտարական վավերագրերը ավելի քիչ են հետաքրքրել Անդրկովկասի, հատկապես Հայաստանի և Ադրբեջանի տեքստաբաններին: 1936 թ. Յու. Ն. Մառի խմբագրությամբ լույս տեսած Նախջևանի խանության XVII—XIX դդ. մի քանի մանր կալվածագրերից հետո[7], այլ քիչ թե շատ ուշադրության արժանի հրապարակումներ չեն եղել[8]:

Տասնյակ տարիներ XV—XIX դդ. հողատիրության և հողային հարաբերությունների պատմության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետները, պարսկական դիվանական նյութերից մասամբ են միայն օգտվել և կամ բավարարվել են միայն Սիմեոն Երևանցու կողմից մինչև 1780-ական թվականները Կաթողիկոսական դիվանում հավաքված կալվածագրերի մասին «Ջամբռում» տրված համառոտ բացատրություններով, որոնք թեև օգնում են որոշ գաղափար կազմելու և ծանոթանալու վանական հողատիրության պատմության հետ առնչվող որոշ հարցերի, սակայն չեն կարող ընդգրկել և բովանդակել վավերագրերում արտահայտված հողային հարաբերությունների էությունը բացահայտող այլ մանրամասնություններ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Սիմեոն Երևանցու օրոք Կաթողիկոսական դիվանում եղել են միայն էջմիածնին և Արարատյան երկրի սահմաններում գտնվող այլ վանքերին (Գեղարդ, Հավուց-Թառ, Խորվիրապ, Զաղավանք, Կեչառիս, Սևան, Հայրիվանք, Բջնի, Կոշավանք, Հովհաննավանք, Սաղմոսավանք, Մուղնի և այլն) վերաբերող վավերագրերը: XIX դարում և այնուհետև հետզհետե այս-

---

Herbert Busse, Untersuchungen zum islamischen Kanzleiwesen, Kairo, 1959.

Hans Robert Roemer. Le dernier firman de Rustam-Bahadur Aq-qoyunlu?, „Bulletin de l'Institut français d'Archéologie orientale", 1960, t. LIX, pp. 273—287.

2 Документы к истории аграрных отношений в Бухарском ханстве, вып. 1. Акты феодальной собственности на землю XVII — XIX вв. Подбор документов, перевод, введение и примечания *О. Д. Чехович*, под редакцией А. К. Арендса, изд. АН Уз. ССР, Ташкент, 1954.

3 *О. Д. Чехович*, Из источников по истории Самарканда XIX в. в сборнике «Из истории эпохи улугбека», Ташкент, 1965, стр. 300 — 361.

4 *О. Д. Чехович*, Бухарские документы XIV века, Ташкент, 1965.

5 *Р. Г. Мукминова*, К истории аграрных отношений в Узбекистане, XVI в., по материалам «Вакф-наме», Ташкент, 1966.

6 *Herbert Horst*, Timūr und Ḫōǧā 'Alī, Ein Beitrag zur Geschichte der Ṣafawiden, Akademie der Wissenschaften und der Literatur, Abhandlungen der Geistes-und Sozialwissenschaftlichen Klasse, 1958, № 2, Wiesbaden.

7 Передняя Азия в документах, Серия памяти проф. Ю. Н. Марра, кн. 1, Нахичеванские рукописные документы XVII—XIX вв., перевод и комментарий К. Н. Смирнова и Дж. Гайбова, под ред. Ю. Н. Марра. Изд. Груз. ФАН, Тбилиси, 1936.

8 Իր մենագրական աշխատության հավելվածում Ի. Պ. Պետրուշևսկին Մատենադարանի XVII—XVIII դդ. պարսկ. կալվածագրերից երկու փոքրիկ հատվածներ է հրատարակել. տե՛ս նրա Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI — начале XIX вв., Л., 1949, Приложение, док. 8 и 10.

տեղ են կենտրոնացվել Արևելյան Հայաստանի և Ատրպատականի վանքերի հին ու նոր բազմաթիվ արժեքավոր վավերագրեր, ինչպես նաև ոչ մեծ թվով վավերագրեր Արևմտյան Հայաստանից։ Հատկապես մեծ թիվ են կազմում Տաթևի և Գանձասարի, ինչպես նաև Մազարդավանքի, Թումա Առաքյալի վանքի (Ագուլիս), Թադեի վանքի (Մակու) վավերագրերը, որոնց մի զգալի մասը վերաբերում է XV—XVI դարերին։

«Հրովարտակներ» շարքին զուգահեռ առանձին շարքով նույն ժամանակաշրջանի հողային և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ շարիաթական-նոտարական արձանագրությունների հրատարակությունը, կգա ամբողջացնելու աղբյուրագիտական-բնագրագիտական այն աշխատանքները, որ ձեռնարկել է Մատենադարանը Կաթողիկոսական դիվանի արաբատառ (պարսկերեն, արաբերեն և թուրքերեն) ֆոնդի ուսումնասիրության բնագավառում։

Այս ֆոնդի ընդհանուր աղբյուրագիտական գնահատականը և վավերագրերի ըստ ձևի և բովանդակության բնութագրումը տրված է մատենաշարիս անդրանիկ գրքի՝ «Հրովարտակների» Ա պրակի առաջաբանում[9], ինչպես նաև 1960 թ. Մոսկվայում գումարված արևելագետների միջազգային 25-րդ կոնգրեսին ներկայացված զեկուցման մեջ[10]։

Կալվածագրերի այս անդրանիկ պրակում ընդգրկված են Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի առանձին թղթապանակներում պահվող XIV—XVI դդ. 27 վավերագրեր։ Որքանով որ սույն պրակում հրատարակվող բոլոր վավերագրերը վերաբերում են տարբեր կալվածների առուծախին, օտարմանն ու նվիրատվությանը և ընդհանրապես հողի սեփականության և տիրության հարցերին, ընդհանուր անունով մենք դրանք անվանում ենք «Կալվածագրեր»։ Սակայն, ինչպես հրատարակվող, այնպես նաև հետագա

9 Հրովարտակներ I, էջ 7—12։

10 *А. Д. Папазян*, Персидские, арабские и турецкие официальные документы Матенадарана XIV—XIX веков и их значение для изучения социально-экономической жизни стран Ближнего Востока, изд. вост. лит., М., 1960.

H. Papazian, 14-th—19-th century persian, arabian and turkish official documents in the Matenadaran and their significance for the studies of the social and economic life of the Near Eastern countries, Oriental Literature Publishing House, Moscow, 1960.

պրակներում հրատարակության պատրաստվող մյուս կալվածագրերը իրենց բնույթով և շարադրման եղանակով բազմազան են։

Շարիաթական-նոտարական գրասենյակներում կամ «մահզարներում» կազմվող արձանագրությունները, կատարվող գործարքի բնույթին համապատասխան, տարբեր անվանումներ ունեին։ Սովորաբար բոլոր տեսակի օտարումներին վերաբերող արձանագրությունները կոչվում էին «ղաբալե» (قبالە), որ նշանակում է որևէ գործի մասին կազմված համաձայնագիր։ Սակայն միջնադարում այսպես էին կոչվում հատկապես կալվածների առուծախին և սեփականությանը վերաբերող փաստաթղթերը։

Անկախ այն բանից, թե ինչ առիթով էր գրված վավերագիրը, եթե այն հաստատում էր տվյալ կալվածի որևէ անհատի կամ կրոնական ու այլ հաստատության պատկանելը, համարվում էր «ղաբալե»։ Կալվածների, առանց որևէ նախապայմանի, կանխիկ դրամով վաճառքներին վերաբերող արձանագրությունները կոչվում էին «ղաբալե-յե բեյ'-ու-շիրա— بيع وشراء قبالة», («առ ուծախի ղաբալե»)։ Այդպիսի ղաբալեներ են՝ Քոչիսի շրջանի Քարահունչ և Խազազ գյուղերի 1436 և 1573—1574 թթ. կալվածագրերը (վավ. 6 և 20), Այդին-Դարվիշ գյուղի 1503 թ. (վավ. 10), Հովհաննավանք գյուղի վեց դանգ մուլքի և Արտեկին ագարակի 1574 թ. (վավ. 21), Դիբակի գյուղի 6 դանգ մուլքի 1575 թ. (վավ. 23), Սաղմոսավանք գյուղի 6 դանգ մուլքի 1581 թ. (վավ. 25), Օշականի ամբողջ մուլքի 1489 և 3 դանգի 1592 թ. (վավ. 9 և 27), Մեղրիի մուլքի նույն գյուղի ռայաթների կողմից ետ գնելու վերաբերյալ 1576 թ. և մերձակա Սևագան գյուղից գնված Քիլվաքաշի արոտավայրի 1587 թ. (վավ. 24 և 26), ինչպես նաև Ջաքարիայի որդի Շահենի Գառնիում գնած այգու 1525 թ. Գողթնի Բերդակ գյուղի 2 հողակտորների վաճառքին վերաբերող 1575 թ. կալվածագրերը (վավ. 15 և 22)։

Որոշ ժամանակից հետո կողմերին տրվող բեկանման իրավունքի կամ այլ վերապահումներով պայմանական վաճառքի վերաբերյալ արձանագրությունները, շարիաթական տերմինով կոչվում էին «Ղաբալե-յե բեյ'-ու-շարթ— بيع وشرط قبالة» («վաճառքի և պայմանի ղաբալե»)։ Այս կարգի ղաբալեներ ավելի շատ հանդիպում են XVII դարի վավերագրերի մեջ[11]։

11 Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1ա, վավ. 61, 66, 67, 76, թղթ. 1գ. վավ. 239, 286, 290։

Կալվածների վաճառքին վերաբերող շարիաթական-նոտարական արձանագրությունները իրենց շարադրման եղանակով մեծ մասամբ նման են իրար։ Սակայն, կան ինչպես ընդարձակ, այնպես նաև համառոտ շարադրանքով զաբալեններ։ XIV—XVI դդ. որոշ արձանագրություններ խիստ մանրամասն են և բովանդակում են օտարման գործողությանը, օտարվող օբյեկտին, վաճառողին և գնորդին վերաբերող մանրամասնություններ (վավ. 1, 4, 5, 9, 24, 26)։ Նույն դարերում հանդիպում են նաև ավելի համառոտ շարադրանքով առուծախի զաբալեններ, որոնք ավելի շատ վերաբերում են մուլքային գյուղերի առանձին դանգերի և մեծ ու փոքր հողակտորների ու այգիների վաճառքին (վավ. 6, 10, 15, 17, 20, 21, 22, 23, 25, 27)։

Պետք է նշել սակայն, որ XVII—XVIII դարերում գյուղերի և այլ կալվածների առուծախին վերաբերող արձանագրությունները ավելի պարզ տեսք ունեն և շարադրված են առանց կրոնական նախաբանի ու վերջաբանի, նշելով միայն վաճառողի և գնողի անունները, վաճառվող օբյեկտը և գինը։

Այսպես, եթե Օշականի ամբողջ մուլքի «բեյ՛-ու-շիրաի» 1489 թ. վերոհիշյալ զաբալեն ամենայն մանրամասնությամբ արձանագրված է 256×20 սմ թղթի վրա, ապա նույն գյուղի մեկ դանգ մուլքի վաճառքի «բեյ՛-ու-շարթի» 1674 թ. զաբալեն հետևյալ համառոտ բովանդակությունն ունի.

«Վաճառող — Թահմազկուլի Սա՛ղուի որդի Սաֆիկուլի անվանյալ։

Գնող — իր նմանների մեջ լավագույնը, քրիստոնյաների առաջնորդ, էջմիածնի Ոնուփրիոս կաթողիկոս (!)։

Վաճառվում է — Կարբիի նահիայի Օշական գյուղի ամբողջ 6 դանգի կես դանգը։ Հիշյալ մուլքերի 5 դանգը պատկանում է գնողին։

Գինը — Թավրիզի 6 թուման, որի կեսը 3 թուման է լինում։ Այս գումարը լրիվ հասավ վաճառողին»։

Վերջում երկու տողով նշված է կողմերի պայմանավորվածության մասին, որ եթե մինչև 2 տարի վաճառողը հիշյալ գումարը վերադարձնի, իրավունք ունի վաճառքը չեղյալ հայտարարել և իր մուլքը ետ առանալ[12]։

12 Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 160։

Վակֆային նվիրատվություններին վերաբերող արձանագրությունները կամ ինչպես ընդունված էր ասել «վակֆնամեները» (وقفنامه) նույնպես ունեն ընդհանուր նմանություն, սակայն, նրանք ևս սովորաբար շատ ընդարձակ են շարադրված։ Իսկ հաճախ պահոում են նաև համառոտ շարադրությամբ վակֆնամեներ։ Վակֆային վավերագրերը երբեմն արաբերեն անվանվում են «Վակֆիյյե» (وقفيه) կամ «չե» (چه) մասնիկի հավելումով՝ «վակֆնամչե» (وقفنامچه)։ «Չե» մասնիկը թեև ընդհանրապես փոքրացուցիչ իմաստ ունի, սակայն այս դեպքում դա սոսկ լեզվական երևույթ է, քանի որ այդպես են անվանվում և՛ ընդարձակ և՛ համառոտ վակֆային արձանագրությունները։

Այն վավերագրերը, որոնց մեջ սոսկ արձանագրվում էին որևէ մեկի կողմից իր ժառանգական սեփականությունները հանդիսացող կամ անցյալում դրամով գնված կալվածների նվիրումը կամ «վակֆ արվելը» որևէ կրոնական, կրթական, բարեգործական կամ այլ հաստատության, անվանվում էին միայն «վակֆնամե»։ Այդպիսի վավերագրեր են Ախթամարի Ջաքարիա կաթողիկոսի կողմից Լիմի ս. Գևորգա վանքին վակֆ արված վարելահողերի 1305 թ. և Հավուց-Թառի Ջաքարիա ու Համազասպ վարդապետների կողմից Ամենափրկչի վանքին վակֆ տրված գյուղերի ու ագարակների 1526 թ. կալվածագրերը (վավ. 1 և 16)։

Վակֆի շարիաթական օրենքներով միայն այն կալվածները կարող էին նվիրաբերվել կամ որևէ հաստատության հավիտենական սեփականությունները դարձվել, որոնց սեփականությունը անվիճելի էր։ Այսինքն՝ կամ ժառանգված էին, կամ գնված։ Ուստի, հաճախ մի վավերագրի մեջ նախ արձանագրվում էր մեկ կամ ավելի գյուղերի և այլ կալվածների գնումը, և ապա դրանց վակֆ արվելը այս կամ այն կրոնական հաստատությանը։

Այս օրենքը ստիպել է նույնիսկ աշխարհակալ բռնակալների, մզկիթներին վակֆ տրվող կալվածների համար նախապես կազմել տալ գնման զաբալեններ և ապա նույն վավերագրում ձևակերպել դրանց նվիրումը որևէ մզկիթի կամ սրբավայրի։ Այսպիսի վավերագրերը պարունակում էին և՛ «զաբալե» և՛ «վակֆնամե», ուստի անվանվում էին «զաբալե-վակֆնամե» (قباله ــ وقفنامه)։ Հայտնի է, օրինակ, Լանկ-Թեմուրի կողմից Արդաբիլի Շեյխ-Սաֆի-էդ-դինի որդի Խոջա-Ալիին նվիրված կալվածների 1403—1404 թթ. «զա-

բալե-վակֆնամեի» մի բնագիրը, որն, ինչպես վերը նշեցինք, 1958 թ. հրատարակել է գերմանացի արևելագետ Հ. Հորստը[13]։

«Ղաբալե-վակֆնամեի» բնորոշ օրինակներից է Սյունյաց Բևշքեն Օրբելյանի որդի Ամիր-Ռուստամի կողմից էջմիածնի կաթողիկոս Գրիգոր Մակվեցուն վաճառված և վերջինիս կողմից էջմիածնի վանքին վակֆ արված Վաղարշապատ, Աշտարակ, Բաթուինջ, Նորագավիթ, Աղունատուն, Թեղենիս-Քիրաջլու և Մուղնի գյուղերի 1431 թ. ընդարձակ շարիաթական արձանագրությունը (վավ. 5)։ Ինչպես առանձին հոդվածներով, այնպես նաև նույն վավերագրի ծանոթագրության մեջ անդրադարձել ենք այդ վակֆերի պատմությանը և ցույց տվել, որ այդ վավերագրում ձևակերպված «վաճառքը» ևս կատարված է վակֆերի սեփականությունը «օրինականացնելու» և ամրապնդելու համար[14]։ Թե դա որքան կարևոր հանգամանք էր, այդ երևում է թեկուզ այն փաստից, որ 1431 թ. կազմված այդ արձանագրությունը մինչև XVIII դարի վերջերը եղել է էջմիածնի կալվածատիրական իրավունքները հաստատող ամենազորեղ փաստաթղթերից մեկը, որով Սիմեոն Երևանցին կարողացել է Երևանի խանից ետ ստանալ ժամանակի ընթացքում վանքի ձեռքից դուրս եկած մի քանի գյուղեր[15]։

Նույնպիսի ղաբալե-վակֆնամե է նաև Տաթևի առաջնորդ Շմավոն վարդապետ Անգեղակոթցու նույն Օրբելյան Ամիր-Ռուստամից գնած Սվարի, Տանձատափ, Տաշու, Ագանց և Կոծմակոթ գյուղերի մուլքերի գնման և Տաթևի վանքին վակֆ տրվելու մասին կազմված 1450 թ. արձանագրությունը (վավ 7)։ Թերևս նույնը կարելի է ասել նաև Վաղարշապատ (Ուչքիլիսա) գյուղի 1430 թ. հնագույն կալվածագրի մասին (վավ. 4)։ Այն տարբերությամբ սակայն, որ այստեղ գյուղի մուլքի առանձին դանգերի գնումը կատարվել է ոչ թե վակֆից անմիջապես առաջ, այլ արձանագրության մեջ նախապես մեջ է բերված էջմիածնի վանահայր Սմբատի որդի Գրիգորի կողմից 1429—1430 թթ. տարբեր տերերից 3 նվագով կատարված գնումների առանձին ղաբալենների բնագրերի համառոտ շարադրանքը և ապա շարունակության մեջ արձանագրված է, որ ամբողջ գյուղը վակֆ է տրվում էջմիածնի վանքին։

13 H. Horst. Նշվ. աշխատության հավելվածային բնագիրը։

14 Հ. Փափազյան. Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից. ՀՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 8, էջ 92—93։

15 «Ջամբռ», էջ 117, 119, 129։

Ղաբալե-վակֆնամեի մի այլ տարբերակ է 1544 թ. Արդաբիլում գնված և Շեյխ-Սաֆիի մզկիթին վակֆ արված վարելահողերի կալվածագիրը (վավ. 17), որտեղ գնման և վակֆի արձանագրությունները կատարված են նույն թղթի տարբեր էջերի վրա, մեկը մյուսից մեկ ամիս հետո։

Կան նաև եկեղեցական կալվածների վակֆային սեփականություններ լինելը հաստատող և առանձին գյուղերի կամ նրանց մի մասի այս կամ այն կալվածատիրոջը պատկանելու մասին կազմված այլ արձանագրություններ, որոնք գրված և հրատարակված են հետագայում ծագած վեճերի և տարաձայնությունների կապակցությամբ կամ տարբեր առիթներով կատարվող աուգումների ժամանակ։

Դրանցից մի քանիսը, որ շարադրանքի հատուկ ձև ունեն և հավանաբար գրի են առնված Նախջևանի կայազորային հոգևոր դատավորների աուդյանում (دار القضاء معسكر ظفر اثر), արձանագրության սկզբում տրված բացատրության համաձայն, կազմված են, նախապես կատարված աուգումների, «թագավորական հրովարտակների, նախկին և ներկա կազիների (դատավորներ) ձեռքով գրված ու կնքված առանձին արժանահավատ, ճշմարիտ և վավերական փաստաթղթերի ու հաստատուն արձանագրությունների» և տվյալ վայրի «բարձրաստիճան, արդարամիտ մարդկանց վկայության» հիման վրա (վավ. 3, 11, 13, 18)։ Նման արձանագրություններ կազմվում էին նաև տեղական Շար'ի աուդյաններում, որոնք հաստատվում էին Շար'ի սպասավորների (խադեմ — خادم) և կազիի կնիքներով (վավ. 14)։ Այս վավերագրերը, երբեմն նաև սովորական վակֆնամեներն ու կալվածագրերը (վավ. 1, 9) ընդհանրապես դիտվել են որպես «վճռագիր», որևէ մեկի իրավունքը ապացուցող, վերահաստատող իրավական փաստաթուղթ, որ շարիաթական տերմինով կոչվում էր «հոջջաթ — حجت» («ապացույց»)։ Հոջջաթներով, սակայն, ինչպես ասվեց, ապացուցվում կամ հաստատվում էին կալվածների սեփականությանը կամ տիրությանը վերաբերող տարբեր հարցեր, ինչպես, օրինակ, 1508 թ. Նախջևանում կազմված շարիաթական արձանագրությունը (վավ. 14) հաստատում է, որ Ղափանաթի Ուտուբ և Քեղի և Թուման-ե Նախջևանի Սիսաջանի մահալներում գտնվող Տաթև, Սվարանց, Տաշու, Ագանց, Տանձատափ, Խոտանան, Հալիձոր, Շնհեր, Խոտ, Կից, Բորդի, Դաստակերտ և Գյոլյազի, Բնունիս-Թաս և Ղարաքիլիսա գյուղերը և մի

այգի, նախապես պատկանել են Խաչատուրի որդի Շմավոն վարդապետ Անգեղակոթցուն և վերջինիս կողմից վակֆ են արվել Տաթևի վանքին: Արձանագրության սկզբում հատկապես նշված է, որ այն կազմված է «վեճերին վերջ տալու համար» (انقطاع القيل والقال): Կամ Նախջևանի կայազորային դատավորների ատյանում 1504 թ. կազմված արձանագրության մեջ հաստատվում են Խոջա-Ֆաթհի-բեկ Թուսիի կալվածատիրական իրավունքները Ազադ-Ջիրանի նահիայի (Գողթն) Դռնիս և Տանակերտ գյուղերի և Սալ, Բերդակ և այլ ագարակների առանձին մասերի նկատմամբ (վավ. 11): Իսկ XVI դարի 50-ական թվականներին վերաբերող 2 արձանագրություններում մանրամասն նկարագրված և հաստատված են Տաթևի վանքապատկան Խոտ, Շնհեր, Հալիձոր և այլ գյուղերի ընդհանուր սահմանները (վավ. 3 և 18):

Թեև այս վերջին վավերագրերը ևս «վճռագրի» տեսք ունեն և երկուսն էլ կայազորային դատավորների ատյանի արձանագրություններ են, սակայն բովանդակությամբ սահմաններ ճշգրտող գրություններ լինելու համար, անվանվում են նաև «սարհադնամե— سرحدنامه» կամ «սունուրնամե— سنورنامه» («սահմանագիր»:)

Առանձին գյուղերի և մեծ ու փոքր հողային տիրույթների սահմանների ճշգրտման տարբեր տիպի վավերագրեր են հասել մեզ, որոնցից շատերը վիճող կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ կատարված ստուգումների մասին կազմված արձանագրություններ են, հաստատված տեղի բնակչության երևելիների և վրատահելի անձանց կողմից: Գյուղի սահմանների կամ «քյոֆշանի» (كفشن) մանրամասն նկարագիրն է պարունակում նաև 1506 թ. գրի առնված Դարաշամբի ազատ գյուղական համայնքներից մեկի՝ Դիբքյանդի մուլքի նույն գյուղի համայնքի սեփականությունը լինելը հաստատող ընդարձակ և որոշ առումով ինքնատիպ արձանագրությունը (վավ. 13):

Կալվածքային սեփականատիրական կամ ժառանգական վեճերը երբեմն տասնյակ տարիներ շարունակվում էին: Հայտնի է, օրինակ, որ Դարաշամբի Բաշքյանդ, Օրթաքյանդ և Դիբքյանդ գյուղերի ազատ համայնքների և Թավրիզի Շեյխիյյե մզկիթի միջև այդ գյուղերի մուլքերի սեփականության շուրջ բուռն պայքար է ծավալվել, որի մասին կաթողիկոսական դիվանում պահվող վավերագրերը վերաբերում են 1650—1720 թվականներին: Հաճախակի կա-

տարվող բռնագրավումների դեմ գրավոր բողոքները ատորին ատյաններից հասնում էին մինչև շահական արքունիքը և բարձրագույն դիվանում քննվելուց հետո, լուծվում՝ մեկ կամ մյուս կողմի օգտին: Հաճախ վեճերը հարթվում էին փոխադարձ համաձայնությամբ: Այդ դեպքում կազմվում էին հատուկ արձանագրություններ, որոնք կոչվում էին «մուսալիհենամե — مصالحه نامه» («հաշտության գիր»):

Սույն պրակում հրատարակվող 8-րդ վավերագիրը այդպիսի մի «մուսալիհենամե» է, ըստ որի Աղ-Կոյունլու Յաղուբ փաթիշահի օրոք, հայ ֆեոդալների կալվածների բռնագրավումների ժամանակ, Բեյթ-ուլ-մալի սեփականություններ հայտարարված Ջաքարիա վարդապետ Հավուց-Թառեցու կալվածները 1489 թ. վերադարձվում են տիրոջը, որի համար վերջինս, որպես «հաշտության գին» կամ «մուսալիհե» (مصالحه) Բեյթ-ուլ-մալի վերակացու Ամիր-Ջյամալէդ-դին Աբդին բեկին վճարում է 5000 դինար:

Վկայակոչված վավերագրերը, ինչպես ասվեց, բոլորն էլ շարիաթական արձանագրություններ են: Անհրաժեշտ է նշել սակայն, որ դրանցով չեն սպառվում շարիաթական ատյաններում կազմվող արձանագրությունների բոլոր տարբերակները: Մենք այստեղ խոսեցինք միայն այնպիսի արձանագրությունների մասին, որոնցից լույս են տեսնում սույն պրակում: Հետագա դարերին վերաբերող վավերագրերի մեջ կան ինչպես հողի օտարման տարբեր ձևերի և այլ գործարքների, այնպես նաև քաղաքացիների սոցիալ-տնտեսական այլ հարցերի վերաբերյալ կազմված բազմազան արձանագրություններ, որոնք առանձին անվանումներ ունեն, ինչպես, օրինակ՝ հողի կամ այլ ստացվածքների վարձակալման կամ «իջարե-յե շար'իյյե»-ին (اجارهٔ شرعیه) վերաբերող արձանագրությունները կոչվում էին «իջարենամե» (اجارهنامه), գրավինը՝ «մուրահինենամե» (مرهناهنامه), տարբեր տիպի փոխանակումներինը՝ «մուավիզենամե» (معاوضهنامه), նվիրման կամ մեկի օգտին սեփականատիրական իրավունքներից հրաժարվելու մասին կազմված արձանագրությունները՝ «մուահիբենամե» (موهبهنامه) և այլն:

Սակայն ներկա հատորում կան նաև այլ վավերագրեր, որոնք շարիաթական-նոտարական արձանագրություններ չեն, այլ տրված են նահանգային կամ երկրամասային ֆինանսական բարձրաստիճան և կրոսեր պաշտոնյաների կողմից՝ ի հաստատումն ինչպես առանձին կալվածատերերի, այնպես նաև Տաթևի վանքի կալվածքային-սեփականատիրական իրավունքների:

Դրանցից առաջինը վերաբերում է 1504 թվականին, Շահ Իսմայիլ Ա-ի թագավորության առաջին տարիներին, երբ վերահաշվառման էին ենթարկվում նորաստեղծ կայսրության բոլոր նահանգների գյուղերն ու այլ հողային միրուլքները։ Այդ գրությամբ «Ազերբայջանի գործերի վերակացուն» կամ «վեզիրը» (որի անունը վավերագրում չի նշված, իսկ կնիքը անընթեռնելի է), հաստատում է, որ հիշյալ թվականին Բարձրագույն Դիվանի հանձնարարությամբ նա ստուգել է Ազերբայջանի բոլոր կալվածները և այդ ընթացքում պարզել, որ Մակվի վիլայեթում գտնվող որոշակի մուլքեր պատկանում են Մանվելի որդի Թադեոսին և նրա որդի Միրիջանին (վավ. 12)։

Կաթողիկոսական դիվանի մի քանի վավերագրերի, այդ թվում նաև սույն պրակի 13, 18 և 19-րդ վավերագրերի վրա 1557—1558 թթ. կատարված և Ազերբայջանի վեզիր Միրզա-Աթաուլլայի կնիքով հաստատված մակագրություններից պարզվում է, որ կալվածների նույնպիսի ընդհանուր ստուգումներ կատարվել են նաև թուրք-պարսկական երկարատև պատերազմներից հետո, 1555 թ. կնքված հաշտությանը հաջորդող տարիներին։

Տաթևի վանքապատկան գյուղերի վակֆային սեփականությունը և ընդհանուր սահմանները հաստատող 1554 թ. արձանագրության վրա (վավ. 18), վեզիր Միրզա-Աթաուլլայի կողմից 1557 թ. օգոստոս ամսին կատարված մակագրության մեջ ասված է, որ հիջրեթի 964 թ. ռամազան ամսին (1557 թ. հունիս-հուլիս) թագավորական հրովարտակով հրահանգված է եղել ստուգել բոլոր «խալիսե մուլքերը սունքին և դունքին և Բեյթ-ուլ-մալը»։ Այդ ստուգումների ժամանակ պարզվել է, որ հիշյալ արձանագրության մեջ թվարկված «բոլոր վակֆային մուլքերը» հնուց ի վեր վակֆ են արված եղել Տաթևի վանքին։

Նույն հրահանգի հիման վրա կատարված ստուգումների ժամանակ (بازدید وپرسش املاك ورقبات) Միրզա Աթաուլլան նույնպիսի մակագրություն է թողել նաև Դարաշամբի Դիբջյանդ գյուղի մուլքի նույն գյուղի համայնքի սեփականությունը լինելը հաստատող 1506 թ. արձանագրության վրա (վավ. 13)։

Սակայն առանձին դեպքերում, երբ կարիք է եղել ավելի մանրամասն բացատրել կատարված ստուգման արդյունքները, վկայակոչելով վերոհիշյալ թագավորական հրովարտակը, Միրզա-Աթաուլլան տվել է նաև առանձին վճռագրեր։ Այսպես, օրինակ, 1558 թ. մայիս-հունիս ամիսներին հրապարակված վճռագրով նա հաստատում է, որ ստուգելով Տաթևի վանքապատկան 15 գյուղերը, պարզել է, որ միայն Բորդի գյուղի ամբողջ եկամտից 1250 դինար պետք է վճարվի պետության, իսկ մնացյալ գյուղերի ամբողջ հասույթը, որպես վակֆային կալվածներից ստացվող եկամուտ, պատկանում է հիշյալ վանքին (վավ. 19)։

Բնագրերով կամ վաղ ընդօրինակություններով մեզ հասած պարսկերեն դիվանական վավերագրերը եզակի ձեռագրական միավորներ են, որոնց ժամանակագրական սահմանը XIV դարից այն կողմը չի անցնում[16]։ XIV—XVI դդ. թագավորական հրովարտակների և հատկապես ֆեոդալական հողատիրության պատմության համար առավել կարևոր սկզբնաղբյուրներ հանդիսացող շարիաթական արձանագրությունների սահմանափակ քանակը, թելադրել է մեզ սույն պրակում ընդգրկելու Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի թղթապանակներում առկա XIV—XVI դդ. բոլոր կալվածագրերը։ Հաշվի ենք առել, որ դրանցից յուրաքանչյուրը բնագրագիտական հատուկ արժեք է ներկայացնում և ուշագրավ է ոչ միայն որպես պատմական սկզբնաղբյուր, այլ նաև շատ բանով կարող է նպաստել ներկայումս արևելագետների ուշադրության առարկա հանդիսացող պարսկական դիվանագրության ուսումնասիրությանը։

Հնագրական առանձնահատկությունների և բնագրային հավաստիության տեսակետից, հրատարակվող կալվածագրերը կարելի է բաժանել երեք խմբի. ա) բնագրերով մեզ հասած վավերագրեր, բ) բնագրին ժամանակակից կամ քիչ ավելի ուշ հանված շարիաթական-վավերական պատճեններ, գ) XIX դարի ընդօրինակություններ։

Պրակում տեղ գտած 27 վավերագրերից 18-ը բնագրեր են, որոնցից մեկը XIV դարից է (վավ. 2), երեքը՝ XV դ. (վավ. 4, 7, 9), իսկ 14 վավերագրեր՝ XVI դարից (վավ. 10, 11, 12, 13, 15, 17, 18, 21, 22, 23, 24, 25, 26)։ Կան չորս շարիաթական պատճեններ, հանված XVI—XVII դդ. մեկը Լիմի ս. Գևորգա վանքի հողերի 1305 թ. կալվածագիրն է (վավ. 1), երկուսը՝ 1508 և 1558 թթ. Տաթևի, վերը հիշատակված արձանագրությունների պատճեններն են (վավ. 14, 19) և մեկը Օշականի երեք դանգի 1592 թ. կալվածա-

16 Տե՛ս այս մասին Հ. Փափազյան, Երկու նորահայտ իլխանական յուրլիղներ, «Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 379—387։

2450

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

գիրը (վավ. 27)։ XIX դարի ընդօրինակություններով մեզ հասած կալվածագրերի մեջ երեք վավերագիր վերաբերում են XV դարին, որոնցից մեկը Գրիգոր Մակվեցու հայտնի վակֆնամեն է (վավ. 5), երկրորդը Զաքարիա Հավուց-Թառեցու կալվածների Բեյթ-ուլ-մալից ետ ստանալու մասին կազմված՝ մուսալիհնամեն (վավ. 8) և երրորդը Հովհաննեսի որդի Ավանի կողմից Քոչիզի Քարահունջ գյուղի գնման ղաբալեն (վավ. 6)։ Նույնպիսի ընդօրինակություններ են նաև Զաքարիա և Համազասպ վարպետների կողմից Հավուց-Թառի ս. Ամենափրկչի վանքին վակֆ արված գյուղերի և ագարակների 1526 թ. վակֆնամեն (վավ. 16) և Քոչիզի Խազազ գյուղի 1573—1574 թթ. ղաբալեն (վավ. 20)։ Այս վերջին հինգ անվավեր պատճեններից երեքը ընդօրինակված են էջմիածնին և Արարատյան երկրի այլ վանքերին վերաբերող վավերագրերի մի սուվար մատյանի մեջ (վավ. 5, 8, 16)։ Ընդօրինակությունները կատարված են գրագետ անձնավորության կողմից, չափազանց ուշադիր, նշելով արտաքին բոլոր մանրամասնությունները և կնիքների տեղերը։ Առանձին անընթեռնելի տեղեր նույնությամբ պատճենահանված են։ Այս տեսակետից էլ սրանք ավելի հավաստի են և բնագրային առումով ավելի արժանահավատ, իսկ վերջին երկուսը (վավ. 6 և 20) XIX դարի վերջերի պատահական, ոչ գրագետ ընդօրինակություններ են և ունեն բնագրային թերություններ[17]։

Այսպիսով, հրատարակվող վավերագրերից մեկը (վավ. 2) XIV դ. գրություն է, 3-ը՝ (վավ. 4, 7, 9) XV դ., 15-ը՝ (վավ. 1, 3, 10, 11, 12, 13, 15, 17, 18, 21, 22, 23, 24, 25, 26) XVI դ., 3-ը՝ (վավ. 14, 19, 27) XVII դ. և 5-ը՝ (վավ. 5, 6, 8, 16, 20) XIX դ.։

Պարսկական և ընդհանրապես իսլամական հնագրության և դիվանագրության համար առավել հետաքրքրություն են ներկայացնում բնագրով պահպանված, ինչպես նաև բնագրին ժամանակակից շարթաթական, նոտարական պատճեններով մեզ հասած վավերագրերը։ Այս առումով բնագրագիտական բացառիկ արժեք ունեն XIV—XV դդ. կալվածագրերը (վավ. 2, 4, 7, 9)։ Առանձնապես ուշադրության արժանի է Վաղարշապատ (Ուչքիլիսա) գյուղի 1430 թ. հնագույն կալվածագիրը (վավ. 4), որի մեջ վերաշարադրված է նույն գյուղի մուլքի առանձին մասերի 1428 և 1429 թթ. երեք այլ կալվածագրերի բովանդակությունը։ Թեև այս վավերագիրը շարադրված է

17 Վավերագրերի բնագրային առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս յուրաքանչյուր վավերագրի ծանոթագրության մեջ։

հիմնականում հարազատ մնալով կալվածագրերի, այս դեպքում ղաբալե-վակֆնամեների դասական ձևին, սակայն այն փաստը, որ կալվածագիրը կազմված է Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսի հատուկ պահանջով, որպեսզի մի վավերագրի մեջ ամփոփվեն նույն գյուղի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, վավերագրին ուրույն բովանդակություն և տեսք է տվել և թելադրել տեքստը կազմողին որոշ դեպքերում կատարելու ինքնուրույն ձևակերպումներ։ Պահպանելով հանդերձ շարիաթական արձանագրություններին հատուկ ընդհանուր ձևը Ջաման-էդ-դին Անսարին այս ղաբալե-վակֆնամեն գրի առնելիս տվել է հետաքրքիր մանրամասնություններ, և պատմության սեփականությունը դարձրել երեք խիստ արժեքավոր կալվածագրեր, որոնք ժառանգական ու գանձագին հողատիրության պատմության համար կարևոր տվյալներ են պարունակում։

Այս կալվածագրից երկու տարի հետո է գրի առնված Գրիգոր Մակվեցու հայտնի ղաբալե-վակֆնամեն (վավ. 5), որի բնագիրը մեզ է հասել XIX դարի ընդօրինակությամբ. վավերագրի վրայի բոլոր մակագրություններն ու հաստատման գրությունները մանրամասն պատճենահանված են և կնիքների տեղերը նշված։ Կալվածագիրը կազմել է նույն Ջաման-էդ-դին Անսարին։ Ինչպես ցույց է տալիս բնագրի և հարակից մակագրությունների համեմատությունը նախորդ (վավ. 4) կալվածագրի հետ, դրանք իրենց արտաքին ձևով հար և նման են իրար։

Իր շարադրման եղանակով քիչ տարբեր լինելով հանդերձ, ծագումով այս նույն խմբին է պատկանում նաև բնագրով մեզ հասած Տաթևի մուլքերի 1450 թ. ամենահին կալվածագիրը (վավ. 7), որը նույնպես գրված է Ջաման-էդ-դին Անսարիի ձեռքով։

Ջուտ արաբերենով շարադրված 1489 թ. Զաքարիա Հավուց-Թառեցու կալվածների մուսալիհնամեն (վավ. 8) և Օշականի ամբողջ մուլքի ղաբալեն (վավ. 9), որոնցից վերջինը պահպանվել է անթերի բնագրով, իսկ առաջինը XIX դարի ընդօրինակությամբ, բոլորովին այլ գրություններ են։ Օշականի կալվածագրի բնագիրը գրված է Շար'ի քարտուղար Խալիլի որդի Յուսուֆի ձեռքով, չափազանց գրագետ լեզվով և գեղեցիկ «նասխ» գրությամբ։ Պարզ է, որ նույնպիսին է եղել Զաքարիա Հավուց-Թառեցու կալվածագրի բնագիրը։ Այս երկու վավերագրերում էլ որպես իրավական կողմ հանդես է գալիս «Բեյթ-ուլ-մալի» վերակացու Ամիր-Քյամալ-էդ-դին Աբդին-բեկը, լիազորված պետության գերագույն իշխանության կողմից։ Վավերագրերը հաստատված են Ջուխուր-Սա'դի վիլայեթի

Քեյթ-ուլ-մալի կազի՝ Մուհամմադի Սա'դիի մակագրություններով և կնիքով։

Մի կողմ թողնելով յուրաքանչյուր կալվածագրի գործարքի բնույթից բխող շարադրման եղանակի և բովանդակության առանձնահատկությունները, XV դարի վերոհիշյալ կալվածագրերի գրչական և դիվանագրական ընդհանուր բնութագիրը տալիս՝ առաջին հերթին պետք է նշել դրանց մեծ ծավալը։ Սովորաբար դրանք գրված են 1—3 մետր երկարության թղթերի վրա, որոնք մեծ մասամբ սոսնձով իրար միացրած ավելի փոքր թղթերից են պատրաստված։ Թղթերի միացման տեղերը կնքված և հաստատված են կալվածագիրը գրի առնողի, երբեմն նաև Շար'ի նոտարական գրասենյակի պետի կնիքներով և ստորագրությամբ, կնիքները մեծ մասամբ դրված են վավերագրի ուղիղ երեսի վրա, իսկ երբեմն կնքված են հակառակ կողմից։

Տեքստերը գրված են կամ պարզ, կամ ոճավորված «նասխ» գրությամբ, առանձին դեպքերում «դիվանի»-ի կամ «շիքաստե»-ի որոշ տարրերով, թղթի ձախ դաշտի վրա, աջ կողմից, լայն լուսանցքով։ Վավերագրի վերին մասում, բնագրից առաջ ազատ տեղ է թողնված, որտեղ կազիի, Շար'ի գրասենյակի պետի և մյուս անդամների կողմից կատարված մակագրություններն են, հաստատված նրանց կնիքներով։ Հաստատման գրություններ կան նաև վավերագրերի աջակողմյան լուսանցքներում։ Բնագրի վերջում «վկաներ», «նիստում ներկա գտնվողներ» (الشهود. حضر المجلس. بمحضرى) և այլ վերտառությամբ թվարկվում են Շար'ի առյանում ներկա եղողների անունները, երբեմն ընդհանուր ցուցակով, իսկ ավելի շատ վավերագրի ստորին մասում և լուսանցքում կատարված առանձին՝ «վկայում եմ», «վկայությամբ», «սույնին վկա եմ», «բովանդակությունը հաստատում եմ» (اناشاهد على ذلك بگواهى. شهد بمافيه. صح مضمونه) և այլ մակագրություններով։

Շարիաթական արձանագրությունները, ինչպես ասվեց, սովորաբար ունենում են ընդարձակ կամ համառոտ կրոնական սկիզբ կամ թղթառաջ, որոնք սկսվում են աստծո և մարգարեի փառաբանությամբ الحمدلوليه. الحمدلله և այլն, դրան հաջորդող բուն կալվածագիրը սկսվում է «և հետո» (وبعد) կամ «և սակայն հետո» (واما بعد) խոսքով, որը գրվում էր բնագրի գրությունից ավելի խոշոր գրերով։ Կալվածագրերում շեշտված սև, խոշոր տառերով

էին գրվում նաև գնողին և վաճառողին վերաբերող հատվածների սկզբի բառերը՝ (باع ـ اشترى), վաճառվող կամ նվիրվող կալվածին վերաբերող նկարագրության սկիզբը (منهاشتدانك القريه همگى وتمامى قريهٔ...), գնի մանրամասն հիշատակության մեջ՝ «դումարով» (بمبلغ) բառը, երբեմն նաև ամբողջ գինը, որը մեծ մասամբ գրվում էր արաբերեն (بمبلغ ثمانيه الاف دينار), ինչպես նաև վերջում տրվող արձանագրության թվականը և այլ բառեր ու նախադասություններ, որոնք անհրաժեշտ էր համարվում շեշտել։

Բուն կալվածագիրը մեծ մասամբ միջնադարյան «Պատճառ գրոյս այս է...» արտահայտության արաբական և պարսկական համարժեքը հանդիսացող باعث برتحرراين وثيقه... باعث برتزبيراين معاقده... موجب تنميق اين مقدمات... غرض از تنسيق اين كتاب... غرض از مضمون اين كتاب... غرض اين نوشته آنكه և նման այլ ձևերով էր սկսվում։ Երբեմն ուղղակի ասվում էր «սա մի շարիաթական գրություն է» (فهذاكتاب شرعى), «սա մի շարիաթական վավերագիր է» (فهذه حجة شرعيه) և կամ «սույն շարիաթական գրության բովանդակությունը հետևյալն է» (مضمون‌اين كتاب صحيح شرعى آنكه...) և այլն։

Ընդհանուր առմամբ կալվածագրերի լեզուն արմատապես տարբերվում է նույն շրջանի թագավորական հրովարտակների լեզվից։ Հրովարտակները, որոնք գրված են արքունի դիվանատներում, շարադրված են լեզվական մեծ ճաշակ և պատրաստություն ունեցող բանիմաց դպիրների կամ մունշիների կողմից, բարձրարուճ, սակայն դարերով մշակված կուռ և գրագետ լեզվով։ Իսկ կալվածագրերը, որոնք մեծ մասամբ շարադրված են Շար'ի գրասենյակներում կամ «մահզարներում» ընդունված արաբական ավանդական ձևերով, գրված են տեղական՝ Նախջևանի, Երևանի, Օրդուբադի և այլ վարչական կենտրոնների Շար'ի սպասավորների կամ «խադեմների» ձեռքով բազմաթիվ ոճական, քերականական և ուղղագրական սխալներով։

XIV—XV դդ. ավելի շատ են զուտ արաբերեն շարադրված գաբալեներն ու վակֆնամեները (վավ. 1, 2, 4, 8, 9)։ Կան նաև պարսկախառն արաբերենով կամ արաբախառն պարսկերենով գրված կալվածագրեր (վավ. 3, 5, 6)։ XVI դարում զուտ արաբերեն կալվածագրերը սակավ են, իսկ XVII—XVIII դարերում՝ հատ ու կենտ։

Սակայն ամեն դեպքում զուտ պարսկերեն արձանագրությունների վրա էլ կազինների կամ Շար'ի գրասենյակի պետի ու անդամների կողմից կատարված հաստատման մակագրությունները, ինչպես նաև բնագրի սկզբի և վերջի կրոնական հատվածները, միշտ էլ արաբերեն են։

Անհամեմատ ավելի գրագետ են գրված պարսկերեն կալվածագրերը։ Արաբերեն բնագրերում, ինչպես նաև խառը լեզվով գրված կալվածագրերի արաբերեն հատվածներում, բազմաթիվ քերականական և ուղղագրական սխալներ կան։ XV և հատկապես XVI դարի կալվածագրերի մեջ հազվադեպ են գեղագրական արժեք ունեցող բնագրերը։ Ավելի մեծ թիվ են կազմում գեղագրության և ուղղագրության օրենքներին անտեղյակ, կիսագրագետ գրիչների ձեռքով գրված կալվածագրերը (վավ. 3, 6, 11, 14, 15, 20, 25 և այլն)։

Արաբերեն բնագրերում տեղ գտած ոճական-քերականական սխալները թույլ են տալիս ասելու, որ Շար'ի գավառական, երբեմն նաև նահանգային գրասենյակներում եղել են տարբեր գործարքների համար մշակված արձանագրությունների ձևեր, որոնք պարզապես ընդօրինակվել են արաբերենին չտիրապետող կիսագրագետ գրիչների կողմից և հարմարեցվել տվյալ պայմաններում կատարվող գործարքին։ Նկատելի է նաև, որ բարձր ատյաններում կազմված արձանագրությունները ավելի գրագետ են շարադրված և զերծ են սխալներից (վավ. 8, 9, 12, 24)։

Պետք է ասել սակայն, որ քերականական որոշ սխալ ձևեր փոխանցվել են ավանդաբար և դարերով կրկնվելով Շար'ի արձանագրություններում օրինաչափ են դարձել։ Պարսկերենի հետ խառը շարադրանքը երբեմն պատճառ է դարձել արաբերենին բնորոշ որոշիչ հոդերի հապավման (من توابع الناحیه کربی. فی قریه և այլն)։ Պարսկերենի լեզվամտածողությունը ամենուրեք գերիշխում է։

Այս տեսակետից բնորոշ է, որ լեզվական և քերականական անճշտությունները վերաբերում են ոչ միայն որոշիչ հոդի (ال) բացակայությանը կամ սխալ կիրառությանը, այլև ենթակայի և ստորոգյալի և նրանց լրացումների սեռի և թվի անհամաձայնությանը (فی قریه مذکور. دله کبیر. تل الصغیر. خمسه ذلك، فجذه کتاب. البنت المذکور և այլն), թվականի ոչ ճիշտ համաձայնեցմանը (سبعه عشرین الاف), հոգնակի ձևի սխալ ուղղագրությանը (القراء —գյուղեր), բառավերջում օգտագործվող երկար և կարճ «թ»-երի (ت. ة) ոչ տեղին կիրառությանը և այլն։

Շարիաթական արաբերեն արձանագրություններում նկատվող հիշյալ սխալները որոշ առումով կարող են դիտվել որպես յուրատեսակ պարսկարանության երևույթներ, մանավանդ, երբ դրանք օրինաչափ կերպով կրկնվում են որոշ շրջանի մի քանի վավերագրերում։ Այս իսկ պատճառով, մանավանդ, երբ դրանք պատճառ չեն դառնում մտքի աղավաղման, նպատակահարմար չենք գտել տեքստում ուղղում մտցնել և աշխատել ենք հավատարիմ մնալ բնագրին։

Հանդիսանալով հողային սեփականությունների և անշարժ կալվածների վերաբերյալ իրավական փաստաթղթեր, կալվածագրերը պահպանվել են ամենայն խնամքով և ձեռքից ձեռք փոխանցվելով անցել են սերնդից սերունդ։ Դրանց վրա տարբեր ժամանակներում այլ և այլ մակագրություններ, նշումներ, երբեմն նաև բնագրերում ջնջումներ և ուղղումներ են կատարվել, որոնք ավելի քան բարդացնում են բնագրերի ճիշտ ընթերցման և վերծանման գործը։ Առավել դժվար է անձնանունների և մանավանդ տեղանունների վերծանությունը, հատկապես այն դեպքում, երբ վավերագրերը գրված են լինում ոչ գրագետ գրագիրների կամ «քյաթիբների» ձեռքով։

Բնագրերում պատահող դժվարընթեռնելի հատվածների կամ հատուկ անունների, ինչպես նաև բնագրային այլ մանրամասների վրա ավելորդ ենք համարում ավելի երկար կանգ առնել, քանի որ այդ հարցերին առանձին-առանձին անդրադարձել ենք յուրաքանչյուր վավերագրի ծանոթագրության մեջ։

Կալվածագրերի մեծ մասը վերաբերում է Միջնադարյան Հայաստանի մեծ ու փոքր վանքերին։ Դրանցից շատերը, թեև որևէ գյուղի տարբեր անձնավորությունների միջև առուծախի մասին կազմված արձանագրություններ են, սակայն երբ տարիներ հետո այդ գյուղերը գնման կամ նվիրաբերման ճանապարհով դարձել են այս կամ այն վանքի սեփականությունը, նրանց վերաբերյալ բոլոր հին կալվածագրերը ևս տրվել են վերջին տիրոջը և պահպանվել վանքի դիվաններում։ Այդպիսի վավերագրերի վրա կան համապատասխան մակագրություններ, ինչպես, օրինակ, Օշականի 1489 թ. դաբալեհի (վավ. 9) վրա Սիմեոն Երևանցու ձեռքով մակագրված է.

«...որ ի յառնուլն մեր զմուրք գեղջս այսորիկ, առեալ եմք և զայս հին ղաբալայս»[18]։ Այնպես որ, երբ խոսում ենք էջմիածնի, Տաթևի Հավուց-Թառի և կամ Մաղարդա վանքի դիվաններում պահպանված կալվածագրերի մասին, առաջին հերթին կարող է թվալ, որ դրանք բացառապես վերաբերում են վակֆային կալվածներին և որպես այդպիսիք օգտակար են միայն վանական հողատիրության պատմության ուսումնասիրության համար։ Սակայն վավերագրերի մի զգալի մասը, ինչպես, օրինակ, Օշականի վերոհիշյալ կալվածագիրը և տասնյակ այլ կալվածագրեր վերաբերում են ժառանգական կամ գանձագին կալվածներին և ֆեոդալական խոշոր հողատիրության ուսումնասիրության համար անփոխարինելի սկզբնաղբյուրներ են հանդիսանում։

Ներկա հատորի մեջ մեծ տեղ են գրավում էջմիածնի մուլքային գյուղերին վերաբերող կալվածագրերը։ Հնագույն կալվածագիրը Վաղարշապատ (Ուշքիլիսա) գյուղի 1430 թ. ծանոթ ղաբալե-վակֆնամեն է (վավ. 4), որն ինչպես նախորդ էջերում առիթ ունեցանք նշելու, ժառանգական և գանձագին հողատիրության վերաբերյալ արժեքավոր տվյալներ է պարունակում։ Սա բնագրով պահպանված ամենահին վավերագիրն է, որտեղ խոսվում է գյուղի մուլքի առանձին մասերի տարբեր կալվածատերերի պատկանելու և առանձին-առանձին օտարման ենթարկվելու մասին։ Ըստ այդ կալվածագրի էջմիածնի վանահայր Սմբատի որդի Գրիգորի կողմից լիազորված պարոն Ղևոնդը 1428—1430 թթ. հետևյալ տարբեր տերերից երեք նվագով գնում է Վաղարշապատ գյուղի 4 դանգը, կամ $^2/_3$ մասը.

1. Սարու-Մալիք իբն-Ալիխան բեկ (որը լիազորված էր Սա՛դի բեկ Սա՛դլուի ժառանգների կողմից) . . . 2 դանգ
2. Շեյխ-Մուհամմադ իբն-դեհխոդա (լիազորված Փիր-Հուսեյն Սա՛դլուի դուստր Մուլուք խաթունի կողմից) 1 դանգ
3. Մուհամմադ-կուլի իբն-Կալանդարի չափահաս որդիներ Հուսեյն-կուլի և Փիր-Ալի (լիազորված իրենց մոր, քրոջ և 4 անչափահաս եղբայրների կողմից) . . 1 դանգ[19]

18 Տե՛ս նույն վավերագրի ծանոթագրությունը, համմտ. «Ջամբռ», էջ 259։

19 Որպես վաճառող կողմ հանդես եկող սեփականատերերը կամ մալիքները XIV դարի վերջերին Արարատյան երկրում իշխող Ամիր Սա՛դի ժառանգներն են։ Հայտնի է, որ թուրքմենական Սա՛դլու ցեղի առաջնորդ Ամիր Սա՛դի անունով ամբողջ Արարատյան երկիրը սկսեց կոչվել «Ջուխուր-Սա՛դ», հայկական աղբյուրներում «Սահաբա-փոս» կամ «երկիրն Սահաբու»։ Նրա որդին՝ Փիր-Հուսեյնը, որի

Կալվածագիրը հավաստում է այն փաստը, որ հայ աշխարհիկ ֆեոդալականության ունեզրկման և քայքայման պրոցեսը պատմական Հայաստանի կենտրոնական նահանգներում XIV դարի ընթացքում համարյա ավարտված էր։ Ե՛վ այս, և՛ 1432 թ. Գրիգոր Մակվեցու կողմից Ամիր Ռուստամ Օրբելյանից «գնած» և էջմիածնին վակֆված 7 գյուղերի հայտնի կալվածագրերը (վավ. 5), գալիս են հաստատելու, որ XV դարի սկզբներից արդեն հայ աշխարհիկ ավատատիրության առանձին ներկայացուցիչներ, վերջնականապես զրկված լինելով քաղաքական իշխանությունից, եկեղեցական իշխանությունների օգնությամբ, փորձում էին ձեռք բերել նոր հողային տիրույթներ և գրավելով հոգևորական բարձր պաշտոններ, ձգտում էին պահպանել իրենց իշխող դիրքը հայ աշխատավորության նկատմամբ։

Առանձնապես մեծ է Գրիգոր Մակվեցու կալվածագրի արժեքը որպես պատմական այնպիսի մի սկզբնաղբյուրի, որը նոր լույս է սփռում XV դարի 30-ական թվականներին Արևելյան Հայաստանի եկեղեցական ու աշխարհական գործիչների ծավալած գործունեության վրա։ Շնորհիվ այդ վավերագրերի մենք կարողանում ենք ի մոտո ծանոթանալ էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերանորոգմանը նախորդող շրջանի և այդ կարևոր իրադարձության նախապատրաստման պատմության հետ, միաժամանակ բացահայտելով այդ գործիչների քաղաքական, ազգային-վերանորոգչական ձգտումները[20]։

Ուշագրավ է այն փաստը, որ նույն թվականներին քոչվոր ավատատերերից մուլքեր է գնում նաև Արցախի հայ իշխանական տների ներկայացուցիչներից՝ Հովհաննեսի որդի Ավանը, որը Մելիք-Փաշայանների տոհմի նախահայրերից էր (վավ. 6)։ Ցավոք խիստ սակավ են XV—XVI դդ. Արցախի հայ ավատատերերին վերաբերող վավերագրերը։ Գանձասարի և Արցախի մյուս վանքերի դիվան-

դուստր Մուլուք-խաթունը կալվածագրում հիշվում է որպես Վաղարշապատ գյուղի մեկ դանգի սեփականատեր, իշխել է մինչև XIV դարի 70-ական թվականները, որին հաջորդել են նրա որդիները՝ Փիրղայիբն ու Ավդուլը։ Տե՛ս Հ. Փափազյան, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ժե դ.), ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1960, № 7—8, էջ 20—21, А. Д. Папазян, Арабская надпись на гробнице туркменских эмиров в селе Аргаванд, «Ближний и Средний Восток», сборник статей памяти Б. И. Заходера, М., 1961, стр. 69 — 71.

20 Տե՛ս այս մասին Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1955, № 8։ Տե՛ս նաև նույն վավերագրի ծանոթագրությունը։

ներից շատ քիչ վավերագրեր են պահպանվել, եղածներն էլ ուշ շրջանի պատճեններ են և մեծ մասամբ Գանձասարի կաթողիկոսների իրավունքների հաստատման վերաբերյալ հրովարտակներ[21], ուստի 1436 թ. այս կալվածագիրը եզակի արժեք ունի։ Այն հիմք է տալիս ասելու, որ անշարժ կալվածների և հատկապես գյուղերի մուլքերի սեփականումը քոչվոր արիստոկրատիայի կողմից, թափանցել էր նաև Արևելյան Հայաստանի լեռնային շրջանները։

Քոչվորական ռազմա-ավատատիրական վերնախավի անշարժ կալվածներ և հատկապես ամբողջական գյուղերի մուլքեր սեփականելու բուռն ձգտումը շարունակվում էր ամբողջ XV դարի ընթացքում։

Բարձրաստիճան ամիրներն ու պետական ֆինանսական օրգաններում պատասխանատու պաշտոններ գրավող պաշտոնյաները, մեծ թվով գյուղեր էին ձեռք բերել նաև Սյունիքի այն գավառներում, որոնք ենթակա էին Ղափանաթի և Թուման-ե Նախջևանի օլքաներին (վավ. 7, 11)։

Մենք ստույգ տվյալներ չունենք Սյունյաց Օրբելյանների վերջին ներկայացուցիչների կալվածատիրական կարողությունների մասին։ Ուստի դժվար է ասել, թե 1450 թ. կալվածագրով (վավ. 7), որը փաստորեն Տաթևի վանքի ամենահին կալվածագիրն է, Բեշքեն Օրբելյանի որդի Ամիր Ռուստամը իր պապենական կալվածնե՞րն է վաճառել Տաթևի վանահայր Շմավոն վարդապետ Անգեղակոթցուն, թե՞ այս դեպքում ևս մենք գործ ունենք էջմիածնի 1431 թ. Գրիգոր Մակվեցու դաբաւե-վակֆնամեի մեջ արձանագրված այնպիսի մի «վաճառքի» հետ, որը նպատակ ուներ ավելի ամուր շարիաթական-իրավական հիմքեր ստեղծելու և ամրապնդելու վանքի վակֆային-սեփականատիրական իրավունքները՝ կալվածագրում հիշված գյուղերի մուլքերի նկատմամբ։ Ամենայն հավանականությամբ այստեղ ևս փորձ է արվել վակֆով ապահովելու տոհմական կալվածների անձեռնմխելիությունը։ Հայտնի է մանավանդ, որ Տաթևի վանքը դարեր շարունակ գտնվում էր Օրբելյանների ընտանիքին պատկանող հոգևորական գործիչների ձեռքում։

Հայ աշխարհիկ ֆեոդալականության սիստեմատիկ ունեզրկումն ու ոչնչացումը շարունակվում և ավելի մեծ ծավալ է ընդունում XV դարի երկրորդ կեսում։ Ձեռագրաց հիշատակարաններում և վկայաբանություններում կան որոշակի տվյալներ այն մասին, որ

21 «Հրովարտակներ», I, վավ. 3, 6, 18, II վավ. 5, 7, 23։

հատկապես Ադ-Կոյունլու Յաղուբ Փադիշահի օրոք (1478—1490 թթ.) բուռն հալածանքներ են սկսվում հայ աչքի ընկնող ունևոր-անվանի մարդկանց նկատմամբ. բռնի հավատափոխության հողի վրա տեղի ունեցող նահատակության դեպքերը ավելի հաճախակի են դառնում։ Ժամանակակից գրիչներից մեկը 1485—1486 թթ. մի հիշատակարանում հաստատում է, որ հավատափոխության հարկադրանքը Արևելյան Հայաստանում հիմնականում կիրառվում էր հայ ֆեոդալական տների վերջին ներկայացուցիչների կամ, ինչպես անվանում են նրանց ժամանակակից աղբյուրները՝ «ազատորդիների» նկատմամբ։

«Ժամանակս դառն էր,— գրում է նա,— որ այլազգեաց շատ նեղութիւն քաշեցաք, որ այսմ ամի ի (40) ազատորդի կալան, թե տաճկացէք, այլ ողորմածն Աստուած ձեռնտու և օգնական եղև նոցայ, յորոց մի էր եղբայր իմ պարոն Հայկազն և պարոն Աւագն, որ է (7) ամիս կալուլական կացին և բազում տուգանք տվին և ի հաւատոցս Քրիստոսի ոչ դարձան...»[22]։

Այսպիսի հետապնդումների ժամանակ էր ահա, որ բռնագրավում և որպես «հակառակորդների ստացվածքներ» (رقبات واملاك مخالفان), «Բեյթ-ուլ-մալի» սեփականություններ էին հայտարարվում, հավատափոխության առաջադրանքը չընդունող հայ «ազատորդիների» կալվածները։ 1480-ական թվականներին վերաբերող մի հիշատակագրության մեջ, որ նվիրված է Ծարի Դոփյանների ազգաբանությանը, բավական մանրամասն տվյալներ կան Տուրսունի որդի Այտինի օրոք Դոփյաններին պատկանող կալվածների Բեյթ-ուլ-մալի կողմից հափշտակվելու մասին.

«Եւ որդի Հասանայ Ազբուղէն,— գրում է ազգաբանության հեղինակը,— և որդի սորա Տուրսունն և որդի սորա Այտինն, և ի ժամանակի սորա, ի զօրանալ իսմայելացւոց և ի նուազիլ տանս Հայոց, ցիր և ցան լինելն իշխանացն Հայոց, յարեան այլազգիքն և զմուլքն մեծ իշխանին Հասանայ պէթալմալ արարին, գնաց պարոն Այտինն ի դիւան և երեք ամ աշխատեաց և բազում ինչ տուեալ ազատեաց ի ձեռաց այլազգեացն զվանօրայքն և շինարէնքն զոր տէրն ամենայնի տացէ վարձս վաստակոյ իւրոյ»[23]։

22 Գ. Հովսեփյան, Խաղրակյանք և Պռոշյանք Հայոց պատմության մեջ, հ. 3, Նյու-Յորք, 1942—43, էջ 123։

23 Հ. Թոփճյան, Յուցակ ձեռագրաց հայկ վարդապետի Դպհան, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 89։

Բեյթ-ուլ-մալի կողմից բռնագրավված Զաքարիա Հավուց-Թառեցու սեփական կալվածների ետ վերադարձնելու մասին 1489 թ. կազմված շարիաթական արձանագրությունը կամ «մուսալիհենամեն» (վավ. 7) չափազանց կարևոր մի փաստաթուղթ է, որը գալիս է հաստատելու վերոհիշյալ հիշատակագիրների հաղորդած տեղեկությունները:

Ինչպես նույն կալվածագրի ծանոթագրության մեջ ցույց ենք տվել, կալվածները Բեյթ-ուլ-մալից ետ ստացող Զաքարիա վարդապետը, հաջորդել է Հովհաննես եպիսկոպոսին, որին նախորդել է էջմիածնի 1441 թ. ժողովին մասնակցած Զաքարիա Հավուց-Թառեցին: Այս Զաքարիայի մասին է որ Թովմա-Մեծոփեցին գրում է «Տէր Զաքարեն Հաւուց-Թառայ ի յազատորդեաց»[24]: Սիմեոն Երևանցին նույնպես հաստատում է, որ Հավուց-Թառի Ս. Ամենափրկչի վանքը հայոց ՆՀԲ (1023—1024) թվականին նորոգել է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին և շրջակա գյուղերը արծաթագին է արել ու նվիրել վանքին, առաջնորդ նշանակելով իր որդի Վահրամին, նույն ինքը Գրիգոր Վկայասերին: «Վասն որոյ և յայնմ հետէ,— շարունակում է նա,— որպես զհայրենի մուլք արարեալ զսա որդիք և թոռունք և յետագայ ազգատոհմք սորին, մի զկնի միոյ յաջորդեցին զառաջնորդութիւնն սորին ոչ միայն ի յիշխանութեանն Հայոց, այլև ի ժամանակս թագաւորացն Պարսից, մինչև գրեթէ ի ժամանակս մեր՝ որքան շեն էր վանքս այս»[25]: Մի այլ տեղ խոսելով նույն ընտանիքի մասին Սիմեոն Երևանցին շեշտում է հատկապես, որ «սոքա ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շատազգ և հարուստք, յորոց թէպէտ ոմանք վանականք լինեին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տոմբք և ընչիք, և իւրեանց էր համարեցեալ գնօղն և վանքն առանց խորութեան»[26]:

Կասկածից դուրս է ուրեմն, որ XV դարի 80-ական թվականներին հալածանքի և հետապնդման ենթարկվող հայ ազատորդիների մեջ եղել են նաև այս ընտանիքի «շատազգ և հարուստ» աշխարհական ազգակիցներից ոմանք, որոնց կալվածները բռնագրավվել են Բեյթ-ուլ-մալի կողմից: Սակայն նույն ընտանիքի հոգևորական ժառանգներից Շահենի որդի Զաքարիա վարդապետը կարողացել է ապացուցել իր սեփականատիրական իրավունքները այդ կալվածների նկատմամբ և վճարելով 5000 դինար որպես հաշտության գին («մուսալիհե»), ետ է ստացել դրանք:

Այստեղ անշուշտ օգտագործվել է հոգևորականի առանձնաշնորհյալ դիրքը: Սակայն որքանով որ այդ կալվածները դեռ շարունակում էին դիտվել որպես Զաքարիա վարդապետի անձնական ժառանգական մուլքեր, շարունակ ենթակա էին հետապնդումների և հափշտակության, մանավանդ, որ դրանք անվանապես էին միայն պատկանում Զաքարիա վարդապետին, իսկ իրականում դրանց մեջ բաժին ունեին նույն գերդաստանի մյուս բոլոր, մեծ մասամբ աշխարհական ժառանգները:

Որ իրոք այդ կալվածների նկատմամբ հետապնդումները շարունակվել են, կարելի է եզրակացնել այն փաստից, որ 1526 թ. Զաքարիա վարդապետը իր ազգակից Համազասպ վարդապետի հետ միասին, ստիպված է լինում Մանկուս, Հավուց-Թառ և Ավանիկ գյուղերի ու Սուրբ Սարգիս և Քեղվարդ ագարակների կեսը վակֆ անել Ամենափրկչի վանքին (վավ. 16): Ինչպես իրավացի կերպով ենթադրում է Սիմեոն Երևանցին, հետագայում ևս, հավանաբար նույն ընտանիքի աշխարհական ժառանգները կամ զրկվել են իրենց բաժիններից և կամ հափշտակումները կանխելու համար վաճառել են իրենց բաժինները, իսկ հոգևորականները վակֆ են արել վանքին[27]:

Եթե այս 5 գյուղերի և երեք ագարակների 1489 և 1526 թթ. կալվածագրերը մեզ օգնում են որոշ չափով պարզելու հայ ֆեոդալական տներից միայն մեկի, նախկինում անշուշտ շատ ավելի ընդարձակ կալվածների այս աննշան բեկորների հետագա դրության և ի վերջո դրանց վերջնականապես վանական-վակֆային սեփականություններ դառնալու պատմությունը, ապա մյուս «ազատորդիներ» ունեզրկման ժամանակ նրանց պատկանող և Բեյթ-ուլ-մալի կողմից բռնագրավված մեծ թվով այլ կալվածների հետագա բախտի մասին մեր տեղեկությունները խիստ աղքատիկ են:

Անշուշտ դրանցից շատերը, ինչպես, օրինակ, վերոհիշյալ հիշատակարանի հեղինակ Տեր-Հովհաննես եպիսկոպոսը, որը Կոտայքի Պռոշյան տոհմի պայազատներից էր, փորձած կլինեն նույն եղանակով կամ ինչպես նշված է հիշատակարանում «բազում տուգանօք» ետ ստանալ և ի վերջո վակֆի միջոցով փրկել իրենց կալվածները: Մենք արդեն տեսանք, թե ինչպես Ծարի Դոփյանների վերջին իշ-

24 Թովմա Մեծոփեցի, Հիշատակարան, էջ 52:

25 «Ջամբռ», էջ 276:

26 Նույն տեղում, էջ 277:

27 «Ջամբռ», էջ 277:

խաններից Տուրսունի որդի Այտինը երեք տարի Արքունի դիվանում շարչարվելուց հետո հազիվ կարողացել է Բեյթ-ուլ-մալից ետ ստանալ իր հայրենի կալվածները: Սակայն այն փաստը, որ 1489 թվականի օգոստոսին, այսինքն՝ Ջաքարիա վարդապետի կալվածների ետ ստացվելուց մոտ մեկ ամիս հետո, նույն Բեյթ-ուլ-մալի վերակացու Ամիր Քյամալ-էդ-դին Աբդին-բեկը վաճառում է Բեյթ-ուլ-մալի սեփականությունը դարձած Օշական գյուղը, թույլ է տալիս եզրակացնելու, որ բռնագրավված գյուղերից շատերը վաճառքի ենթարկվելով, դառնում էին տարբեր անձնավորությունների գանձագին մուլքեր: Այս կալվածագրում (վավ. 9), որպես գնորդ հանդես է գալիս ոմն Սա'դի-Վակկաս, որը որդին էր խոջա Քյամալ-էդ-դին Հուսեյնի որդի՝ հանգուցյալ Խոջա-Սեյյեդի-Ալիի, իսկ նրա անվանը նախորդող «սահիբ-ե ա'զամ» («մեծ տեր») տիտղոսը, ցույց է տալիս նրա բարձր պաշտոնը տեղական ֆինանսական-հարկային ատյաններում:

Այսպիսով, ուրեմն, հաճախակի ունեզրկումների ընթացքում բռնագրավվում և Բեյթ-ուլ-մալի սեփականություններ էին հայտարարվում վաղ ժամանակներից ի վեր հայ ավատատերերին պատկանող «հայրենիք» կալվածները և ապա շարիաթական վաճառքի ճանապարհով դառնում էին երկրում մշտական բնակություն հաստատած, մուսուլման բարձրաստիճան պաշտոնեության և քոչվոր արիստոկրատիայի կողմից գանձագին արված մուլքեր («մուլք-ե վարխարիդ»):

XVI դարի մի շարք կալվածագրեր հիմք են տալիս ասելու, որ թեև վակֆ տրված կալվածները շարիաթական օրենքով համարվում էին հավիտյանս անձեռնմխելի վանական սեփականություններ, սակայն ինչպես այդ, այնպես նաև հետագա դարերում շարունակ վեճեր են եղել, և վանքերից շատերը բազմիցս ստիպված են եղել նոր հրովարտակներով և շարիաթական այլ և այլ արձանագրություններով («հոջջաթ») վերահաստատելու, որ այդ կալվածները «ճշմարիտ, շարիաթական հավիտենական վակֆեր» են (وقف مؤبد صحيح شرعى) և «հավիտյան վակֆ են արված ու ամրացված են» (وقفا مويدا وحبسا مخلدا) առվյալ վանքին: Միայն Տաթևի վանքապատկան 15 գյուղերի ու ագարակների վակֆային սեփականություններ լինելու մասին XVI դարից պահպանվել են 4 տարբեր շարիաթական և այլ արձանագրություններ ու վճռագրեր (վավ. 3, 14, 18, 19) և երեք թագավորական հրովարտակներ[28]:

28 «Հրովարտակներ», I, վավ. 8, 10, 11:

Արևելյան Հայաստանի մյուս վանքերի XV—XVI դդ. կալվածատիրական կարողությունների մասին քիչ բան է հայտնի: Սակավ են հատկապես Մակվի Թադեոս առաքյալի վանքին վերաբերող կալվածագրերը: Հնագույն վավերագիրը Շահ Թահմազ Ա-ի 1562 թ. հրովարտակն է, տրված ի հաստատումն Ղարաքիլիսայի (Թադեի վանք) հանդի սեփականության, որտեղ սակայն վկայակոչված են Շահ Իսմայիլ Ա-ի ժամանակ տրված հրովարտակն ու այլ կալվածագրեր[29]: Նշանակում է, որ այդ ժամանակ ձեռքի տակ եղել են նաև XVI դարի սկզբներին վերաբերող և ավելի հին վավերագրեր: Շահ Իսմայիլ Ա-ին վերագրվող «Հրովարտակը» հավանաբար ներկա հատորի 12-րդ վավերագիրն է, որով «Բարձրագույն դիվանի» ներկայացուցիչը հաստատում է, որ «Այն կալվածները, որոնք գտնվում են ազնիվ քրիստոնյա Մանվելի որդի Թադեոսի և սրա որդի Մխիթարի ձեռքում, համաձայն շարիաթական փաստաթղթերի, ամբողջությամբ նրանց սեփականությունն ու մուլքն են և նրանց տիրապետությունը այդ կալվածների ու մուլքերի նկատմամբ իրավացի տիրապետություն է»:

XVI դ. սկզբներին անցկացված ստուգումների ժամանակ Մանվելի որդի Թադեոսը ներկայացրել է իր կալվածների ժառանգական սեփականություն լինելը ապացուցող ավելի հին շարիաթական վավերագրեր: Թեև որոշակի տվյալներ չկան, սակայն նկատի ունենալով այն իրողությունը, որ XV դարում վանքերից շատերում ժառանգաբար իշխում էին տարբեր ավատատիրական ընտանիքներ, պետք է ենթադրել, որ Մակվի Թադեոս առաքյալի վանքին տիրողները ևս տեղի հայ ավատատերերից են եղել:

Թադեի վանքը ըստ մի արձանագրության նորոգված է 1329 թ. պարոն Մանվելի որդի Ջաքարիա եպիսկոպոսի ձեռքով: Սա իր ժամանակի կարևոր եկեղեցական գործիչներից էր, որի առաջնորդության շրջանում վանքը մեծ ծաղկում է ապրել[30]: Եթե հաշվի առնենք նույն ընտանիքում անունների ավանդական հաջորդականության փաստը, կարելի է ենթադրել, որ վավերագրում հիշված Թադեոսի հայր Մանվելը, որն ապրել է XV դարում, XIV դարում ապրած պարոն Մանվելի սերունդներից է եղել: Անհավանական չէ ուրեմն, որ Հավուց-Թառի նման, այս վանքում իշխող պարոն-տերերի կալված-

29 Նույն տեղում, վավ. 16:

30 Հ. Ոսկյան, Վասպուրական—Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 471—474:

ները նույնպես համարվել են նրանց տոհմական «հայրենիք» կալվածները, որոնք սակայն հետագայում, ինչպես այլուր, դարձել են վանքի վակֆային սեփականություններ։ Այդ է պատճառը, որ վավերագիրը պահպանվել է վանքի դիվանում և դիտվել որպես վանքի կալվածատիրական իրավունքները հաստատող ամենահին կալվածագիրը[31], թեև այն, ըստ էության, անհատ կալվածատիրոջ իրավունքները հաստատող փաստաթուղթ է։

Հրատարակվող կալվածագրերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Աղթամարի Ջաքարիա կաթողիկոս Սեյֆեդդինյանի կողմից Լիմի ս. Գևորգա վանքին վակֆ արված, Վանա լճի առափնյա Նորշեն, Ատեր, Նորավանից գյուղերում և Ջանիկի դաշտում գտնվող հողերի, այգիների և այլ ստացվածքների 1305 թ. ընդարձակ շարիաթական արձանագրությունը։ Այն իր բնույթով արմատապես տարբերվում է էջմիածնի, Հավուց-Թառի և Տաթևի կալվածագրերից։ Այստեղ նույնպես նվիրողը կամ վակֆ անողը հայ ֆեոդալական, նույնիսկ թագավորական տներից մեկի՝ Արծրունիների նշանավոր հոգևորական գործիչներից է, սակայն կալվածագրի բովանդակությունը գալիս է հաստատելու, որ նվիրված հողերը և մյուս անշարժ ստացվածքները տոհմական ժառանգական կալվածներ չեն։

Դրանք տարբեր գյուղերի մշակելի տարածությունների (քյոֆշան) մեջ մտնող առանձին հանդեր են, որոնց մի մասը հավանաբար ավելի վաղ ժամանակներում հավատացյալների կողմից նվիրված կամ վակֆ են տրված եղել եկեղեցուն։ Թեև 1305 թ. գրված մի հայերեն արձանագրության բովանդակությունից, որի բնագիրը ամբողջապես մեջ է բերված այս վավերագրի ծանոթագրության մեջ, պարզ երևում է, որ այդ հողերի մի մասը նա ստացած է եղել որպես ժառանգություն («ի սեպհական հայրենի ժառանգութենէ մերմէ»), սակայն կան դրանց մեջ նաև նոր գանձագին արված հողեր («զրաղում արտորայս և մարգագետինս գնեցաք ի դաշտին Բազայ»)։ Վերանորոգելով և շենացնելով Լիմի ս. Գևորգա վանքը, Ջաքարիան այդտեղ առաջնորդ է նշանակել իր ազգակից Հովհաննես եպիսկոպոսին («Յովհաննես եպիսկոպոսին Արծրունւոյ, ազգացին իմոյ»), բայց և միաժամանակ իսլամացած իլխանների տիրապետության այդ ծանր տարիներին, նա մտահոգվել է վանքապատկան հողերը հաստատուն շարիաթական կալվածագրերով ամրացնելու հարցով. «Զորոց մի առ մի գրել և հաստատել տուաք ի կալուածագրին մերում և ի յամիրապետաց և դատաւորաց հագարացւոց Վան քաղաքի և Մշոյ»,— ասված է հիշյալ արձանագրության մեջ։

Պարզ է, որ XIV դարի սկզբներին և այնուհետև Աղթամարում և Վասպուրականի այլ վանքերում տեր ու տնօրեն հանդիսացող Արծրունյաց տան շառավիղները, ավատատիրական իրավունքների տեսակետից չէին կարող համեմատվել Արևելյան Հայաստանի, հատկապես Սյունյաց և Արցախի վանքերում իշխող հայ հոգևորականների հետ, որոնց գերդաստանները դեռևս տեղում որոշ իշխանություն ունեին և տիրում էին տասնյակ և ավելի գյուղերի։ Հայտնի է նաև, որ XIV դարում արդեն Վասպուրականի առանձին գավառներում մեծ մասամբ իշխում էին քրդական տարբեր ցեղերի ամիրները, որոնք և հանդես էին գալիս որպես իրենց իշխանության տակ գտնվող գյուղերի իրավական տերեր։

Առանձին վարելահողերի, արտերի և այգիների տիրությունը ավատատիրական սեփականատիրություն չէր։ Դա հողատիրություն էր հողի օգտագործման իրավունքի առումով։ Գյուղի սահմաններում գտնվող բոլոր հողերի ավատատերը գյուղի սեփականատերը կամ «մալիքն» էր, որը, որպես այդպիսին, իրավունք ուներ այդ հողերը մշակող գյուղական համայնքից ռենտա գանձելու։ Հետևաբար, վանական կալվածատիրությունը Վասպուրականում, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի այլ վանքերում, կալվածատիրություն չէր այն առումով, ինչ առումով, որ մենք այդ հասկանում ենք, երբ ի նկատի ենք ունենում էջմիածնի, Հավուց-Թառի, Տաթևի և Արևելյան Հայաստանի այլ վանքերի վակֆային կալվածները։

Մեր կարծիքով, այս իրողությունը պետք է բացատրել սոցիալ-քաղաքական այն յուրահատուկ իրադրությամբ, որը պայմանավորված էր հայ աշխարհիկ ֆեոդալականության Արևելյան Հայաստանում ավելի երկար գոյատևման փաստով։

Սակայն, ինչպես վերը տեսանք, XV դարում Արևելյան Հայաստանում ևս հայ ավատատիրության հետագա գոյատևման համար պայմանները առանձնապես նպաստավոր չէին։ Հավատափոխության հարկադրանքի տակ, բուռն կերպով շարունակվում էր հայ աշխարհիկ ֆեոդալականության ունեզրկումն ու աստիճանական ներաճումը հոգևոր ֆեոդալականության մեջ։ Թեև մի քանի խոշոր վանքերում, որոշ ֆեոդալական տների առանձին ներկայացուցիչներ հոգևորական սքեմի տակ դեռևս կարողացել էին պահպանել հայրենի կալվածքների վերջին խղճուկ մնացորդները, սակայն դրանք չնչին բեկորներ էին միայն։ Կալվածատիրական-մուլքային

31 Տե՛ս նույն վավերագրի ծանոթագրությունը։

գյուղերը Արարատյան երկրի կենտրոնական գավառներում մեծ մասամբ պատկանում էին տեղական և քոչվոր մահմեդական տիրող խավի ներկայացուցիչներին: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ պետական կամ «դիվանի» գյուղերն էլ համարյա առանց բացառության «սոյուրղալի» կամ «թիուլի» իրավունքով շարունակ գտնվում էին պետական պաշտոնյաների, զինվորականության և մահմեդական բարձրաստիճան հոգևորականության ձեռքում, ապա պարզ կլինի հայ խոշոր հողատիրության գրաված ոչ այնքան ամուր դիրքը ֆեոդալական հողատիրության ընդհանուր սիստեմում:

Անշուշտ դա դեռ չի նշանակում, որ առանձին հայ դրամատերեր կամ խոջաներ, հատկապես XIV—XVII դդ. չէին կարող գանձագին մուլքեր ունենալ: Պահպանվել են որոշ կալվածագրեր և հրովարտակներ, որոնք խոսում են հայ խոջաների կողմից մուլքեր գնելու մասին (վավ. 10, 21): Սակայն վավերագրերի մեծ մասը, խոշոր հողատիրության մեջ մահմեդական տիրող դասի բացարձակ գերակշռությունն է ապացուցում (վավ. 10, 20, 21, 23, 25, 27):

Արարատյան երկրում մեծ թվով գյուղեր ունեին Ամիր-Սա'դի սերունդներից, Սա'դու ցեղի իշխող դասի ներկայացուցիչները: Այդ գյուղերից շատերը տասնամյակների և հարյուրամյակների ընթացքում փոխանցվելով սերնդից սերունդ, նրանցից ստացվող եկամուտները գնալով տրոհվում էին ավելի մանր մասերի և բաժանվում բազմաթիվ ժառանգների միջև:

Վաղարշապատ գյուղի 1430 թ. կալվածագրից (վավ. 4) պարզվում է, օրինակ, որ էջմիածնի լիազոր պարոն Ղևոնդը գյուղի մեկ դանգը ($^1/_6$) գնել է Կալանդարի որդի Մուհամմադ-կուլիի ժառանգներից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացել է որպես այդ մեկ դանգի 104 մասերի հետևյալ տոկոսների սեփականատերը.

1. Փիր-Ալիի դուստր Ջհանբանու (Մուհամմադ-կուլիի կինը)	13/104
2. Հուսեյն-կուլի (չափահաս որդին)	14/104
3. Ֆարաջ-կուլի » »	14/104
4. Շահմուրադ (անչափահաս որդին)	14/104
5. Նազար » »	14/104
6. Շահալի » »	14/104
7. Բուրջալի » »	14/104
8. Հուրիխան (չափահաս դուստրը)	7/104

Մուլքերի տրոհման ավելի հետաքրքիր պատկեր է ներկայացնում Օշական գյուղը, որն ինչպես գիտենք 1489 թ. Բեյթ-ուլ-մալից

գնել էր խոջա Սեյյեդի-Ալիի որդի Սա'դի-Վակկասը: Ներկա հատորում կա ևս մեկ կալվածագիր, ըստ որի 1592 թ. Վալի-բեկ Սա'դյուն Օշականի 3 դանգը վաճառում է Քյամալ-էդ-դին Իբրահիմ-խալիֆեին: Սակայն, երբ XVII դարի 40-ական թվականներին Փիլիպոս կաթողիկոսը սկսեց մաս առ մաս գնել, իսկ Հակոբ կաթողիկոս Ջուղայեցին շարունակելով գործը, ամբողջությամբ էջմիածնի սեփականությունը դարձրեց այդ գյուղի ամբողջ մուլքը, մենք տեսնում ենք արդեն, որ XV դարի վերջերին իր ամբողջությամբ Սա'դի վակկասին պատկանող գյուղը, շուրջ մեկ ու կես հարյուրամյակ հետո պատկանում էր նույն ընտանիքից սերած հետևյալ անձնավորություններին.

1. Սուլթան-բեկ Սա'դու, որդի Ալիխան-բեկի	1 դանգ
2. Շահ-Զեյնաբ (Սուլթան-բեկ Սա'դուի դուստրը)	1/2 »
3. Ստեփաննոս վարդապետ (որը գնել էր Սա'դուններից)	1/2 »
4. Մաջնուն բեկ (Թահմազկուլի-բեկ Սա'դուի որդին)	1/2 »
5. Սաֆիկուլի » » »	1/2 »
6. Բեգում խաթուն (Նիազկուլի-բեկ Սա'դուի դուստրը)	1/3 »
7. Հուրիխան » » »	1/3 »
8. Սարվինար » » »	1/3 »
9. Մեվլակուլի (Սուլթան-բեկ Սա'դուի որդին)	1/4 »
10. Իմամլիկուլի » » »	1/4 »
11. Ֆանդանկուլի (Հուսեյն-բեկ Սա'դուի որդին)	1/4 »
12. Քյալբ-Ալի » » »	1/4 »
13. Բաբա-բեկ Սա'դուի կինը	1/6 »
14. » » որդին (անչափահաս)	1/6 »
15. » » » »	1/6 »
16. » » դուստրը »	1/6 »
17. » » » »	1/6 »
18. » » » »	1/6 »
գումարը	6 դանգ[32]

Այստեղ մենք տեսնում ենք մեկ գյուղի եկամտի տրոհման պատկերը, իսկ եթե վախճանված կալվածատերը իր զավակներին ժառանգություն էր թողնում մի քանի գյուղեր կամ տարբեր գյու-

32 Տվյալները վերցված են XVII դարի բազմաթիվ կալվածագրերից, որոնք բոլորը գրանցված են կաթողիկոսական դիվանի 1ա, 1բ և 1գ թղթապանակներում:

դերի առանձին դանգեր, այդ դեպքում ժառանգներից յուրաքանչյուրը բոլոր գյուղերում մաս էր ունենում:

1620-ական թվականներին վերաբերող երկու վավերագրերում հետաքրքիր տվյալներ են արձանագրված Երևանում բնակվող Ղայիթմիշ-բեկ Սա'ղուի մուլքերի նրա ժառանգների միջև բաժանման վերաբերյալ:

Ըստ մի կտակագրի Ղայիթմիշ-բեկը հինգ տարբեր գյուղերում ունեցած իր հետևյալ մուլքերը՝

1. Ուչքիլիսա . . . . . 2 դանգ
2. Կարբի . . . . . 6 դանգ
3. Քյալար . . . . . 3 դանգ
4. Խզնավուզ . . . . . 1 դանգ
5. Մանթաշքյասան . . . 6 դանգ

մահվանից մի քանի տարի առաջ կտակած է եղել իր արու զավակներին՝ Ալի-բեկին և Կարախան-բեկին[33]: Սակայն Կարախան-բեկը հորից ավելի շուտ է մահանում և թողնում է մեկ տղա Մուհամմադ-բեկ և երկու աղջիկ՝ Հուրիխան և Զեյնաբ Սուլթան անուններով: Վերջիններս դիմում են Շար'ին պահանջելով որոշել իրենց հասանելիք ժառանգության քանակը: Այդ առթիվ կազմված արձանագրության մեջ[34] նախ նշված է, որ համաձայն կտակի վերոհիշյալ 18 դանգ մուլքը հետևյալ կերպ է բաժանվում Ղայիթմիշ-բեկի երկու որդիների միջև.

Ալի-բեկ		Կարախան-բեկ	
1. Ուչքիլիսա	1 դանգ	1. Ուչքիլիսա	1 դանգ
2. Կարբի	3 »	2. Կարբի	3 »
3. Մանթաշքյասան	3 »	3. Մանթաշքյասան	3 »
4. Քյալար	2 »	4. Քյալար	1 »
գումարը՝	9 դանգ	5. Խզնավուզ	1 »
		գումարը՝	9 դանգ

որից հետո վախճանված Կարախան-բեկի 9 դանգից $4^1/_2$ դանգը տրվում է որդուն՝ Մուհամմադ-բեկին, իսկ $4^1/_2$-ը երկու աղջիկներին՝ Հուրիխանին և Զեյնաբ Սուլթանին, որը նույնպես հավասար բաժանվում է նրանց միջև.

Հուրիխան		Զեյնաբ Սուլթան	
1. Ուչքիլիսա	1/4 դանգ	1. Ուչքիլիսա	1/4 դանգ
2. Կարբի	1 »	2. Կարբի	1/2 »
3. Մանթաշքյասան	1/2 »	3. Մանթաշքյասան	1/2 »
4. Քյալար	1/2 »	4. Խզնավուզ	1 »
գումարը՝	$2^1/_4$ դանգ	գումարը՝	$2^1/_4$ դանգ

Օտար կալվածատիրությունը XVI դարում ամուր դիրքեր էր գրավել նաև Սյունյաց և Արցախի հայաշատ շրջաններում. դրանցից շատերը տեղական անվանի ընտանիքների ներկայացուցիչներ էին: Այդպիսին էր, օրինակ, XIII դ. հռչակավոր գիտնական, աստղագետ-մաթեմատիկոս և պետական գործիչ խոջա Նասիր-էդ-դին Թուսիի սերունդներից օրդուբադցի խոջա Ֆաթհի-բեկ Թուսին, որ Գողթն գավառի (Ագատ-Ջիրան) Վանանդի ձորում գտնվող Դանիս և Դանակերտ գյուղերում և Սալ, Բերդակ ու այլ ագարակներում խոշոր բաժիններ ուներ (վավ. 11): Սա անշուշտ այդ մեծ գերդաստանի անդամներից միայն մեկի կալվածներն էին: Կասկածից դուրս է, որ արքունի դիվանում միշտ բարձր պաշտոններ զբաղեցնող այս անվանի ֆեոդալական տան մյուս ներկայացուցիչները ևս տիրում էին նույնքան և ավելի գյուղերի և ագարակների:

Հավանաբար խոջա Ֆաթհի-բեկի այս կալվածները կամ դրանց մի մասը XVII դարում հայ խոջաների կողմից գնվել և վակֆ են տրվել Ագուլիսի Թովմա-Առաքյալի վանքին, որից հետո 1504 թ. այս հին «հոջջաթը» վերցվել և պահվել է վանքի դիվանում:

Գանձասարի վանքի դիվանում պահպանված կալվածագրերից է Ֆախր-էդ-դինյուների՝ Արցախի Խաչեն գավառում ունեցած մուլքերի մասին վկայող Քոչիզի Խազազ գյուղի 1573—1574 թթ. կալվածագիրը (վավ. 20):

Տաթևի վանքի XVI դ. մի քանի կալվածագրերի, նախապես վանքին պատկանող գյուղերի վակֆային սեփականություններ լինելը հաստատող բնույթը (վավ. 4, 14, 18, 19) և էջմիածնի վանքապատկան կալվածների վերաբերյալ վավերագրերի համարյա բացակայությունը թույլ է տալիս ասելու, որ XVI դարում վանական կալվածատիրությունը ևս մեծ տագնապ է ապրել: Երկարատև պատերազմների և անիշխանության շրջանում խիստ սահմանափակվել են հատկապես էջմիածնի կալվածները, և այդ վիճակը շարունակվել է մինչև XVII դարի 40-ական թվականները:

XVII դարում նվիրատվության ճանապարհով նոր վակֆային գյուղեր ձեռք բերելու հեռանկարներ համարյա չկային: Չկար այլևս

33 Մատենադարան, ԿՁԿ. ձեռ., թղթ. 1ա, վավ. 45:
34 Նույն տեղում, վավ. 46:

հայ կալվածատեր-ֆեոդալների այն դասակարգը, որ IX—XV դդ. մեծ ու փոքր մշակելի հողային տարածություններ և գյուղեր էր նվիրում վանքերին։ Ուստի էջմիածնի կաթողիկոսները, հիշյալ թվականից սկսում են հայ հավատացյալներից և ունևոր դասի ներկայացուցիչներից ստացվող գումարներով գանձագին մուլքեր ձեռք բերել և օտար կալվածատերերից գնելով, մինչև 1680-ական թվականները տասնապատկել վանքապատկան գյուղերի թիվը։

1633 թ., երբ Փիլիպոս կաթողիկոս Աղբակեցին հաջորդեց Մովսես Խոտանանցուն, էջմիածնի վանքն ուներ միայն Քիրաջլու գյուղի 6 դանգ մուլքը, որը Գրիգոր Մակվեցու օրոք վակֆ տրված 7 գյուղերից մեկն էր (վավ. 5)։ Մյուս գյուղերը XVI դարի ընթացքում յուրացվել էին տեղի իշխողների կողմից։ Յուրացվել էր նաև Վաղարշապատ գյուղը, որը թեև 1620 թ. Երևանի բեկլարբեկի Ամիր-Գունա խանը հատուկ հրովարտակով և շարիաթական արձանագրությամբ ետ էր վերադարձրել էջմիածնին[35], սակայն նրանից հետո նորից դուրս էր եկել վանքի ձեռքից և միայն Հակոբ կաթողիկոս Ջուղայեցու ջանքերով, Շահ Աբբաս Բ-ն հատուկ հրովարտակով վերջնականապես ետ վերադարձրեց[36]։

Ինչպես վերը տեսանք Հակոբ Ջուղայեցու օրոք արդեն մաս առ մաս գնված և էջմիածնի սեփականությունն էր դարձված Օշական գյուղի ամբողջ մուլքը։ Նույն կաթողիկոսը 1655—1670-ական թթ. ընթացքում կանխիկ դրամով գնում է հետևյալ գյուղերի մուլքերը.

1. Ղարադոլուն	6 դանգ	9. Նորք	6 դանգ
2. Ֆրանկանոց	6 »	10. Դիբաքլու (Սանդ)	6 »
3. Ամիրի գյուղ	4½ »	11. Ծոպանիս	6 »
4. Բաթմինջ	1 »	12. Կյատուր	6 »
5. Ցայլի	6 »	13. Գասախ	—
6. Մելիքի գյուղ	6 »	14. Թեղենիս	—
7. Մանկանոց	6 »	15. Սևավեր	—
8. Քեշիշքյանդ	6 »	16. Բյուրական	—

XVII դարի կեսերից Արարատյան երկրում երևան են գալիս նաև հայ առևտրական դասի առանձին ներկայացուցիչներ, որոնք գանձագին մուլքեր են ձեռք բերում և սկսում են մասնակի նվիրատվություններ կատարել էջմիածնի վանքին։ Այդպիսի առևտրական

35 «Հրովարտակներ», II, վավ. 14։
36 «Ջամբռ», էջ 103—104։

կալվածատերերից էին երևանցի խոջա-Սեթը և որդին՝ Հակոբը, սրա որդին՝ Սարգիսը, եղբորորդին՝ Սահակը և ուրիշներ[37]։

1658 թ. խոջա Հակոբը էջմիածնին է նվիրում Նորագեղի 6 և Եղվարդի 4½ դանգ մուլքերը[38]։ Դրանից երկու տարի առաջ մի այլ խոջա՝ Ոսկանի որդի Թարխանը նվիրում է Մաստարայի 2½ դանգը[39]։ Կատարվում էին նաև ազատ գյուղական համայնքների կողմից զանազան հանգամանքներում իրենց գյուղի մուլքի «կամավոր» նվիրատվություններ։ Ինչպես, օրինակ, 1660 թ. Բոխաննես գյուղի 6 դանգը նույն գյուղի ռայաթները վակֆ են անում էջմիածնին[40]։

Ճշգրիտ հաշվումներով Հակոբ Ջուղայեցու օրոք էջմիածինն ուներ 23 գյուղ, որոնցից 15-ի լրիվ 6 դանգն էր պատկանում նրան, երկուսի 4½ դանգը, մեկի 2½ դանգը և մեկի 1 դանգը։ Մյուս 4 գյուղերի դանգերի քանակի մասին աղբյուրներում որոշակի տեղեկություններ չկան։ Սակայն հիշյալ 23 գյուղերից շարիաթական ձևակերպմամբ միայն 6 գյուղերի մուլքերն էին վակֆային սեփականություններ համարվում (Վաղարշապատ, Քիրաջլի, Նորագեղ, Բոխաննես, Եղվարդ և Մաստարա)։ Մնացյալ 17 գյուղերի մուլքերը գանձագին սեփականություններ էին։

XVII դարի վերջերին էջմիածինը իրավամբ հաշվվում էր Արարատյան երկրի խոշոր կալվածատերերից մեկը։ Այդ կալվածատիրությունը սակայն, ըստ էության, արմատապես տարբերվում էր XV դարում ձևավորված վանական հողատիրությունից, որն, ինչպես տեսանք, ուղիղ գծով ժառանգված էր հայ աշխարհիկ ավատատիրությունից։ XVII դարի էջմիածնի գյուղատիրական կալվածատիրությունը հայ եկեղեցական հողատիրության մեջ բոլորովին նոր երևույթ էր և իր տնտեսական ակունքներով կապվում էր հայ առևտրական կապիտալի հետ։

Հատորիս ամենաարժեքավոր վավերագրերից են այն շարիաթական արձանագրությունները, որոնք վերաբերում են կալվածատիրական լծից ազատ գյուղական համայնքների պատմությանը և ուշագրավ տվյալներ են հաղորդում մինչև XVI դարի վերջերը պահ-

37 «Հրովարտակներ», II, վավ. 35, տե՛ս նաև նույն վավերագրի ծանոթագրությունը, հմմտ. «Ջամբռ», էջ 125։
38 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 103, հմմտ. «Ջամբռ», էջ 121, 122։
39 «Ջամբռ», էջ 114։
40 «Ջամբռ», էջ 126—127։

պանված այդպիսի մի քանի խոշոր գյուղական համայնքների մասին:

Դարաշամբի Դիբքյանդ գյուղի մուլքի նույն գյուղի համայնքի սեփականությունը լինելը հաստատող 1506 թ. կալվածագիրը (վավ. 13), ազատ գյուղական համայնքների առկայությունը հավաստող ամենահին վավերագիրն է: Այս կալվածագիրը, որ Նախջևանի կայազորային դատավորների առյանում կազմված շարիաթական արձանագրություն է, գրի է առնված այն ժամանակ, երբ Շահ Իսմայիլ Ա-ի կողմից գործուղված բարձրագույն դիվանի լիազոր-ներկայացուցիչները, մուլքերի և հողային այլ սեփականությունների ընդհանուր հաշվառում և սուգում էին անցկացնում: Այս ընթացքում «նախկին թագավորների հրովարտակների», «վավերական փաստաթղթերի ու հաստատուն արձանագրությունների» հիման վրա և «արժանահավատ անձանց» վկայությամբ, հաստատվում է նաև, որ Դարաշամբի Դիբքյանդ գյուղի ամբողջ մուլքը, կալվածագրում նշված սահմաններով և ներքին ու արտաքին բոլոր իրավունքներով «Դիբքյանդ գյուղի բնակչության քրիստոնյա համայնքի իրավունքն ու մուլքն է՝ զուտ հարստությունն ու անխառն և անբաժան սեփականությունը, և որպես մուլք, սահմանակցային իրավունքներով դեռևս նրանց հայրերի ու պապերի օրոք, սկսած հին ժամանակներից մինչև օրս, գտնվում է նրանց տիրապետության տակ և նրանց շարիաթական հաստատուն սեփականության ներքո, և ոչ ոք վերը սահմանագծված վայրի նկատմամբ, երբևէ, ոչ մի դեպքում և ոչ մի նպատակով կամ պատճառով, ոչ մի իրավունք, բաժին կամ մաս, պահանջ կամ վեճ չունի և չի կարող ունենալ»:

Ինչպես գիտենք Դիբքյանդ գյուղի համայնքի սեփականատիրական իրավունքները իրենց գյուղի մուլքի նկատմամբ վերահաստատվել է նաև 1557 թ. Ադերբայջանի վեզիր Միրզա Աֆաուլլայի կողմից նույն կալվածագրի վրա թողած մակագրությամբ: Այս մակագրության մեջ ընդգծված է, որ ոչ ոք իրավունք չունի անհանգրստացնելու համայնքի ռայաթներին, այլ պետք է թողնել «որպեսզի նրանք ամենայն ապահովությամբ զբաղվեն երկրագործությամբ, շենությամբ և շինարարությամբ և կատարեն այդ տարվա իրենց «մալի» բուն և հավելյալ գումարների պարտավորությունները»:

Ինչպես այս մակագրությունից, այնպես նաև բուն կալվածագրից պարզ երևում է, որ Դիբքյանդ գյուղի ռայաթները ազատ են եղել: Նրանց գյուղը սեփականատեր կամ «մալիք» չի ունեցել: Հետևաբար նրանք կալվածատիրական ռենտա կամ «բահրաչե-յե

մալիքանե» չեն վճարել, այլ հատուցել են միայն պետական ռենտա-հարկը՝ «մալը» կամ «մալոջհաթը»: Ուշագրավ է այն փաստը, որ շարիաթական ձևակերպմամբ այս ևս դիտվել է որպես մուլքատիրություն և ռայաթները de jure համարվել են գյուղի մուլքի սեփականատերը կամ «մալիքը»:

Ֆեոդալական սեփականատիրության առումով, գյուղերը կամ պետական էին, որոնք կոչվում էին «դիվանի», կամ պատկանում էին շահական արքունիքին և կոչվում էին «խասե-յե շարիֆե», կամ վակֆային մզկիթապատական-վանքապատական գյուղեր էին, որոնք ընդհանուր անունով կոչվում էին «մովկուֆաթ» և կամ որպես ժառանգական կամ մուլքային սեփականություններ ճանաչված գյուղեր էին, որոնք կոչվում էին «մալիքանե» կամ «արբաբի»: Ազատ համայնքներին պատկանող գյուղերը հատուկ անվանում չունեին: Դրանք դիտվում էին որպես այնպիսի սեփականություններ, որոնց ռենտայի մի մասը մուլքային գյուղերի նման համարվում էր մասնավոր սեփականություն: Ուստի շարիաթական իրավունքով դրանք ևս մուլք էին: Այն տարբերությամբ միայն, որ առանձին ֆեոդալ-սեփականատիրոջ փոխարեն, գյուղից գանձվող ռենտայի այդ մասի մալիքը կամ սեփականատերը՝ ինքը գյուղական համայնքն էր: Այսպես է արձանագրված ինչպես այս, այնպես նաև Դարաշամբի մյուս երկու գյուղերի՝ Օրթաբյանդի և Բաշքյանդի XVI—XVII դդ. կալվածագրերում:

Կաթողիկոսական դիվանի մի քանի կալվածագրերից և հրովարտակներից պարզվում է, որ Դարաշամբի այս երեք գյուղերը վաղ ժամանակներից ի վեր ազատ են եղել կալվածատիրական լծից և չնայած առանձին կալվածատերերի և կրոնական հաստատությունների կողմից դրսևորվող հափշտակողական տրամադրություններին, համառ պայքարի գնով կարողացել են պահպանել իրենց իրավունքները[41]:

1658 թվականից վակֆային սեփականատիրական պահանջներով հանդես է գալիս Թավրիզի Շեյխիյե մզկիթի սարքաբությունը, փորձելով ապացուցել, որ այդ գյուղերը ժամանակին վակֆ են տրված եղել հիշյալ մզկիթին: Երեք գյուղերի համայնքները չեն ճանաչում այդ պահանջները և բողոքում են Շահ Աբբաս Բ-ին, որը կարգադրում է Ադերբայջանի բեկլարբեկիին ստուգել իրողությունը և եթե այդ պահանջը հաստատող համապատասխան շարիաթական

41 Մատենադարան, կրկն. դիվան, թղթ. 1բ, վավ. 103, 130, 139, թղթ. 1գ, վավ. 271, 274, 279, 312:

փաստաթղթեր չկան, թույլ չտալ որպեսզի մզկիթի սարքարությունը ոտնձգություններ կատարի այդ գյուղի նկատմամբ:

Սակայն հետագնդումները շարունակվել են, և տաս տարի հետո՝ 1668 թ. այդ գյուղերի համայնքների ներկայացուցիչները ստիպված են եղել գնալ Սպահան և նոր խնդրագիր ներկայացնել Շահ Սուլեյմանին: Հարցը այս անգամ քննվում է Սպահանի Դիվան-ալ-սադարաթում, որտեղ հաշվի են առնվում ոչ միայն գոյություն ունեցող փաստաթղթերը, այլև ստուգվում են Թավրիզի Շեյխիյյե մզկիթի հաշվեմատյանները, և պարզվում է, որ այնտեղ, այդ գյուղերի վակֆ լինելը ապացուցող ոչ մի տվյալ չկա: Ուստի առանձին վճռագրով («միսալ») Դիվան-ալ-սադարաթը նորից հաստատում է, որ գոյություն ունեցող բոլոր փաստաթղթերը խոսում են այդ գյուղերի մուլքի, նույն գյուղի ռայաթներին պատկանելու օգտին: Շահ Սուլեյմանը այդ վճռի հիման վրա, իր ֆերմանով կարգադրում է. «Ապօրինի անհանգստությունն չպատճառել այդ գյուղերի ռայաթներին և Շար'ի որոշման համաձայն, բացի դիվանական բահրաչեյից, բոլոր այդ վայրերը ճանաչել որպես նույն գյուղի ռայաթների սեփական մուլքը»[42]:

Այս բոլորից հետո թվում է, թե հարցը պետք է սպառված համարվեր: Սակայն շուրջ 60 տարի հետո նորից հանդիպում ենք վավերագրերի, որոնք խոսում են այդ վճռի վերանորոգման մասին: Այս անգամ ևս Շար'ի դատարանը մերժում է մզկիթի սարքարության բողոքը, պահանջելով գյուղերի վակֆ լինելն ապացուցող համապատասխան վակֆնամե: Մզկիթի տնօրենը թեև ներկայացնում է ինչ-որ մի արձանագրություն, սակայն Շար'ում պարզվում է, որ այդ գրությունը և նրա վրա դրված կնիքները կեղծ են:

Վեճը ձգվում է մինչև XVIII դարի սկզբները: Դարաշամբի այս երեք հայկական գյուղերի ռայաթների իրավունքները պաշտպանելու համար ոտքի են ելնում նաև մոտակա ադրբեջանական գյուղերում և Նախջևանում բնակվող անվանի և հասարակ մարդիկ: 1717 թ. կազմված մի համախոսականի վրա իրենց կնիքներն ու ստորագրություններն են դնում Նախջևանի և մոտակա բաղմաթիվ գյուղերի ադրբեջանցի բնակիչները՝ գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ և վկայում, որ «Դարեր շարունակ այդ գյուղերի մուլքերը պատկանել են նույն գյուղի ռայաթներին, և իրենք երբևէ չեն լսել, որ դրանք որևէ մզկիթի վակֆերը եղած լինեն»[43]:

[42] Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 130բ:

[43] Նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 271:

Խիստ արժեքավոր այս վավերագրերը չափազանց պերճախոս ապացույց են հայ և ադրբեջանական աշխատավոր գյուղացիության այն համատեղ պայքարի, որ նրանք մղում էին ինչպես հայ, այնպես նաև մուսուլմանական կրոնական խոշոր հասատատությունների կողմից դրսևորվող հափշտակողական տրամադրությունների դեմ: Ադրբեջանցի ռայաթները արհամարհելով բոլոր տեսակի կրոնական արգելքները, բացարձակ կերպով դուրս էին գալիս այնպիսի մի խոշոր մուսուլմանական հաստատության դեմ, ինչպիսին էր Թավրիզի Շեյխիյյե մզկիթը, ամեն կերպ ձգտելով պաշտպանել բախտակից հայ ռայաթների շահերը և փրկել նրանց հողերը հափշտակումից:

Շարիաթական վավերագրերի և ադրբեջանական համայնքների համախոսական գրությունների բովանդակությունը թույլ է տալիս ասելու, որ հիշյալ երեք գյուղերի համայնքների ազատությունը, որը շարիաթով ձևակերպված էր որպես մուլքային սեփականություն, դարերի պատմություն ուներ: Թերևս կարելի է ենթադրել, որ դրանք հին ազատ համայնքների մնացորդներ էին, որոնց մասին առանձին ակնարկներ կան մեր մատենագիրների մոտ[44], և կամ այդ ազատությունը ժամանակին շնորհված է եղել նրանց՝ հայ իշխանների կողմից:

Այս ենթադրությունը ավելի հավանական է դառնում, երբ ծանոթանում ենք Մեղրիի 1576 թ. կալվածագրի հետ (վավ. 24): Եթե Դարաշամբի երեք գյուղերի կալվածագրերը հավաստում են համայնքային հողատիրության գերապրուկների առկայությունը XV—XVIII դարերում, ապա Մեղրիի հիշյալ կալվածագիրը ամենայն պարզությամբ խոսում է այն մասին, որ «մալիքանե» կամ «արքաբի» գյուղերի համայնքները իրավունք են ունեցել և կարողացել են գյուղատիրոջից կամ մալիքից կանխիկ դրամով ետ գնելու իրենց գյուղի մուլքը: Այս դեպքում արդեն մենք գործ ունենք գանձագին համայնքային հողատիրության հետ: Սա անշուշտ ուշագրավ փաստ է և օգնում է լուսաբանելու գյուղական համայնքի իրավական վիճակի և ներքին ու արտաքին իրավունքների հետ առնչվող շատ հարցեր:

Սկզբնաղբյուրներում և հատկապես պատմական վավերագրերում կան վկայություններ գյուղական համայնքի զանազան տնտեսական գործարքների մեջ որպես իրավական կողմ հանդես գալու

[44] Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 230:

վերաբերյալ։ Կան, օրինակ, փաստեր, երբ պետական հարկերի ծանրության տակ համայնքն ստիպված է եղել հարուստ կալվածատերերից խոշոր փոխառություններ կատարել և գրավ դնել գյուղի հողերի մի մասը[45], կամ պարտքի դիմաց պարտավորվել է կալվածատիրոջը կամ մալիքին կրկնակի չափով ռենտա վճարել[46]։ Նույնիսկ որոշ ազատ համայնքներ ծանր պարտքերի տակ ընկնելով ստիպված են եղել դիմել որևէ կալվածատիրոջ և գյուղի մուլքը վաճառելով՝ պարտավորվել են ամեն տարի բերքի որոշ տոկոսը տալ նրան[47]։

Կասկածից դուրս է, որ համայնքի կողմից գյուղի մուլքի ետ գնումը հնարավոր էր միայն հարուստ գյուղերում։ Հայտնի է, որ Մեղրի գյուղը Գողթնի խոշոր գյուղերից մեկն էր, որ դեռևս իլխանների ժամանակ դասված էր «խասս» գյուղերի շարքը։ Այս կալվածագրում նույնպես նշված է, որ գյուղը նախապես պատկանել է Շահ Թահմազ Ա-ին, այսինքն՝ թագավորական «խասսե-յե շարիֆե»-ի գյուղերից է եղել։ Շահն այդ գյուղը վաճառել է ջուղայեցի նոր մահմեդական Մուրադ-բեկին, իսկ վերջինս սույն կալվածագրով 1576 թ. 316 թումանով վաճառում է նույն գյուղի համայնքին[48]։

Խասս գյուղերը, որպես շահական արքունիքին պատկանող գյուղեր, անհամեմատ ավելի արտոնյալ վիճակում էին գտնվում և ավելի քիչ էին ենթակա շահատակություններն ու հարստահարությանը։ Հարյուրամյակներ շարունակ այդպիսի նպաստավոր պայմաններում ապրող գյուղացիների համար դժվար էր համակերպվել նոր իրադրության հետ և դառնալով կալվածատիրոջ հողերը մշակող ռայաթներ, ենթարկվել և՛ վերջինիս գործակալների և՛ պետական պաշտոնյաների ու հարկահանների շահատակություններին։ Այդ վիճակից դուրս գալու միակ ելքը մնում էր միայն գյուղի մուլքի ետ գնումը, որին միասնաբար մասնակցում են գյուղի երեք թաղերի առանձին համայնքների բոլոր ռայաթները։

Դժվար է ասել, թե որքան է տևել այդ վիճակը։ Հայտնի է սակայն, որ XVII դարի երկրորդ կեսում արդեն Մեղրին նորից հիշվում է թագավորական խասսերի շարքում[49], որը և գալիս է կրկին անգամ

45 Մատենադարան, Կիրկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 286, համմտ. «Ջամբռ», էջ 174—175։

46 Նույն տեղում, վավ. 290, համմտ. «Ջամբռ», էջ 111—112։

47 «Ջամբռ», էջ 126—127։

48 Գյուղի գնի մասին մանրամասն տե՛ս նույն վավերագրի ծանոթագրությունը։

49 Ջաֆարիա Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 112, 113։

հաստատելու այն իրողությունը, որ ռայաթների համար միշտ նախընտրելի է եղել ընդգրկված լինել խասս գյուղերի համայնքի մեջ, քան նույնիսկ լինել ազատ համայնքների անդամ, որոնց անապահով վիճակի հետ մենք առիթ ունեցանք ծանոթանալու Դարաշամբի երեք գյուղերի նկատմամբ դարեր շարունակ դրսևորվող ոտնձգությունների պատմությունից։

XIV—XVI դդ. կալվածագրերը հողատիրության և հողային հարաբերությունների պատմության եզակի նշանակություն ունեցող սկզբնաղբյուրներ են։ Նրանց մեջ պաշտոնապես վավերացված են ոչ միայն խոշոր հողատիրության տարբեր ձևերի և հողատիրության առանձին ինստիտուտների սոցիալական և իրավական հիմունքները, այլև, որպես նույն ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքն արտացոլող փաստաթղթեր, պարունակում են ավատատիրական հասարակության շատ հարցերի լուսաբանման համար բացառիկ արժեք ներկայացնող տվյալներ։

Սույն առաջարանի սահմաններում հնարավոր չէ անդրադառնալ այն բոլոր հարցերին, որոնց ուսումնասիրությունը այս կամ այն չափով առնչվում է ներկա հատորով հրատարակվող վավերագրերի հետ։ Բացի հայ ավատատիրության և հատկապես խոշոր՝ մուլքային հողատիրության պատմությանը վերաբերող վավերագրերից, հրատարակվող վավերագրերի մեջ կան նաև առանձին հողակտորների և այլ հողային ստացվածքների առուծախին կամ նվիրատվությանը վերաբերող կալվածագրեր, որոնք օգնում են պարզելու համայնքի ներսում հողաբաժանման (վավ. 22), ռայաթների կողմից մշակվող առանձին հողաբաժինների նկատմամբ նրանց տիրության և տնօրինման իրավունքների (վավ. 15), գյուղի սահմաններից դուրս գտնվող առանձին մշակված տարածությունների (վավ. 17), տարբեր գյուղական համայնքների կողմից օգտագործվող հողերն ու արոտավայրերը միմյանց վաճառելու (վավ. 26) վերաբերյալ և բազմաթիվ այլ հարցեր։ Այդ հարցերի մեծ մասին անդրադարձել ենք Արևելյան Հայաստանի XV—XVII դդ. խոշոր հողատիրության և հողային հարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված առանձին մենագրության մեջ։

Հրատարակության հանձնելով Մատենադարանի հնագույն կալվածագրերի այս անդրանիկ պրակը, կարծում ենք, որ այն կարող է օգտակար լինել ոչ միայն Հայաստանի և Ադրբեջանի, այլ նաև Իրանի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի երկրների XIV—XVI դդ. սոցիալ-տնտեսական՝ հատկապես հողային հարաբերությունների ու-

սումնասիրությանը: Արևելագետ տեքստաբանների համար առանձին հետաքրքրություն կարող են ներկայացնել կալվածագրերի պարսկերեն-արաբերեն բնագրերը, որոնք իսլամական դիվանագրության վերաբերյալ հարուստ նյութ են պարունակում:

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

ՎԱՎԵՐԱԳԻՐ 1

Լիմի ս. Գևորգ վանքի վանքապատկան հողերի 1305 թ. կալվածագիրը

թղթապանակ 3, վավ. 129, պատենե
մեծ. 100×34 սմ. գիր՝ նասխ

Ինչ որ առաջանում է և գոյություն է ունենում, նա տեղյակ է դրանց: Նա իսկապես տեղյակ է բոլոր գաղտնիքներին և իր էությամբ տիրապետում է առաքինիների օթևաններին և այնտեղ եղած բոլոր մարդկանց՝ աննկատ:

Եվ ես իմ ձեռքով վավերացնում եմ ինչ որ բացատրված և վավերացված է, ինչ որ հաստատված է **շարիաթով** *և կատարված է ըստ* **շարիաթի**. *հաստատում եմ նրա վավերականությունը և պատասխանատու եմ:*

Յուսուֆի որդի, ծառա Հաֆիզ-էդ-դին Աբդ-ուլ-Մաջիդ խոյեցի:

կնիք

Սույնի բովանդակությունը հաստատված է ինձ մոտ և ես հաստատեցի այն մարգարեական սրբազան **շարիաթի** *ոգուն համապատասխան... և [պատասխանատու եմ...]:*

Գրեց ողորմած աստծու առաջ տնանկ... աստվածախնամ վանքի [քաղաքի] **կազի**՝ *Ահմադը:*

կնիք

Աստվածախնամ վանքի **կազայում**՝ **Մեվլա** *Շարաֆ-էդ-դին:*

կնիք

Նա առաջնորդում է ճշմարտության ճանապարհով:

Սույնի բովանդակության մեջ նշվածը տեղի ունեցավ աստծու հաքտության առաջ տնանկ, Ալիի որդի, Հասանի որդի Ջալալ-էդ-

դին Համադանցու ներկայությամբ,— թող աստված ների սրանց [բոլորին]։

Կնիք

Ինչ որ ի ներքո նկարագրված է այս **վակֆային** վավերագրում, բովանդակում է աստվածախնամ Վան [քաղաքին] ենթակա, Ամյուկի **լիվայում** գտնվող և Լիմ կոչվող եկեղեցուն պատկանող **վակֆերը**, որոնք նվիրված են **գիմմի** քրիստոնյա հայերի կողմից։ Սույնի բովանդակությունը հաստատեցի սրբազան **շարիաթին** համապատասխան, և **վակֆերը**, ինչպես որ իրենց տեղում կային, արտոնեցի ստորագրությամբ։

Շար'ի նվաստ սպասավոր, Մուհամմադի որդի Շուջա, որին տրված է Վանի **կազիությունը**։

Կնիք

Սույնի բովանդակությունը կարգավորված է **Շարիաթի** օգուն համապատասխան։

Գրեց՝ Ավազի որդի, կարոտյալ **Մեվլա** Մուսլիհ-էդ-դինը աստվածախնամ Վանի **կազայում**,— և թող աստված ների նրանց [երկուսին]։

Կնիք

Առանց հավելումների և կրճատումների ընդօրինակվեց իսկական վավերագրից։

Գրեց՝ Աբդ-ուլ-Ռահիմի որդի, վանեցի ծառա Մուհամմադը,— և թող աստված ների նրանց [երկուսին]։

Կնիք

Փառք աստծուն, որի իշխանությունը սուրբ է, շնորհը ողորմած, փառքը մեծ, երախտիքը համատարած։ Փառաբանում ենք նրա ամենապայծառ իմաստությունը, այնպիսի փառաբանությամբ, որը ճարտար լեզուն անզոր է արտասանել և արտահայտել, և հայցում ենք, որ նա օրհնի Մուհամմադին, որի դավանանքը ճշմարիտ ուղի նշեց իսլամի օրենքների և հիմունքների համար, և նրա ընտանիքին, կրոնի մերձավորներին և աջակիցներին։

Այնուհետև այս **շարիաթական** լսված արձանագրության մեջ հիշատակված է այն մասին, որ Գյուրջի-բեկի որդի, Մելֆեդդինի որդի Զաքարիա կաթողիկոս Արծրունին, երբ վավերական էին նրա **վակֆ** անելու, ստացվածքների տիրելու և այլ իրավունքները, հասուն և գիտակից տարիքում, ձգտելով առատ վարձատրության և

խուսափելով հանցանքներից ու մեղքերից, և քանի որ ամեն մեկին իր կատարած բարեգործությունների համար արժանին պիտի հատուցվի, **վակֆ** արեց, ամրացրեց, բաշխեց և նվիրեց [հետևյալները]։

Ամյուկին ենթակա Ջանիկի դաշտում գտնվող երկու հողակտորներ, որոնցից [առաջինի] սահմանները հարավային կողմից հասնում են մինչև վտակը, հակառակ կողմից մինչև ճանապարհը, արևելյան կողմից մինչև ընդհանուր ճանապարհը և արևմտյան կողմից մինչև վտակը, և հիշյալ դաշտում գտնվող մյուս հողակտորը, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև վտակը, հակառակ կողմից մինչև Ջանիկի հողը, արևելքից մինչև Թաշրմլուի ճանապարհը և արևմտյան կողմից մինչև ջրանցքը, իրենց բոլոր սահմաններով, իրավունքներով և ենթականերով։

Նորշեն գյուղում գտնվող հինգ հողակտորներ և մեկ ջրաղաց, որը գտնվում է Սաքիթլուի հովտում և որի սահմանները հայտնի են տեղյակ մարդկանց։

Այդ թվում ամբողջ մի հողակտոր, որ գտնվում է Ամյուկին ենթակա հիշյալ գյուղում և որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Խազար-բեկի հողը, հակառակ կողմից՝ մինչև ընդհանուր ճանապարհը, արևելյան կողմից՝ մինչև փոքրիկ հովիտը, արևմտյան կողմից մինչև Ամիր-Իսայի հողը։

Հիշյալ գյուղում գտնվող մի հողակտոր, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև ընդհանուր ճանապարհը, հակառակ կողմից՝ մինչև ջրաղացը, արևելյան կողմից մինչև Փոքրիկ բլուրը, արևմտյան կողմից մինչև Մաճկալի հողը, իր բոլոր սահմաններով, իրավունքներով և ենթականերով։

Ամյուկին ենթակա հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև վտակը, հակառակ կողմից՝ մինչև Ամիր-բեկի հողը, արևելյան կողմից՝ մինչև Լիճը, արևմտյան կողմից՝ մինչև Պատրիկի հողը, որ հայտնի է Լճի տակ [անունով], իր բոլոր սահմաններով, իրավունքներով և վերաբերյալներով։

Ամյուկին ենթակա հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Ամիր-Իսայի հողը, հակառակ [կողմից] մինչև Դուզջի, արևելյան կողմից՝ մինչև Քահանայի հողը և արևմտյան կողմից՝ մինչև Խուդաբախշի հողը։

Հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Ցամաք վտակը, հա-

կառակ կողմից՝ մինչև վտակը, արևելյան կողմից՝ մինչև Մաճկալի հողը, արևմտյան կողմից՝ մինչև Գելաշենի հողը, իր բոլոր սահմաններով և վերաբերող իրավունքներով։

Եվ այսպես, Ատեր գյուղում գտնվող վեց հողակտորներ և մեկ ջրաղաց, որի սահմանները հայտնի են տեղյակ մարդկանց։

Այդ թվում, հիշյալ գյուղում գտնվող մի հողակտոր, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև ընդհանուր ճանապարհը, հակառակ կողմից՝ մինչև վտակը, արևելյան կողմից՝ մինչև **վակֆը**, արևմտյան կողմից՝ մինչև հայոց գերեզմանատունը։

Այդ թվում, հիշյալ գյուղում գտնվող ևս մի հողակտոր, որը հայտնի է Ճանապարհի հող [անունով] և որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև ընդհանուր ճանապարհը, հակառակ կողմից՝ մինչև Խազար-բեկի հողը, արևելյան կողմից՝ մինչև վտակը, արևմտյան կողմից՝ մինչև վտակը։

Այդ թվում հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Քահանայի հողը, հակառակ կողմից՝ մինչև Քահանայի հողը, արևելյան կողմից՝ մինչև Քահանայի հողը, արևմտյան կողմից մինչև Ադի հողը, որ հայտնի է Բարակ հող [անունով], իր բոլոր սահմաններով, իրավունքներով և ենթականերով։

Այդ թվում հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որ հայտնի է Ադի հող [անունով] և որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Խազար-բեկի հողը, հակառակ կողմից՝ մինչև Խազար-բեկի հողը, արևելյան կողմից՝ մինչև Ամիր-բեկի հողը, արևմտյան կողմից՝ մինչև Ադի հողը։

Այդ թվում հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որ հայտնի է Այգու հող անունով, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև ընդհանուր ճանապարհը, հակառակ կողմից՝ մինչև Ամիր-բեկի հողը, արևելյան կողմից՝ մինչև Քահանայի հողը, արևմտյան կողմից՝ մինչև Խազար-բեկի հողը, իր բոլոր սահմաններով, վերաբերող ու հավելյալ, ենթակա և կից [ամեն ինչով]։

Այդ թվում, հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր. հողը գտնվում է ջրաղացի մոտ։ Նրա սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Խազար-բեկի հողը, հակառակ կողմից՝ մինչև Ամիր-բեկի հողը, արևելյան կողմից՝ մինչև Իսֆահանշահի հողը արևմուտքից՝ մինչև Ջրաղացի հողն ու հայոց գերեզմանատունը։

Այդ թվում հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Խազար-բեկի

հողը, հակառակ կողմից՝ մինչև Արյունոտ (Կանլի) ճանապարհը, արևելյան կողմից մինչև մարգագետինը, արևմտյան կողմից՝ մինչև Փոքրիկ բլուրը, իր բոլոր սահմաններով, իրավունքներով, ենթակա և կից [ամեն ինչով].

Նորավանից գյուղում գտնվող յոթ հողակտորներ և մեկ ջրանցք, որի սահմանները հայտնի են տեղյակ մարդկանց։

Այդ թվում Քահրիզի հողը, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև ընդհանուր ճանապարհը, հակառակ կողմից մինչև Մեծ բլուրը, արևելյան կողմից մինչև մարգագետինը և Շան այրը, արևմտյան կողմից մինչև Ջուլհակի հողը։

Հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Միրանի հողը, հակառակ կողմից մինչև Փոքրիկ քարը, արևելյան կողմից մինչև Ախանեսի (Հովհաննես) հողը, արևմտյան կողմից մինչև Ջուլհակի հողը։

Հիշյալ գյուղում գտնվող մի հողակտոր, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Ջուլհակի հողը, հակառակ կողմից՝ մինչև Դովլաթշահի հողը, արևելյան կողմից՝ մինչև ընդհանուր ճանապարհը, արևմտյան կողմից՝ մինչև Միրանի հողը, որը հայտնի է Վերելքի հող անունով.

Հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որ հայտնի է որպես Սիանոսի հող և որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Շահգյալդիի վարած [հողը], հակառակ կողմից՝ մինչև Ջուլհակի հողը, արևելյան [կողմից]՝ մինչև ճանապարհը, արևմտյան [կողմից] մինչև Մեծ բլուրը։

Հիշյալ գյուղում գտնվող մի հողակտոր, որ հայտնի է Եզնակեր անունով և որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Շահգյալդիի վարած [հողը], հակառակ կողմից մինչև Ադի հողը, արևելյան կողմից մինչև Դովլաթշահի հողը, արևմտյան կողմից՝ մինչև Կարմիր քարը։

Հիշյալ գյուղում գտնվող ամբողջ մի հողակտոր, որ հայտնի է Յուլդուզ խաչի հող անունով և որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Ջուլհակի հողը, հակառակ կողմից մինչև Յուլդուզ խաչի հողը, արևելյան կողմից՝ մինչև Միրիջանի հողը, արևմտյան կողմից՝ մինչև Ադի վայրի հողը (Ջաշուր)։

Հիշյալ գյուղում գտնվող մի հողակտոր, որ հայտնի է Սպիտակ քարի հող անունով, և որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Սպիտակ քարը, հակառակ կողմից՝ մինչև Փոքրիկ բլուրը, արևելյան կողմից մինչև ճանապարհը, արևմտյան կողմից՝

մինչև Խոշխաբարի հողը, իր բոլոր ենթակա և կից ներքին և արտաքին [ամեն ինչով]։

Այդ թվում նաև Օվանեսի ագարակը, որի սահմանները հարավային կողմից հասնում են մինչև Մեծ բլուրը, հակառակ կողմից մինչև Աբրուխամուկի վանքը, արևելյան կողմից մինչև Մեծ բլուրն ու Բելինասը (?) և արևմտյան կողմից՝ մինչև ընդհանուր ճանապարհն ու աղբյուրը, իր բոլոր սահմաններով և իրավունքներով և նրան վերաբերող, ենթակա, կից և հավելյալ [ամեն ինչով]։

[Այս բոլորը] **շարիաթով** ճշմարիտ **վակֆ** են արված և վերջնականապես, ընդմիշտ և հավիտյանս պարզ ու լսելի կերպով ամրացված են Լիմի հիշյալ եկեղեցուն, նրա կարիքները [հոգալու համար]։ Որպեսզի այն ընդմիշտ [ապահով լինի] ժամանակի պատահարներից։ Թող [**վակֆերը**] չվաճառեն, գրավ չդնեն, չնվիրեն, չփոխեն և երեք տարուց ավելի ժամանակով վարձով չտան, **վակֆերի** հասույթը խարդախ կերպով չշուրացնեն և ոչ մի փոփոխության չենթարկեն, որովհետև այն հաստատուն է իր հիմքով և ծանոթ բոլորին։ Մինչև որ այդ հողերը իրենց վրա գտնվող մարդկանցով կանգնեն իրենց լավագույն տիրոջը՝ Աստծուն։ Թող կառուցվեն աղոթատեղիներ (խցեր) և [եկամուտները] ծախսեն իրենց **վակֆերի** ու հիշյալ եկեղեցու նորոգման վրա. բարեկարգեն առաստաղներն ու ներքին պատերը, ծեփեն կտուրն ու արտաքին պատերը, հատակը ծածկեն գորգերով, [գնեն] ծնծղաներ, անոթներ, բուրվառներ և իրենց անհրաժեշտ այլ գործիքներ։ Որպեսզի միշտ շեն և բնակելի լինի։ Այս [եկամտից] ավելացածով թող իրենց սեղանից օրվա մեջ երկու անգամ կերակրեն խեղճ և կարոտյալ երթևեկողներին. առաջին անգամ մսով եփված ճաշով և ինչպես ընդունված է քաղաքում՝ իրենց ամաններով, իսկ երկրորդ անգամ [ճաշ] տալ երեկոյան։ Ավելացած [գումարներով] էլ թող գնեն նոր ստացվածքներ իրենց մյուս **վակֆերի** նման։

Վերոհիշյալ **վակֆ** անողը պայման դրեց, որ որևէ մեկը չփորձի փոխել այս **վակֆը,** փոփոխումը հակառակ է Ղուրանի ոգուն։ «Ով որ այն փոխի և այդ կատարի այս մասին լսելուց հետո, նա հանցավոր է և ուրացող Աստծու նկատմամբ, որը լսում է և տեղյակ է ամեն ինչի»[1]։ Այդպիսին կենթարկվի ամենակարող Աստծու զայրույթին և պատժին ինչպես Փարավոնն ու Համանը և նրանց զինվորները։ Այդ-

[1] Ղուրան, II, 177։

պիսիք թող կրեն աստծու անեծքները ու անիծված լինեն բոլոր հրեշտակների ու մարդկանց կողմից։

Վկաներ կան այս արդար արձանագրությանն ու **վակֆ** անողի հայտարարությանը և այն բոլորին ինչ որ հիշված է այս գրության մեջ սկզբից մինչև վերջը։

Յոթ հարյուր չորս թվականի սրբազան շաբան ամսի կեսերին (1305 թ. մարտ 13).

Սույնի բովանդակությանը վկա եմ, իրական է և օրինական.
Օմարի որդի Խալիլ...

Սույնի բովանդակությանը վկա եմ, իրական է և օրինական.
Օմարի որդի Հասան...

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Իլյասի որդի Խըտըր։

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Ալլահվերդիի որդի Յուսուֆ։

Սույնի բովանդակությանը վկա եմ, իրական է և օրինական.
Կալանդարի որդի Օմար։

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Վալիի որդի Հասան։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 2

1345 թ. պատկանելիությունն անհայտ մի կալվածագրի վերջավորությունը

թղթապանակ 1ա, վավ. 2, բնագիր
մեծ. 34×23, գիր՝ նասխ

...[Ոչ] այն բանի նկատմամբ ինչ որ հայտարարվեց և ոչ էլ Նրա բոլոր մերձակա ու ենթակա [վայրերի] կամ նրանց մի մասի նկատմամբ [ոչ ոք ոչ մի] հավակնություն [չունի]։ Առանց որևէ մեկի նա կարող է տիրել դրանց ըստ իր ցանկության և կամքի, ինչպես կալվածատերերն են տիրում իրենց կալվածներին **(մուլքերին)** և տերերը՝ իրենց իրավունքներին, առանց որևէ արգելքի, վեճի և դիմադրության։

Ապա հայտարարություն լսողը ընդունեց այն, ինչ որ հայտարարողը նրանից բխող ամեն ինչով հաստատեց իր հայտարարությամբ, անաչառ ընդունմամբ և հաստատմամբ, որպես դեմ առ դեմ [կատարվող] ընդունում և երես առ երես [կատարվող] հաստատում:

Ուստի հիշյալ հայտարարողը կամ նրա կողմից որևէ մեկը չի կարող այլևս վիճարկել վերոգրյալին և խախտել վերը նշվածը, որովհետև նրա կողմից դրսևորվող որևէ վիճարկություն կամ հավակնություն կդիտվի որպես բռնություն, անարդարություն, թշնամություն, խաբեբայություն և անհնազանդություն:

Մի խումբ արդարամիտ, բարեմիտ և վստահության արժանի, բարեգործ և ուղղամտությամբ հռչակված մարդիկ, որոնք օժտված էին կատարյալ հատկություններով և գովաբանված ուրույն գովեստներով և որոնք գիտեին [սույնի] բովանդակությունը և ծանոթ էին իմաստին և որոնց անունները, պատկանելիությունը, վկայություններն ու ստորագրությունները գտնվում են սույն **շարիաթական** *արձանագրության վերջում, անձամբ ներկա եղան և վկայեցին սրբազան* **շարիաթի** *և ճշմարիտ ու լուսավոր կրոնի համար վստահելի,* **շարիաթական** *ճշգրիտ վկայությամբ:*

Եվ հրամայեց ինձ ինքնիշխան հաքիմը, որը պիտի սրբագործի այս գրությունը և որն իր սրբազան և պատվարժան կնիքով զարդարել է այս արձանագրությունը և որի գրիչը ընթացավ ճշմարիտ ուղիով՝ այստեղ հիշված հայտարարողի վերաբերյալ վճռի ընդունման և հաստատման գործում:

Հիշատակվեց այս մասին հիջրեթի յոթը հարյուր քառասունհինգ թվականի բարեբախտ ռամազան ամսի 10-ին (1345 թ. հունվար 15), և գոհություն ենք հայտնում տիեզերքի տիրոջ, օրհնություն և խաղաղություն նրա առաքյալներից լավագույնին և ճշմարտության արտահայտողին՝ Մուհամմադին և նրա ազնիվ ու մաքուր սերունդներին:

Գրեց Մուհամմադի որդի Ալիի որդի Խալիլը... գրելով... և վկայելով բովանդակությանը, յոթը հարյուր քառասունհինգ թվականի ռամազանի 10-ին: Փառաբանելով աստծուն...

Վկայեց սույն գրության բովանդակությանը: Վկայությամբ Ալիի որդի... ի որդի Մուհամմադի որդի, Օմարի որդի Մահմուդի: Գրեց ստորև...

Յունիսի որդի Մուսայի վկայությամբ: Գրեց...

Վկայությամբ Աբդ-ուլ-Վասե'ի որդի, Հաջիի որդի, Մուհամմադի որդի Հաջիի: Գրեց...

ՎԱՎԵՐԱԳԻՐ 3

Տաթևի վանքապատկան Խոտ, Շնհեր և Հալիձոր գյուղերի սահմանների մանրամասն նկարագիրը պարունակող 1400 թ. կալվածագիրը

թղթապանակ 2ա, վավ. 1, բնագիր
մեծ. 82×18. գիր՝ նասխ.

[Այս կրոնական հաստատուն վկայագրի գրառման պատճառը և այս շարիաթական ճշմարիտ թղթի և օրինական պարզ ու լսելի գրության շարադրման նպատակն այն է, որ նախկին թագավորների հրովարտակների բովանդակությունից և վստահության արժանի նախկին և ներկա **կազիների** *ձեռքով գրված ու կնքված առանձին արժանահավատ, ճշմարիտ ու վավերական փաստաթղթերից և հաստատուն արձանագրություններից], ինչպես նաև Ազերբայջանի երկրի Ղափանաթի, Սիսաջանի և Թուման-ե նախջևանի* **օլքաների** *բարձրաստիճան, արդարամիտ մարդկանց վկայությունից պարզվելուց և ապացուցվելուց հետո, հաղթական բանակի* **կազիների** *ատյանում հաստատվեց, որ Խոտ, Շնհեր և Հալիձոր գյուղերի ամբողջ վեց* **դանգ մուլքերը,** *որոնց սահմանն սկիզբ է առնում Ուռուի գյուղի գետահովտից, որն ընկած է Խոտ և Բորդի գյուղերի սահմանների արանքում, այստեղից էլ շարունակվելով, ձգվում և հասնում է ծանոթ լեզվով Այուդարակ (Արջաձոր) [կոչվող վայրին], ապա գնում է դեպի Զողալլու դարակ (Հոնուտի ձոր), և որի հաջորդ սահմանագիծն է Զողալլու գամինը (Հոնուտի հող), որտեղից սահմանն անցնում և միանում է մի ջրի, որ կոչվում է Համիդ-գյոլ (Համիդի լիճ) և շարունակելով Քարահունչի ճանապարհով անցնում է Բեշթափայով (Հինգ բլուրներ) և հասնում մինչև Դաշխարման (Քարե կալ), Այնուհետև շարունակվում է Տափակաշենի ճանապարհով մինչև Խոտ և Շնհեր գյուղերի առուն, որտեղից որ գալիս է Տափակաշենի աղբյուրի ջուրը, և ապա սահմանագիծը հասնում է մինչև Քյոլգակայա (Սովրոտ ժայռ) կոչվող մեծ քարը, հետո անցնում մի մեծ ձորով, որի մեջ է Ճաշլուրուլաղը (Խոնավ աղբյուր), այնուհետև [սահմանն անցնում է] Ուլուսների (քոչվոր ցեղերի) ճանապարհով մինչև այն բլուրը, որ ծանոթ լեզվով կոչվում է Դամուրչի թափա (Դարբնի բլուր) և Ջալը(՞), և հասնելով մինչև Տերտերի առուն շուռ է գալիս և նորից անցնում է հիշյալ Ուլուսների ճանապարհով ու հասնում լճափին, որը կապած է Մոլլա-Հասանի կարավանատանը, այստեղից էլ հաս-*

նում է մինչև Գյադուկ (վերելք) կոչվող [վայրը], որ հայտնի է Թուշմալ [անունով] և իմբանլուի մուսուլմանական գերեզմանատունը, հետո սահմանագիծն անցնում է վերոհիշյալ լճի մոտով և ապա ձգվում մինչև Տերտերի առուն ու անցնում մի բլուրի վրայով, որը հայտնի է խակազ թաւիա (խակազի բլուր) [անունով], և ապա սահմանագիծը շարունակվում է նուռնիսի լայն ճանապարհով և հասնում ու միանում է Ջախըրչիմանին (Գինու մարգագետին) ու Քյոռչեշմային (Կույր աղբյուր), հետո ուղիղ ճանապարհով հասնում է մի քարի, որ ժողովրդի լեզվով [կոչվում է] Կրզըլ կայա (Կարմիր քար), այնուհետև հասնում է մինչև Բորքլու կայա (Գլխարկով քար) և այն սահմանը, որը հայտնի է և միանում է վերոհիշյալ նուռնիսի ճանապարհին և որը ձգվում է Խոտանան գյուղի միջով և հասնում մինչև Ուռուիի գետի ափը, ապա Խոտանան գյուղի ներքևով և Գուշվագի մոտով անցնելուց հետո անցնում է նաև Կարաչանգլի (Սև քարեր) միջով մինչև Յանջայազի (Մարգագետին), այնտեղից էլ հասնելով մինչև Հալիձոր գյուղի ճանապարհի վրա գտնվող և Թիքմադաշ (Քարակառույց) կոչվող քարը, որը կանգնեցված է Տաթևի վանքի հողերի և վերոհիշյալ գյուղի սահմանի արանքում և այնուհետև անցնում է Երկարքարի մոտով և Գեչիկայասիի (Այծաքար) վրայով հասնում է մինչև Հալիձոր, Շնհեր և Խոտ գյուղերի ներքևով անցնող մեծ գետը և այսպես [սահմանն] անցնում է այս գետի ափով և հասնում մինչև գետի այն մասը, որ Խոտ և Բորդի գյուղերի սահմանն է, այնտեղից էլ հասնում է Այուդարակին (Արջաձոր), որը և հիշյալ գյուղերի սահմանի սկիզբն է, իրենց հանդերի ոռոգման իրավունքով, բոլոր ենթակա, կից, հավելյալ և վերաբերող [ամեն ինչով], սեփականատիրական, սահմանակցային և հողագործական **բահրաչեով** և այլ կարգի եկամուտներով, հին ժամանակներից մինչև օրս, որպես **մուլք** հաստատված և գրված են եղել Ղափանաթի Տաթևի վանքի վանահոր **(մութավալլի)** և աղոթավայրում ու եկեղեցում բնակվող եպիսկոպոսների ու կրոնավորների սեփականության և տիրապետության տակ և եղել ու մնում են որպես հիշյալ վանքի տաճարի հին **վակֆը:** Որպեսզի հիշյալ վանքի վանահայրը նրանց ցանքսերից ստացված եկամուտը ստանա և ծախսի վանքի տնտեսության, ինչպես նաև վերոհիշյալ անձանց (վանականներ) ապրուստի վրա: Ոչ ոք հիշյալ **վակֆերի մուլքերում** որևէ բաժին, ստանալիք, պահանջ կամ միջամտություն չի ունեցել և չունի:

Տեղի ունեցավ 803 թվականի ռաբի՝ առաջին ամսի 25-ին (1400 թ. նոյեմբեր 3):

Նա է իմ ապավենը:

Տեղյակ եմ այս բանին և վկա եմ վերոգրյալին: Տեղի ունեցավ ինձ մոտ և պարզ դարձավ իմ ներկայությամբ:

Գրեց մեղապարտ ծառա Նախշևանցի Կազիի որդի Ահմադը, և ետ [աստված] ների նրանց:

կնիք

Աստված է իմ ապավենը:

Պարզ ու հստակ դարձավ ինձ մոտ և ճշտվեց իմ միջոցով:

Գրեց ծառա՝

կնիք

Նա արդարադատ է:

Բովանդակությունը պարզորեն գրվեց, և այն տեղի ունեցավ իմ ներկայությամբ:

Նվաստագույն ծառա՝ Սոհրաբ Ուռուիցի:

կնիք

Նա է:

Ճշմարտությունը պարզվեց իմ ներկայությամբ և ճշտվեց ինձ մոտ:

Գրեց մեղապարտ ծառա՝ Ինայաթուլլայի որդի՝ Ռահմաթուլլան:

կնիք

Աստվածն է իմ ապավենը:

Սույնի բովանդակությունը ճիշտ է:

Գրեց նվազագույն ծառա՝ ընտրյալ Խաիբի որդի՝ Մուհամմադ-Քյազիմը:

կնիք

ՎԱՎԵՐԱԳԻՐ 4

1428—1430 թթ. երեք առանձին կալվածագրերի հիման վրա կազմված և դրանց հիմնական բովանդակությունը պարունակող Վաղարշապատ (Ուշիիլիսա) գյուղի 1430 թ. կալվածագիրը

թղթապանակ 1գ. վավ. 1004 բնագիր.
մեծ 330×22 սմ. գիր՝ նասխ

Նա բարձր է և վսեմ:

Ճշտվեց և պարզվեց ինձ մոտ: Նրա ծառան՝

կնիք

Գոհություն նրան, ով արժանի է գոհության։

Սկզբից մինչև վերջը ինչ որ գրված է այս գրության մեջ տեղի ունեցավ և պարզվեց ինձ մոտ օրինական ձևով, կատարվեց իր [բոլոր] հոդվածներով. վաճառքի ու գնման, **շարիաթական** ճշգրիտ **վակֆի** ու պարզ ու լսելի արգելափակման՝ գրության մեջ նշված պայմաններով։ **Վակֆը** նշվեց քրիստոնեական կարգով։

Գրեց սրբության ծառա՝

Կնիք

Նա է ամենաիշխանավորը։

Այն ինչ որ ես գրեցի այստեղ և արձանագրեցի սույնի բովանդակության մեջ, սկզբից մինչև վերջը տեղի ունեցավ ինձ մոտ և կատարվեց իմ ձեռքով և ես վերջացրի ու ավարտեցի **շար'ի** հսկողության տակ և կարգադրեցի համաձայն սրբազան **Շարիաթի,** ամենայն պատասխանատվությամբ։

Գրեց խեղճ ու կարոտյալ Ալիի որդի Մահմուդը՝

Կնիք

Նա է դատում և դատում է արդարությամբ։

Այն ինչ որ հիմք է հանդիսացել այս ճշմարտացի արձանագրության և այս հաճո ու անտարակույս վճիռը պարունակող գրության, սույն առուծախին և այլ **շարիաթական** գործերի վերաբերյալ երեք արձանագրությունների՝ ինձ մոտ կատարված համառոտագրումն է։ Նրանց լիազորությունը վերջնականապես պարզվեց ինձ մոտ, ամուր հիմքերով և ճշգրիտ տեսողությամբ։ Իսլամական... պարտականությունները հաստատվեցին և ճշտվեցին ինձ մոտ։

Հիշյալ վաճառքից հետո, համաձայն բնագրում նշված պայմանների, [առանձին] հոդվածով, սկզբից մինչև վերջը տեղի ունեցավ ճշմարիտ **շարիաթական վակֆ** և պարզ ու լսելի կրոնական արգելափակում։ **Վակֆը** հիշվեց ըստ քրիստոնեական կարգի և մովսիսական հավատքի։

Գրեց արարիչն ասածու առաջ խեղճ ու տնանկ, Աստվածախնամ երկրների չորրորդական մասի **հաքիմ,** նախկին **կազի** Աս'ադ Անսարիի որդի Զաման-էդ-դին Մուհամմադը և [ով] ամենաողորմածը ների նրանց։

Կնիք

Գոհություն բարերարներից մեծագույնին։

Փառք աստծուն, որը վաճառքի հաստատումներով կնքում և կարգավորում է մարդկանց վիճակը և [հաստատուն] ձևերով ու

վավերական կարգով կապում է կալվածների ու ստացվածքների վերաբերյալ վճռագրեր և արձանագրություններ և զանազան կալվածներ իրենց հողերով ու այգիներով տալիս է ընտրյալ աղոթողներին որպես օրապահիկ։ Եվ օրհնություն ու ապահովություն նրա մարգարեին և սիրեցյալին, տիեզերքում ամենաբարձրին, Կասեմի հայր Արդուլլահի որդի Մուհամմադին, մարդկանց և հոգիների տիրոջը և մարգարեի հաջորդին ու նրա գործը շարունակողին ու բարեկամին Հասանի և Հուսեյնի հոր Արիթալիբի որդի Ալիին, որը իսլամի և [մեր] հավատքի **իմամն** է և նրա արդար սերունդներին, որոնք լուսավորվում են լուսնի լույսով և նորոգվում գիշերից ցերեկ։

Այնուհետև, այս վստահելի գրությունը, որի մեջ չկա ոչ մի կասկած, առանց **շարիաթի** սկզբունքների խախտման և կամ նրանցից շեղվելու և որի խոսքերը պարզ են ու լսելի, լեզուն ճշմարտությունը միայն բացահայտող և նրա հիմնական բովանդակությունը միայն ճշմարիտ ճանապարհը լուսավորող, բովանդակում է այն իրողության բացատրությունը, որ խնդրել էր քրիստոնյաների մեջ ամենագիտուն և իմաստունների մեջ օրինակելի, քրիստոնեական վսեմ կրոնի եպիսկոպոսապետ, Ուչքիլիսայի վանահայր **(մութավալի)** պարոն Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսը **(խալիֆե),** [սույնի] նվաստագույն գրող և իր բազմազան թերություններն ու բազում հանցանքները խոստովանող, աստվածախնամ երկրների չորրորդական մասի **հաքիմ** Աս'ադ իբն-Կավամ-էդ-դին ալ-Անսարիի որդի **կազի** Զաման-էդ-դին Մուհամմադից,— թող աստված ինքը միայն տեսնի նրա թերությունները և նրա այսօրը երեկվանից ավելի բարի դարձնի,— որպեսզի ես, մեկ ընդհանուր վավերագրի մեջ արձանագրեմ այն, ինչ որ նրա ձեռքում և տիրապետության տակ է գտնվում, նրան վերաբերող բոլոր հողերով և հիշատակված սահմաններով։ Այն դեպքում, երբ նրա բոլոր սեփականությունները (թամալլուք) մանրամասն նկարագրված էին երեք վավերագրերի մեջ և կարելի էր վախենալ, որ դրանք կարող են փշանալ, բաժանվել իրարից, ցրվել և կորչել։ Բավարարելով նրա խնդիրքը և կատարելով նրա ցանկությունը ես դրանք ամփոփեցի այս մեկ գրության մեջ և գրեցի այդ երեք գրությունների այս ընդհանուր համառոտագրությունը, հեշտացնելով նկարագրությունն ու ավելի նպատակահարմար դարձնելով այն։

Սակայն առաջին գրության համառոտ բովանդակությունն այն է, որ երջանկահիշատակ, գովելի, բարեգործ և ողորմածհոգի Ալիխան **բեկի** որդին, իր նմանների մեջ ազնվագույններից, սիրեցյալ

և հարգելի երիտասարդ Սարու Մալիքը, որ հաստատուն **Շար**'ով լիազորված էր մեծապատիվ պարոն, իմաստուն տեր, բարձրաստիճան, ամենակատարյալ և ամենաիմաստուն, վսեմաշուք, առաքինության, գիտության և իմաստասիրության աղբյուր, հանրածանոթ մեծագույն գիտնականների առաջնորդ, առատաձեռնության, գթության և բարության մշտաբաց դուռ, շնորհների ու բարիքների բարեբեր տնկարան, կրոնի, ճշմարտության, հավատքի, բարեպաշտության, **ֆաթվաների** մեծ ապացույց, հանրածանոթ շեյխ Սաիդ-բեկ ալ-Սա'դիի կողմից,— թող աստված տևական դարձնի նրա փառքն ու շնորհքը,— վաճառեց վերոհիշյալ եպիսկոպոսին և վերջինս միանվագ վաճառքով և միացյալ ակտով նրանից գնեց, երբ կողմերի համար պարզ ու ըմբռնելի էին ինչպես շարիաթական առուծախի, այնպես նաև փոխադարձ պայմանագրության համար անհրաժեշտ բոլոր իսլամական նախապայմանները, ինչպիսիք են՝ ազատությունն ու բանականությունը, հասունությունն ու իմաստությունը, ուղղամտությունն ու խղճմտությունը, կամքն ու ցանկությունը և ստիպման ու հարկադրանքի բացակայությունը, այն ինչ որ գտնվում էր հիշյալ լիազորի իրավասության ներքո, նրա սեփականությունն էր, գտնվում էր նրա ձեռքում և նրա **շարիաթական** տիրապետության տակ մինչև սույն վաճառքը։ Եվ դա ամբողջ Ուչքիլիսա կոչվող գյուղի լրիվ մեկ երրորդ մասն է, Կարբիի նահիայի գյուղերից, որ գտնվում է Վրաստանի շրջաններից Ազերբայջանի նահանգին [ենթակա], Ջուխուր-Սա'դի **վիլայեթում,**— և թող աստված նրան պահպանի ժամանակի փորձանքներից ու դիպվածներից,— իր բոլոր չորս սահմաններով։ Առաջին սահմանն է այն հեղեղատը, որի ծայրը հասնում է մինչև էրզրում տանող ճանապարհը, երկրորդ սահմանը հասնում է մինչև այն բլուրը, որ կոչվում է Քյուլթափա, երրորդ սահմանը՝ մինչև Հորերի հողերը, իսկ չորրորդը՝ հասնում է եղեգնուտին և ճահճուտին։ [Վաճառվեց] բոլոր սահմաններով և իրավունքներով, ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով], օգտագործվող և չօգտագործվող, մշակված և անմշակ հողերով, հանդերով, արոտավայրերով ու խոտհարքներով, ոչխարների արոտատեղերով և կովերի ու ձիերի կայաններով, լեռներով և բլուրներով, այրերով ու ապաստարաններով, մարգագետիններով, դաշտավայրերով, տափարակ վայրերով (կալատեղե՞ր) և դաշտերով, հորերով՝ նրանց ջրերով և ծածկերով, շրջակա հողերով և ստորերկրյա անցքերով, ջաղացատեղերով և այգեստեղերով, քարերով և ծառերով, առուներով, ակունքներով և գետերով, երեխաների խաղատեղերով և ծե-

րունիների ու երիտասարդների հավաքատեղերով, կապված և վերաբերող, կցված և անջատ, ներքին և արտաքին այլ բաներով, և այն ամեն բանով, ինչ որ գտնվում է հիշյալ սահմանների մեջ և ենթակա է վաճառման դրամով, մտնում է սեփականության մեջ, բացի **շարիաթական** բացառություններից՝ մզկիթներ, գերեզմաններ, ճանապարհներ, դեպի [մարդկանց] սեփականությունները տանող անցուղիներ և հիշյալ եկեղեցու (էջմիածին) **վակֆային մուլքերը** և այստեղ հիշատակված կամ չհիշատակված անվանված կամ չանվանված **շարիաթական** այլ սեփականություններ, հայտնի և որոշյալ գնով, որի գումարի քանակն է հինգ հազար **դինար** Թավրիզում հատված և ընթացքի մեջ գտնվող հնչուն արծաթ դրամ և որի մեկ հինգերորդը լինում է հազար հնչուն **դինար:**

Եվ տեղի ունեցավ նրանց միջև **շարիաթական** վաճառքի [արարողություն] իր բոլոր պայմաններով և հիմքերով, ինչպիսիք են բոլոր թերությունների ու անվավերությունների [բացահայտումը], գնի հատուցումն ու ընդունումը, տալն ու առանալը և գնահատվածի հանձնումն ու առանձնումը, հավաստված **Շար**'ի անդամների վերահասությամբ ու երաշխավորությամբ։

Տեղի ունեցավ այս վաճառքը ընտրյալ մարգարեի փախուստի ութը հարյուր երեսուն երկու թվականի սաֆար ամսի 9-ին (1428 թ. նոյեմբերի 18) և ավարտվեց (կնքվեց) հաջողությամբ։

Իսկ երկրորդ գրության համառոտ բովանդակությունը հետևյալն է. Փիր-Հուսեյնի դուստր Մուրուք-խաթունի կողմից հաստատուն **Շար**'ով լիազորված Շեյխ-Մուհամմադ իբն-Դեհխոդան վաճառեց Գրիգոր եպիսկոպոսի շարիաթական լիազոր, պարոնների մեջ լավագույնը, պարոն Բաբաջանի որդի, պարոն Սեթի որդի պարոն Ղևոնդին, այն դեպքում, երբ կողմերը իրավասու էին շարիաթական առևտրական գործարք կատարելու և քանի որ լիազորության իրավունքով [վաճառվող] **մուլքը** իրավամբ գտնվում էր վերոհիշյալ լիազորի ձեռքում և նրա տիրապետության տակ առանց որևէ արգելքի և վեճի։ Ուստի [հիշյալ պարոն Ղևոնդը] մեկ ակտով նրանից գնեց վերը հիշատակված գյուղի ամբողջ մեկ վեցերորդ մասը իր բոլոր սահմաններով, ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով] և նրան կապված ու վերաբերող ամեն ինչով, Թավրիզում հատված և ընթացքի մեջ գտնվող երկու հազար հինգ հարյուր հնչուն արծաթ **դինարով,** որի մեկ հինգերորդը լինում է հինգ հարյուր հնչուն **դինար:**

Եվ տեղի ունեցավ նրանց միջև **շարիաթական** վաճառքի [արարողություն] իր բոլոր պայմաններով և հիմքերով, ինչպիսիք են բո-

լոր թերությունների ու անվավերությունների բացահայտումը, գնի հատուցումն ու ընդունումը, գնահատվածի հանձնումն ու ստանձնումը և այլ հիմնական [գործեր]։

Տեղի ունեցավ այս վաճառքը ութը հարյուր երեսուներկու թվականի սրբազան ռամազան ամսի 9-ին (1429 թ. հունիս 12)։

Իսկ երրորդ գրության համառոտ բովանդակությունն այն է, որ... ի որդի Կալանդարի որդի [հանգուցյալ] Մուհամմադ կուլիի վեց որդիների, չափահասներ՝ Հուսեյն-կուլիի և Ֆարաջ-կուլիի, անչափահասներ՝ Շահմուրադի, Նազարի, Շահալիի և Բուրջալիի, Հուրիխան անունով միակ չափահաս դստեր և միակ կնոջ, որի անունն է Ջհանբանու՝ դուստր **Հաջի** Ալիի որդի Փիր Ալիի, ընդամենը ութը հոգու [ժառանգությունը] **շարիաթական** կարգով բաժանված է 104 մասերի, որից կնոջ բաժինն է 13 մաս, որդիներից յուրաքանչյուրի բաժինը 14-ական մաս և դստեր բաժինը 7 մաս։ Իսկ հիշյալ հանգուցյալի թողած ժառանգությունը բաղկացած է իր բոլոր սահմաններով վերը հիշատակված գյուղի ամբողջ մեկ վեցերորդ մասից։ Եվ որովհետև վերոհիշյալ անչափահասները կարոտ էին ապրուստի միջոցների (ուտեստի և հագուստի) և քանի որ աշխարհի հարբուսուբյուններից ոչինչ ունեին իրենց ձեռքում բացի հիշյալ բաժիններից, ուստի **Շար**'ի տեսակետով նպատակահարմար դիտվեց վաճառել վերը իր բոլոր սահմաններով հիշատակված գյուղում նրանց ունեցած բաժինները։

Եվ այսպես, հաշվի առնելով **շարիաթական** բոլոր նախապայմանները, հիշյալ Հուսեյն-կուլին և Փիր-Ալին վաճառեցին վերոհիշյալ Գրիգոր եպիսկոպոսին և վերջինս գնեց նրանցից այդ մի շարք վաճառվող [մասերը], իսկ ճշգրիտ **շարիաթական** ակտերով, դա, իր որոշակի սահմաններով վերը հիշատակված ամբողջ գյուղի լրիվ մեկ վեցերորդ մասն է, [որ վաճառվեց] Թավրիզում հատված երկու հազար հինգ հարյուր հնչուն արծաթ **դինարով,** որի մեկ հինգերորդ մասը լինում է հինգ հարյուր հնչուն **դինար:** Հիշյալ Հուսեյն-կուլին վերը սահմանագծված գյուղի այդ [մեկ վեցերորդ մասից] նշված գումարի դիմաց անձամբ վաճառեց իր բաժին 14 մասը, իսկ **շարիաթական** հաստատուն լիազորությամբ նաև [իր եղբոր] Ֆարաջ-կուլիի [14 մասը], հիշյալ դստեր (իր քրոջ) 7 մասն ու [հանգուցյալ Մուհամմադ-կուլիի] կնոջ (իր մոր) 13 մասը։ Իսկ վերոհիշյալ Փիր-Ալին որպես երկու որդիներից յուրաքանչյուրի շարիաթական խնամակալ, նույնպես նույն գումարի դիմաց, վաճառեց վերը սահմանագծված գյուղի [նշված մեկ վեցերորդի] 14-ական մասերը։ Եվ

տեղի ունեցան նրանց միջև **շարիաթական** վաճառքի [արարողություններ], իրենց բոլոր պայմաններով և հիմքերով, ինչպիսիք են գնի հատուցումն ու ընդունումը, տալն ու ստանալը, բաժին առ բաժին, և գնահատվածների հանձնումն ու ստանձնումը։ Այնուհետև **շարիաթական** ստացումը իրենց վկայությամբ հաստատեցին **մուլքերի** ու կալվածների վերակացուներ, վկաներ, **հաջիների** և վստահելիների պարծանք, Աստծու սրբազան տան (Մեքքայի) այցելությամբ փառավորված Հասան **աղայի** որդի **Հաջի** Իսմայիլը և Շահփուրի որդի Քաֆի Ալիփավութը, որոնք վկայեցին նաև այն մասին, որ հիշյալ սահմանագծված գյուղի հաստատված գնի ամբողջ գումարը վճարված է, և այլևս պահանջ ունեցող չկա։

Այս երեք գրություններն գրվել և արձանագրվել են իմաստուն և հարգարժան **մոլլա** Աթաուլլա Սա'դիի որդի **մոլլա** Թաջ-ադ-դին Հասանի ձեռքով. գնահատումը վերահաստատվեց ինձ մոտ **շարիաթական** ագդով, արդարամիտ վկաների վկայությամբ ուր և կազմվեց այս արձանագրությունը։

Նշված վաճառքից հետո, վերը սահմանագծված ամբողջ գյուղը ճշմարիտ **շարիաթական վակֆով** և պարզ ու լսելի արգելափակմամբ **վակֆ** արվեց Հայտնի եկեղեցուն, որը գտնվում է Ուչքիլիսայում, և որոշակի պայման դրվեց, որ հիշյալ **վակֆը** չվաճառեն, մեկ տարուց ավելի [ժամանակով] վարձով չտան, չնվիրեն և չփոխեն [որովհետև] դա **շարիաթական** ճշմարիտ **վակֆ** է արված և արգելափակված է հար և հավիտյան, ուստի և արգելված է նրա վաճառքն ընդմիշտ։

Ընդունեց և հաստատեց հոժարակամ **վակֆ** անողը, որ այս պայմաններով գնվածը, բոլոր սահմաններով և իրավունքներով նրա **մուլքը,** իրավունքն ու անբաժան սեփականությունը լինելուց հետո վերջնականապես և հավիտյանս **վակֆ** տրվեց հիշյալ եկեղեցուն և դարձավ նրա միաբանների, սպասավորների և այն մարդկանց իրավունքներից, սեփականություններից և **վակֆերից** մեկը, որոնց ձեռքում է գտնվում հիշյալ եկեղեցին։

Եվ նորից պայման դրեց հիշյալ հոժարակամ **վակֆ** անողը, որ **վակֆ** արված **մուլքերի** հասույթը անօրինի միայն հիշյալ եկեղեցու եպիսկոպոսը, վանահայրն ու անօրենը **(մութավալլին),** ըստ **վակֆ** անողի սահմանած կարգի։ Այսպես, հաստատվեց նաև որ ըստ **վակֆ** անողի պայմանների նրա մահվան ժամանակ կամ մահվանից հետո, օրերից մի օր որևէ մեկը նրա ցեղակիցներից և կամ ուրիշներ, սերնդից սերունդ և ժառանգից ժառանգ որևէ իրավունք, վեճ կամ

պահանջ չեն կարող ունենալ այդ [**վակֆերի**] նկատմամբ: Նմանապես հոժարակամ **վակֆ** անողի պայմաններով, ոչ իսլամական և ոչ էլ քրիստոնեական վանք կրոնների հետևողներից ոչ մեկը և ոչ ոք իրավունք չունի փոխել կամ փոխանակել և կամ վաճառք թույլատրելով արգելք հանդիսանալ, վիճարկել, նեղություն պատճառել ու ոտնձգություն կատարել վերոհիշյալ **վակֆի** նկատմամբ, ըստ [Ղուրանի] սրբազան **այաթի** բովանդակության «լսելուց հետո այն փոխելը մեղք է»: Եվ ասածու, նրա հրեշտակների և բոլոր մարդկանց անեծքը թող լինի այդպիսի նեղիչների, անիծյալների, անարգվածների և ներման անարժանների վրա:

Գրվեց և տեղի ունեցավ այս հաշիմյան մարգարեի փախուստի ութ հարյուր երեսուն երեք թվականի ջամադի առաջին ամսին (1430 թ. հունվ. 26—փետրվ. 24): Եվ փառք տիեզերքի տիրոջը և փառաբանություն ու ապահովություն նրա մարգարեին,— ասածու օրհնությունն ու ապահովությունը նրա վրա և նրա սուրբ և մաքուր սերունդների վրա:

Առաջին գրության վկաներն են.

Բախշիխան **բեկի** որդի Բեկ-Ալի **բեկը, Մեվլանա** Հաջի Ալփավութի որդի Մուստաֆան, Ֆառուխշադանի որդի **Մեվլանա** Մուհամմադը՝ Անբերդի ամրոցից:

Երկրորդ գրության վկաներն են.

Մակսուդի որդի Հաջի Սալեհը, Ադինե-Ալի Ալփավութի որդի Իսմայիլը և Ֆաթհուլլա Սա'դիի որդի Սուն'ուլլան:

Երրորդ գրության վկաներն են.

Շեյխ Մուհամմադ ալ-Սա'դիի որդի Սա'դին, Ալփավաթում բնակվող բնիկ Բիդարցի Նե'մաթուլլայի որդի Ֆաթհուլլան և նույն տեղի բնակիչ Ջալաբիի որդի **Մեվլանա** Ֆազլին:

Վերջացրի սրբազան **Շար**'ի ոգուն համապատասխան:

Շարիաթական կարգով արձանագրեց Յահյա Փիր-Մուհամմադ Սա'դիի որդի մեղապարտ ծառա Հուսեյնը:

Այս այսպես է, և ես վկա եմ այս բանին:

Հաջի-բեկ **Կոռչիի** որդի, Խուբյար **բեկի** որդի Է'թիբար **բեկ:**

Ներկայումս այսպես է այս առուծախն ու վերջնական ու հավիտենական **վակֆը:**

Նախշևանցի Ռամազանի որդի, վարպետ Շեյխ Մահմուդի որդի խոջա Ադինե:

Ես ևս վկա եմ այս **վակֆին:** Կրզրլ Յադիգարի որդի՝ Ռամազան:

Տեղյակներից և իրազեկներից է երկու սրբավայրերն այցելած **Հաջի** Ղայիբ Կարա-Ալփավութի որդի Ղասեմը:

Ես ևս այս վերջնական և հավիտենական **վակֆի** վկաներից մեկն եմ:

Մեվլանա Մուհամմադի ալ-Սա'դի ուսուցչի որդի ծառա Սեյիդ Մահմուդ:

Ես ևս բնագրում նշված պայմաններով կատարված հավիտենական այս **վակֆի** վկաներից մեկն եմ:

Շարուրեցի Ալի-ադ-դինի որդի՝ Սեյյեդի:

[Վկա եմ] այստեղ հիշատակված հավիտենական **վակֆին:**

Այյուր **բեկ** Կարահիսարլուի որդի՝ ծառա Յար-Ալի **բեկ:**

Սույնի բովանդակությունը վերոգրյալ ձևով կարգավորվեց ինձ մոտ:

Գրեց մարգարեական **Շարիաթի** սպասավորը:

Տեղյակներից, իրազեկներից և այս հավիտենական **վակֆի** ու մշտնջենական արգելափակման վկաներից եմ նաև ես:

Անբերդի ամրոցից Ֆաթհուլլայի որդի՝ ծառա Ասքար:

Տեղյակ եմ այս բանին:

Գրեց նվաստագույն ծառա Անբերդի ամրոցից Հուսեյնի որդի Մակսուդը:

Կարգավորվեց այս առուծախի բովանդակությունը և այս ճշմարիտ **շարիաթական վակֆն** ու պարզ ու լսելի արգելափակումը ըստ բնագրում նշված պայմանների, սկզբից մինչև վերջը:

Գրեց սրբազան **Շարիաթի** սպասավոր՝

կնիք

Կարդացի այս արձանագրությունը սկզբից մինչև վերջը:

Ասածու Հարստության առաջ մեղապարտ, Ասածու և նրա մարգարեի, նրա ժառանգների ու սերունդների զորությամբ, Շարուրի **վիլայեթի կազի,** Համդուլլա ալ-Անսարիի որդի Ֆաթհուլլա,— թող Ասված ների նրանց հանցանքները:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 5

էջմիածնի կաթողիկոս Գրիգոր Մակվեցու Ամիր Ռուստամ Օրբելյանից գնած և էջմիածնի վանքին վակֆ արած Վաղարշապատ, Աշտարակ, Բաթոհնջ, Նորագավիթ, Ադուճատուն, Թեղենիս-Քիրաջլու և Մուղնի գյուղերի 1431 թ. կալվածագիրը:

ըղրապաճակ 1գ, վավ. 934, պատճեն, գիր՝ նասխ

Նա է դատում և դատում է արդարությամբ:

Այն ինչ որ հիմք է հանդիսացել ինձ մոտ արձանագրված այս գրության և այն ինչ որ գրված է այս որոշման մեջ և պատմում է ճշմարիտ **շարիաթական** *վաճառքի և պարզ ու լսելի պայմանագրության և կատարված վերջնական* **վակֆի** *ու հավիտենական արգելափակման մասին, բնագրում նշված պայմանով կարգավորվեց ինձ մոտ, նշված կարգով և նկարագրված ձևով: Վակֆը հիշվեց ըստ քրիստոնեական կրոնի և մոլսիսական հավատքի: Հաստատվեց ինձ մոտ և ճշտվեց իմ ներկայությամբ, և ես հաստատում եմ նրա ճշգրտությունը և վկայում եմ, որ այն կատարված է սրբազան* **Շարիաթի** *ոգուն համապատասխան:*

Գրեց՝ նվաստագույն ծառա, լուսավոր **Շար**'*ի սպասավոր, աստվածախնամ երկրների չորրորդական մասի* **հաքիմ,** *Մա՛դի որդի Ջամանեդդին* **կազի** *Անսարին,— թող աստված թողություն շնորհի նրանց:*

Կնիքի տեղը

Նա հավիտենական է:

Այն ինչ որ ես գրեցի ու արձանագրեցի սույնի բովանդակության մեջ, սկզբից մինչև վերջը տեղի ունեցավ ինձ մոտ և կատարվեց իմ ձեռքով, և ես վերջացրի ու ավարտեցի **Շար**'*ի հսկողության տակ և կարգադրեցի նրա ոգուն համապատասխան:*

Արարիչն աստծու առաջ խեղճ ու մեղապարտ, Նախչևանցի **կազի** *Մուհամմադի որդի Թաջ-Ահմադ,— թող [աստված] ների նրանց:*

Նա է:

Ջուխուր-Սա՛դի **վիլայեթի** *և նրան ենթակա [վայրերի]* **բեյթուլ-մալը,**— *աստծու գթությունը թող լինի նրանց բոլորի վրա:*

Տիրում է ապահովությամբ առաջնորդող Շարիաթը:

Փառք աստծուն, որ միշտ տեղյակ է բոլոր ներքին հաշիվներին ու գաղտնիքներին և օրհնություն ու ապահովություն բոլոր արարածներից ամենահմաստունին, Ադամի սերունդների ամենաընտրյալին և ամենամաքուրին, մարգարեներից վերջինին և առաքյալների տիրոջը, մեղավորների համար բարեխոսողին, Աբդուլլայի որդի Մուհամմադին, մարդկանց և հոգիների տիրոջը և ապա մարգարեի հաջորդին, նրա գործը շարունակողին ու բարեկամին Հասանի ու Հուսեյնի հոր Աբիթալիբի որդի Ալիին, իսլամի և [մեր] հավատքի **իմամին** *և նրա արդար սերունդներին, որոնք լուսավորվում են լուսնի լույսով և նորոգվում գիշերից ցերեկ:*

Այնուհետև այս **շարիաթական** *սկզբունքներով ու հիմունքներով գրությունը և լսելի խոսքերով ու իմաստով հայտարարությունը իր հաստատման բարեհաջողությամբ և գրության ճշմարտացի պարունակությամբ, բովանդակությամբ և իմաստով բացատրում և պատմում է այն մասին, որ վեհանձնյա* **ամիր** *և տեր, մեծափառ, ազնվաշուք, բարձրաստիճան, բարձրագույն ծառայության արժանացած մեծահարգ* **վեզիր,** *նորին կայսերական մեծության՝ սուլթանի մերձավորներից, ամենազոր արքայական պետության սիրելի, մեծագույն սուլթանների խորհրդական, արքաներից ամենից իմաստունի վստահելին, որի անձը վեր է ամեն տեսակ նկարագրությունից ու գովասանքներից, հավիտենականության տեր աստծու ողորմածությամբ իշխանության և կրոնի քաջահաղթ* **ամիր** *Ռուստամը, որդի* **ամիր** *Բեշքենի, որդի* **ամիր** *Սմբատի, ուրը հարյուր երեսուն և հինգ թվականի ռաբի՝ երկրորդ ամսի կեսերին (1431 թ. դեկտեմբեր 20—21), քրիստոնյա հոգևորականների և վանականների պարծանք, խեղճերի և կարոտյալների սպասավոր, քրիստոնյաների պարծանք և նրանց միջև ամենից կատարյալ և մաքուր Ֆախր-ուդդովլանի որդի, պարոն Ջալալ բեկի որդի Ուչքիլիսայի բնակիչ Գրիգոր կաթողիկոսին վաճառեց, և վերջինս նրանից գնեց ներքոհիշյալ մի քանի մաս* **մուլքերը** *և իր սեփականությունը դարձնելուց հետո* **շարիաթական** *ճշմարիտ* **վակֆ** *արեց և պարզ ու լսելի կերպով արգելափակեց (ամրացրեց) Ուչքիլիսայի վանքին և այնտեղ ելումուտ անողներին, որպեսզի վերջիններս ներքոհիշյալ գյուղերի հասույթը ծախսեն իրենց անումն ապահովելու:*

Դրանցից առաջինը Ազերբայջանի նահանգին [ենթակա] Ջուխուր-Սաադի շրջաններից Կարպիի **ճահիայի** *վայրերից, չորս կողմից սահմանագծված, Ուչքիլիսա կոչվող գյուղի վեց* **դանգ է,**— *աստված պահպանի նրան զանազան փորձանքներից: Առաջին սահմանն է էրզրումի ճանապարհը, երկրորդ սահմանը՝ ժողովրդի լեզվով կոչվում է Քյուլթափա, այստեղից սահմանը շարունակվելով*

երրորդ կողմից անցնում է անապատով և այստեղ վերջանում, իսկ չորրորդ սահմանը Եղեգնուտն է, որ պարսկերեն կոչվում է Ջումջումա (ճահճուտ), որտեղից էլ շարունակվում է [առաջին սահմանը]։

[Վաճառվեց] իր բոլոր սահմաններով և իրավունքներով, ենթակա և կից հավելյալ և հարակից [ամեն ինչով], օգտագործվող և չօգտագործվող, մշակված և անմշակ հողերով ու դաշտերով, լեռներով և բլուրներով, տափարակ վայրերով (կալատեղեր), խաղողի որթերով և ծառերով, անցուդիներով, աղբյուրներով և առուներով, քարերով և քարանձավներով, արոտավայրերով, խոտհարքներով և մարգագետիններով, տնատեղերով, ջրհորներով, ջրափոսերով և ջրերի հավաքման վայրերով և [դեպի դրանք տանող] ճանապարհներով, այգիներով, ջրաղացներով և ձիթհանքներով, այդ սահմաններում գտնվող ջրանցքներով և ներքին ու արտաքին, կից կամ անջատ բոլոր իրավունքներով, որոնք կարող են [ենթակա լինել] վաճառքի, բացի **շարիաթական** բացառություններից՝ մզկիթներ, գերեզմանատներ, ճանապարհներ, դեպի մարդկանց սեփականությունները տանող անցուդիներ, **շարիաթով** նրան ենթակա և կրոնական օրենքով, նրան կից և բոլոր ելումուտի [վայրերով] և այլ փոխանցման ու վաճառքի ենթակա բաներով։

Որոշյալ գումարի դիմաց, որ է իննսուն հազար ընթացիկ իսքանդարյան հնչուն սպիտակ արծաթ դինար, և որպեսզի պարզ լինի ու հասկանալի և կասկածի տեղի չտա, դրա մեկ չորրորդական մասը լինում է քսաներկու հազար հինգ հարյուր **դինար,** տեղի ունեցավ նրանց միջև **շարիաթական** ճշմարիտ վաճառք և պարզ ու լսելի փոխադարձ համաձայնություն իր բոլոր հիմնական պայմաններով, ազատ բոլոր թերություններից ու անվավերություններից, ինչպես հրամայված է մարդկության բարիք Մուհամմադի **շարիաթում,**— խաղաղություն նրան։ [Կատարվեց գնի] հատուցումն ու ընդունումը և [գնահատվածի] հանձնումն ու ստանձնումը, տեսանելի արարողությամբ տեղի ունեցավ կողմերի անջատումը իրարից, իսկ այս բոլորից հետո նա (Գրիգոր կաթողիկոսը) [այդ **մուլքը**] հավիտենական **վակֆ** արեց և ընդմիշտ ամրացրեց (արգելափակեց) Ուչքիլիսայի վանքին և այնտեղ ելումուտ անողներին (միաբանությանը)։

Այդ թվում է նաև վերոհիշյալ Ջուխուր-Սա՛դի [**վիլայեթի**] Կարբիի **ևահիայինն** ենթակա վայրերից, չորս կողմից սահմանագծված, Աշտարակ կոչվող գյուղի վեց **դանգը:** Առաջին սահմանն է այն ջրանցքը, որ հոսում է դեպի Օշական և գնում միանում է երկրորդ սահմանի վրա գտնվող մեծ գետին, երրորդ սահմանը կոչվում է

Փոքրիկ բլուր, որ ժողովրդի լեզվով անվանվում է Կըզըլ-թափա, այստեղից էլ շարունակվում է մինչև չորրորդ սահմանը, որ պարսից **(աջամների)** խոսակցական լեզվով կոչվում է Դարաչայ և հասնելով մինչև ընդհանուր ճանապարհը, այդտեղ վերջանում է։ [Վաճառվեց] իր բոլոր սահմաններով և իրավունքներով, ենթակա և կից, հավելյալ և հարակից հողերով, դաշտերով և ցանքատեղերով, օգտագործվող և չօգտագործվող, մշակված և անմշակ հողերով, լեռներով, բլուրներով, տափարակ վայրերով, խաղողի որթերով և ծառերով, անցուդիներով, աղբյուրներով, առուներով և ջրանցքներով, այգիներով, քարերով և քարանձավներով, արոտավայրերով, խոտհարքներով ու մարգագետիններով, տնատեղերով, ջրհորներով, ջրափոսերով, ջրերի հավաքման վայրերով (ջրամբարներ) և [դեպի դրանք տանող] ճանապարհներով, և այդ սահմաններում գտնվող այգիներով, ջրաղացներով ու ձիթհանքներով, ներքին և արտաքին, կից կամ անջատ բոլոր իրավունքներով, որոնք կարող են [ենթակա լինել] օտարման, բացի շարիաթական բացառություններից՝ մզկիթներ, գերեզմանոցներ, ճանապարհներ, դեպի մարդկանց սեփականությունները տանող անցուդիներ։

Եվ որոշյալ գումարի դիմաց, որ է արքայանիստ Թավրիզ քաղաքում հատված հարյուր հիսուն հազար ընթացիկ հնչուն սպիտակ արծաթ **դինար** և որի մեկ երրորդական մասը լինում է հիսուն հազար **դինար,** հիշյալ նորին վսեմություն վաճառողի և գնող ու **վակֆ** անողի միջև տեղի ունեցավ **շարիաթական** ճշմարիտ վաճառք և պարզ ու լսելի փոխադարձ համաձայնություն, իր բոլոր հիմնական պայմաններով, ազատ բոլոր թերություններից և անվավերություններից, ինչպես հրամայված է մարդկության բարիք Մուհամմադի **Շարիաթում,**— ողջույն նրան։ [Կատարվեց գնի] հատուցումն ու ընդունումը և [գնահատվածի] հանձնումն ու ստանձնումը, կողմերի միջև տեղի ունեցած տեսանելի արարողությամբ։

Եվ այս առուծախից հետո գնողը իր գնած [մուլքը] ամբողջությամբ **շարիաթական** ճշմարիտ **վակֆ** արեց և պարզ ու լսելի կերպով ամրացրեց (արգելափակեց) վերոհիշյալ Ուչքիլիսայի վանքին և այնտեղ ելումուտ անողներին (միաբանությանը), **շարիաթական** ճշմարիտ **վակֆով** և կրոնական արգելափակմամբ։

Այդ թվում նաև վերոհիշյալ Ջուխուր-Սա՛դի [**վիլայեթի**] Կարբիի **ևահիայինն** ենթակա վայրերից, չորս կողմից սահմանագծված, Բաթրինջ կոչվող գյուղի վեց **դանգն է:** Առաջին սահմանն է իսլամական հին գերեզմանոցը, որտեղից շարունակվում է մինչև երկրորդ սահ-

մանը հանդիսացող անապատը, որ կոչվում է Մեծ լեռ, որտեղից գնում է մինչև երրորդ սահման՝ ջրանցքը, որ ժողովրդի խոսակցական լեզվով կոչվում է Կրզըլ-Քեմուր արխի (Կրզըլ-Քեմուրի առու) և որը շարունակվում է մինչև չորրորդ սահմանը, որ քրիստոնյաների լեզվով կոչվում է Անբերդ, որտեղից և շարունակվում է [մինչև առաջին սահմանը]։ [Վաճառվեց] իր բոլոր սահմաններով և իրավունքներով, ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով], օգտագործվող և չօգտագործվող, մշակված և անմշակ ցանքատեղերով, հողերով և դաշտերով, լեռներով և բլուրներով, տափարակ վայրերով, խաղողի որթերով և ծառերով, անցուղիներով, աղբյուրներով, առուներով և ջրանցքներով, քարերով և քարանձավներով, արոտավայրերով, խոտհարքներով և մարգագետիններով, տնատեղերով, ջրհորներով, ջրափոսերով և ջրերի հավաքման վայրերով (ջրամբարներ) և այդ սահմաններում գտնվող այգիներով, ջրաղացներով և ձիթհանքներով, ներքին և արտաքին, կից կամ անջատ բոլոր իրավունքներով, որոնք կարող են ենթակա լինել օտարման, բացի այն ամենից, որոնք չեն կարող սեփականություն լինել, ինչպիսիք են մզկիթներն ու գերեզմանոցները, ճանապարհներն ու դեպի մարդկանց սեփականությունները տանող անցուղիները։ [Վաճառվեց] պարզ ու որոշակի գումարով, որ է Թավրիզում հատված վաթսուն հազար **դինար** ընթացիկ հնչուն դրամ, և որպեսզի պարզ լինի ու հասկանալի և կասկածի տեղի չտա, դրա կեսը լինում է երեսուն հազար **դինար:**

Եվ նրանց միջև տեղի ունեցավ օտարման պարզ ու լսելի արարողություն, իր բոլոր հիմնական պայմաններով, ազատ բոլոր թերություններից ու անվավերություններից, համաձայն մարդկության բարիք Մուհամմադի **Շարիաթի,**— որջուն նրան։ Կատարվեց գնի հատուցումն ու ընդունումը, տալն ու ստանալը, գնահատվածի հանձնումն ու ստացումը և տեսանելի արարողությամբ կողմերի անջատումը։

Այս առումից հետո [գնողը] դրանք վերջնականապես **վակֆ** արեց և հավիտյանս ամրացրեց (արգելափակեց) Ուչքիլիսայի վանքին և այնտեղ ելումուտ անողներին (միաբանությանը)։

Այդ թվում է նաև Ջուխուր-Սա՛դի [վիլայեթի] Կըրխբուլաղի նահիայի ենթակա վայրերից Նորագավիթ կոչվող գյուղի վեց **դանգը,** որի առաջին սահմանն է այն մեծ գետը, որ ժողովրդի լեզվով կոչվում է Արաս (Արաքս), այստեղից սահմանը գնում հասնում է մինչև Գառնիի գետը, որը երկրորդ սահմանն է, այստեղից էլ գնում

միանում է երրորդ սահմանին, որը մի հին գերեզմանատուն է, որ գտնվում է ...ի ներքևում, իսկ չորրորդ սահմանը պարսից **(աջամների)** լեզվով կոչվում է Կարագյոլ (Սև լիճ), որտեղից և շարունակվում է մինչև [առաջին սահմանը]։ [Վաճառվեց] իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով], հողերով, դաշտերով և ցանքատեղերով, օգտագործվող և չօգտագործվող, մշակված և անմշակ հողերով, լեռներով, բլուրներով և տափարակ վայրերով, խաղողի որթերով և ծառերով, այգիներով և [նրանց] անցուղիներով, աղբյուրներով, առուներով և ջրանցքներով, քարերով և քարանձավներով, արոտավայրերով, խոտհարքներով և մարգագետիններով, տնատեղերով, ջրհորներով, ջրափոսերով, ջրերի հավաքման վայրերով (ջրամբարներ), առվակներով, ջրի ճանապարհներով ու ջրաղացներով և այս սահմաններում գտնվող ներքին ու արտաքին կից կամ անջատ բոլոր իրավունքներով, որոնց հիշատակումը անհրաժեշտ է, բացի սեփականության չենթարկվող **շարիաթական** բացառություններից և մարդկանց սեփականություններից։ [Վաճառվեց] Թավրիզի ընթացիկ վաթսուն հազար հնչուն սպիտակ արծաթ **դինարով,** և որպեսզի պարզ լինի ու կասկածի տեղի չտա, դրա կեսը լինում է երեսուն հազար **դինար:**

Նրանց միջև տեղի ունեցավ ճշմարիտ **շարիաթական** վաճառք և պարզ ու լսելի փոխադարձ համաձայնություն, իր բոլոր հիմնական պայմաններով և ազատ բոլոր թերություններից ու անվավերություններից, մարդկության բարիք Մուհամմադի **Շարիաթում** [նըշված] կարգով, ողջույն և օրհնություն [նրան]։ Կատարվեց գնի հատուցումն ու գնահատվածի ստացումը, հանձնումն ու ստանձնումը և վստահ ու տեսանելի արարողությամբ տեղի ունեցավ պայմանավորված կողմերի անջատումն իրարից։ Եվ այս առումից հետո [գնողն այդ **մուլքը**] ընդմիշտ **վակֆ** արեց և հավիտյան ամրացրեց (արգելափակեց) Ուչքիլիսայի վանքին և այնտեղ ելումուտ անողներին (միաբանությանը), **շարիաթական** ճշմարիտ **վակֆով** և պարզ ու լսելի կրոնական արգելափակմամբ։

Այդ թվում է նաև Ջուխուր-Սա՛դի [վիլայեթի] Կարբիի **ճաճիայի,** չորս կողմից սահմանագծված Աղունատուն կոչվող գյուղի վեց **դանգը:** Առաջին [սահմանն է] այն քարը, որ ժողովրդի լեզվով [կոչվում է] Ուչանդաշ, երկրորդ սահմանն է էրզրումի ճանապարհը, որ շարունակվում է մինչև երրորդ սահմանի հին ճանապարհը, այստեղից էլ գնում է մինչև Թալինի հողերը և հասնում չորրորդ սահմանին, որը մի հին իսլամական գմբեթ է, իսկ այստեղից էլ շարունակվելով հասնում է մինչև [առաջին սահմանը]։

[Վաճառվեց] իր բոլոր սահմաններով և իրավունքներով, ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով], օգտագործվող և չօգտագործվող, [մշակված] և անմշակ հողերով և դաշտերով, լեռներով, բլուրներով և տափարակ վայրերով, խաղողի որթերով և ծառերով, անցուդիներով, աղբյուրներով, առուներով և ջրանցքներով, քարանձավներով, այգիներով, արոտավայրերով, խոտհարքներով և մարգագետիններով, տնատեղերով, ջրհորներով, ջրափոսերով, ջրերի հավաքման վայրերով (ջրամբարներ) և առվակներով, և այդ սահմաններում գտնվող ներքին և արտաքին, կից կամ անջատ բոլոր իրավունքներով, որոնք արժանի են հիշատակման: Սեփականության ենթակա չեն միայն մզկիթները, գերեզմանոցները, ճանապարհներն ու դեպի մարդկանց սեփականությունները տանող անցուդիները:

Որոշյալ և հայտնի գումարի դիմաց, որ է Թավրիզ քաղաքում [հատված] ընթացիկ հիսուն [հինգ] հազար սպիտակ արծաթ **դինար,** և որի կեսը լինում է քսանյոթ հազար հինգ հարյուր **դինար,** տեղի ունեցավ նրանց միջև **շարիաթական** ճշմարիտ վաճառք և պարզ ու լսելի փոխադարձ պայմանավորվածություն իր բոլոր հիմնական պայմաններով, ազատ բոլոր թերություններից և անվավերություններից, և հանձնումն ու ընդունումը, գնի հատուցումն ու գնահատվածի ստացումը, հանձնումն ու ստանձնումը կատարվեց այնպես, ինչպես հրամայված է մարդկության բարիք Մուհամմադի **Շարիաթում,**— ողջույն նրան, և վստահ տեսանելի արարողությամբ տեղի ունեցավ կողմերի անջատումը իրարից:

Այս առուծախից հետո [գնողը այդ **մուլքը**] վերջնականապես **վակֆ** արեց և հավիտյան ամրացրեց (արգելափակեց) Ուչքիլիսայի վանքին և այնտեղ ելումուտ անողներին (միաբանությանը), ճշմարիտ **շարիաթական վակֆով** և պարզ ու լսելի կրոնական արգելափակմամբ:

Այդ թվում է նաև Ջուխուր-Սա'դի [**վիլայեթի**] Աբարանից **Ճահիայում** գտնվող չորս կողմից սահմանագծված Թեղենիս և Քիրաջլու կոչվող գյուղի վեց **դանգը:** Առաջին սահմանն է այն լեռը, որ ժողովրդի խոսակցական լեզվով կոչվում է Կարնի[յ]արուխ դաղի, և հենց սրանով էլ ավարտվում է [առաջին սահմանը], երկրորդ սահմանի վրա են այն քարերը, որոնք կոչվում են Ջինգիլստան, այստեղից էլ շարունակվում է մինչև երրորդ սահմանը հանդիսացող ճանապարհը կամ հասարակաց ճամփան, որը շարունակվում է մինչև չորրորդ սահմանի վրա գտնվող աղբյուրի ակունքը, որ ժողովրդի լեզվով կոչվում է Ջեշմաբաշի և վերջանում է հասնելով մինչև Եղվարդի հայտնի աղբյուրի ակունքը: [Վաճառվեց] իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով] օգտագործվող և չօգտագործվող, մշակված և անմշակ ցանքատեղերով, հողերով և դաշտերով, լեռներով, բլուրներով և տափարակ վայրերով, խաղողի որթերով և ծառերով, անցուդիներով, աղբյուրներով, առուներով և ջրանցքներով, քարերով և քարանձավներով, արոտավայրերով, խոտհարքներով և մարգագետիններով, տնատեղերով, ջրհորներով, ջրափոսերով, ջրերի կուտակման վայրերով և առվակներով, այգիներով ու ջրաղացներով և այդ սահմանների մեջ մտնող ներքին և արտաքին կից և անջատ բոլոր իրավունքներով, որոնք ենթակա են օտարման. սեփականության մեջ չեն մտնում միայն մզկիթները, գերեզմանոցները, ճանապարհները և դեպի մարդկանց սեփականությունները տանող անցուդիները:

Որոշյալ գումարի դիմաց, որ է Թավրիզ քաղաքում ընթացիկ յոթանասուն հազար հնչուն սպիտակ արծաթ **դինար,** և որպեսզի պարզ լինի ու կասկածի տեղի չտա, այդ գումարի կեսը լինում է երեսուն հինգ հազար **դինար,** նրանց միջև տեղի ունեցավ շարիաթական ճշմարիտ վաճառք իր բոլոր հիմնական պայմաններով և ազատ բոլոր թերություններից ու անվավերություններից և համաձայն մարդկության բարիք Մուհամմադի **Շարիաթի,**— բազում օրհնություն և ողջույն նրան:

Այս առուծախից հետո [գնողն այդ մուլքը ևս] ընդմիշտ **վակֆ** արեց և հավիտյան ամրացրեց (արգելափակեց) Ուչքիլիսայի վանքին և այնտեղ ելումուտ անողներին, **շարիաթական** ճշմարիտ **վակֆով** և պարզ ու լսելի արգելափակմամբ:

Այդ թվում է նաև Ջուխուր-Սա'դի [**վիլայեթի**] Կարբիի **Ճահիայում** գտնվող Մուղնի կոչվող գյուղի վեց **դանգը,** որի սահմանների նկարագրության կարիքը չկա, քանի որ դրանք գրված են բուն կալվածագրերում: [Վաճառվեց] համաձայն **Շարիաթի** և կրոնի, ենթակա և կից իր բոլոր [պարագաներով], օգտագործվող և չօգտագործվող, մշակված և անմշակ հողերով, լեռներով, բլուրներով և տափարակ վայրերով, խաղողի որթերով և ծառերով, անցուդիներով, աղբյուրներով, առուներով և ջրանցքներով, այգիներով և ծառաստաններով, ջրաղացներով, քարանձավներով, արոտավայրերով, խոտհարքներով և մարգագետիններով, տնատեղերով, ջրհորներով, ջրափոսերով, ջրերի հավաքման վայրերով (ջրամբարներ) և առվակներով, և այդ սահմանների մեջ մտնող ներքին և արտաքին կից

և անջատ բոլոր իրավունքներով, որոնք ենթակա են օտարման. սեփականության տակ չեն մտնում միայն մզկիթները, գերեզմանները, ճանապարհներն ու դեպի մարդկանց սեփականությունները տանող անցուղիները:

Որոշյալ գնի և հայտնի գումարի դիմաց, որ է Թավրիզում ընթացիկ հիսունհինգ հազար հնչուն ոսպիտակ արծաթ **դինար,** և որպեսզի պարզ լինի և կասկածի տեղի չտա, հիշյալ գումարի կեսը լինում է քսանյոթ հազար հինգ հարյուր **դինար,** նրանց միջև տեղի ունեցավ **շարիաթական** ճշմարիտ վաճառք և պարզ ու լսելի փոխադարձ համաձայնություն բոլոր անհրաժեշտ հիմնական պայմաններով և ազատ բոլոր թերություններից ու անվավերություններից և այնպես ինչպես հրամայված է մարդկության բարիք Մուհամմադի **Շարիաթում,**— բազում օրհնություն և ողջույն նրան:

Հիշյալ մեծապատիվ վաճառողը հայտարարեց, որ պաշտոնական **շարիաթով** գնողից ստացավ [նշված գումարները] և ստացական տվեց: Իր հերթին վերոհիշյալ գնողը ևս հայտարարեց դրամը վճարելու և ամբողջի ստացականը ստանալու մասին: Վերջինս միաժամանակ հայտարարեց վերոհիշյալ գնահատվածների ամբողջությամբ նորին վսեմություն մեծապատիվ վաճառողից ստանալու մասին, ապահովությամբ վճարելով և հատուցելով նրան վերը միատեղ նկարագրված բոլոր վաճառվածների գինը, որի գումարը լինում է հինգ հարյուր քառասուն հազար ընթացիկ իսքանդարյան հնչուն սպիտակ արծաթ **դինար** և որպեսզի պարզ լինի ու կասկածի տեղի չտա՝ այդ գումարի կեսը լինում է երկու հարյուր յոթանասուն հազար **դինար:**

Այնուհետև կողմերի միջև արարքներով ու պարսկերենով տեղի ունեցան [շարիաթական վաճառքի և գնման բոլոր արարողությունները] ինչպիսիք են՝ գնի հատուցումն ու ընդունումը և գնահատվածների ստացումը, հանձնումն ու ստանձնումը, և տեսանելի արարողությամբ տեղի ունեցավ կողմերի համաձայնությունը սույն պայմանագրին:

Վերոհիշյալ նորին վսեմություն վաճառողը բոլորի առաջ հավաստիացրեց և երաշխավորեց իր իրավունքները վաճառված [գյուղերից] յուրաքանչյուր **դանգի** նկատմամբ և ապա հրաժարվեց բոլոր իրավունքներից, հատկապես իրեն սխալված կամ խաբված ներկայացնելու և այդ հիման վրա վաճառքը չեղյալ հայտարարելու իրավունքից: Ուստի, այժմ, այս կարգով և պայմանագրությամբ [թվարկված **մուլքերը**] վերոհիշյալ գնողի և **վակֆ** անողի իրավունքն

ու **մուլքն** են, նրա անբաժան սեփականությունն ու զուտ և անխառն հարստությունը և դասվում են նրա իրավունքների, **մուլքերի,** հարստությունների, ստացվածքների, կալվածների և ինչքերի շարքը: Այսուհետև վերոհիշյալ վաճառողը ոչ մի դեպքում և ոչ մի ժամանակ ինչպես նաև նրա ժառանգներից և ոչ մեկը, որևէ մի օր ոչ մի իրավունք, վեճ կամ պահանջ չի կարող ունենալ:

Այս վաճառքից հետո կաթողիկոսը առանց երկմտության, վրանման կամ բռնադատման այդ բոլորը ամբողջությամբ ճշմարիտ շարիաթական **վակֆ** արեց և պարզ ու լսելի կերպով ամրացրեց (արգելափակեց) Ուչքիլիսայի վանքին և այնտեղ ելումուտ անողներին (միաբանությանը), որպեսզի այդ տաճարում գիշեր ցերեկ իրենց հավատքի և օրենքների համաձայն ծառայությամբ զբաղվողներն ու ճգնողները, վերը թվարկված և նկարագրված գյուղերի **մուլքերի** հասույթներով հոգան իրենց ամենամյա ապրուստի միջոցները: [Վանքի վանահայրն ու] անօրենը [այդ **մուլքերի բաճրաև**] վերցնելով վերոհիշյալ գյուղերի հողագործներից, հատկացնի այդ նպատակին և **վակֆ** անողի պայմանների համաձայն վարվելով, բարի աղոթքներ առաքի վերոհիշյալ հոժարակամ **վակֆ** անողի անվան:

Եվ այժմ այս իսկ կարգով և պայմանագրությամբ, մերձավորներից, ցեղակիցներից կամ ուրիշներից որևէ մեկը, սերնդից սերունդ և ժառանգից ժառանգ, օրերից մի օր իրավունք չունի մոտենալ վերը նկարագրված մուլքերին և առավել կամ նվազ, մեծ կամ փոքր չափով միջամտել, անմիտ պահանջներ ներկայացնել և ոտընձգություններ անել վերոհիշյալ վաճառված **մուլքերի** և հիշատակված **վակֆերի** նկատմամբ: Դրանք սեփականություններ են, անհանգստություն չպատճառել դրանց տերերին՝ [վանքի] սպասավորներին և ոտնձգություն թույլ չտալ այդ **մուլքերի բաճրաների** նկատմամբ: Համաձայն [Ղուրանի] սրբազան **այաթի** «ով որ այն փոխի այդ մասին լսելուց հետո՝ նա հանցավոր է»: Այդպիսին թող արժանանա աստծու և նրա հրեշտակների և բոլոր մարդկանց անեծքներին, թող պատժվի և մերժվի նրա ճակատագիրը և այս ու հանդերձյալ կյանքում սերնդից սերունդ անիծյալ սատանաների ու դևերի բաժին դառնա և հարյուր քսանչորս հազար մարգարեների և սուրբ իմամների զայրույթին ենթակա լինի և զրկվի բոլոր մեղավորների համար բարեխոսող սուրբ Մուհամմադի բարեխոսությունից,— և թող աստծու օրհնությունը լինի մարգարեի ու նրա սերունդների վրա:

Եվ նմանապես պայման դրվեց, որ քանի դեռ հիշյալ **վակֆ** անողը ողջ է, նա պիտի լինի հիշյալ վանքի տնօրենը, վերակացուն **(մութավալլի)** և եպիսկոպոսը, իսկ նրա մահից հետո, մերձավոր և ավագ կրոնավորներից և վանականներից բարեհոգի և սակավապետ մեկը, որի մշտական բնակավայրը Ուչքիլիսայի վանքը կլինի, թող դառնա վանքի տնօրենն ու վերակացուն և [եկամուտը] ծախսի նրանց (վանականների) անունդի վրա, համաձայն **շարիաթական** ճշմարիտ վաճառքի և պարզ ու լսելի գնման և **վակֆ** անողի սահմանած պայմանների:

Եվ ապա պայման դրեց, որ [հետագա] ժամանակների ավագ վերակացուներն ու վանականները, օրերից մի օր հիշյալ **վակֆը** չվաճառեն, չընծայեն, օտարման չենթարկեն և չնվիրեն: Եթե մեկը փորձի փոխել այս **վակֆը** և խախտել նրա պայմանները, թող այդպիսին ենթարկվի աստվածային անեծքների և զայրույթի: Պայմանն այն է, որ չվաճառեն և վարձով չտան, չնվիրեն և չփոխանակեն, որովհետև դա ճշմարիտ **շարիաթական վակֆ** է և պարզ ու լսելի հավիտենական արգելափակում, ուստի և արգելվում է նրա վաճառքն ընդմիշտ: Եվ ով որ լսի վերոհիշյալ **մուլքերի վակֆ** լինելու մասին և այդ իմանալուց հետո վաճառի կամ նվիրատվություն թույլատրի կամ փոփոխի վերոհիշյալ պայմանները, աստծու և նրա մարգարեի և սահաբաների ու դևերի անեծքներին արժանանա և թող աստված նզովի նրան:

Աստծու օգնությամբ արաբերենով և պարսկերենով գրի առնվեց:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 6

Ամիր Հուսեյնի, Ամիր Ահմադի, Սա'դի, Բեկում փաշայի և Խանզադայի կողմից Հովհաննեսի որդի Ավանին վաճառված Քյոշիգ-Հերհերի Քարահունջ գյուղի 1436 թ. կալվածագիրը

Թղթապահակ 2ա, վավ. 2. պատճեն.
մեծ. 23×18, 5 սմ, գիր՝ նասթա'լիկ

Նա է տերը:

Նա է միակ ամենակարողը:

Փառք նրա սրբությանը և օրհնություն ու ապահովություն նրա մարգարեին՝ Մուհամմադին և նրա ամբողջ սերունդին:

Այնուհետև, սույն գրության նպատակն այն է, որ հորեղբորորդիներ հանգուցյալ Շեյխ-Համզայի որդի գերերջանիկ **ամիր** Հուսեյնը, հանգուցյալ Իսֆանդիարի որդի **ամիր** Ահմադն ու հանգուցյալ Դովլաթյարի որդի Սա'դը և հատկապես Բուլխեյրի դուստր Բեկում փաշան և Բուլխեյրը Խալիլ Ֆախր-էդ-դինլուի դուստր Խանզադան, Քյոշիգ-Հերհերցի Հովհաննեսի որդի քրիստոնյա Ավանին վաճառեցին Քյոշիգ-Հերհերի Քարահունջ [գյուղի] վեց **դանգի** որոշյալ երեք **դանգը**, վեց հազար հինգ հարյուր **դինարով**, գումարը պարզ լինելու համար՝ դրա [կեսը] լինում է երեք հազար երկու հարյուր հիսուն **դինար:** [Վաճառքը կատարվեց] առանց բռնության ու հարկադրանքի, ճշմարիտ, **շարիաթական** ստացման միջոցով, հաստատմամբ և ընդունմամբ, ինչպես նաև բուն կալվածագրում նշված չորս սահմանների երաշխավորությամբ և բազմաթիվ վստահելի, բարեմիտ և առաքինի մարդկանց [վկայությամբ], մարգարեի փախուստի ութ հարյուր քառասուն թվականի հաղթական սաֆար ամսին (1436 թ. օգ. 15 — սեպտ. 12):

Վ կ ա ն ե ր

Այսպես կատարվեց — կնիքի պատճենը — Աստծուն ապավինած, նրա ծառա՝ Մուհամմադը

Ներկայությամբ հաստատեցին — կնիքի պատճենը — Աստծուն ապավինած, ծառա՝ Մուհամմադ-Ալի

Մուսայի որդի Շեյխ-Ահմադ

Շեյխ-Հասանի որդի Դարվիշ Բայազիդ

Շեյխ-Կուբադի որդի Շեյխ-Ֆրիդուն

Խանլար-Բալղանիի որդի Շեյխ-Զահիդ

Թավաքուլ Օրաջիի որդի Աբդ-ուլ-ամիր

Աբդուլի որդի Շահ-Մուհամմադ

Մուհամմադ Հաջիլուի որդի Կուբադ

Սեյյեդի Հաջիլուի որդի Մուհամմադ

Հեյդարի .... ի որդի Ջաբբար

Վալի Խալիլ Ֆախր-էդ-դինլուի որդի Սալեհ

. . . . . լուի որդի Շա'բան

Աբիլ-Հասան Բալղանի

Քանդուլի

Մուհամմադ Ալի Բալղանի

Ավագ-բեկ Մելիք-Փաշայանցի ներկայության [արտա]գրվեց 1309 թվականի Ջումադի առաջին ամսի վերջին (1892 թ. հունվարի 1):

ՎԱՎԵՐԱԳԻՐ 7

Տաթևի առաջնորդ Անգեղակոթցի Շմավոն վարդապետի Ամիր Ռուստամ Օրբելյանից գնած Սվարի և Տանձատափ գյուղերի վեց, Տաղու և Աղանց գյուղերի երեք դանգերի, ինչպես նաև Ջանի որդի Ղազանճարից գնած Կոծմակոթի վեց դանգի և Փիրկուլիից գնած մի այգու և դրանց Տաթևի վանքին վակֆ արվելու մասին կազմված 1450 թ. կալվածագիրը:

Թղթապանակ 2ա, վավ. 3, բնագիր
մեծ. 183×19 սմ, գիր՝ նասխ

Նա է առաջնորդում

Կնիք

Այն ինչ որ գրված է այս **վակֆային** *փաստաթղթի բովանդակության և այս* **շարիաթական** *տեսանելի վավերագրի մեջ, արձանագրվեց և հաստատվեց ինձ մոտ և ես հաստատում եմ նրա ճշգրտությունը իմ պատասխանատվությամբ և երաշխավորությամբ:*

Գրեց Սա՛դի որդի, ծառա Ջաման-էդ-դին **կազին,** *երկրների չորրորդական մասի վերջին* **հաքիմը:**

Նա է

Սույն **շարիաթական վակֆային** *վավերագրի բովանդակությունը սկզբից մինչև վերջը հաստատվեց ու ճշտվեց ինձ մոտ, արդար հիմքերով, և ես ավարտեցի այն պահպանելով* **շարիաթի** *բոլոր օրենքները: Հաստատում եմ նրա ճշգրտությունը և պատասխանատու եմ նրա գործադրման:*

Գրեց նվազագույն ծառա Ղիաս-էդ-դին Անսարիի որդի Նասրուլլան,— Թող աստված ների նրանց:

Կնիքի վրա՝

Աստված, Մուհամմադ, Ալի: Նրանց ծառան՝ Ղիաս-էդ-դին Անսարիի՝ որդի՝ Նասրուլլա:

Այս խոսքերի արձանագրման և հոդվածների շարադրման պատճառն այն է, որ քրիստոնյաների և հայերի պարծանք, խեղճերի և կարոտյալների սպասավոր Հակոբի որդի, Խաչատուրի որդի Շմավոն վարդապետ Անգեղակոթցին, ուխ հարյուր հիսունչորս

թվականին (1450 թ.), Սմբատի որդի, **ամիր** *Բեշքենի որդի, հայոց* **ամիրզադե** *(իշխանազուն) Ռուստամից գնեց ներքոհիշյալ մի քանի մանր* **մուլքերը,** *և դրանք իր սեփականությունը դարձնելուց հետո* **վակֆ** *արեց Տաթևի վանքը ելումուտ անողներին, որպեսզի հիշյալ գյուղերի եկամուտը ծախսվի նրանց սնունդը ապահովելու:*

Առաջինը Սվարի (Սվարանց) գյուղն է, վեց **դանգ,** *սահմանագծված չորս կողմից: Առաջին սահմանը այն ճանապարհն է, որ գնում է դեպի Վաղուդի կածանը և Սվարիի գետը, երկրորդը՝ Խաչախորից մինչև Ղարաշիի յուրդը, երրորդը՝ Կազբելն է, չորրորդը՝ Շաքարամարգի գլխից մինչև Յուրդի ներքևը:*

[Վաճառվեց] ութ հազար **դինարով,** *որի կեսը լինում է չորս հազար* **դինար,** *իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով], ոռոգվող և անջրդի հողերով, պտղատու և անպտուղ ծառերով, բլուրներով և փոսերով, գետերով և ջրանցքներով, ջրաղացներով, հին ու նոր վայրերով և այն ամեն ինչով, որ* **շարիաթով** *կարող է սեփականության ենթակա լինել, բացի գերեզմաններից, մզկիթներից, ճանապարհներից և այն հողերից, որոնք նախքան այս* **վակֆ** *էին արված հիշյալ վանքի տնտեսությանը և որոնց անունները հիշատակում ենք այստեղ: Դրանցից առաջինը Մաճկալահողն է, երկրորդը՝ Քարուտի հողը, երրորդը՝ երկար հողը, չորրորդը Քեղսանբանը (՞), հինգերորդը Օսեփի հողը, վեցերորդը տեր Սահակ Ջունանցի հողը, յոթերորդը Կուկաննց հողը և վերևից Հասումարգը իր չորս սահմաններով, ինչպես նաև Շաքարամարգն իր չորս սահմաններով: Սրանք բոլորը* **շարիաթական** *օտարման միջոցով անցան Շմավոն վարդապետի իրավունքի ներքո, որից հետո նա* **վակֆ** *արեց վերոհիշյալ [վանքը] ելումուտ անողներին: Հակառակողը թող ենթարկվի աստծու և մարգարեի անեծքներին:*

Խաչատուրի որդի Շմավոն վարդապետը նմանապես գնեց **ամիր** *Բեշքենի որդի, հայոց* **ամիրզադե** *Ռուստամից Թուման-ե Նախջևանի Ուռուի գյուղաքաղաքին ենթակա, Տաթևի վանքի մոտ գտնվող Տաշու գյուղից երեք* **դանգ մուլք,** *երեք հազար* **դինարով,** *որի կեսը լինում է մեկ հազար հինգ հարյուր* **դինար,** *իր այն սահմաններով, որ նշված են բուն կալվածագրում: Նա վճարից նշված գինը և այդ գյուղը ևս դարձավ վարդապետի սեփականությունը, որը նա* **վակֆ** *արեց հիշյալ վանքը ելումուտ անողներին: Հակառակողը թող ենթարկվի աստծու զայրույթին:*

Հիշյալ Խաչատուրի որդի Շմավոն վարդապետը, նմանապես գնեց Բեշքենի որդի հայոց **ամիրզադե** *Ռուստամից Աղա (Աղանց)*

ՎԱՎԵՐԱԳԻՐ 7

Տաթևի առաջնորդ Անգեղակոթցի Շմավոն վարդապետի Ամիր Ռուստամ Օրբելյանից գնած Սվարի և Տանձատափ գյուղերի վեց, Տաղու և Աղանց գյուղերի երեք դանգերի, ինչպես նաև Ջանի որդի Ղազանֆարից գնած Կոծմակոթի վեց դանգի և Փիրկուլիից գնած մի այգու և դրանց Տաթևի վանքին վակֆ արվելու մասին կազմված 1450 թ. կալվածագիրը:

Թղթապանակ 2ա, վավ. 3, բնագիր
մեծ. 183×19 սմ, գիր՝ նասխ

Նա է առաջնորդում

Կնիք

Այն ինչ որ գրված է այս **վակֆային** *փաստաթղթի բովանդակության և այս* **շարիաթական** *տեսանելի վավերագրի մեջ, արձանագրվեց և հաստատվեց ինձ մոտ և ես հաստատում եմ նրա ճշգրտությունը իմ պատասխանատվությամբ և երաշխավորությամբ:*

Գրեց Սա՛դի որդի, ծառա Ջաման-էդ-դին **կազին,** *երկրների չորրորդական մասի վերջին* **հաքիմը:**

Նա է

Սույն **շարիաթական վակֆային** *վավերագրի բովանդակությունը սկզբից մինչև վերջը հաստատվեց ու ճշտվեց ինձ մոտ, արդար հիմքերով, և ես ավարտեցի այն պահպանելով* **շարիաթի** *բոլոր օրենքները: Հաստատում եմ նրա ճշգրտությունը և պատասխանատու եմ նրա գործադրման:*

Գրեց նվազագույն ծառա Ղիաս-էդ-դին Անսարիի որդի Նասրուլլան,— թող ասված ների նրանց:

Կնիքի վրա՝

Աստված, Մուհամմադ, Ալի: Նրանց ծառան՝ Ղիաս-էդ-դին Անսարիի որդի՝ Նասրուլլա:

Այս խոսքերի արձանագրման և հոդվածների շարադրմանը պատճառն այն է, որ քրիստոնյաների և հայերի պարծանք, խեղճերի և կարոտյալների սպասավոր Հակոբի որդի, Խաչատուրի որդի Շմավոն վարդապետ Անգեղակոթցին, ուխտ հարյուր հիսունչորս

թվականին (1450 թ.), Սմբատի որդի, **ամիր** *Բեշքենի որդի, հայոց* **ամիրզադե** *(իշխանազուն) Ռուստամից գնեց ներքոհիշյալ մի քանի մանր* **մուլքերը,** *և դրանք իր սեփականությունը դարձնելուց հետո* **վակֆ** *արեց Տաթևի վանքը ելումուտ անողներին, որպեսզի հիշյալ գյուղերի եկամուտը ծախսվի նրանց սնունդը ապահովելու:*

Առաջինը Սվարի (Սվարանց) գյուղն է, վեց **դանգ,** *սահմանագծված չորս կողմից: Առաջին սահմանը այն ճանապարհն է, որ գնում է դեպի Վազուդի կածանը և Սվարիի գետը, երկրորդը՝ Խաչախորից մինչև Ղարաչիի յուրդը, երրորդը՝ Կազբելն է, չորրորդը՝ Շաքարամարգի գլխից մինչև Յուրդի ներքևը:*

[Վաճառվեց] ութ հազար **դինարով,** *որի կեսը լինում է չորս հազար* **դինար,** *իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով], ոռոգվող և անջրդի հողերով, պտղատու և անպտուղ ծառերով, բլուրներով և փոսերով, գետերով և ջրանցքներով, ջրաղացներով, հին ու նոր վայրերով և այն ամեն ինչով, որ* **շարիաթով** *կարող է սեփականության ենթակա լինել, բացի գերեզմաններից, մզկիթներից, ճանապարհներից և այն հողերից, որոնք նախքան այս* **վակֆ** *էին արված հիշյալ վանքի տնտեսությանը և որոնց անունները հիշատակում ենք այստեղ: Դրանցից առաջինը Սաճկալահողն է, երկրորդը՝ Քարուտի հողը, երրորդը՝ երկար հողը, չորրորդը Քեղսանբանը (՞), հինգերորդը Օսեփի հողը, վեցերորդը տեր Սահակ Ջունանցի հողը, յոթերորդը Կուկանենց հողը և վերևից Հասումարգը իր չորս սահմաններով, ինչպես նաև Շաքարամարգն իր չորս սահմաններով: Սրանք բոլորը* **շարիաթական** *օտարման միջոցով անցան Շմավոն վարդապետի իրավունքի ներքո, որից հետո նա* **վակֆ** *արեց վերոհիշյալ [վանքը] ելումուտ անողներին: Հակառակողը թող ենթարկվի ասածու և մարգարեի անեծքներին:*

Խաչատուրի որդի Շմավոն վարդապետը նմանապես գնեց **ամիր** *Բեշքենի որդի, հայոց* **ամիրզադե** *Ռուստամից Թուման-ե Նախջևանի Ուտուի գյուղաքաղաքին ենթակա, Տաթևի վանքի մոտ գտնվող Տաշու գյուղից երեք* **դանգ մուլք,** *երեք հազար* **դինարով,** *որի կեսը լինում է մեկ հազար հինգ հարյուր* **դինար,** *իր այն սահմաններով, որ նշված են բուն կալվածագրում: Նա վճարից նշված գինը և այդ գյուղը ևս դարձավ վարդապետի սեփականությունը, որը նա* **վակֆ** *արեց հիշյալ վանքը ելումուտ անողներին: Հակառակողը թող ենթարկվի ասածու զայրույթին:*

Հիշյալ Խաչատուրի որդի Շմավոն վարդապետը, նմանապես գնեց Բեշքենի որդի հայոց **ամիրզադե** *Ռուստամից Աղա (Աղանց)*

գյուղի վեց դանգ մուլքն իր հետևյալ չորս սահմաններով: Առաջին սահմանն է Սվարիից եկող մեծ գետը, երկրորդը՝ այն բարակ ջուրն է, որ Տանձուտից հոսում է մինչև Շիվ, երրորդը այն բարձրունքն է, որ գտնվում է Քալաջուկի ստորոտում և չորրորդը՝ Մեծ քարն է ու դեղին... ից մինչև... ի կամուրջը, իր [բոլոր] սահմաններով ու իրավունքներով, ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով], մշակված և անմշակ, օգտագործվող և չօգտագործվող [հողերով], հինգ հազար **դինար** գումարով, և այն ևս իր սեփականությունը դարձնելուց հետո, իր հանդերձյալ կյանքի համար **վակֆ** արեց Տաթևի վանքի տնտեսությանը: Աշխարհական **հաքիմներն** ու իսլամի **կազիները** որևէ մեկին թույլ չտան հակառակել:

Շամավոն վարդապետը Սմբատի որդի, **ամիր** Քեչքենի որդի հայոց **ամիրզադե** Ռուստամից գնեց նաև Տանձատափ գյուղի վեց **դանգ մուլքը** իր այն սահմաններով, որ նշված է բուն [կալվածագրում], երեք հազար **դինարով:** Արժեքը լրիվ և ամբողջությամբ հասավ հիշյալ վաճառողին և այդ [գյուղը] ևս հիշյալ վարդապետի սեփականությունն ու իրավունքը դառնալուց հետո, այն ևս **վակֆ** արեց Տաթևի վանքը ելումուտ անողներին: **Վակֆ** անողի պայմաններին չհակառակեն:

Գյուղի գնումից առաջ, նույն գյուղում գտնվող հետևյալ մշակված հողերը նախապես **վակֆ** են արված վանքին:

...ի հողը պարտեզով, գյուղի եզերքում գտնվող մեծ հողը, այն հողը, որ գտնվում է Հադր-Մելիքի այգու ներքևում և Կոստանի հողը:

Հիշենք նաև Աղա գյուղում գտնվող այն հողերը, որոնք նախքան այդ գյուղի **վակֆ** արվելը [պատկանում էին վանքին]: Առաջինը Սևավերն է, որ գտնվում է գետի ափին, երկրորդը այն հողն է, որ քահանան է ցանում, մյուսը Ջարեքդարն է, Շլորահողը և Խեդենեկի հողը: Այս հողերը ևս **վակֆ** են արված [վանքը] ելումուտ անողներին և փոփոխման ենթակա չեն:

Շամավոն վարդապետը այնուհետև Ջանի որդի Ղազանֆարից գնեց Տաթևի շրջանում գտնվող Կոծմակոթի վեց **դանգ մուլքը,** սահմանագծված չորս կողմից: Առաջին սահմանն է Քիրխաչը, երկրորդը՝ Մուրախորը, երրորդը՝ Քուրդանշահի կամուրջը, չորրորդը՝ Ալուրնաձորը, երկու հազար դինարով: Հիշենք նաև, որ Ջանը իր հերթին այդ **մուլքը** գնել էր **ամիր** Սմբատից և իր իրավական սեփականությունը դարձրել: Շարիաթական օտարման միջոցով այս [գյուղը ևս] հիշյալ վարդապետի [սեփականությունը դարձավ] և այն ևս **վակֆ** արեց Տաթևի վանքը ելումուտ անողներին: Փոփոխման ենթակա չէ:

Շամավոն վարդապետը Սանջար- **բեկի** որդի Փիր-կուլիից գնեց նաև Ուռուից գյուղաքաղաքի դիմացում գտնվող մի այգի, չորս հազար **դինարով,** որը հայտնի է Ջերմաձոր անունով և այն ևս **վակֆ** արեց հիշյալ վանքը ելումուտ անողներին: Փոփոխման չենթարկեն:

Սվարի գյուղի կեսը պատկանում էր Մարտիրոսին, որ Շամավոն վարդապետի հետ ընկերությամբ էր գնել, սա ևս իր կեսը **վակֆ** արեց հիշյալ վանքի տնտեսությանը, վերջնական և հավիտենական **վակֆով,** մինչև որ ասված ինքը կժառանգի այդ հողը նրա վրա գտնվողներով, որովհետև նա է ժառանգներից ամենաարդարը: Այն պայմանով, որ չվաճառեն և մեկ տարուց ավելի ժամանակով վարձու չտան, չնվիրեն և չփոխանակեն ոչ մի դեպքում:

Գրեցի այս, վերոհիշյալ թվականի (854 թ.) շավվալի քսանչորսին, ուրբաթ օրը (1450 թ. դեկտ. 1) և փառք տիեզերքի արարիչ աստծուն և օրհնություն ու ապահովություն բոլոր մեղավորների համար բարեխոսողին:

Գրվեց երկրների չորրորդական մասի վերջին **հաքիմ, կազի** Սա'դի որդի ծառա Ջաման-էդ-դինի ձեռքով:

Լուսանցքում

Այն ինչ որ այս նիստում արձանագրված է, ճշմարիտ է, որ Քեչքենի որդի Ռուստամը նշված վայրերն ու ագարակները վաճառել է Շամավոն վարդապետին և վերջինս դրանք **վակֆ** է արել Տաթևի վանքը ելումուտ անողներին, և երկրորդ Շամավոն վարդապետը, նախորդ վարդապետ Շամավոնի ժառանգն է:

Գրեց Ուռուից ծառա Սոհրաբը: կնիք

Այն ինչ որ այս վավերագրում գրված է և հիշատակված այս **վակֆային** գրության մեջ, ճշմարիտ իրողություն է, և ասված է ամենագետը:

Գրեց՝ ծառա Մուհամմադ ալ-Շաերին: կնիք

Նա է: Այսպես է ինչպես գրված է և բարի է ինչ որ շարադրված է:

Գրեց՝ ծառա **Խոջա** Ալին,— թողություն նրան:

Նա է: Այն ինչ որ գրված է այս [վավերագր]ում ճշմարիտ իրողություն է:

Գրեց ծառա՝ **մելիք** Սոհրաբը: կնիք

Նա է: Այն ինչ որ գրված է այս [վավերագր]ում ճշմարիտ իրողություն է:

Գրեց ուռուցքի ծառա Ռուստամը:

Ինչ որ ասված է, այսպես է:
Գրեց՝ ծառա Մուհամմադը:

Նա է: Այս **շարիաթական** վավերագրի բովանդակությունը, սկզբից մինչև վերջը ճշմարիտ իրողություն է, և ասված է ամենագետը:

Գրեց՝ ծառա Սեյյեդի Ռումին:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 8

Զաքարիա վարդապետի ժառանգական կալվածներ ճանդիսացող Մանկուս, Ավանիկ, Կուդիս, Կրգըլ-վանք, Կոխդ, Դռնիս, Սուրբ Սարգիս գյուղերի և Կուտուց-վանքի ու Ավանասարի ագարակների նկատմամբ Բեյթ-ուլ-մալի կողմից ոչ մի առարկություն չլինելու վերաբերյալ 1489 թ. կազմված արձանագրությունը

Թղթապանակ 1գ, վավ. 927, պատճեն, գիր՝ նասխ:

Այս մանրամասն **շարիաթական** հաշտությունն ու արձանագրված որոշումը ամբողջությամբ տեղի ունեցավ ինձ մոտ, և ես իսլամներին ի նկատի ունենալով հաստատեցի նրա վավերականությունը, խնդրելով և վկայակոչելով ամենասուրբն **իմամ** Սաֆիին:

Գրեց նվաստագույն **հանաֆյան** (ուղղափառ) ծառա, Զուխուր-Սա՛դի **Բեյթ-ուլ-մալի կազին:**

Կնիքի տեղը

Գոհություն արդարադատ աստծուն, որ արժանի է գոհության և օրհնության ու ապահովություն նրա մարգարեին և ապա նրա սերունդներին, գործակիցներին, նրա ընտանիքի անդամներին, կանանց ու որդիներին և նրա **աշիրաթին:**

Այնուհետև այս շարիաթական գրությունը, որի տողերը շողում են անկեղծության և ճշմարտության լույսով, և այս կրոնական արձանագրությունը, որի վարդաբույր խոսքերը միայն արդարություն ու վստահություն են արտահայտում, կազմված է երեք բաժիններից:

Առաջին բաժինը հանգում է այն բանի հիշատակությանը, որ աստվածընտիր, սրբազնասուրբ, մարդկության և բարձրագույն սիեզերական իշխանության ժառանգորդ, արդարադատ և ամենազնիվ մեծ սուլթան, ամենավսեմ խաքան, որին ծառայում են պարսից և արաբացոց արքաները, սրով և գրչով հռչակված, արդարադատությամբ և առատաձեռնությամբ հաղթող, վստահություն և ապահովություն սփռող, սուլթանների շառավիղ [հաղթական Յադուբ բահադուրը],— թող աստված հավիտյան դարձնի նրա իշխանությունը և թող տարածվի նրա գութն ու շնորհը, ամբողջ աշխարհի վրա, պարզ ու ճշմարիտ **շարիաթական** լիազորությամբ, լիազորեց մեծ և ազնվազարմ **ամիր,** առաքինության, ազնվության և վեհանձնության մարմնացում, մեծապատիվ տեր, հանգուցյալ **խոջա** Հեյդարի որդի, **խոջա** Նովրուզի որդի Քամալ-էդ-դին Աբդին **բեկին,** *տնօրինելու մուսուլմանների* **բեյթ-ուլ-մալը,** *կամ օտարելու այն՝ ինչպես որ հարմար գտնի, վիճարկելու [հավակնորդներին] և կամ համաձայնության գալու նրանց հետ, ինչպես նաև լիազորությամբ կատարվող այլ բանների համար: Նրա լիազորության վայրը Զուխուր-Սա՛դի* **վիլայեթի** *և նրան ենթակա վայրերի* **բեյթ-ուլ-մալն է:** *Հիշյալ* **ամիրը** *ընդունեց այս լիազորությունը* **շարիաթական** *համաձայնությամբ և հաստատակամորեն:*

Երկրորդ բաժինը վերաբերում է այն բանին, որ արձանագրվեց, պարզվեց և հաստատվեց Մուհամմադյան բարձր դատարանում, որ Ջհանշահի որդի, Շահինի որդի Զաքարիա անունով [հայ] կրոնավորը տիրում է Վրաստանի շրջաններից Ագերբայջանի նահանգին [ենթակա] Զուխուր-Սա՛դի **վիլայեթում** գտնվող ի ներքո թվարկված և մանրամասն սահմաններով նկարագրված բոլոր գյուղերին և ագարակներին:

Առաջինը Մանկուս կոչվող գյուղն է Գառնիի **ձահիայում,** որի սահմանները հասնում են մինչև Սանքախոր, Միրանաքար, Քամքամաքար և մինչև լեռը:

Երկրորդ գյուղը Ավանիկն է նույն **ձահիայում** Քեղվաբերդ ամրոցի մոտ, որի սահմանները հասնում են մինչև Կոյջախ կոչվող վայրը, այն ձորը, որ հայտնի է որպես Քյուրադարակ, Շիկավանքի ձորը և այն գետը, որ հոսում է Վարսագեղի լեռան մոտով մինչև այն կամուրջը, որ կոչվում է Մանկուս գյուղի կամուրջ:

Երրորդ գյուղը դա Կուդիս կոչվող գյուղն է, նույն **ձահիայում,** որի սահմանները հասնում են մինչև Քյուրադարակ, Սուրբ Սարգիս, Շիկավանքի ձորը և Քեղ[վ]աբերդի ամրոցը:

Չորրորդ գյուղը, Կրզրլվանքի գյուղն է, որ գտնվում է նույն **Ցահիայում** և որի սահմանները հասնում են մինչև Հին Բերդը, Առվակը, Խաչի աշխանան և մինչև Խաչախպեր։

Առաջին ագարակը, Կուտուց վանքի ագարակն է, որ գտնվում է [նույն] **Ցահիայում,** Գիլանի ձորում և որի սահմանները հասնում են մինչև Գետախառնուրդ, Սուր[բ Սարգիս], Դրուսանկ և Շիկաքար։

Հինգերորդ գյուղը Կոխդ գյուղն է, որ գտնվում է նույն **Ցահիայում,** և որի սահմանները հասնում են մինչև Դրուկ և Արտոս գյուղերի հողերը, մինչև Հավուց-Թառի եկեղեցին և մինչև Շիկաքար կոչվող ակունքը։

Երկրորդ ագարակն է Ավանասարը, որ գտնվում է հիշյալ **Ցահիայում,** և որի սահմանները հասնում են մինչև եղնարի փոքրիկ ձորը, Թաթիկ գյուղի գետից մինչև Արտոս գյուղը ձգվող ճանապարհը, Շորուտ կոչվող վայրը և մինչև այն վայրը, որ կոչվում է... և միանում Կուռուչային (Ցամաք գետ)։

Վեցերորդ գյուղը Դռնիս գյուղն է, որ գտնվում է վերոհիշյալ Կրզրլ-վանք գյուղի **Ցահիայում,** և որի սահմանները հասնում են մինչև Աջխանախարի լեռնանցքը, Հիսուրի ձորը, Վեդի գետը և Հայոնի Հենաքի աղբյուրը։

Յոթերորդ գյուղը, որ ավեր է, կոչվում է Սուրբ Սարգիս, գտնվում է վերոհիշյալ Կուտիս գյուղի **Ցահիայում,** իսկ նրա սահմանները հասնում են մինչև Աղմաղան լեռը, Թիքմադաշը, Բալաղդաշը ու Շեկի վանքը և մինչև Քեղվաբերդի ամրոցը։

Վերը սահմանագծված այս գյուղերն ու ագարակները, իրենց բոլոր ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով], ոռոգվող և անջրդի հողերով ու ցանքատեղերով, քարերով, պտղատու և անպտուղ ծառերով, այգիներով, ջրաղացներով, քարանձավներով և կենդանիների մակաղատեղերով, պատանիների խաղատեղերով, գետերով, ջրանցքներով և առվակներով, բլուրներով և լեռներով, հարթ և տափարակ վայրերով ու լեռների ստորոտներով, օգտագործվող և չօգտագործվող արոտատեղերով ու դաշտերով և այլ ներքին ու արտաքին իրավունքներով պատկանում է հիշյալ [հայ] կրոնավորին. առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, վեցերորդ և յոթերորդ գյուղերը լրիվ և ամբողջությամբ, հինգերորդ ամբողջ գյուղի կեսը, իսկ երկու ագարակները ամբողջությամբ։

Երրորդ բաժնում հիշվում է այն մասին, որ վերոհիշյալ լիազորը հիշյալ սեփականատիրոջից պահանջեց ներկա լինել Մուհամ-

մեդյան բարձրագույն դատարանում և ապացուցել, որ վերը սահմանագծված գյուղերն ու ագարակները, որոնք իրենց բոլոր ենթակա և կից, հավելյալ և հարակից վայրերով, այժմ գտնվում են նրա ձեռքում և նրա տիրապետության տակ, այդ ձևով ոչնչով **բեյթուլ-մալին** չեն վերաբերում։ Նա արձանագրել տվեց իր վեճը նրա դեմ և պահանջեց որպեսզի նա պատասխան տա այդ հարցին։ Պատասխանելով հիշյալ հայցվորին [հիշյալ սեփականատերը] ասաց, որ նա իրավացի կերպով հանդիսանում է դրանց սեփականատերը, վերը հիշատակված կարգով և արձանագրված ձևով, ուստի և դրանք նա չի հանձնի։

Այնուհետև հիշյալ լիազորը, **շարիաթական** հայտարարությամբ, հայտարարեց, որ նա այլևս ոչ մի դեպքում և ոչ մի պատճառով որևէ իրավունք և վեճ չունի դրանց նկատմամբ։ [Դրանից հետո], որպես հաշտության գումար նա ստացավ Թավրիզում հատված հինգ հազար ընթացիկ հնչուն ոսկեդահեկան արծաթ **դինար,** որի մեկ հինգերորդական մասը լինում է հազար հնչուն **դինար,** և ապա տեղի ունեցավ նրանց միջև պարզ ու ճշմարիտ **շարիաթական** փոխադարձ հաշտություն իր բոլոր պայմաններով ու հիմքերով, գոհունակությամբ և համերաշխությամբ։ Սույն հաշտության գրի հիման վրա նրանց միջև տեղի ունեցավ պարզ և ճշմարիտ **շարիաթական** փոխադարձ հաշտություն իր բոլոր պայմաններով ու հիմքերով և աղատ թերություններից ու անվավերություններից։

Ապա հիշյալ լիազորը հայտարարեց հաշտության գումարի ամբողջությամբ ստացման մասին և խոստովանեց, որ տեղի է ունեցել **շարիաթական** հատուցում։ Այնուհետև հիշյալ լիազորը, լրացուցիչ կերպով, պարզ ու ճշմարիտ **շարիաթական** հայտարարությամբ հայտարարեց, որ ինքը ոչ մի իրավունք կամ վեճ չունի վերը սահմանագծված հիշյալ գյուղերի և ագարակների նկատմամբ, և կամ այն հայոնի ցանքատեղերի նկատմամբ, որոնց սահմանների նկարագրության կարիքը չկա։ Վերոհիշյալ կարգով թվարկված բոլոր գյուղերն ու ագարակները, անկախ այն բանից թե դրանց սահմանները նկարագրված են կամ չեն նկարագրված, հիշյալ սեփականատիրոջ անժխտելի իրավունքը, հալալ մուլքը և զուտ ու անխառն հարստությունն են և պատկանում են նրա իրավունքների, հարստությունների, սեփականությունների և ստացվածքների շարքը, և նա կարող է ունենալ դրանք իր ձեռքում և տիրել դրանց այնպես ինչպես բոլոր սեփականատերերը տիրում են իրենց սեփականություններին և վարվել նրանց հետ այնպես ինչպես կցանկանա։

Հայտարարությունը լսողը պարզ ու ճշմարիտ ընդունմամբ հիշյալ հայտարարողի հաշտության համաձայնությունը, անձամբ ընդունեց ի գիտություն։

Այս բոլորը սկզբից մինչև վերջը տեղի ունեցավ ուիք հարյուր իննսունչորս թվականի սրբազան ռամազան ամսի սկզբին (1489 թ. հուլիս 29), որից հետո բոլոր վերը սահմանագծված կամ չսահմանագծված գյուղերն ու ագարակները ոչնչով **բեյթ-ուլ-մալին** *չեն վերաբերում,— և փառք տիեզերքի ստեղծողին։*

Այս իսկապես այսպես տեղի ունեցավ։
Այս այսպես է և ես վկա եմ այս բանին։

Կնիքի տեղը

Արձանագրությունը կազմեց՝ ասածու թողությանը կարոտ՝

Կնիքի տեղը

Մեվլա *Սա՛իդ Խադեմ-ադ-դինի որդի* **Մեվլա** *Մուհամմադի և Ուլուղ-բեկ Հուշնարի որդի Գյանջի-բեկի ներկայությամբ [հիշյալ] սեփականատերը ճշմարիտ* **շարիաթական վակֆ** *արեց իր արու զավակներին։ Չվաճառեն և չնվիրեն։*

Կնիքի տեղը

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 9

Ջուխուր-Սա՛դի վիլայեթի Բեյթ-ուլ-մալի վերակացու Ամիր Քյամալ-Էդ-դին Աբդին բեկի ձեռով ամբողջ Օշական գյուղը Խոջա Սա՛դի-Վակկասին վաճառելու վերաբերյալ 1489 թ. կազմված կալվածագիրը

թղթապանակ Ia, վավ. 4, բնագիր
մեծ. 256×20 սմ, գիր՝ նասխ

Նա է տիրույթների տերը։

Այս **շարիաթական** *վկայագրի ու կրոնական ազդի բովանդակությունն ու էությունը արձանագրեցի և հաստատեցի, կատարելով այն սուրբ և լուսավոր* **Շարիաթի** *ոգուն համապատասխան։*

Ներողամիտ ասածու մեծության առաջ տնանկ, Խալիլի որդի ծառա Յուսուֆ,— թողություն նրանց։

Կնիք

Նա է ճշմարիտը։

Բոլորը ինչ որ գրված և արձանագրված է այս կրոնական գրության մեջ, հաստատվեց և ճշտվեց ինձ մոտ և ես կարգադրեցի այն

համաձայն սրբազան **Շարիաթի** *տրամադրության և ինչպես որ արտոնում է մեր վսեմ կրոնը։*

Ասածու հարստության առաջ տնանկ, Ջուխուր-Սա՛դի **վիլայեթի** *և նրան ենթակա վայրերի* **կազի,** *Ամին-էդ-դինի որդի Մուհամմադի ալ-Սա՛դի,— թող ասված ների նրանց բոլորին։*

Կնիք

Պարզվեց և ճշտվեց սույնի բովանդակությունը և հաստատվեց... այն ինչ գրված է նրա մեջ ... պահպանելով այն բոլոր [օրենքները], որ անհրաժեշտ է պահպանել... պատասխանատվությամբ։

Գրեց Ջուխուր-Սա՛դի վիլայեթի ... ը, վերինվեդիեցի ծառա Յաղուբը...

Կնիք

Գրեց Ջուխուր-Սա՛դի և նրան ենթակա վայրերի **բեյթ-ուլ մալի,** *[***կազի** *Արդ-ուլ-Ավվալ Հանաֆին],— թող ասված ների նրանց բոլորին։*

Կնիք

Փառք ասածուն, որ թուլլատրում է առևտուրը և արգելում հափշտակումն ու վաշխառությունը, և օրհնություն ու ապահովություն նրա ընտրյալ մարգարեին՝ Մուհամմադին և նրա սերունդներին, որոնք խավարի մեջ անշեջ աստղեր են և առաջնորդող լուսավոր սյուներ։

Այնուհետև այս **շարիաթական** *փաստաթուղթը, լսված արձանագրությունն ու կրոնական վավերագիրը, որի խոսքերն ու իմաստը հիմնավոր են և բառերն ու նախադասությունները հաստատուն, բովանդակում է այն բանի հիշատակումը, որ արձանագրման, հաստատման, ճշտման, ստուգման և հայտնաբերման ընդունված կարգով, Ջուխուր-Սա՛դի վիլայեթի մահմեդականների հպատակեցնող բարձրագույն դատարանում արձանագրվեց ու հաստատվեց, ճշտվեց ու պարզվեց և հայտնի դարձավ, որ Օշական կոչվող ամբողջ գյուղը, որ գտնվում է Վրաստանի շրջաններից Ազերբայջանի նահանգին [ենթակա] վերոհիշյալ* **վիլայեթի** *Կարբիի* **նահիյայում** *և որը սահմանագծված է ներքոհիշյալ վայրերով. առաջին, արևելյան սահմանի վրա է Ղարաքիլիսան, երկրորդ՝ արևմտյան սահմանում՝ Մեծ ճանապարհը, որը գնում է հասնում մինչև Կարբի, երրորդ՝ հյուսիսային սահմանն է Շահվեր կոչվող գետակը, որ հոսում և հասնում է մինչև մեհնաստանը, և չորրորդ՝ հարավային սահմանը [հասնում է մինչև] Աշտարակի հողերը, իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և*

հարակից [վայրերով], ոռոգվող և անջրդի, մշակված և անմշակ հողերով, քարերով և ծառերով, գետերով և ակունքներով, ջրաղացներով, դաշտերով, բլուրներով և լեռներով, հովիտներով, ավերակ բերդով, ստորոտներով, քարանձավներով և տափարակ վայրերով և իր բոլոր ներքին ու արտաքին իրավունքներով, ի բացառյալ մրգկիթները, գերեզմաններն ու ճանապարհները, գտնվում է **բեյթ-ուլ-մալի** իրավասության տակ, հանդիսանալով նրա հարստություններից, կալվածներից, գյուղերից և ագարակներից մեկը։

Իր բոլոր սահմաններով, իրավունքներով և նրան վերաբերող ամեն ինչով, վերը նկարագրված գյուղը, **բեյթ-ուլ-մալի** վերակացու **(ամիլ)**, գովելի հատկությունների տեր, Պարսկաստանի **ամիրների** լավագույնը, մեծ **սադր խոջա** Հեյդարի որդի, մեծ և հարգելի տեր հանգուցյալ **խոջա** Նովրուզի որդի **ամիր** Քյամալ-էդ-դին Աբդին **բեկը**,— թող աստված ավելացնի նրա փառքը և ողորմի նրա նախնիներին,— վաճառեց հանգուցյալ **խոջա** Քյամալ-էդ-դին Հուսեյնի որդի, հանգուցյալ **խոջա** Սեյյեդի-Ալիի որդի, մեծ տեր, բարության և առատաձեռնության աղբյուր **խոջա** Սա՛դի Վակկասին, և վերջինս գնեց նրանից, երբ կողմերի մոտ առկա էին **շարիաթական** վաճառքի, ինչպես նաև իսլամական լսելի գործարքների համար անհրաժեշտ բոլոր պայմանները, որոնք են, իմացությունն ու գիտակցությունը, հասունությունն ու ազատությունը, ցանկությունն ու կամքը։ Եվ ապա գոհունակությամբ համաձայնություն կայացավ, որ վաճառքը կատարվի Թավրիզում հատված և կնքված ութ հազար ընթացիկ, սպիտակ արծաթ հնչուն **դինարով**, պարզ լինելու համար կեսը լինում է չորս հազար հնչուն [**դինար**]։

Այնուհետև նրանց միջև տեղի ունեցավ տեսանելի **շարիաթական** պարզ ու ճշմարիտ վաճառք, իր բոլոր պայմաններով ու հիմքերով, ազատ թերություններից ու անվավերություններից, որին նախորդեց վերը սահմանագծված վաճառվող [տարածության] դիտումը պայմանավորվողների կողմից, կալվածները դիտելու **շարիաթական** արժանի դիտողականությամբ։

Եվ կողմերից յուրաքանչյուրը առանձին հայտարարեց իրեն հասանելիքի ստացման մասին, գինը լրիվ և ամբողջությամբ մեկին և գնահատվածը՝ մյուսին, ազատելով այն այնպիսի զբաղվածությունից, որ **շարիաթով** կարող է արգելք հանդիսանալ հանձնմանն ու ստանձնմանը և որպեսզի գնորդը կարողանա մաքուր խղճով հայտարարել գնի ամբողջությամբ վավերական **շարիաթական** վճարման և կողմերի միջև տեղի ունեցած հատուցման և ստացման մասին։

Այնուհետև **շարիաթական** պարտավորությամբ վաճառողը գնողի հանդեպ պարտավորվեց երաշխավորել, որ իր իրավասության տակից դուրս եկած վաճառված [կալվածի] նկատմամբ, ոչ մի ժամանակ, ոչ մեկի կողմից որևէ հավակնություն չի կարող լինել։ Միաժամանակ հայտարարեց և ընդունեց վերոհիշյալ ինքնակամ վաճառողը, և նրա այդ հայտարարությունը հաստատեցին **շարիաթի** վերաքննիչները, որոնք ոչնչով չէին առնչվում սույն վաճառքի հետ, որ այստեղ սահմանագծված գյուղն ամբողջությամբ իր բոլոր սահմաններով, իրավունքներով, կից և վերաբերյալ [վայրերով], հիշյալ գնորդի անվիճելի իրավունքը, անբաժանելի սեփականությունն ու զուտ և անխառն անձնական հարստությունն է և հանդիսանում է նրա իրավունքներից, **մուլքերից**, հարստություններից, կալվածներից և գյուղերից մեկը, և կարող է իր ձեռքում ունենալ և տիրել նրան ինչպես տիրում են սեփականատերերն **(մալիքները)** իրենց սեփականությանը **(մուլքերին)**, կամ իրավատերերն իրենց իրավունքներին և վարվել նրա հետ այնպես ինչպես կցանկանա։

Այսուհետև ինքը (վաճառողը) ոչ մի դեպքում և ոչ մի պատճառով, հատկապես **բեյթ-ուլ-մալի** անունից, այդ գյուղի մի մասի կամ բաժնի և ոչ էլ ամբողջի նկատմամբ, ոչ մի իրավունք կամ հավակնություն, պահանջ կամ վեճ ու վիճաբանություն չունի։ Վաճառողի այս հայտարարությունն ու հանձնառությունը հիշյալ գնորդը **շարիաթական** պարզ և ճշմարիտ ընդունմամբ անձամբ ընդունեց ի գիտություն։

Այս բոլորը սկզբից մինչև վերջը տեղի ունեցավ ընտրյալ մարգարեի փախուստի ութ հարյուր իննսունչորս թվականի սրբազան ռամազան ամսի,— որի բարիքը տարածվում է բոլոր մուսուլմանների վրա,— քսանհինգերորդ օրը (1489 թ. օգոստոս 22) և փառք աստծուն։ Սկզբից և վերջից կնքվեց հաջողությամբ և երջանկությամբ։

Գրեց վերը արձանագրված նվաստագույն ծառան,— թող աստված ների նրան,— ամեն, ով տիեզերքի արարիչ։

Ճշմարիտ իրողություն է, այսպես է։ Աբդին **բեկ**

կնիք

Ներկայությամբ.
Զանգանի որդի, Իսմայիլի որդի, Սալմանի,
Զաշնիարի որդի, Ուլուղ բեկի որդի, Գյանջիբեկի,
Շեյխուի որդի, Շեյխ Ին՛ամի որդի, Սեյյեդի Ահմադի,

Ռամազանի որդի, Ադիլշահ **աղայի** որդի, Սուլթան-Ահմադ **աղայի,**
Ահմադ **աղայի** որդի, Յարալի **աղայի** որդի, Մահմուդ **աղայի,**
Օմարի որդի, Հուսեյնի որդի, Շեյխ-Հասանի,
Ալիյարի որդի, Ահմադի որդի, Ջերքեզի,
Յուսուֆ **աղայի** որդի, Յաղուբ **աղայի** որդի, Շահկուլի **բեկի,**
Մեվլա Սուլթանշահի որդի, **մեվլա** Աբդ-ուլ-ադիլի որդի, **մեվլա** Աբդ-ուլ-լաթիֆի։

Այնպես է, ինչպես որ նկարագրված է այս գրության մեջ։

Ասածուն ապավինած **մեվլանա** Դավուդի՝ որդի Վդուդ Ֆաթհի,— ինչ ասված ների նրանց։

Տեղյակ եմ, որ այս այսպես է։

Գրեց՝ ասածուն ապավինած, **մեվլանա** Ալիի որդի Մուհամմադի։ [Թողություն նրանց]։

Այս այսպես է, և ես վկա եմ այս բանին։
Հաջիի որդի Հուսեյնը, հայտարարեց և գրեց ...

Նա հարուստ է։

Վերոհիշյալ գյուղը հայտնի է Ղազանֆար անունով, որի սահմանները նկարագրելու կարիք չկա սույն գրության բնագրում։

Գրեց՝ նվաստագույն ծառա Մուհամմադ-Շարիֆը։

Նա է։ Պատիվ ունեցա ծանոթանալու սույնի բովանդակությանը։
Գրեց չուխուր-սա՛դեցի Յաղուբ ալ-Հանաֆին։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 10

Այդին-գարվիշ գյուղի վեց դանգ մուլքի Ֆախր-էդ-դինի կողմից Իբրահիմ խալիֆային վաճառվելու մասին 1503 թ. կազմված կալվածագիրը

ձեռագրաշար 1ա, վավ. 3, բնագիր
մեծ. 47×16,5 սմ, գիր՝ խառը

Նա հավիտյան կենդանի է։

Ընթերցվեց, համաձայն խնդիրքի...
Գրեց ասածո իմաստության առաջ տնանկ...
կնիք

Փառք նրա սրբության և օրհնություն նրա մարգարեին և իր ազգականներին։ Այնուհետև սույն **շարիաթական** ճշմարիտ գրության

բովանդակությունը և այս պարզ և լսելի վճռի իմաստը պատմում և ծանուցանում է այն մասին, որ ընտրյալ հայ ազնվական Ֆախր-էդ-դինը, էմիրության և իշխանության ապավեն, բարեբախտ, խալիֆայության և վսեմության մեծ ժառանգորդ հանգուցյալ Յաղուբ Ալփավուիի որդի Իբրահիմ-**բեկ խալիֆային** վաճառեց Ագերբայջանի նահանգին ենթակա, Չուխուր-Սա՛դի [**վիլայեթի**] շրջաններից Կըրխբուլաղի **ճաճիայի** Այդին-գարվիշ գյուղի վեց **դանգ մուլքը,** որի առաջին սահմանն է Արմուդ առաջին, երկրորդը՝ Իլանլին, երրորդը՝ Կուղլի դարան և չորրորդը՝ Կարադաշը, վեց **թումանով,** որի կեսը լինում է երեք **թուման** Թավրիզի ընթացիկ արծաթ դրամ, իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով] և **շարիաթով** նրան պատկանող [ամեն ինչով], և նրանց միջև կայացավ համաձայնություն։

Կատարվեց այս մարգարեի փախուստի ինը հարյուր ութ թվականի շավվալ ամսին (1503 թ. մարտ 30—ապրիլ 27), ապահովություն նրան և նրա [սերունդներին], ով ողորմածդ արձանագրողների։

Ներկա էին՝

Փիր-Յաղուբի որդի Ամրին,
Շեյխ Սեյիդի որդի Բաբան,
Սմեի (՞) որդի Յարալի **դարվիշը,**
Քյոսայի որդի **դարվիշ**-Հեյդարը,
Օթուրի որդի Բախշայիշը,
Բայրամի որդի Փիրալ-**դարվիշը,**
Լաթիֆի որդի Հաշեմ **խանը**
Հասանի որդի Օթուդում-Զաքիրը,
Յար-Ահմադի որդի Բիչարան,
Ահմադի որդի Մուհամմադը,
Իմամկուլիի որդի Փիր-Վալին,
Շեյխ-Համզայի որդի Մուհամմադը։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 11

Ազադ-Ջիրանի ճաճիայի Դոնիս և Դանակերտ գյուղերում և Սալ, Բերդակ ու Վեֆիլության մուլքերի ագարակներում խոջա Ֆարհիբեկ Թուսիի ունեցած բաժիններ հաստատող 1504 թ. կալվածագիրը

Ձեռագրաշար 1ա, վավ. 7, բնագիր
մեծ. 73×22 սմ, գիր՝ նասխ

Ո՛վ արժանավոր տեր։ Ողորմածն ասված։

Սույնի իմաստն ու բովանդակությունը պարզվեց և հաստատվեց ինձ մոտ. **մուլքերին** տիրելու մասին **շարիաթական** հայտարարությունը նույնպես ինձ մոտ կատարվեց։

Գրեց ողորմածն աստծու առաջ մեղապարտ ծառա **կազի** Աֆզալուլլա (*) նախչևանցին,— թող աստված պահպանի ու ների նրան։

կնիք

Նա է։

Պարզվեց նրա իրավունքը և հաստատվեց նրա սեփականությունը, [իրոք] գտնվում է ներքոհիշյալի սեփականության ներքո և այս **շարիաթական** գրությունն ու լսելի վճիռը իր մեջ հիշատակված հայտարարությամբ կազմվեց ինձ մոտ։

Գրեց մեղապարտ ծառա, ողորմածհոգի Համդուլլայի որդի Նախչևանի **կազի** Մուհամմադ-ադ-դին Անսարին,— թող աստված ների նրանց։

կնիք

Նա է նախախնամողը։

Սույնի բովանդակությունը ճշտվեց և հաստատվեց ինձ մոտ։

Գրեց ամենազոր պետության աղոթարար ծառա, Նասրուլլայի որդի Ինայաթուլլա Անսարին,— թող աստված ների նրանց։

կնիք

Փառք աստծուն, որ ունի իշխանություն և արքայություն, մեծության և կարողության տիրոջը։ Ամեն ինչ վախճան ունի, սակայն նա անվախճան է ու անմեռ, և օրհնություն ու ապահովություն նրա արարածներից ամենից բարուն և գովաբանվածին։

Այնուհետև, այս կրոնական լսելի **շարիաթական** պայմանագրի և վստահելի արձանագրության պատճառն այն է, որ նախկին թագավորների հրովարտակների բովանդակությունից և Ազադ-Ջիրանի **մաճալի,** Թուման-և Նախչևանի և Օրդուբադ քաղաքի և առհասարակ ամբողջ Ազերբայջանի **վիլայեթի** վստահության արժանի նախկին և ներկա **կազիների** ձեռքով գրված և կնքված առանձին արժանահավատ, ճշմարիտ և վավերական փաստաթղթերից և հաստատուն արձանագրություններից պարզվեց, ապացուցվեց և հաղթական բանակի **կազիների** ատյանում հաստատվեց, որ Ազադ-Ջիրանին ենթակա Դոնիս կոչվող վայրի ամբողջ **մուլքերից** տասներկու **դանգ**

ամբողջական **մուլք** և այդ վայրի ներքո ստորև թվարկված ագարակները՝

Դոնիս գյուղը՝	3	դանգ
Դանակերտ գյուղը	2,5	դանգ
Սալ ագարակը	3	դանգ
Բերդակ ագարակը	2	դանգ
Վեքիլության մուլքերի ագարակը . .	2	դանգ

իրենց բոլոր ենթակա և կից վայրերով, իրավունքներով և հավելյալ, հարակից և վերաբերող [ամեն ինչով], հողերով, դաշտերով, լեռներով ու բլուրներով, առուներով ու ջրանցքներով, աղբյուրներով ու գետերով և ներքին ու արտաքին բոլոր իրավունքներով հին ժամանակներից ի վեր մինչև օրս վեհանձնյա **ամիր** և իշխան, քաջակորով, մեծության, առաքինության և ազնվության տիպար, մեծահարուստ և բարեբախտ **խոջա** Ֆաթհի-բեկ Թուսիի իրավունքներից, հարստություններից և սեփականություններից են եղել և գտնվում են նրա տիրապետության, տնօրինության և սեփականության ներքո, և ոչ ոք այդ **մուլքերի** ագարակների նկատմամբ ոչ մի պահանջ կամ վեճ չունի և չի կարող ունենալ։ Դրանք վերոհիշյալ **ամիրի** իրավունքը, սեփականությունն ու հարստությունն են։

Տեղի ունեցավ այս ինը հարյուր ինը թվականի սրբազան ռամազան ամսի կեսերին (1504 թ. մարտ 1—5)։

Նա հարուստ է։

Սույնին վկայում եմ։
Գրեց ծառա Խալիլուլլա Օրդուբադին

կնիք

Սույնի բովանդակությունը հաստատվեց, ընդունվեց և ճշտվեց ինձ մոտ։

Գրեց նվաստագույն ծառա Ֆաթհուլլա Օրդուբադին

կնիք

ՎԱՎԵՐԱԳԻՐ 12

Մանվելի որդի Թադեոսի և նրա որդի Միրիջանի Մակվի վիլայեթում գտնվող կալվածների սեփականությունը վերահաստատող 1504 թ. արձանագրությունը

Թղթապանակ 4, վավ. 1, բնագիր
մեծ. 28,5×18,5 սմ, գիր՝ պիվանի-շիքասեի

Նա է։

Մկան տարվա հաշվառումների ժամանակ, երբ **Բարձրագույն Դիվանի** *հրամանով ես, Արքունի դռան նվաստագույն ծառաս, Ազերբայջանի գործերի վերակացու* **(մութասադի)** *էի նշանակված և առուգում էի հակառակորդներին* **(մուխալիֆաև)** *պատկանող,* **Բեյթ-ուլ-մալի** *ու սեփականատերերն անհայտ ստացվածքներն ու* **մուլքերը,** *Մակվի* **վիլայեթի մուլքերի** *և այլ ստացվածքների առուգման և քննության [ժամանակ], նորից ուշադրությամբ ստուգվեց, որ այն կալվածները, որոնք գտնվում են ազնիվ քրիստոնյա Մանվելի որդի Թադեոսի և սրա որդի Միրիջանի ձեռքում, համաձայն* **շարիաթական** *փաստաթղթերի, ամբողջությամբ նրանց սեփականությունն ու* **մուլքն** *են, և նրանց տիրապետությունը այդ կալվածների ու* **մուլքերի** *նկատմամբ իրավացի տիրապետություն է, և ոչ ոք, հատկապես* **Բեյթ-ուլ-մալի** *և սեփականատերերն անհայտ [կալվածների] լիազորները այդ կալվածների նկատմամբ ոչ մի իրավունք և հավակնություն չեն կարող ունենալ։*

Գրվեց այս վերոհիշյալ իրավասուների (սեփականատեր) խընդրանքով ինը հարյուր տասը թվականի ջումադի առաջին ամսի վերջին տասնօրյակին (1504 թ. հոկտեմբեր 29 — նոյ. 8), և կնքվեց Մուհամմադի և նրա սերունդների փառաբանությամբ։

Կնիք

ՎԱՎԵՐԱԳԻՐ 13

Դարաշամբի Դիբյանդ գյուղի մուլքի նույն գյուղի ռայաթների սեփականություն լինելը հաստատող 1506 թ. կալվածագիրը

Թղթապանակ 1ա, վավ. 8, բնագիր
մեծ. 141×20 սմ, գիր՝ նասխ

Նա է ճշմարտությունը։

[Սույնի] բովանդակությունը հաստատվեց իմ ներկայությամբ և ճշտվեց ինձ մոտ։ Ինչ որ ասված է այս գրության մեջ **շարիաթական**

ճշգրտությամբ սկզբից մինչև [վերջը] կարգավորվեց ինձ մոտ արդար հիմունքներով և ես այն ավարտեցի պահպանելով **շարիաթական** *կարգը և պատասխանատու ու վկա եմ դրան։*

Գրեց ամենակարող աստծու կարոտյալ ծառա և օրհնյալ ու փառաբանյալ մարգարեին,— որից հետո չկա այլ մարգարե,— ապավինած Իբրահիմի որդի Ֆաթհուլլան։

Կնիք

Ասվածը արդարացատ է։

Սույնի բովանդակությունը հաստատվեց ինձ մոտ։

Գրեց Աբդուլֆաթթահի որդի ծառա Շեյխ Ահմադ Նախչևանին,— թող [ասվածի] ների նրանց։

Կնիք

Նա ողորմած է։

Սույնի կրոնական բովանդակությունը հաստատվեց ինձ մոտ, **շարիաթական** *կարգով, և ես վկա եմ դրան։*

Գրեց Թաջ Ահմադի որդի **Կազի** *Մուհամմադ Նախչևանին։*

Կնիք

Նա է։ Տեղեկացա բովանդակությանը։

Գրեց աղոթարար ծառա՝

Կնիք

Ասվածը ողորմած է։

Տեղյակ եմ այս բանին և վկա գրությանս բովանդակությանը։ Տեղի ունեցավ ինձ մոտ և հաստատվեց ու պարզվեց իմ ներկայության։

Գրեց մեղապարտ ծառա Ֆաթհուլլայի որդի Շուքրուլլան,— թող [ասվածի] ների նրանց։

Կնիք

Փառք աստծուն, որ ունի իշխանություն և արքայություն, մեծության և կարողության տիրոջը։ Ամեն ինչ վախճան ունի, սակայն նա անվախճան է ու անմեռ, և օրհնություն ու ապահովություն նրա արարածներից ամենասուրբին, բարուն և գովաբանվածին, մարդկանց և օթևանների բարեգործին։

Այնուհետև այս կրոնական հաստատուն վավերագրի գրառման պատճառը և այս **շարիաթական** *ճշմարիտ թղթի և օրինական պարզ ու լսելի գրության շարադրման նպատակն այն է, որ նախկին թա-*

գավորների հրովարտակների բովանդակությունից և վստահության արժանի նախկին և ներկա կադիների ձեռքով գրված և կնքված առանձին արժանահավատ ճշմարիտ և վավերական փաստաթղթերից և հաստատուն արձանագրություններից, ինչպես նաև Ազերբայջանի **վիլայեթի** Թուման-ե Նախչևանի **օլքայի** և այլ վայրերի բարձրաստիճան, արդարամիտ մարդկանց վկայությունից պարզվելուց և ապացուցվելուց հետո, հաղթական բանակի **կազիների** առյանում հաստատվեց, որ Ազերբայջանի երկրի Թուման-ե Նախչևանի Դարաշամբի (Դարակ-Շամլըկ) գյուղերից Դիբքյանդ կոչվող գյուղի,— ինչ ասված նրան ապահով պահի ամեն տեսակ փորձանքներից ու պատահարներից,— ամբողջ **մուլքը,** որի սահմաններն են՝ Քալաքալա կոչվող վայրը, որ քրիստոնյաների լեզվով կոչվում է Մարգի փոս, մինչև հին աղբաստեղին, որ ժողովրդի լեզվով կոչվում է Ջորջիլ Մարգարե, ապա հիշյալ Դարաշամբի գյուղերից Բաշքյանդ գյուղի ջրաղացը, որ կոչվում է Կոջա Դագիրման (Մեր ջրաղաց) մինչև Գյադուկ Դոդա կոչվող վայրը, աղբյուրը, որ հայտնի է Փարվանե բուլաղի (Թիթեռնիկի աղբյուր) անունով և այն հայտնի մեծ գետը, որ կոչվում է Արասի ջուր (Արաքս) մինչև Յազդարադի (Աստապատ) եկեղեցին, որ քրիստոնյաների լեզվով կոչվում է Սուրբ Ստեփանոս, որից հետո ընդհանուր ճանապարհն է, որ հասարակ ժողովրդի լեզվով կոչվում է Յոլկավուշան (Խաչուղի), ապա լայն ձորն է, որ կոչվում է Ջինջիրի ձոր, որ գտնվում է վերը սահմանագծված գյուղի և վերոհիշյալ Թուման (Թուման-ե Նախչևան) գյուղերից Արազուն կոչվող գյուղի հողերի արանքում և հասնում է մինչև նշանավոր Ջուղայի եկեղեցիները, որոնք հայտնի են Ամենափրկիչ անունով, այստեղից էլ գնում է մինչև մեծ քարը, որ հայտնի է Մարջումաք կայասի (Ոսպի ժայռ) անունով և ապա Գյոգ դարա (Կապույտ ձոր) կոչվող ձորն է, որ հասնում է մինչև Բիամալլահ կոչվող մեծ լեռը, որից հետո Ջուղայի դաշտն է, ապա Ավլայի քարանձավը մինչև այն վայրը, որ կոչվում է Գյադուգ Սարքեշ և ավարտվում է Քալաքալա կոչվող վայրում, որ ինչպես նշվեց սահմանագծի սկիզբն է, իր բոլոր ենթակա և կից վայրերով, հավելյալ և վերաբերող ամեն ինչով, հողերով, դաշտերով, բլուրներով, լեռներով, տափարակ վայրերով, առուներով և ջրանցքներով, ջրաղացներով և ձիթհանքներով, արոտավայրերով և խոտհարքներով, ոչխարների մակաղատեղերով, երեխաների խաղատեղերով և ծերունիների հավաքատեղիներով, հիշատակված և չհիշատակված, անվանված և չանվանված, ներքին և արտաքին ամեն ինչով, վերը

սահմանագծված Դիբքյանդ գյուղի բնակչության քրիստոնյա համայնքի իրավունքն ու **մուլքը,** գուտ հարստությունն ու անխառն և անբաժան սեփականությունն է և որպես **մուլք** իր հարկանության (սահմանակցության) իրավունքով դեռևս նրանց հայրերի ու պապերի օրոք, սկսած հին ժամանակներից մինչև այժմ գտնվում է նրանց տիրապետության տակ և նրանց **շարիաթական** հաստատուն սեփականության ներքո, և ոչ ոք, վերը սահմանագծված վայրի նկատմամբ երբեք, ոչ մի դեպքում և ոչ մի նպատակով, պատճառով կամ պատճառաբանությամբ, ոչ մի իրավունք, բաժին կամ մաս, պահանջ կամ վեճ չունի և չի կարող ունենալ։

Տեղի ունեցավ այս ինը հարյուր տասն և մեկ (911) թվականի ամիսներից շավվալ ամսի վերջերին (1506 թ. մարտ 16—25)։

Փառք աստծուն, տիեզերքի տիրոջը և փառք ու ապահովություն բարեգործ Մուհամմադին և նրա անարատ ու անմեղ սերունդներին։

Գրեց աստծու հարստության նվազագույն աղոթարար Սա՛դէդ-դինի որդի ընտրյալ **խաթիբ,** Զաման-էդ-դին Մուհամմադը,— ինչ ասված ների նրանց։

Կնիք

Լուսանցքներում

Նա է։ Տեղյակ եմ կատարվածին և վկայում եմ տեղի ունեցածին։

Գրեց Շեյխ Ահմադի որդի՝ ծառա Մուհամմադ նախչևանցին,— ինչ ասված ների նրանց։

Վկա եմ սույնի բովանդակությանը։

Աբդուլլայի որդի Հիդայաթուլլա ալ-Աբունասրի,— ինչ ասված ների նրան։

Նա է։ Ծանոթացա բովանդակությանը և կարգադրեցի համաձայն շարիաթի։

Գրեց՝ Ալիի որդի, Մալիքուլլայի որդի՝ ծառա Աբուլֆազլ ալ-Աբունասրին,— ինչ ասված ների նրան։

Նա է։ Նա է։ Ծանոթացա բովանդակությանը։

Գրեց՝ Մանսուր Թուսիի որդի, ծառա Իսան։

Սույնի բովանդակությունը հաստատեցի.

Գրեց՝ Մանսուրի որդի ծառա Խալիֆե-ալ-Թուսին։

Նա է։ Տեղի ունեցավ և հաստատվեց իմ ներկայությամբ։

Գրեց Նասրուլլայի որդի, նվազագույն ծառա **կազի** *Ֆաթհուլլա Անսարին,— թող ասված ների նրան։*

Կնիք

Նա է։

Որովհետև աշխարհասասա հրամանագիր է հրապարակվել այն մասին, որ կրկին անգամ վերանայվեն կորուսյալների, գումարների անորոշների ու չափերը կորսվածների ... ն ու **ջամ'ը** *և հաստատվեն* **դուլամների, դոռչիների** *ու* **համեսալեդար[ների],** *Ազերբայջանի* **վիլայեթի** *գյուղերում և* **մահալներում** *ունեցած* **մուլքային** *իրավունքները և ստուգվեն* **խալիսե մուլքերն** *ու ստացվածքները, կորուսյալ հարստությունները,* **սունքին** *և* **դունքին,** *սեփականատերերն անհայտ,* **բեյթ-ուլ-մալի** *և մուսուլմանների կարիքների համար ծախսվող [եկամուտներն] ու դրանցից ամեն մեկին տիրելու իրավունքները, ուստի օրինական ստուգումից և ճշտումից հետո պարզվեց, որ կից բնագրում թվարկված և սահմանագծված վայրերի* **մուլքերն** *ու ագարակները այնտեղ նշված վստահության արժանի գրության հեղինակի տված բացատրությամբ հին ժամանակներից ի վեր մինչև այժմ շարունակ գտնվել է Դարաշամբի (Դարա-Շամլըկ) Դիբբյանդ գյուղի* **ռայաթների** *տիրապետության տակ և նրանց ձեռքում, և այսպես արձանագրվեց, որ նրանց* **մալի** *ու հասույթի հանրագումարում* **աբվաբ-ե ջամ'է** *արված։ Թող այսուհետև ոչ ոք հակառակ վերը շարադրվածի,* **խալիսեի** *կամ այլ պատճառներով հիշյալ գյուղի* **ռայաթներին** *և կարուսյալներին չմոտենա և ոչ մի ձևով նրանց չանհանգստացնի ու նեղություն չտա։ Թող-*

Թող նրանք որպեսզի ամենայն ապահովությամբ զբաղվեն երկրագործությամբ շենությամբ և շինարարությամբ և կատարեն այս տարվա իրենց **մալի** *բուն և հավելյալ գումարների պարտավորությունները։*

Գրվեց 964 թվականի սրբազան ռամազան ամսին (1557 թ. հունիս 28—հուլիս 27)։

Վեզիր և մուհայիզ Միրզա *Ֆաթհուլլայի կնիքը*

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 14

Տաթևի վանքապատկան Տաթև, Սվարի, Տաշու, Աղամյանդի, Տանձատափ, Խոտանաճ, Հալիձոր, Շնևեր, Խոտ, Կից, Բարդի, Դաստաջերդ և Դյոլյազի, Բնունիս, Թաս և Ղարաֆիլիսա գյուղերի և մի այգու նախապես Անգեղակոթցի Շմավոն վարդապետին պատկանելու և վերջինիս կողմից հիշյալ վանքին վակֆ արվելու մասին վկայող 1508 թ. կալվածագիրը

Թղթապանակ 2ա, վավ. 4 և 14, պատճեն
մեծ. 104×20 սմ, գիր՝ նասթա'լիկ

Նա է։

Կարդացի այս պարզ արձանագրությունը, սկզբից մինչև վերջը այն համապատասխանում է իսկականի բովանդակությանը։

Սա պատճեն է։

Կնիք

Նա է։

Վավերացվեց և ճշտվեց սույնի բովանդակությունը։ Բնագրում հիշված կամավոր **վակֆ** *անողը հայտարարեց և ընդունեց։*

Գրեց աստծու նվաստագույն ծառա Մուհամմադի որդի Թաջ-Ահմադ նախչևանցին,— թող ասված ների նրանց։

Կնիքի տեղը

Նա ողորմած է։

Սույնի բովանդակությունն ու պարունակությունը վավերացվեց ինձ մոտ։

Գրեց Համդուլլայի որդի կարոտյալ ծառա սիսաջանցի **կազի** *Ֆաթհուլլա Անսարին,— թող ասված ների նրանց։*

Կնիքի տեղը

Ողորմած ասված։

Բնագրում հիշատակված **վակֆ** *անողը ընդունեց։*

Գրեց Աբդուլֆաթթահի որդի, ծառա Շեյխ-Ահմադ նախչևանցին,— թող ասված ների նրանց։

Կնիքի տեղը

Նա է դատում և դատում է արդարությամբ։

Այն ինչ որ հիմք է հանդիսացել ինձ մոտ արձանագրված այս գրության, և այն ինչ որ գրված է այս որոշման և ճշմարիտ **շարիա-**

թական արձանագրության և պարզ ու լսելի պայմանագրության մեջ և պատմում է տեղի ունեցած վերջնական **վակֆի** ու հավիտենական արգելափակման մասին, բնագրում նշված պայմանով կարգավորվեց ինձ մոտ, նշված կարգով և նկարագրված ձևով։ **Վակֆը** հիշվեց ըստ քրիստոնեական կրոնի և մովսիսական հավատքի։ Հաստատվեց ինձ մոտ և ճշտվեց իմ ներկայությամբ, և ես հաստատում եմ նրա ճշգրտությունը և վկայում եմ, որ այն կատարված է սրբազան և լուսավոր **Շարիաթի** ոգուն համապատասխան։

Գրեց նվաստագույն ծառա, լուսավոր **Շար**'ի սպասավոր, Ինայաթուլլայի որդի, Նասրուլլայի որդի սիսաջանցի **կազի** Շուքրուլլա Անսարին,— թող ասված ների նրանց։

Կնիքի տեղը

Ամենակալ աստվածը ասել է, որ նախընտրում է բարեգործներին։

Փառք աստծուն որ միշտ տեղյակ է բոլոր ներքին հաշիվներին ու գաղտնիքներին և օրհնություն ու ապահովություն բոլոր արարածներից ամենահմտասուսին, Ադամի սերունդների ամենաընտրյալին և ամենաանարատին, մարգարեներից վերջինին և առաքյալների տիրոջը, մեղավորների համար բարեխոսողին, Աբդուլլայի որդի Մուհամմադին, մարդկանց և հոգիների տիրոջը և ապա մարգարեի հաջորդին, նրա գործը շարունակողին ու բարեկամին, Հասանի և Հուսեյնի հոր՝ Աբիթալիբի որդի Ալիին, իսլամի և [մեր] հավատքի **իմամին** և նրա արդար սերունդներին, որոնք լուսավորվում են լուսնի լույսով և նորոգվում գիշերից ցերեկ։

Այնուհետև, վեճերին վերջ տալու համար [արձանագրվում է], որ հայ հոգևորականների ու կրոնավորների պարծանք, խեղճերին և կարոտյալներին օգնող և սպասավոր, Ղափանաթի Ուռուբի [**Ցահիայում**] գտնվող Տաթևի վանքի վանահայր **(մութավալլի)** Հակոբի որդի, Խաչատուրի որդի Շմավոն վարդապետ Անգեղակոթցին, ներքոհիշյալ մի քանի մանր **մուլքերը,** որ նրա **շարիաթական,** ժառանգական **մուլքերն** էին, նրա սեփականություններն էին գարձված և գտնվում էին նրա տիրության և տիրապետության տակ, լիովին և ամբողջությամբ, **շարիաթական** ճշմարիտ **վակֆ** արեց և պարզ ու լսելի կերպով արգելափակեց, Ղափանաթում գտնվող վերոհիշյալ Տաթևի վանքին, որպեսզի հիշյալ **մուլքերի բահրաչեն** ծախսվի այդ աղոթատեղիի ելումուտ անողների և [նրանց] ապրուստի վրա։

Դրանցից է Ազերբայջանին ենթակա, Ղափանաթի Ուռուբ [**Ցահիայի**] վերոհիշյալ մեծ վանքի մոտ գտնվող լրիվ և ամբողջական Տաթև կոչվող գյուղը,— թող աստված պահպանի նրան դեպքերից ու պատահարներից,— որի սահմանները հայտնի են այդ վայրում, իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և վերաբերող [վայրերով], չօգտագործվող և օգտագործվող, մշակված և անմշակ հողերով և դաշտերով, բլուրներով և տափարակ վայրերով, խաղողի որթերով և ծառերով, փողոցներով, աղբյուրներով և առուներով, քարերով և քարանձավներով, արոտավայրերով, խոտհարքներով և մարգագետիններով, տնատեղերով, ջրհորներով, ջրափոսերով և ջրերի հավաքման վայրերով, այգիներով, ջրաղացներով և ձիթհանքներով, առուներով և ջրանցքներով։

Այնուհետև Ղափանաթի Ուռուբ [**Ցահիայի**] գյուղերից Սվարի կոչվող գյուղն է, լրիվ և ամբողջությամբ, իր բոլոր ենթակա վայրերով և ներքին ու արտաքին ամեն ինչով։

Դրանցից է նաև Ազերբայջանին ենթակա հիշյալ Ղափանաթի Ուռուբ [**Ցահիայի**] գյուղերից, Տաշու կոչվող գյուղն ամբողջությամբ, որի սահմանները հայտնի են, իր բոլոր ենթակա և կից [վայրերով] և ներքին ու արտաքին իրավունքներով։

Դրանցից է նաև Ղափանաթի Ուռուբ [**Ցահիայի**] հիշյալ մեծ վանքի մոտ գտնվող Աղաքյանդի կոչվող գյուղը իր բոլոր ենթակա և կից [վայրերով] և ներքին ու արտաքին [ամեն ինչով]։

Դրանցից է նաև Ազերբայջանին ենթակա Ղափանաթի Ուռուբ [**Ցահիայի**] գյուղերից Տանձատափ կոչվող գյուղը իր բոլոր սահմաններով և ներքին ու արտաքին իրավունքներով։

Եվ նույնպես հիշյալ Ղափանաթի Ուռուբ [**Ցահիայի**] գյուղերից Խոտանան գյուղը իր բոլոր ենթակա և կից [վայրերով] հավելյալ և վերաբերյալ հողերով և դաշտերով և ներքին ու արտաքին [ամեն ինչով]։

Դրանցից է նաև Ազերբայջանին ենթակա Ղափանաթի Ուռուբ [**Ցահիայից**] ենթակա և հիշյալ մեծ վանքի մոտ գտնվող գյուղերից Հալիձոր կոչվող գյուղը իր բոլոր ենթակա, հավելյալ և կից [վայրերով], որի սահմանները հայտնի են և կարիք չկա դրանք նկարագրելու, բոլոր ներքին և արտաքին [իրավունքներով]։

Դրանցից է նաև Ազերբայջանին ենթակա Ղափանաթի Ուռուբ [**Ցահիայի**] գյուղերից Շնհեր կոչվող գյուղը լրիվ և ամբողջությամբ, իր բոլոր ենթակա և կից հավելյալ և հարակից [վայրերով], բոլոր սահմաններով և ներքին ու արտաքին իրավունքներով։

Դրանցից է նաև հիշյալ Ղափանաթի Ուռուբ [Ցահիայի] գյուղերից Խոտ կոչվող գյուղը լրիվ և ամբողջությամբ իր բոլոր ենթակա և կից [վայրերով], բոլոր սահմաններով և ներքին ու արտաքին [իրավունքներով]։

Դրանցից է նաև հիշյալ Ղափանաթի Քեղի [Ցահիայի] գյուղերից Կից կոչվող գյուղը, լրիվ և ամբողջությամբ, իր բոլոր ենթակա և կից հավելյալ և վերաբերող հողերով, դաշտերով, բլուրներով, դաշտավայրերով, աղբյուրներով և առուներով և այլ բաներով։

Դրանցից է նաև հիշյալ Ղափանաթի Ուռուբ [Ցահիայի] գյուղերից Բորդի կոչվող գյուղը, լրիվ և ամբողջությամբ, և քանի որ այն հայտնի է, ուստի չենք նկարագրում նրա սահմանները, իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և վերաբերող հողերով, դաշտերով և ներքին ու արտաքին [իրավունքներով]։

Եվ ապա Աղերբայջանին ենթակա Թուման-ալ-Նախչևանի Սիսաջան [մահալի] գյուղերից Դաստաջերդ և Գյուլյագի կոչվող գյուղն է լրիվ և ամբողջությամբ իր բոլոր սահմաններով և իրավունքներով հավելյալ և կից [հողերով] և ներքին ու արտաքին [իրավունքներով]։

Դրանցից է նաև Աղերբայջանին ենթակա Թուման-ե Նախչևանի Սիսաջան [մահալի] գյուղերից Բնունիս և Թաս կոչվող գյուղը, լրիվ և ամբողջությամբ, իր բոլոր ենթակա և կից հավելյալ և վերաբերող [վայրերով], սահմաններով և արտաքին ու ներքին բոլոր իրավունքներով։

Դրանցից է նաև Աղերբայջանին ենթակա Թուման-ե Նախչևանի Սիսաջան [մահալի] գյուղերից Ղարաքիլիսա կոչվող գյուղը լրիվ և ամբողջությամբ, իր բոլոր ենթակա և կից հավելյալ և վերաբերող հողերով, դաշտերով, բլուրներով, լեռներով, քարանձավներով, տափարակ վայրերով և ներքին ու արտաքին [իրավունքներով]։

Դրանցից է նաև Ղափանաթի Ուռուբ [Նահիայի] ... ի մոտակայքում գտնվող մի այգի իր բոլոր սահմաններով և իրավունքներով, պտղատու և անպտուղ ծառերով, առուներով և ներքին ու արտաքին այլ բաներով։

Այս բանից հետո վերոհիշյալ **վակֆ** անող Շմավոն վարդապետը վերը թվարկված բոլոր գյուղերն ու այգին առանց կասկածի, անվերապահ կերպով և առանց ստիպման, ճշմարիտ **շարիաթական վակֆ** արեց և պարզ ու լսելի կերպով ամրացրեց (արգելափակեց) հիշյալ Տաթևի վանքին, որպեսզի վանքի վանահայրը, վանականներն ու եպիսկոպոսները վերոհիշյալ գյուղերի **մուլքերի բահրաչեներից** ստացվող հասույթը ամեն տարի այդ գյուղերի հողագործնե-

րից ստանան և գանձելով ամբողջ **մալիքանեն,** ծախսեն հիշյալ աղոթատեղում բնակվող կարոտյալների (վանականներ) ապրուստի և ելումուտ անողների վրա։

Այս ձեռնարկից և պայմանադրությունից հետո նա միաժամանակ պայման դրեց, որ երբևէ նրա մերձավորներից և ցեղակիցներից կամ ուրիշներից որևէ մեկը, սերնդից սերունդ և ժառանգից-ժառանգ, օրերից մի օր որևէ ժամանակ իրավունք չունի մոտենալ վերը նկարագրված **վակֆերի մուլքերին** և առավել կամ նվազ, մեծ կամ փոքր չափով միջամտել, վեճ հարուցել կամ ոտնձգություն անել [վանքի] սպասավորների՝ նշված **վակֆերից** ստացվող **բահրաչեների** տերերի նկատմամբ։ Համաձայն [Ղուրանի] սրբազան այաթի «լսելուց հետո, այն փոխելը մեղք է»։ Այդպիսին թող արժանանա աստծու և նրա հրեշտակների և բոլոր մարդկանց անեծքներին։

Միաժամանակ պայման դրեց, որ ոչ մի ժամանակ, ավագ վանահայրերը **(մութավալլի)** կամ վանականները [այդ **վակֆը**] չվաճառեն, չընծայեն, օտարման չենթարկեն կամ չնվիրեն։ Սույն **վակֆը** և հիշյալ պայմանները փոխողը թող ենթարկվի աստծու և նրա մարգարեի և նզովյալ դևերի ու սատանայի անեծքներին։

Տեղի ունեցավ այս ինը հարյուր տասնչորս (914) թվականի շքեղ ռաջաբ ամսի կեսերին (1508 թ., նոյեմբեր 8)։

Լուսանցքում

Ճիշտ է որ Շմավոն վարդապետը վերը նշված գյուղերի իր ժառանգական **մուլքերը** վերջնական և հավիտյան **վակֆ** է արել Ղափանաթի Տաթևի վանքին, և երկրորդ Շմավոն վարդապետը, նախկին Շմավոն վարդապետի ժառանգն է։

Գրեց կարոտյալ ծառա Սմբատի որդի Ուռուբցի Սոհրաբը

Կնիքի տեղը

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 15

Շահենի որդի Ջաֆարիա վարդապետի ոմն Ասվածատուրի որդուց գնած, Գառնիում գտնվող մի այգու և ճնձաղի 1525 թ. կալվածագիրը

Թղթապանակ 1ա, վավ. 9, բնագիր

մեծ. 44×19 սմ, գիր՝ նասխ և նասթա'լիկ

Ամենակարողն աստված։

Սույնի բովանդակությունը պարզվեց և ճշտվեց ինձ մոտ, որի համար պատասխանատու եմ, և վկա են այս բանին արդար մարդիկ։

Գրեց Մուհամմադ Սա'դիի որդի **կազի** Մուհամմադը,— թող աստված ների նրան։

կնիք

Նա է ճշմարիտ տերը։

Սույն **շարիաթական** գրության պատճառն այն է, որ հայ հոգևորականների պարծանք պարոն . . . . . ի որդի, պարոն Շահենի որդի Զաքարիա վարդապետը, Խաչատուրի որդի, Աստվածատուրի որդի . . .-ից գնեց և վերջինս նրան վաճառեց Գառնի գյուղի Փիրբուգանգի **քյոֆշանում** գտնվող մի ամբողջ այգի, նույն այգում գտնվող մի հնձանի հետ միասին։

Այգու սահմաններն են հարավից Ստեփանոսի այգին, արևելքից Բախշայիշի այգին, արևմուտքից . . . ի որդու այգին և հյուսիսից Նովրուզի որդու այգին, իր բոլոր ներքին և արտաքին իրավունքներով, Թավրիզում հաստված և ընթացիկ առևտրում գործածվող երկու հազար արծաթ **դինարով**։

Եվ նրանց միջև տեղի ունեցավ **շարիաթական** առուծախ, իր բոլոր պայմաններով և հիմքերով և ազատ թերություններից ու անվավերություններից, գնի և գնահատվածի հանձնման ու ստացման, հաստատման և ստանձնման արարողությամբ, որից հետո վերը սահմանագծված վաճառվող [այգին] դարձավ հիշյալ գնողի սեփականությունը և նա իրավունք ունի տիրելու այդ [այգուն] ինչպես որ ինքը ցանկանա։

Գրվեց ինը հարյուր երեսուն և մեկ թվականի դիհաջջա ամսի հինգին (1525 թ. նոյեմբերի 23)։

Ներկայությամբ՝

Ալի բեկի,
Փիլիպոսի որդի տեր . . . . . ի,
Շահրուզցի . . . . . ի,
Մաթոսի որդի տեր Սարգսի,
Ջհանշահի որդի Կուբադի,
Բարաքօղլու և Ալի Փիր աղա Ռումլուի

Ներկա էին նաև՝
Դարվիշ Աբդուլլայի որդի Աբդուլը,
Իսայի որդի Ամիր կուլին և ....

ՎԱՎԵՐԱԳԻՐ 16

Զաքարիա և Համազասպ վարդապետների կողմից Հավուց-Թառի Ս. Ամենափրկիչ վանքին վակֆ արված Կրզրլ վանք, Մանկուս, Ավանիկ գյուղերի և Քեղվարդի ու Սուրբ Սարգսի ագարակների կես մասի 1526 թ. կալվածագիրը

Թղթապահակ 1գ, վավ. 880, պատճեն, գիր՝ նասխ

Սույնի բովանդակությունը հաստատվեց և վավերացվեց ինձ մոտ։

Զուխուր-Սա'դեցի նվաստագույն **կազի**՝ *Մուհամմադ,— թող աստված ների նրան։*

Կնիքի տեղը

Նա տեղյակ է։

Փառք նրա սրբությանը և օրհնություն նրա մարգարեին՝ Մուհամմադին և նրա սուրբ ու մաքուր ամբողջ սերունդին։

Այնուհետև, սույն **շարիաթական** *գրության նպատակն այն է, որ Հավուց-թառի եկեղեցուն Զուխուր-Սա'դին ենթակա Գառնիի* **ևաճիայի** *Կրզրլ-վանք գյուղի կես մասը, Մանկուս գյուղի կես մասը, Ավանիկ գյուղի կեսը, Քեղվարդի ագարակի կեսը և Սուրբ Սարգսի ագարակի կեսը, իրենց բոլոր ենթակա և կից, հավելյալ և հարակից [վայրերով] և այն ամեն ինչով, որ* **Շարիաթով** *նրանց է վերաբերում, և որոնց սահմանների նկարագրության կարիքը չի զգացվում, քանի որ նրանք հայտնի են իրենց տեղում։ Այսպիսով դրանք ճշմարիտ* **շարիաթական** *հավիտենական* **վակֆեր** *են, և թող «լսելուց հետո այն չփոխեն, որովհետև այն փոխելը հանցանք է» և աստծու կողմից արգելված։*

Տեղի ունեցավ այս ընտրյալ մարգարեի փախուստի ինը հարյուր երեսուներեք թվականի ռաբի՝ առաջին ամսի քսանհինգին (1526 թ. դեկտ. 30)։ Եվ փառք տիեզերքի տիրոջը և օրհնություն Մուհամմադին և նրա ամբողջ սերունդին։

Ներկայությամբ կուտուցցի Աբդուլլայի, վերինվեդիեցի Հուսեյնի և գառնեցի Բեկ-Ալիի։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 17

Արդաբիլում գտնվող մի ամբողջական հողակտորից 4 թասուջ և 2 շա'իր վարելահողի գնման և Շեյխ Սաֆիի մզկիթին վակֆ արվելու 1514 թ. կալվածագիրն ու վակֆային վավերագիրը

Թղթապանակ 4, վավ. 84, բնագիր
մեծ. 51,5×18 սմ, գիր՝ շիֆասբե-նասթա'լիկ

Նա ողորմած է։

Ինչ որ այստեղ կա, նշված կարգով հաստատվեց ինձ մոտ և ես գործադրեցի այն պատասխանատվությամբ։

Գրեց աստծու առաջ տնանկ Հեյբաթուլլայի որդի Նե'մաթուլլան,— թող աստված ների նրանց։

կնիք

Նա հոգատար է։

Սույնի կրոնական բովանդակությունը տեղի ունեցավ ինձ մոտ, և ես գործադրեցի այն պատասխանատվությամբ։

Գրեց աստծու առաջ տնանկ Ռուհուլլան,— թող աստված ների նրան։

կնիք

Նա է։ Նա է։

Այն ինչ որ արձանագրված է սրա մեջ, հաստատված է ինձ մոտ, և ես գործադրեցի այն պատասխանատվությամբ։

Գրեց Ահմադի որդի կարոտյալ Հիդայաթուլլա Քաքոլին,— թող աստված ների նրանց։

կնիք

Նա բարձր է և վսեմ։

Այն ինչ գրվեց սրա մեջ համապատասխանում է իրողության, և կասկածի ենթակա գործ չէ։

կնիքի վրա՝
«Հուսեյնի որդի Մուհամմադ»

Սույն **շարիաթական** *խոսքերի գրառման պատճառն այն է, որ պատուհասներից պահպանված ուղղափառների քաղաք Արդաբիլի սրբազան* **Շար**՝*ի նիստում, մեծապատիվ պարոն, իրողության և հավերժության տեր աստծու մոտ հանդչելու արժանացած խոջա Նիզամ-էդ-դին Խան-Ահմադ ալ-Սաֆավիի,— թող աստված նրա սի-*

րելի հոգին լուսավորի,— դուստր և մեծապատիվ պարոն, ողորմած տեր, **սեյիդ** *Մուրթուզա ալ-Սաֆավիի մաքրակենցաղ, համեստափայլ կին և ազնիվ տիկին Շահփարվարը անձամբ, և լիազորված հիշյալ* **սեյիդ** *Մուրթուզայի դստեր՝ Շահզադե* **խաթունի** *կողմից, պարոնության և* **ամիրության** *ապավեն, գերաշնորհ իշխան, մեծափառ* **ամիր** *պարոն Ջալալ-էդ-դին Մա'սում* **բեկ** *Սաֆավիի,— թող տևական լինի նրա վսեմ շվաքը,— լիազորին,* **շարիաթական** *ճշմարիտ վաճառքով վաճառեց, և հիշյալ լիազորը նրանից գնեց մի ամբողջական հողակտորից երեք* **թասուջ** *վարելահող, որը նախապես եղել է հանգուցյալ* **ամիր** *Ալլահվերմիշ* **աղայի** *տների և այգու հետ միասին, Թահիրի բաղնիքի մոտ և կից հիշյալ Ալլահվերմիշ* **աղայի** *հյուրանոցին և նշված քաղաքի բազաղների շուկային և որի սահմանների [ավելի մանրամասն] հիշատակման կարիքը չկա։*

Վաճառվեց Թավրիզում հատված տասնմեկ հազար ընթացիկ **դինարով,** *որի կեսը լինում է հինգ հազար հինգ հարյուր* **դինար** *և այս գումարը ամբողջությամբ այդ նիստում կանխիկ վճարվեց հիշյալ նորին վսեմության վաճառողին, որը այդ գումարի* $^1/_8$ *մասը վերցրեց իրեն և* $^7/_8$*-ը նույն նիստում տվեց հիշյալ Շահզադեին։*

Այնուհետև նորին վսեմություն մեծ տեր և բարեգործ, առատաձեռն բաշխող, **սեյիդ** *Հուսեյն Սաֆավիի դուստր համեստափայլ օրիորդ Գյոզալբեկի* **խաթունը** *կրոնական համաձայնությամբ վերոհիշյալ լիազորին վաճառեց, և վերջինս նրանից գնեց նույն Ալլահվերմիշ* **աղայի** *տների և այգու շարքում եղած հողակտորից մեկ* **թասուջ** *և երկու* **շա'իր** *վարելահող, Թավրիզի չորս հազար հինգ հարյուր* **դինար** *գումարով, որի կեսը երկու հազար երկու հարյուր հիսուն* **դինար** *է լինում։ Եվ ապա նրանց միջև կայացավ* **շարիաթական** *համաձայնություն և գինը ամբողջությամբ նույն նիստում, վկաների ներկայությամբ,* **շարիաթական** *վճարումով կանխիկ վճարվեց հիշյալ Գյոզալբեկիին։*

Տեղի ունեցավ այս ինը հարյուր հիսունմեկ թվականի մեծադոր շա'բան ամսի տասնհինգին (1544 թ. նոյեմբեր 1) օրհնություն և փառք մարգարեին և նրա սերունդներին։

Ներկայությամբ նորին վսեմություն մեծ **սեյիդ** *և* **խալիֆե խոջա** *Նա'իմ-էդ-դին Նե'մաթուլլա Սաֆավիի, համեստափայլ վաճառողի սպասավոր Ամիր* **աղայի, մոլլա** *Ջաքարիյյա Հաֆեզի և Մարզուբանի որդի Ալիջանի։*

Վակֆային արձանագրություն

Նա է։ Նա է։

Սույնի բովանդակությունը նշված ձևով հաստատվեց ինձ մոտ, և գործադրեցի պատասխանատվությամբ։

Աստծու առաջ տնանկ Հեյբաթուլլայի որդի Նե'մաթուլլա,— թող աստված ների նրանց։

Կնիք

Նա հոգատար է։

Նորին վսեմություն լիազորը,— թող տևական լինի նրա վսեմ շվաքը,— ընդունեց այն ինչ վավերագրված է և ավարտվել է ինձ մոտ, և անհրաժեշտաբար դրանից բխող ամեն ինչի համար պատասխանատու եմ։

Կնիք

Նա բարձր է և վսեմ։

Հիշյալ հայտարարողը,— թող տևական լինի նրա ազնիվ շվաքըն,— հայտարարեց այն բանի մասին, ինչ որ այստեղ վավերագրված է ինձ մոտ, և ես գործադրեցի այն պատասխանատվությամբ։

Կնիքի վրա՝ «Հուսեյնի որդի Մուհամմադ»

Սույն կրոնական խոսքերի գրառման պատճառն այն է, որ նորին գերազանցություն, վերը հիշված վերակացու **(մութավալլի)**՝ գնողը **շարիաթական** ճշմարիտ հայտարարությամբ հայտարարեց, որ կից նկարագրված գնված [հողերը] նա Սուրբ շեմի (Շեյխ Սաֆիի մզկիթի) համար է գնել և գրության մեջ հիշված արժեքը (դումարը) նա վճարել է օրհնյալ շեմի գանձարանից և ապա ամենակարող աստծու կամքով, այդ հողերը **վակֆ** է արել սուրբ շեմի կարիքներին, և այժմ դրանք հիշյալ սուրբ մեհյաստանի **վակֆերից** են։

Ինը հարյուր հիսունմեկ թվականի սրբազան ռամազան ամսի տասնվեցին (1544 թ. դեկտեմբեր 1),— օրհնություն և փառք մարգարեին և նրա սերունդներին։

Նա է։

Վերոհիշյալ նորին վսեմություն հայտարարողը հայտարարեց սույնի բովանդակությունը, նվաստիս՝ Սան'անի որդի Մուհամմադ ալ-Լաթիֆիի ներկայությամբ,— թող աստված ների նրանց։

Կնիքի վրա՝ «Սան'անի որդի Մուհամմադ ալ-Լաթիֆի»

Այն ինչ որ այս վավերագրում վերագրված է ինձ համապատասխանում է իրողության։

Տառս Մա'սում Սաֆավի՝

Կնիք

Այլ նշումներ վավերագրի վերին ձախ անկյունում.

Նշված վավերագիրը գրանցեցի և գնի ստացականը . . .

Մա'սում բեկ Սաֆավիի կնիքը

Գրանցվեց սուրբ և լուսավոր շեմի գործերի կառավարչության **մուֆրադաթ**-ում։

Կնիք

Արդարիլ կարմիր թանաքով՝ «73»

Գրանցեց Ահմադի որդի Ռուստամը (՞)

Կնիք

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 18

Տաթևի վանքապատկան մուլքերի և նրանց այլ վարելահողերի 1554 թ. միացյալ կալվածագիրը

Թղթապանակ 3, վավ. 17ա, բնագիր
մեծ, 93×13 սմ, գիր՝ շիքասթե-նաստա'լիկ

Նա է։

Սույնի բովանդակությունը պարզվեց և ճշտվեց ինձ մոտ։ Գրեց աղոթարար ծառա՝

Կնիք

Փառք աստծուն, որ ունի իշխանություն և արքայություն, մեծության և կարողության տիրոջը։ Ամեն ինչ վախճան ունի, սակայն նա անվախճան է ու անմեռ, և օրհնություն ու ապահովություն նրա արարածներից ամենաստրքին, բարուն և գովաբանվածին, մարդկանց և օթևանների բարեգործին և նրա՝ սերունդներին։

Այնուհետև, այս կրոնական հաստատուն վավերագրի գրառման պատճառը և այս **շարիաթական** ճշմարիտ թղթի և օրինական պարզ ու լսելի գրության շարադրման նպատակն այն է, որ նախկին թագավորների հրովարտակների բովանդակությունից և վստահության արժանի նախկին և ներկա **կազիների** ձեռքով գրված և կընքված առանձին արժանահավատ, ճշմարիտ և վավերական փաստաթղթերից և հաստատուն արձանագրություններից, ինչպես նաև Աղերբայջանի [**վիլայեթի**] Ղափանաթի, Սիսաջանի, Թուման-ի Նախջևանի և այլ [**ևաճիաների**] բարձրաստիճան, արդարամիտ մարդ-

կանց վկայությունից պարզվելուց և ապացուցելուց հետո, հաղթական բանակի **կազիների** ատյանում հաստատվեց, որ մեծ և հանրահռչակ Տաթևի վանքի Ագերբայջանի Թուման-և Նախջևան, Ղափանաթ և Ուռուբ **ճահիճներում** գտնվող ամբողջ վեց **դանգ մուլքերը,** որոնց սահմաններն սկսում են Սվարիի (Սվարանց) մեծ գետահովտից, անցնում մինչև Շամխալի քարը և ապա մինչև Աղաքյանդի (Աղանց) գետը, այստեղից էլ [սահմանն] անցնելով գնում է մինչև Ուջադաշ կոչվող քարը, և ապա մեծ գետի հոսանքով անցնելով գնում է մինչև Գյալին Կայասի (Հարսնաքար), որ հայտնի է Գեչի կայա (Այծաքար) [անունով], այնուհետև երկար քար կոչվող քարն է, որտեղից էլ ճանապարհով գնում է մինչև Թիքմադաշ կոչվող քարը, այստեղից էլ շարունակվելով անցնում է Ինջայազի և Կարաչանգըլ կոչվող վայրերով ապա Գուշվազ կոչվող վայրի դիմացով և Ուռուբի գետի (Որոտան) ու Նուռնիսի կամուրջի վերևով, այստեղից էլ բարձրանում է մինչև քարը և հասնում մինչև բլրի կենտրոնը, որտեղից անցնելով գնում է մինչև այն քարը, որ քրիստոնյաների **(զիմմիների)** լեզվով կոչվում է Հերապետ, այստեղից ծռվելով գնում է մինչև Միրանավորի հանդի սահմանը և ապա վերևից անցնելով սուրբ (՞) Հովհաննեսի վանքի միջով գնում է մինչև Տաթև գյուղի գյուղատեղը և ապա անցնում է հիշյալ Տաթև գյուղի գետի հունով, որի մեջ թափվում է նաև Տաթևի վանքի ջուրը, մինչև Դաշբուլաղ կոչվող քարքարուտի վերևը, որ կոչվում է նաև Ջալկութափասի, որտեղից էլ գնում է մինչև... Փիր-Յահյայի դամբարաններն ու մինչև Լոռ գյուղի ճանապարհը և հասնում մինչև Վաղադի կածանի գետակն ու իսլամական գերեզմանի վերին մասը և այնուհետև արդեն Սվարի գյուղի գետն է, որը սահմանի սկիզբն է, և նմանապես որոշյալ և հայտնի ամբողջ մի հողակտոր, որ գտնվում է հիշյալ Տաթևի գյուղի վայրում (սահմաններում) և կոչվում Արտոհաներ (՞), իր ենթակա [ամեն ինչով]: Նմանապես Հազարդաշտ կոչվող որոշյալ և հայտնի հողակտորը, ինչպես նաև Տանձուտի հող կոչվող որոշյալ հողակտորն ու Աղաքար անունով հայտնի որոշյալ հողակտորը, իրենց ենթակա կից և վերաբերյալ [ամեն ինչով], սեփականատիրական, սահմանակցային և հողագործական **բահրաչեով** և այլ կարգի եկամուտներով հին ժամանակներից մինչև օրս, որպես **մուլք** հաստատված և դրված են եղել հիշյալ եկեղեցու և վանքի վանահոր **(մութավալլի)** վանականների, սևագլուխների և այնտեղ հաստատված ու բնակվող եպիսկոպոսների սեփականության և տիրապետության տակ և եղել

ու մնում են որպես հիշյալ վանքի տաճարի հին **վակֆը:** Որպեսզի հիշյալ վանքի վանահայրը նրանց ցանքսերից ստացված եկամուտը ստանա և ծախսի վանքի տնտեսության, ինչպես նաև վերոհիշյալ անձանց (վանականների) ապրուստի վրա: Ոչ ոք հիշյալ **վակֆերի մուլքերում** որևէ մաս, բաժին, իրավունք, պահանջ կամ միջամտություն չի ունեցել և չունի:

Տեղի ունեցավ այս ինը հարյուր վաթսուներկու թվականի սրբազան ռամազան ամսի հինգին (1554 թ. հուլիս 24):

Լուսանցքում

Նա ողորմած է:

Սույնի իմաստն ու բովանդակությունը պարզվեց և ճշտվեց ինձ մոտ:

Գրեց՝

Կնիքի վրա՝ «Մուհամմադ-Քյազիմ»

Նա հարուստ է:

Վերոհիշյալ հոժարակամ **վակֆ** անողը հայտարարեց ինձ մոտ:
Գրեց նվաստագույն ծառա Ուռուբցի Սոֆրաբը

Կնիք

Նա դատում է արդարությամբ:

Արձանագրվեց ինձ մոտ և ճշտվեց իմ ներկայությամբ, [և ես] ստուգեցի նրա ճշտությունը:
Գրեց կարոտյալ ծառա Բուրհան-էդ-դինի որդի Նասրը:

Կնիք

Նա է:

964 թվականի սրբազան ռամազան ամսին (1557 թ. հունիս 28—հուլիս 27) աշխարհասատ հրաման էր եղել, որպեսզի ստուգեն **խալիսե մուլքերը, սուլքին** և **դուլքին** և **բեյթ-ուլ-մալը,** ուստի համաձայն օրինական ստուգման և հաստատման, սույն բնագրում հիշատակված բոլոր **վակֆային մուլքերը,** վեց դանգով վերստուգվեցին ու քննվեցին, և ինչպես որ **Շար'ի** անդամները առանձին գրությամբ այն արձանագրել են, նշված ձևով դրանք հիշյալ վանքի տաճարի հին **վակֆերն** են, և արձանագրված է, որ գտնվում են նույն եկեղեցու վանահոր, սևագլուխների ու եպիսկոպոսի ձեռքում և նրանց սեփականության ներքո:

Այսուհետև ոչ ոք **խալիսեի, սուճքիի** և **դուճքիի** կամ այլ պատճառներով իրավունք չունի մոտենալ հիշյալ **մուլքերին** կամ անհանգստություն պատճառել սևագլուխներին։

Գրվեց 964 թվականի շավվալ ամսի 12-ին (1557 թ. օգոստոս 9)։

Վեզիր և մումայիզ միրզա Աքաուլայի կնիքը

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 19

Տաթևի վանքապատկան գյուղերի վակֆային սեփականություններ լինելը հաստատող 1558 թ. արձանագրությունը

Թղթապանակ 2ա, վավ. 23ա, պատճեն
մեծ. 48×19,5 սմ, գիր՝ շիֆասքե

Սա համապատասխանում է իր իսկական բնագրին։

Կնիք

Համեմատեցի իսկականի հետ, և դրանք իրար համապատասխան են։

Կնիքի տեղը

Իսկականի հետ համապատասխան է։

Կնիք

Նա ողորմած է։

Համեմատեցի իսկականի հետ և դրանք իրար համապատասխան են։

Կնիքի տեղը

Նա հավիտենական է։

Այս ճշմարիտ **վակֆն** ու պարզ արգելափակումը կատարվեց ինձ մոտ։

Կնիքի տեղը

Աստված ողորմած է։

Այս պարզ և ճշմարիտ վակֆը, որ հիշատակված է սույն գրության մեջ, տեղի ունեցավ ինձ մոտ։

Գրեց Մահմուդի որդի **կազի** Ալի Անսարին։

Կնիքի տեղը

Որովհետև աշխարհասաստ հրամանագիր էր հրապարակվել այն մասին, որ կրկին անգամ վերանայվեն կորուսյալների, գումարներն անորոշների ու չափերը կորսվածների . . . . և ոչ **ջա՛մը** և հաստատվեն **դուլամների, ղողչիների** ու **համեսալեդար [ների]**, Սիսաջանի, Թուման-ե Նախջևանի, Ղափանաթի և այլ [տեղերի] գյուղերում և **մահալներում** ունեցած **մուլքային** իրավունքները և ստուգվեն **խալիսե մուլքերն** ու ստացվածքները, կորուսյալ հարստությունները, **սուճքին և դուճքին,** սեփականատերերն անհայտ, **բեյթ-ուլ-մալի** և մուսուլմանների կարիքների համար ծախսվող [եկամուտները], ուստի ներքոհիշյալ գյուղերի վեց դանգերը.

Գյուղ	Նահիա
Բնունիս	*Սիսաջան*
Թաս	»
Ղարաքիլիսա	»
Դաստաջերդ և Գյոլլազի	»
Սվարի	*Ուռուբ*
Աղաքլանդի	»
Տանձատափ	»
Տաշու	»
Տաթև	»
Ծուտանան	»
Հալիձոր	»
Շնհել	»
Ծոտ	»
Բորդի	»
Կից	[*Բևղի*]

մեկ առ մեկ օրինական ստուգման և ճշտման ենթարկվելուց հետո, պարզվեց, որ միայն Ղափանաթի *Ուռուբ* [**ցաճիայի**] *Բորդի* գյուղի վեց **դանգից** հազար երկու հարյուր հիսուն թավրիզի **դինար դիվանի** է, որ այդ վայրի հողագործները ամեն տարի վճարում են **Բարձրագույն դիվանից** հանձնարարություն ստացած անձնավորություններին, իսկ մնացյալ բոլոր թվարկված գյուղերի **մուլքերը,** ամբողջ վեց **դանգով** և կից ու հավելյալ [ամեն ինչով] հնուց եղել են Ղափանաթի ու Տաթևի վանքի հոգևորական անօրենի ժառանգական **մուլքը** և համաձայն մարդարեական ապացուցող խոսքի նա **վակֆ** է արել [Ղափանաթի] հիշյալ Տաթևի վանքի եկեղեցուն, և նրանից հետո հիշյալ եկեղեցու տնօրենը, կրոնավորները, մյուս կարոտյալներն ու այնտեղ բնակվող եպիսկոպոսները, կից թվարկված **վակ-**

ֆերի *հասույթն ու* **բահրաչեն** *ամեն տարի ստանալով ծախսել են [վանքի] ելումուտ անողների, կարոտյալների և բնակիչների ապրուստի վրա և մինչև օրս օրինական կարգով դրանք եղել և մնում են այդ տաճարի տիրապետության ներքո և սեփականության սահմաններում:*

Այսպես ապացուցվեց և աշխարհասաստ հրամանագիր հրապարակվեց, որպեսզի ոչ մի արարած ապօրինի կերպով այդ գյուղերում չմիջամտի, և որպեսզի վարվեն համաձայն գործադրման ենթակա ընթացիկ հրամանագրի, հնազանդության արժանի հրովարտակի բովանդակությունից չշեղվեն և այդ տեղի բնակիչներին ու կարոտյալներին անհանգստություն չպատճառեն:

Գրվեց 965 թվականի շա՛բան ամսին (1558 թ. մայիս 19 — հունիս 16):

Ալեքսանդրի փառքն ունեցող տիեզերագահ և դրախտաբնակ Շահ Թահմասպի ժամանակ,— ասված նրա հոգին լուսավորի,— **վեզիր և մումայիզ,** *գթության և քավության ապավեն* **Միրզա** *Աթաուլայի կնիքի տեղը:*

Նշումներ բուն վավերագրի լուսանցքում

Որովհետև ըստ աշխարհասաստ արեգակնափայլ հրամանագրի, Ղափանաթի Տաթևի վանքի վանահոր խնդրանքով Բարձրագույն դռան ծառա, Ազերբայջանի բարձրաստիճան **վեզիրին** *հրամայված էր լուսավոր* **Շար՛**ի *անդամների ներկայությամբ վերահասու լինել իրողությանը և կարգավորել սրբազան* **Շարիաթին** *համապատասխան, ուստի ստանալով արդարամիտ հրովարտակը, անմիջապես վերոհիշյալ նորին վսեմության (վեզիրի) կողմից գործուղված անձնավորության հետ մի վստահելի մարդ ուղարկվեց նշված* **մահալը,** *որից հետո տեղի լուսավոր* **Շար՛**ի *անդամները և հիշյալ նորին վսեմությունը վերոգրյալ կարգով իրողության մասին գրավոր զեկուցեցին:*

Կնիքի տեղը

Ինչ կարգով որ նախկին **բեկլարբեկին** *և նորին վսեմություն Ազերբայջանի փառապանծ* **վեզիրը** *հաստատել և թույլատրել են այնպես վարվեն, խախտում թույլ չտան և իրենց պարտականությունը համարեն:*

Գրվեց 1077 թվականի ջամադի առաջին ամսին (1666 թ. հոկտեմբեր 30 — նոյեմբեր 28):

Կնիքի տեղը

XVII դարի երկրորդ կեսում կատարված այլ նշումներ, որոնք վերաբերում են Տաթևի վանքի և Բուրթելլուների համայնքի միջև ծագած վեճերին: Վավերագրի ներածական մասի կորստյան պատճառով, այս նշումների մի մասն է միայն պահպանվել.

Արդարամիտ հրովարտակի բովանդակությանը տեղեկանալուց հետո... նորին սրբության դրախտաբնակ և տիեզերագահ արքայի ժամանակ **վեզիր և մումայիզ միրզա** *Աթաուլայի... Բուրթելլու համայնքի ժամանակ և նրանց տիրապետության շրջանում, որ հաճախ* **քալանթարի և մելիքի** *բացակայության ժամանակ . . .*

Տաթև գյուղը, որի կեսին Ջալարին (՞) և Աբդին (՞) և նրանց աղգականները տիրում են առանց կալվածագրի և օտարման վավերագրի, իսկ մյուս կեսը գտնվում է վանքի կրոնավոր վանահոր ձեռքում և ամեն տարի **ռայաթները մանալի և բահրաչեի** *դիմաց յոթանասուն* **քովսար** *հացահատիկ են տալիս վանահորը, և համաձայն օրենքի, եթե վանահայրը միտքը փոխի և համաձայն չլինի հաստատված յոթանասուն* **քովսար** *հացահատիկն ստանալու, ապա նա կարող է ամբողջ գյուղի* **մանալն** *ու* **բահրաչեն** *ամեն տարի ստանալ ըստ* **հասթ-օ-բուդի** *(ըստ տարվա բերքի) և ծախսել* **վակֆ** *անողի նշած պայմաններով:*

Շնհեր և խոտ գյուղերը, որ նույն ձևով առանց կալվածագրի և օտարման վավերագրի Աբդին (՞) և ուրիշները Բուրթելլու համայնքից, չորս **դանգում** *խարդախելով, որոշ մասը վաճառել են Ջիվանշիրի համայնքին և ամեն մի չորս* **դանգից** *(!), որ գտնվում է վանահոր ձեռքում և վանահայրը այդ երկու գյուղերում մի քանի զույգ (օրավար) ցանքսեր ունի մշակած, որոնք որպես* **վակֆ** *են մնացել, թող ոչ ոք ապօրինի կերպով չմիջամտի և առաջվա նման թողնեն վանահոր տրամադրության տակ:*

...[համաձայն] արժանահավատ վավերագրի և նշված փաստաթղթի, անհերքելի ապացույցների և վերջին ստուգումների, դրանք որպես **վակֆ** *մնացել են վանահոր ձեռքում...*

ՎԱՎԵՐԱԳԻՐ 20

Նաֆասկուլի Թուշմալ խալիլ Ֆախր-էդ-դինլուի կողմից Ջաղանի Աշեղ Դիվանլուին վաճառված Քոչիզի խազազ գյուղի վեց դանգ մուլքի 1573—1574 թթ. կալվածագիրը

Թղթապանակ 2ա, վավ. 21, պատճեն
մեծ. 34×33 սմ, գիր՝ շիֆասթե-նասթա'լիկ

Հաստատում եմ բովանդակությունը

Կնիքի պատճենը

Փառք նրա սրբությանը և օրհնություն նրա մարգարեին՝ Մուհամմադին և նրա սուրբ և մաքուր սերունդներին։

Այնուհետև սույն անթների խոսքի գրառման պատճառն այն է, որ երևելիներից լավագույնը՝ Նաֆասկուլի Թուշմալ խալիլ Ֆախր-էդ-դինլուն իր նմանների մեջ լավագույնին՝ Ջաղանի Աշեղ Դիվանլուին, **շարիաթական** *վաճառքով, քաղաքներում ընթացիկ թավրիզի տասներկու* **թումանով,** *որի կեսը պարզ լինելու համար թավրիզի վեց* **թուման** *է լինում, վաճառեց Ադերբայջանի, Ղարաբաղի Առանին ննթակա Քոչիզի խազազ գյուղի ամբողջ վեց* **դանգ մուլքը** *իր չորս սահմաններով։*

Առաջին սահմանն է Ջանգալի անտառը, որ գտնվում է խազազ լեռան լանջին, երկրորդ սահմանը Շահիդ-էդ-դինի աղբյուրից մինչև Ղամիշլուի բլրակն է, երրորդ սահմանը Կուբայի գետն է, չորրորդ սահմանը՝ Բոյալուի վերելքից մինչև Գյադուկի (վերելքի) ճանապարհը, որտեղից էլ գնում է մինչև խազազ գյուղը, իր բոլոր սահմաններով և իրավունքներով, կից և հավելյալ [վայրերով] և այդ սահմաններում գտնվող օգտագործվող և չօգտագործվող, մշակված և անմշակ հողերով, պտղատու և անպտուղ ծառերով։

Վերոհիշյալ պայմանավորվող կողմերը օժտված էին կատարելությամբ, խելամտությամբ և հասունությամբ ... և գործարքը կատարեցին առանց որևէ հետին մտքի կամ հարկադրանքի, ազատ բոլոր թերություններից ու անվավերություններից ... **շարիաթական** *ճշմարիտ, ... ով, բոլոր պայմաններով ու հիմունքներով։ Եվ գնողը վճարեց գինը ամբողջությամբ և մասերով ու վաճառվող [կալվածը] ամբողջությամբ վաճառողից անցավ գնողին, և բարեգործ, արդարամիտ ու առաքինի մարդիկ հանձնառու եղան և հաստատեցին իրենց իմացությունը, որ նա է այդ ամբողջի տերն ու սեփականատերը։*

Վերոգրյալ ձևով տեղի ունեցավ հիշյալ վաճառքը սուրբ մարգարեի փախստյան 981 թվականին (1573—1574)։

Լուսանցքում՝

Ինձ ընդունելի է. Նաֆասկուլի։
Կնիքի վրա *«Նաֆասկուլի՝ նրա ծառան»*
Վկայությամբ Հալիմ աղա Ղիասլուի։
Վկայությամբ Բեկ-Ալի բեկ Օթուզիքիի։
Կնիքի պատճենը՝ *«Բեկ-Ալի՝ նրա ծառան»*
Վկայությամբ Միրզա Ալի Թուշմալ խալիլ Ֆախր-էդ-դինլուի։
Կնիքի պատճենը՝ *«Միրզա Ալի՝ նրա ծառան»*
Վկայությամբ խալիլ Ֆախր-էդ-դինլուի որդի Խանգյալդի Կոչունլուի։
Կնիքի պատճենը *«Խանգյալդի՝ նրա ծառան»*
Վկայությամբ Իսքանդար **աղա** *խալիլ Ֆախր-էդ-դինլուի։*
Վկայությամբ Ամիր Ահմադի։
Կնիքի պատճենը *«Աբդ-ուլ-ռահման Ամիր Ահմադ»*
Վկայությամբ Աղախանի։
Կնիքի պատճենը *«Աղախան՝ նրա ծառան»*
Վկայությամբ...
Վկայությամբ Յար Ահմադի

ՎԱՎԵՐԱԳԻՐ 21

Սա'դուեր Շահմանսուր աղայի, Շահրիար աղայի, Շահկուբադ աղայի և ուրիշների կողմից կարբեցի Իյաղխուդա Միրզաջանին վաճառված Հեճավանք գյուղի և Արտեկին ագարակի վեց դանգ մուլքի 1574 թ. կալվածագիրը

Թղթապանակ 1ա, վավ. 15, բեգիր
մեծ. 82×15,5 սմ, գիր՝ նասխ

Սույն գրության բովանդակությունը պարզվեց և հաստատվեց ինձ մոտ։

Գրեցի ես՝ աստծու հարստության առաջ տնանկս, Մուհամմադ-Շարիֆի որդի Աբու-Սա՛իդ Սա՛դին,— քող աստված ների նրան։

Կնիֆի վրա. «Աբու-Սա՛իդ, նրա ծառան»

Սույնի բովանդակությունը արձանագրվեց ինձ մոտ։

Կնիֆ

Նա է իշխանության տերը։

Աղերսում ենք նրա օգնությունը և օրհնությունը հիշատակելու այն, ինչ որ տեղի ունեցավ և հրամայվեց գրի առնել։

Փառք բարձրյալն աստծուն, որ թույլատրում է առևտուրը և արգելում հափշտակումն ու վաշխառությունը, և օրհնություն ու ապահովություն նրա մարգարեին և սիրեցյալին, ընտրյալ Մուհամմադին և նրա սերունդներին, որոնք խավարի մեջ անշեջ աստղեր են և առաջնորդող լուսավոր այուներ։

Այնուհետև, սույն **շարիաթական** ճշմարիտ գրության բովանդակությունը և այս պարզ ու լսելի վճռի իմաստը պատմում և ծանուցանում է այն մասին, որ իրենց մերձավորների մեջ լավագույններ՝ Դարվիշ **աղա** Սա՛դուի որդիներ Շահ-Մանսուր **աղան**, Շահրիար **աղան** և Շահ-Կուբադ **աղան**, հանգուցյալ Հասան **աղա** Սա՛դուի որդիներ Մեհդիկուլին, Շահկուլին, Մուրշիդկուլին և Ալքազկուլին և Շահ-Ալի Սա՛դուի որդի Փիր-Ալին, լավագույն քրիստոնյա Կարապետի որդի կարբեցի **քյադխուդա** Միրզաջանին վաճառեցին, և վերջինս, երբ կողմերի մոտ ճշգրիտ և օրինական էին **շարիաթական** վաճառքի և լսելի փոխադարձ համաձայնության համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները, միանվագ վաճառքով և միացյալ ակտով նրանցից գնեց, Հենավանք գյուղի լրիվ և ամբողջական վեց **դանգ մուլքը**, որ գտնվում է Ջուխուր-Սա՛դի, Կարբիի **ևահիայում**, իր չորս սահմաններով։

Առաջին՝ հյուսիսայինն [սահմանն է] Կարբի գյուղաքաղաքը, երկրորդ՝ արևելյան [սահմանը]՝ այն ձորը որտեղից հոսում է Կարբիի գետը, արևմուտքից Արանի գյուղի ջրանցքի ներքին մասն է, իսկ հարավից Սարգյուլի գյուղատեղը։

[Վաճառվեց նաև] հիշյալ Հենավանքի Արտեկին ագարակի վեց **դանգ մուլքը** իր չորս սահմաններով։

Հյուսիսից Սարգյուլի լիճը, արևելքից Սաղմոսավանքի հողերը, արևմուտքից՝ Թիքմադաշը և հարավից Ինջաաղբլիի ավերակը։

Վաճառվեցին իրենց բոլոր ննջակա և կից և օրենքով նրանց պատկանող [պարագաներով], Թավրիզի ութ **թումանով**, որի կեսը

լինում է Թավրիզի ընթացիկ չորս հնչուն **թուման**, և **մթկալից** կարած երկու ձեռք կապայով։

Այնուհետև վերոհիշյալ վաճառողների կողմից վաճառվածների ամբողջի կամ նրանց մի մասի նկատմամբ այլևս ոչ մի դեպքում, ոչ մի պատրվակով կամ պատճառով հիշյալ գնորդի հետ ոչ մի պահանջ կամ վեճ չի մնում և չկա։ Այլ դրանք հանդիսանում են հիշյալ գնորդի ճշմարիտ իրավունքը, անվիճելի **մուլքը** և զուտ ու անխառն հարստությունը, որպես նրա իրավունքներից, **մուլքերից** և կալվածներից մեկը, և նա կարող է տիրել այդ **մուլքերին** ինչ ձևով որ ուզի և ցանկանա, ինչպես սեփականատերերը **(մալիքները)** տիրում են իրենց **մուլքերին** և իրավունք ունեցողները իրենց իրավունքներին։

Եվ տեղի ունեցավ նրանց միջև շարիաթական ճշմարիտ վաճառք, իր բոլոր պայմաններով և հիմունքներով, **շարիաթական** պահանջով և ընդունմամբ, և վաճառողներից յուրաքանչյուրը և գնողը **շարիաթական** հայտարարությամբ հայտարարեցին իրենց հասանելիքի ստացման մասին, մեկը գնահատվածը, իսկ մյուսները՝ գինը, որոնք **շարիաթական** ստացական տվեցին։ Ե՛վ վաճառողը և՛ գնողը հրաժարվեցին վաճառվածի նկատմամբ իրենց խաբված հայտարարելու իրավունքից, և երաշխավորեցին իրենց իրավունքներից հրաժարումն ու այդ բանի **շարիաթական** ըմբռնումը։

Տեղի ունեցավ այս ինը հարյուր ութսուներկու թվականի սրբազան մուհառամ ամսին (1574 թ. ապրիլ 23 — մայիսի 22)։

Փառք տիեզերքի տիրոջը և օրհնություն ու ապահովություն Մուհամմադին և նրա բոլոր սերունդներին։

Ն ե ր կ ա ն ե ր՝

Հանգուցյալ Կորխմազ **բեկ** Սա՛դուի որդի պարոն Կայբիմիշ **բեկ**։

Ներկայությամբ Կայբիմիշ **բեկի** սպասավոր Շուքուր **աղայի**։

Ներկայությամբ Կորխմազ **բեկ** Սա՛դուի որդի **Ամիր** Ասլան **բեկի**։

Վկա եմ սույնի բովանդակությանը։
Նվաստագույն աղոթարար Շահնշահի(՞) որդի՝ Սալեհ

Կնիֆ

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 22

Օրդուբադցի խոջա Նուբարշախի կողմից ագուլեցի էյադխուդա Քիչմիրի որդի Հովհաննեսին վաճառված, Նախջևանի Ազաղ-Ջիրանի նահիյայի Բերդակ գյուղում գտնվող երկու հողակտորների 1575 թ. կալվածագիրը

Ձեռագրանակ 1ա, վավ. 16, բնագիր
մեծ. 69×15 սմ, գիր՝ նասխ

Ասված ողորմած է։

Այստեղ արձանագրված և բացատրված օրինական վաճառքը տեղի ունեցավ ինձ մոտ։

Գրեց աստծու առաջ խեղճ ու տնանկ Շահմիրի որդի Խալիլուլլան,— թող ասված ների նրանց։

կնիք

Նա է հոգում միայն։

Փառք պատկանելվույն և գոհություն արժանավորին։

Այնուհետև սույն **շարիաթական** *օրենքներով և հիմունքներով խոսքերի գրառման պատճառն այն է, որ* **խոջա** *Ջանըմշախի որդի օրդուբադցի* **գիմմի խոջա** *Նուբարշախը, քրիստոնյաների պարծանք ագուլեցի* **քյադխուդա** *Քիչմիրի որդի Հովհաննեսին վաճառեց, և վերջինս, երբ կողմերի մոտ առկա էին* **շարիաթական** *վաճառքի համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները, կատարյալ խելամտության և հասունության պայմաններում, իր կամքով և ցանկությամբ և առանց կասկածի, բռնության կամ ստիպման, նրանից գնեց լրիվ և ամբողջական երկու հողակտորներ, որոնք գտնվում են Թուման-ե Նախջևանի Ազատ-Ջիրանի* [**նահիյայի**] *գյուղերից, Բերդակ կոչվող գյուղում, ընդամենը քառասուն* **ման** *սերմանելի տարածություն, իրար կից։*

Վաճառվող [հողակտորները] սահմանակից են Օլքայի այգու՝ այն առվին, որ հոսում է դեպի Սալ գյուղի բնակիչների այգիները, Վարդանի այգետեղին, Խուդավերդիի այգուն, **Խոջա** *Հաշիմ* **բեկի** *ժառանգների հողին, Սուլթան-վալիի հողին, Օհանի հողին, ճանապարհին և իր անցուղուն։*

Վաճառվեցին իրենց բոլոր ենթակա և կից պարագաներով։ Ներկայիս ընթացիկ թվականի քառասունմեկ հազար հինգ հարյուր **դինարով,** *որի կեսը, պարզ լինելու և կասկածի տեղի չտալու համար լինում է քսան հազար հինգ հարյուր* **դինար,** *որից հետո նրանց միջև տեղի*

ունեցավ **շարիաթական** *ճշմարիտ վաճառք և պարզ ու լսելի և վերջնական համաձայնություն, իր բոլոր պայմաններով և հիմունքներով ազատ բոլոր թերություններից ու անվավերություններից և համաձայն մարդկության բարիք Մուհամմադի* **Շարիաթի,**— *բազում ողջույն և ապահովություն նրան։*

Հիշյալ վաճառողը պայմանավորված գինը լրիվ և ամբողջությամբ գնողի ձեռքից ստանալու մասին հայտարարեց այնպիսի արժանապատվությամբ, որից հետո արդեն գնողը լրիվ ազատվեց օրենքով հաստատված ամբողջ գնի կամ նրա մի մասի հատուցման պարտավորությունից։

Շարիաթական *ազատումը և վաճառվող [հողերի] արդեն [իր ձեռքից] դուրս գալն ու մի ուրիշին պատկանելը, վաճառողն ընդունեց այնպիսի օրինական վերահասությամբ, որ որոշված և հաստատված է ճշմարիտ կրոնով և ուղիղ* **Շարիաթով։**

Այս բոլորի մասին տեղեկանալուց հետո հիշյալ պայմանավորվող կողմերը, **շարիաթական** *հրաժարումով հրաժարվեցին հետագայում իրենց խաբված հայտարարելու իրավունքից։ Այժմ արդեն համաձայն վերը նկարագրված վաճառքի վերոհիշյալ վաճառված [հողերը] իրենց սահմաններով, հիշյալ գնողի ճշմարիտ իրավունքը, անբաժան սեփականությունն ու դուտ և անխառն հարստությունն են, որպես նրա իրավունքներից,* **մուլքերից,** *հարստություններից և կալվածներից մեկը, և նա միայն իրավունք ունի իր ձեռքում ունենալու և տիրելու նրանց, ինչպես տիրում են սեփականատերերն իրենց սեփականություններին և վարվելու նրանց հետ ինչպես որ ցանկանա։*

Տեղի ունեցավ այս ինը հարյուր ութսուներեք թվականի ռաբի՝ երկրորդ ամսի տասնութին (1575 թ. հուլիս 27)։ Փառք տիեզերքի տիրոջը և օրհնություն ու ապահովություն Մուհամմադին և նրա բոլոր սուրբ և անարատ սերունդներին։

Լ ու ս ա ն ց f ու մ՝

Այս գրության մեջ ոչինչ կասկածի ենթակա չէ։

Յար-Ալիի որդի, նվազագույն ծառա՝ Շահաբ,— թող ասված ների նրանց երկու աշխարհներում։

Վկա եմ սույնի բովանդակությանը։

Խոջա Մելիք-Ահմադի որդի՝ ծառա Համիդ բեկ։

Բովանդակությանը վկա եմ։

Գրեց Ամինի որդի, նվազագույն ծառա սալեհ Ֆառուխ օրդուբադցին։

Կոյլաճիսաարլուներ Քյամալ-էդ-դին Մուհամմադ աղայի, Ահմադ աղայի և Փիրվալի աղայի կողմից Իբրահիմ խալիֆե Ալփավաքին վաճառված Զուխուր-Սա'դի Դիբաքի գյուղի վեց դանգի 1575 թ. կալվածագիրը

Թղթապանակ 1ա, վավ. 17, բնագիր
մեծ. 43×18,5 սմ, գիր՝ նասխ

Սույնի բովանդակությունը պարզվեց և ճշտվեց ինձ մոտ։

Գրեց աստծու հարստության առաջ տնանկ, Մուհամմադ-Շարիֆի որդի **կազի** *Աբու-Սա'իդ Սա'դին,— թող աստված նների նրանց։*

կնիք

Սույնի բովանդակությունը պարզվեց ինձ մոտ։
Գրեց ծառա

Նա հավիտենական է ու անմահ։

Հիշելով ամենակարող տիրոջը, խնդրում ենք նրա օգնությունը, և ապա օրհնություն և փառք նրա մարգարեին՝ Մուհամմադին և նրա սերունդներին։

Այնուհետև, սույն ճշմարիտ և լսելի իրողությունների գրառման պատճառն այն է, որ կոյլահիսարլուներ բարձրապատիվ Քյամալ-էդ-դին Մուհամմադ **աղաև,** *Ահմադ* **աղաև,** *նորին վսեմություն* **խալիֆայության** *և* **ամիրության** *ապաստան, իշխանության ապավեն, հանգուցյալ խալիլ* **խալիֆեի** *որդի Իբրահիմ* **խալիֆե** *Ալփավուքին վաճառեցին Վրաստանի շրջաններից, Զուխուր-Սա'դի* **օլքայում** *գտնվող հռչակավոր Դիբաքի գյուղի վեց դանգը, որի առաջին սահմանն է Ամրուդաղաջին, երկրորդը՝ Իլանլուն, երրորդը՝ Կուզիլուդարան և չորրորդը՝ Կարադաշը (Սև քար)։ Երբ վերջինս նրանցից գնեց, կողմերի մոտ ճշմարիտ և օրինական էին* **շարիաթական** *վաճառքի և լսելի գործարքների համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները։*

[Վաճառվեց] թավրիզի յոթ **թումանով,** *և որպեսզի շեշտվի բուն գումարը, դրա կեսը լինում է թավրիզի երեք* **թուման** *և հինգ հազար* **դինար։** *Եվ ապա տեղի ունեցավ նրանց միջև* **շարիաթական** *վաճառք, իր բոլոր պայմաններով և հիմունքներով, ազատ բոլոր թերություններից ու անվավերություններից։ Կանխելով* **շարիաթական** *վերադարձը, անհրաժեշտաբար նրանք հրաժարվեցին հետագայում իրենց խաբված հայտարարելու իրավունքից, իսկ հիշյալ վաճառող-*

ները հայտարարեցին, որ վերոհիշյալ գումարը շարիաթական ընկալմամբ լրիվ և ամբողջությամբ ստացան հիշյալ գնողից և այդ [հողերի նկատմամբ] նրանք այլևս ոչ մի պահանջ կամ վեճ չունեն։ Այսուհետև դրանք հանդիսանում են հիշյալ գնողի **մուլքերից** *և կալվածներից և նա կարող է դրանք ունենալ իր ձեռքում և տիրել նրանց ինչպես որ ցանկանա։*

Գրվեց այս ինը հարյուր ութսուներեք թվականի մեծ շա'բան ամսին (1575 թ. նոյեմբեր 5 — դեկտեմբեր 3)։

Նիստում ներկա էին՝

Քյամալ-էդ-դին Դյունմազ **աղաև,** *և Կայիթմիշ* **աղաև**
Շահկուլիի որդի՝ Մուհամմադկուլին,
Հուսեյնջանի որդի Մուհամմադը,
Հանգուցյալ Եգան-Հուսեյնի բոլոր որդիները,
Աբդալ **խալիֆեի** *որդի՝ Յուսուֆջան* **խալիֆեն,**
Հուսեյնկուլի **խալիֆեի** *որդի Մանսուր* **խալիֆեն,**
Աբդուլ-Ռիզայի որդիներ՝ Շահվերդին և Ալիյարը,
Յաղուբի որդի՝ Իբրահիմ **աղաև,**
Շահգալդիի որդի՝ Շահբուդաղ **աղաև,**
Մուհամմադ-Ալիի որդի Մավլակուլի Խնուսլուն։

Լուսանցքում՝

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Միրզայի որդի՝ Մուհամմադ-Ամին Սա'դլու
կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Իբրահիմի որդի՝ Աբդի Սա'դլու
կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Բունյադի որդի՝ Շահվերդի Բայբուրթլու
կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Սաֆարի որդի Խուդի Ալփավութ
կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Իմամկուլիի որդի՝ Հիմմաթ Ալփավութ
կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
. . . . . ի որդի Մեվլակուլի . . . . .
կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Նովրուզի որդի, սրբավայրերն այցելած հաջի Մուսթաֆա
կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Ռուստամի որդի՝ Ռահման
կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Ալլահդադի (՞) որդի՝ Հակկի
կնիք

ՎԱՎԵՐԱԳԻՐ 24

Նոր մահմեդական ջուղայեցի Մուրադ բեկի կողմից Մեղրի գյուղի համայնքին վաճառված նույն գյուղի մուլքի 1576 թ. կալվածագիրը

Թղթապաճակ 1գ, վավ. 1013, բնագիր
մեծ. 215×29 սմ, գիր՝ նասխ

. . . . . Իսմայիլ

Ով դու, որ ամեն ինչ քեզանից է առաջացել,
Անշուշտ հողը քեզանով է զորեղ դարձել,
Որ բազմած ես երկնակամարի ներքո,
Քո հաստատուն էությամբ ենք մենք զորություն ստացել:

Անհատնում փառք և անսահման գոհություն մեծափառ արքային, որի բարերախտ գոյությունը (՞) . . . . . և . . . . . հրովարտակը ապացուցում են նրա աստվածային մեծությունն ու փառքը և նրա երջանկաբեր շունչը . . . . նրա պատիվն ու վեհությունն են հաստատում: Քեզ վայել է փառք, ով պարգևող, բարեգործ և վսեմ, որ բաշխում ես ում որ ցանկանում ես և կարգավորում մեր արարքները:

Եվ անչափ օրհնություն ու բարեպաշտ սրտաբուխ պարգևներ մարգարեության ապաստանին, որի կրոնը հերքումն է բոլոր կրոնների ու հավատալիքների, և որի ուղին բացատումն է բոլոր մյուս ուղիների ու հավատքների: Նա, որի մարգարեական գալստյան մասին ավետեց սուրբ Քրիստոսը,— օրհնություն և փառք նրան,— և որպիսի որդի ունենալու համար կպարծենար մարդկության նախահայրը (Ադամը),— թող աստծու օրհնությունը լինի նրա և նրա որդիների վրա:

Հիսուսը քո գալստյան մասին ավետեց աշխարհին
Եվ այդ խոսքի զորությամբ նրա շունչը հոգի տվեց մեոյալին:

[Օրհնություն և փառք] նաև նրա (մարգարեի) մաքուր սերունդներին ու բարի հետնորդներին, որոնք իրենց հոգու տեսողությամբ, մեծությամբ և ամբողջությամբ, սուրբ և հրաշագործ երկնքի աստղեր են,— աստծու ողջույնը նրանց,— և որոնք ծագումով սրբեր են և փայլում են . . . .

Եթե մեկը դիմի երկնքին և ուզենա
Հարցնել մարդկանց և հրեշտակների բնտրյալների մասին,
Աստղերի և մոլորակների լեզվի վրա
Այլ խոսք չի կարող լինել քան՝ «նրանք են ամենակատարյալները»:

Այնուհետև սույն ուղղամիտ խոսքերի գրառման նպատակն ու **շարիաթական** հիմունքներով իրողությունների արձանագրման միտքն այն է, որ, նորին մեծություն, կրոնի ապաստան, տիեզերագահ, աստեղազորք, ֆրիդունակերպ, Ջամշիդի փառքն ունեցող, արդարադատ, աստծո սուվեր, մեծության դրոշակակիր, գթություն սփռող լույսը բոցավառող, շիաների հավատքը տարածող, Հեյդարի տան ժառանգորդ, աշխարհի բոլոր սուլթանների տերն ու ժառանգը, իրավացի տերը մեծության և վեհության գահերի, դեպի ճշմարիտ և ուղիղ ճանապարհը հրավիրող, նվիրման և ուղղափառության պաշտոնում հաստատված, բռնության և իշխանության կարգը ոչնչացնող, արդարության և բարեգործության դրոշակակիր և ներկայիս մեծագույն արքաներից ամենաառաջինը՝

Բարիք սփռող արեգակ, աստծո բարեհոգության սուվերը,
Երկնքի և աստղերի կոգին, տիեզերքի արգասիքը,

սուլթանի որդի, սուլթանի որդի, սուլթանի որդի, խաքանի որդի, խաքանի որդի, խաքանի որդի [Իսմայիլ] ալ-Մուսավի, ալ-Հուսեյնի Բահադուրխանի օգոստափառ թագավորության սկզբին և օրավուր աճող առաջնորդության սրբազան գահակալության օրը, բարձրապատիվ, բարեբախտ, հաջողակ, վարքով գովելի, հանրածանոթ նոր մահմեդական ջուղայեցի Մուրադ **բեկը**, երբ նա օժտված էր **շարիա-**

թական տիրապետության [իրավունքով] և կարող էր կրոնական տնտեսական գործարքներ կատարել, ներկայացավ սրբազան **Շար**'ի նիստին և վսեմ կրոնական ատյանին և հանձինս Ղափանաթի եննթակա վայրերից Մեղրիի միջին թաղեցիներ Ալվանդի որդի Գրիգորի և Իսֆանդիարի որդի Ախպերջանի, նույն վայրի Մեծ թաղից Բարակուլիի որդի **քյադխուդա** Ալլահկուլիի և նույն վայրի Փոքր թաղից Նովշիրազի որդի տեր Զաքարիայի, Մեղրիի որոշյալ **գիմմի** համայնքին վաճառեց և վերջիններս, լուսավոր **Շարիաթով** ընդունված կարգով, այդ վաճառողից գնեցին այն բոլորը, որ մինչև սույն վաճառքը հիշյալ վաճառողի իրավունքն ու ամբողջական, զուտ ու անխառն սեփականությունն էր և նորին սրբության, դրախտաբնակ և արքայության բնակիչ, տիեզերագահ, արքայության արժանի, երանելի, սրբահոգի և հրեշտակաբարո թագավորից,— թող աստված նրա հոգին լուսավորի և նստեցնի նրան իր մաքուր պապերի մոտ,— որ դրա շարիաթական սեփականատերն էր, անցել էր վերոհիշյալին:

Իսկ դա Աղերբայջանին եննթակա [վայրերից] հիշյալ Ղափանաթի շրջանում Մեղրի կոչված գյուղն է ամբողջությամբ, որի սահմաններն են. Արաքս (Արաս) գետը, ապա այն քարը, որ կոչվում է Թախթեքարի քար, Քազյան (?) լեռը, Քոհրամ-Սահիրի ագարակը, Կոտրված խաչը, Արղաթ ամրոցը, որ կպած է Արաքս գետին և ապա Քաբել լեռը, որ նույնպես կպած է հիշյալ գետին:

[Վաճառվեց] իր բոլոր եննթակա և կից, հավելյալ և վերաբերող [վայրերով], հողերով և դաշտերով, այգիներով, ագարակներով, բլուրներով, գետերով, շինություններով, աղբյուրներով, առվակներով և ջրանցքներով, անասունների կայաններով և ոչխարների մակաղատեղերով և այն ամեն ներքին ու արտաքին իրավունքներով, որ պատկանում և վերաբերում է նրան, ի դիմաց ներկայումս ընթացիկ թավրիզի երեք հարյուր տասնվեց **թուման**ի, որի յուրաքանչյուր ութսուն **դինարը**, սեղանավորների **մսխալով** հավասար է մեկ **մսխալ** կնքված արծաթի: Բուն գումարը հաստատելու և ամբողջը պարզելու համար, այդ ամբողջ կանխիկ գումարի կեսը լինում է հարյուր հիսուն ութ **թուման:**

Շարիաթական աղդու և ճշմարիտ հայտարարությամբ հիշյալ վաճառողը հայտարարեց, որ պայմանավորված և բացատրված գինը **շարիաթական** ճշգրիտ ստացումով, լրիվ և ամբողջությամբ, ոչ հատվածաբար, ստացավ հիշյալ գնողներից: Այնպես որ վերջիններս այլևս պարտք չեն և օրենքով ազատված են պարտքի, ինչպես ամ-

բողջից, այնպես նաև բոլոր մասերից: Նա նաև **շարիաթական** ըրրկումով իրեն զրկեց հետագայում ինքն իրեն առավել կամ նվազ չափով խաբված հայտարարելու իրավունքից, այն բանից հետո, երբ ծանոթացավ և՛ «զրկել» և՛ «խաբված լինել» [հասկացողություններին] ինչպես նաև արժեքի քանակին և որակին:

Այս բանից հետո, հիշյալ գնողները հայտարարեցին, որ վաճառվածը նրանք գնել են անձամբ իրենք և լիազորված հիշյալ որոշյալ և սահմանագծված վայրի մյուս **ռայաթների** կողմից և գինը վճարել են զուտ իրենց և նրանց դրամից, և այժմ գնվածը հանդիսանում է նրանց և վերոհիշյալ մյուս **ռայաթների** ընդհանուր սեփականությունը, և յուրաքանչյուրը նրանցից հանդիսանում է այն բանի սեփականատերը, որ իր ձեռքում ունի, վերաբերում է նրանց և ճանաչված է նրանց անունով, որոշված է նրանց մեջ, ջոկված մյուսի բաժնից և յուրաքանչյուրի բաժինը զատված և ճշտված է առանձին սեփականատիրոջ անունով և կարիք չունի սահմանների նկարագրության:

Համաձայն իրենց հայտարարության, առաջին գնողները ներկայացնում էին իրենք իրենց և լիազորված էին Միջին թաղի մյուս **ռայաթների** կողմից, երկրորդ գնողը, ըստ իր հայտարարության ներկայացնում էր իրեն և լիազորված էր Մեծ թաղի մյուս **ռայաթների** կողմից, երրորդ գնողը նմանապես ներկայացնում էր իրեն և լիազորված էր Փոքր թաղի մարդկանց կողմից:

Այժմ արդեն վերոհիշյալ վաճառքի եննթարկված [գյուղը] իր բոլոր սահմաններով և իրավունքներով հանդիսանում է գնողների և նրանց ընկերների իրավունքը, սեփականությունն ու անբաժան հարըստությունը, և հիշյալ քյադխուդաներից ու ռայաթներից յուրաքանչյուրը իրավունք ունի սեփականելու և տիրելու իրեն պատկանող բաժինը, ինչ կարգով որ ուզի և ինչ ձևով որ ցանկանա: Եվ այսուհետև հիշյալ վաճառողը, այդ բանի համար ոչ մի դեպքում և ոչ մի պատճառով նրանց նկատմամբ ոչ մի իրավունք կամ վեճ չունի:

Այս բոլորի համար կային բարձրյալն աստծուն ապավինած և նրա հավատքով լցված վկաներ:

Տեղի ունեցավ այս մարգարեի փախուստի ինը հարյուր ութսունչորս թվականի ջումադի առաջին ամսի քսանյոթին (1576 թ. օգոստոս 22),— և փառք տիեզերքի տիրոջը կնքվեց մարգարեի և նրա մաքուր սերունդների փառաբանությամբ:

Գրեց աստծու հարստության առաջ տնանկ Աբդուլլա Խոյեցին,— թող աստված նրի նրան:

Աստված արդարադատ է, հավիտենական և ամենակարող։

Ճշմարիտ և նրբաքննին **սեյիդ,** *մարգարեների ու առաքյալների գիտության ժառանգորդ, մեկնաբանողներից* **(մուջթահիդ)** *վերջինը, գերապատիվ և ընտրյալ ....-ի մոտ,— թող աստված հավիտյան դարձնի նրա [գործը],— գրության մեջ հիշված հոժարակամ վաճառողը, սրբազան* **Շար**'*ի և առաքելական կրոնի կողմից հաստատված* **շարիաթական** *ճշմարիտ հայտարարությամբ,* **Շար**'*ի օրենքով ընդունված կարգով, պարզ և ճշմարիտ կերպով ընդունեց այն բոլորը, որ գրված և շարադրված է սույնի բովանդակության մեջ, սկզբից մինչև վերջը։*

Տեղի ունեցավ . . . . . յոթին

Գրության մեջ հիշված վաճառողը սույնի բովանդակությանը համաձայնվեց ինձ մոտ, կամավոր և հոժարակամ կերպով, կատարյալ առողջ և խելամիտ վիճակում, առանց բռնության և հարկադրանքի։

Կարոտյալ ծառա, կենդանի կարոտյալներից ամենակարոտյալը, Թայյի որդի, Ալիի որդի Հասան։

Կնիքի վրա՝
«Կենդանի կարոտյալներից ամենակարոտյալը, Թայիի որդի, Ալիի որդի՝ Հասան»

Աստված արդարադատ է։

Լսեցի սույնի բովանդակության մեջ հիշատակված վաճառողի հայտարարությունը, այստեղ նկարագրված վաճառքի ճշգրտության մասին և վկա եմ նրա հայտարարությանը։

Կարոտյալ ծառա, մարգարեի, նրա կտակը կատարողի (Ալիի) ողորմությանն ապավինած, Մուհամմադ-Կասըմի որդի Մուհամմադ-Իբրահիմ Թուսի,— թող աստված ների նրան։

Կնիք

Վաճառողը հայտարարեց այն բոլորի մասին, որոնք իմ ներկայությամբ վկայություններով հաստատվեցին։

Նվաստագույն ծառա Խոյեցի .... Ալիի որդի Աբդուլլա Անսարի։

Նա է։ Վերոհիշյալ կարգով, հիշյալ վաճառողը իմ ներկայությամբ համաձայնվեց։

Նվաստագույն ծառա, Մուհամմադ-Ջամանի որդի, Մուհամմադ-Բաղըր։

Կնիքի վրա՝
«Մուհամմադ-Ջամանի որդի, Մուհամմադ Բաղըր, 974»

Աստված արդարադատ է։

Սույնի բովանդակությունը պարզվեց վերոհիշյալ կարգով։

Գրեց նվազագույն ծառա՝ Շահմիրի որդի Աղախանը։

Կնիքի վրա՝
«Նաջաֆի արքայի ծառա՝ Աղախան, 972»

Սույնի բովանդակությանը վկա եմ.

Շոռոթցի Իֆթիխարի որդի Միրզախան, որ հայտնի է Ֆիքրի անունով,— թող աստված ների նրան։

Սույնի բովանդակության վկաներից է նաև Մուհամմադ — ...ի որդի ծառա Ջա'ֆարը,— թող աստված ների նրանց։

Սույն գրության մեջ կասկածելի ոչինչ չկա.

Գրեց նվաստագույն ծառա. Ջա'ֆար—....ի որդի Մուհամմադը,— թող աստված ների նրանց։

Կնիք

Վկա եմ սույնի բովանդակությանը.

Ալիի որդի, ծառա Մուհամմադ Թաբասցի։

Կնիք

ՎԱՎԵՐԱԳԻՐ 25

Վալի խալիֆե Ալփավութի կողմից Ալի խալիֆե Ալփավութին վաճառված Սաղմոսավանք գյուղի վեց դանգ մուլկի 1581 թ. կալվածագիրը

Թղթապանակ 1ա, վավ. 19, բնագիր
մեծ. 41,5×19 սմ, գիր՝ նասթա'լիկ-եասխ

Նա է.

Լիակատար պարզությամբ համաձայնվեց սույնի ճշմարիտ բովանդակությանը։

Գրեց և կարգադրեց՝

Կնիք

Նա է.

Ներքոհիշյալ հայտարարողը համաձայնվեց սույնի բովանդակությանը։

Գրեց՝

Կնիք

Նա է տերը.

Աստծունն է փառքը և նախախնամությունը, և օրհնություն ու ողջույն իր մարգարեին, նրա սերունդներին և ընտանիքի բարեգործ անդամներին։

Այնուհետև, այս **շարիաթական** խոսքերի գրառման պատճառն այն է, որ Իմամկուլի **խալիֆեի** որդի երջանկահիշն Վալի **խալիֆե** Ալփավութը, **ամիրությաև** ապաստան և իշխանության հենարան Հուսեյն **խալիֆեի** որդի Ալի **խալիֆե** Ալփավութին յոթ թումանով, որի կեսը լինում է թավրիզի երեք **թուման** և հինգ հազար արծաթ **դինար**, վաճառեց Կարբիի նահիայի Սաղմոսավանք գյուղի լրիվ և ամբողջական վեց դանգ **մուլքը**, որի առաջին սահմանն է՝ արևելյան կողմից Արզինգանը, երկրորդ սահմանը՝ հարավային կողմից Կարբիի ձորը, երրորդ սահմանը՝ արևմտյան կողմից Սարգյուլը, չորրորդ սահմանը՝ հյուսիսային կողմից Կարաաղըլը, իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և վերաբերող ամեն ինչով։

Ընդունումը պարունակում էր բոլոր նախատեսված պայմանները իր բոլոր հիմունքներով, ազատ բոլոր թերություններից և անվավերություններից, և գինը լրիվ և ամբողջությամբ հիշյալ գնողի ձեռքից հասավ հիշյալ վաճառողին, որից հետո նա հրաժարվեց հետագայում իրեն առավել կամ նվազ չափով խաբված հայտարարելու իրավունքից։ Ուստի այժմ արդեն, հիշյալ վաճառված [**մուլքը**], վերոհիշյալ ամիրության ապաստանի իրավունքն ու սեփականությունն է (**մուլքը**), և նա իրավունք ունի տիրելու նրան ինչպես բոլոր **մալիքները** տիրում են իրենց **մուլքերին** և իր ձեռքումն է իրավունքը վարվելու նրա հետ այնպես, ինչպես որ կցանկանա։

Տեղի ունեցավ այս ինը հարյուր ութսունինը (989) թվականի ղիկա՝դա ամսի կեսերին (1581 թ. դեկտեմբեր 7—16)։

Ն ե ր կ ա ն ե ր՝

Նաջաֆի որդի Սաֆիր Բայբուրթլու,
Թահմազի որդի Իմամվերդի Սա՛ղլու։
Սույնի բովանդակությանը վկա եմ.
Միրզայի որդի Մուհամմադ Ալփավութ։

կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Նաբիի որդի Մևլակուլի Սա՛ղլու։

կնիք

Նա է։ Համաձայնվեց սույնի բովանդակությանը։
Գրեց՝

կնիք

ՎԱՎԵՐԱԳԻՐ 26

Սևադան գյուղի համայնքի կողմից Մեղրի գյուղի համայնքին վաճառված Քիլվաքաշի կոչվող արոտավայրի 1587 թ. կալվածագիրը

Թղթապանակ 1գ, վավ. 1014, բնագիր
մեծ. 98×17,5 սմ. գիր՝ նասխ

Բոլոր արքաների տիրոջ անունով։

Փառք աստծուն, առքն ու վաճառքը և **շարիաթական** գործարքները արտոնողին և [մարդկանց] օրապահիկը, աշխատանքն ու աշխատավարձը տնօրինողին, և օրհնություն ու ապահովություն նրա մարգարեին և սիրեցյալին՝ Մուհամմադին, որքան որ կհաջորդեն տարիներն ու ամիսները։

Այնուհետև սա **շարիաթական** ճշմարիտ մի գրություն և պարզ ու լսելի հիշատակություն է, որ պատմում է խոսելով այն մասին, որ քրիստոնյաների Սևադան գյուղի համայնքը, հանձինս Ջաբրի որդի **քյադքուդա** Ինաջի, Հարութի որդի Շահիջանի, Ուլուջանի որդի Աղաջանի, Սողոմոնի որդի Իսայի, Սահակբեկի որդի Մովսեսի, Միրանշա[հ]ի որդի Ղազարի, Ուլուջանի որդի Աթայի, Դիվանի որդի Վալիջանի, Թադեոսի որդի Շեյխիի, Ադիլի որդի Ավագի, Մուրադի որդի Ռաքելի, Դիվանի որդի Ուլուջանի, Սարգսի որդի Ահիի, Շեյխիի որդի Մելիքզադի, Իլբեկիի որդի Վրթանեսի, Կաթիկի որդի տեր Խաչատուրի և ... ի որդի Ախպերջանի, որոնք բոլորը մեծ թե փոքր հիշյալ գյուղից էին, Մեղրի գյուղի համայնքին և հատկապես Միքայելի որդի Յազիդին, տեր Իսրայելի որդի տեր Ռաքելին, Խանիի որդի Աբդիին, Ախիի որդի Հինդուշա[հ]ին, Շահրիարի որդի Մովսեսին, Այուդյարի (՞) որդի Բաբակուլին, տեր Հովհաննեսի որդի Դանիելին, Ոսկանի որդի Խեյրվալիին, Հեյջանի որդի Ոսկանին, Սուլթանի որդի Փիրխիարին և ուրիշների, որոնք մեծ թե փոքր [բոլորը Մեղրիի] մեծ թաղից էին, վաճառեցին, և վերջիններս էլ, երբ նրանց մոտ ճշգրիտ և վստահելի էին [շարիաթական գործարքների համար անհրաժեշտ բոլոր պայմանները], եղակի ակտով և միանվագ վաճառքով գնեցին մի ամբողջական արոտավայր իր չորս սահմաններով, որ ճանաչված և հայտնի է Քիլվաքաշի անունով։

Առաջին սահմանն է Փալուդեդարակը (Կաղնուտի ձոր), երկրորդ սահմանը Ջամալառահի ճանապարհը, որը միանում է Բերդաձորին և ուղիղ շարունակվելով գնում է մինչև Բերդի աղբյուրի ջրվեժը, երրորդ սահմանը Բերդի աղբյուրից շարունակվում է մինչև Կարմիր

լեռը, որ հայտնի է Թիքվեքար անունով, չորրորդ սահմանն է Բալնասարի վերելքը, որ գտնվում է երկու ճանապարհների մեջտեղում և հայտնի է Քաչալահող անունով և որտեղից շարունակվելով հասնում է մինչև հասարակաց ճանապարհը, գնում մինչև Մեղրի գյուղը և միանում վերոհիշյալ Փալուգեղարակին։

Այս արոտավայրը իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և վերաբերյալ [վայրերով, վաճառվեց] ի դիմաց յոթ Ե կես **թումանի,** որ բաղկացած էր յոթ հարյուր հիսուն հատ մեկ **մսխալանոց** կարված և կնքված, ներկայումս ընթացիկ Մուհամմադյան դրամից, և որպեսզի բուն գումարը և ամբողջը պարզ լինի, կեսը լինում է երեսունյոթ հազար հինգհարյուր **դինար:**

Ապա նրանց միջև տեղի ունեցավ **շարիաթական** ճշմարիտ վաճառք իր բոլոր պայմաններով և հիմունքներով, ազատ թերություններից և անվավերություններից, համաձայն մարդկության բարիք Մուհամմադի **Շարիաթի,**— բազում օրհնություն և ապահովություն նրան։

Այժմ հիշյալ վաճառված [արոտավայրը] հանդիսանում է վերոհիշյալ գնողների բացարձակ իրավունքը, ամբողջական սեփականությունը և զուտ ու անխառն հարստություն, որպես նրանց իրավունքներից, սեփականություններից, հարստություններից և ստացվածքներից մեկը։

Հիշյալ վաճառողները հայտարարեցին, հիշյալ գնողների ձեռքից, պայմանավորված գնի լրիվ և ամբողջությամբ ստացման մասին, առանց խարդախության և պակասորդի։

Հիշյալ վաճառողները միաժամանակ ընդունեցին, օրերից մի օր վերոհիշյալ վաճառված արոտավայրի [իրանց ձեռքից] դուրս գալու վերաբերյալ **շարիաթական** գիտակցված երաշխավորությունը, և այն հանձնեցին հիշյալ գնողներին։

Այնուհետև հիշյալ վաճառողները վերոհիշյալ վաճառված [արոտավայրի] նկատմամբ ոչ մի դեպքում և ոչ մի պատճառով որևէ իրավունք վեճ կամ պահանջ չունեն, և հիշյալ գնողները միայն իրավունք ունեն որպես սեփականատեր տիրելու հիշյալ վաճառվածին, ինչ ձևով որ ուզեն և ցանկանան։

Տեղի ունեցավ այս մարգարեի փախուստի ինը հարյուր իննսունհինգ թվականի ռարի՝ առաջին ամսի քսանին (1587 թ. փետրվար 28),— և փառք տիեզերքի տիրոջը։

Ն ի ս տ ու մ ն ե ր կ ա է ի ն՝

Հուսեյնի որդի Մուհամմադկուլի, Շարիֆի որդի Դարվիշ, Խեյրիի որդի Ռահմաթ, Աբդալի որդի, Կուի (՞) որդի Ղասեմ, Խոջա Հուսեյնի որդի Հուսեյն Իքսեանցի և Մուհամմադկուլիի որդի Ամիր՝ Եղեգիսեցի։

Ք ր ի ս տ ո ն յ ա ն ե ր՝

Ջհանբախշի որդի Բունյադ Քարավցի, Խոջայի որդի Բուդաղ վուջունբարցի և Բաբակուլիի որդի Հեյրան վուջունբարցի։

Այսպես է։
Ալի բեկի որդի ծառա . . . իղաղ գորուշցի (՞)։

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Միրզաաղայի որդի Ալա-էդ-դին Գորուշցի (՞)։

Այսպես է.
Մելիք Ալիի որդի Սոհրաբ։

Կնիք

Այնպես է ինչպես որ գրված է սույն արձանագրության մեջ.
Ամին **բեկի** որդի, նվաստագույն ծառա Նովրուզ։

Կնիք

Սույնի բովանդակությանը վկա եմ.
Մելիք Ալիի որդի նվաստագույն ծառա Ալիխան։

Կնիք

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 27

Վալի բեկ Սա'դլուի կողմից Քյամալ-էդ-դին Իբրահիմ խալիֆեին վաճառված Մանկանոց գյուղի վեց դանգի և Օշական գյուղի երեք դանգի 1592 թ. կալվածագիրը

Թղթապանակ 1ա, վավ. 24, պատճեն
մեծ. 38×22,5 սմ, գիր՝ նասթա'լիկ

Նա է.

Պատճենը համապատասխանում է իսկականին։
Ծառա՝

Կնիքի վրա «*Մալահ-էդ-դին — 1064*»

Համաձայնվեց սույնի բովանդակությանը ինձ մոտ և ես կարգադրեցի այն պատասխանատվությամբ։
Գրեց ստածու Հարստության առաջ տնանկ՝

Կնիքի տեղը

Նա է ճշմարիտ տերը

Նա է գերագույն տերը, բարերար, անեղևույթ և ամենակարող։ Փառք աստծուն և օրհնութիւն ու ապահովութիւն նրա սրբութիւնն ու մարգարեին, ընտրյալ Մուհամմադին և նրա սերունդներին, որոնք ուղեցույց աստղեր են։

Սույն **շարիաթական** *և կրոնական ճշմարիտ խոսքերի գրառման պատճառն ու այս ընտիր և լսելի արձանագրության նպատակն այն է, որ բարձրապատիվ Վալի* **բեկ** *Սա՛դլուն, երբ կողմերի մոտ ճշգրիտ էին շարիաթական վաճառքի համար անհրաժեշտ բոլոր պայմանները, առևտրի մեջ ընդունված և կնքված ինը արծաթ* **թումանով,** *որ բուն գումարը ճշտելու համար՝ կեսը լինում է թավրիզի չորս* **թումանն** *և հինգ հազար դինար, հանգուցյալ և դրախտաբնակ Յաղուբ* **բեկ** *Ալփավութի որդի մեծ պարոն, ամիրության ապաստան, իշխանավոր, բարձրապատիվ,* **խալիֆեների խալիֆե,** *Քյամալ-էդդին Իբրահիմ* **խալիֆեին** *վաճառեց Կարբիի* **Ճահիայի** *Մանկանոց գյուղի վից* **դանգը,** *որի առաջին սահմանն է Փարպիի գետը, երկրորդ սահմանը Օշական գյուղը, երրորդ սահմանը Սպիտակ ջուրը, չորրորդ սահմանը Մեծ ճանապարհը, ինչպես նաև Օշական գյուղի երեք* **դանգը,** *որի առաջին սահմանն է Աշտարակը, երկրորդ սահմանը ճանապարհը, երրորդ սահմանը Կարաբուրունը, չորրորդ սահմանը հայտնի Ուրյանկուլիի առուն (՞), իր բոլոր ենթակա և կից, հավելյալ և վերաբերյալ [վայրերով]։ Կատարվեց հանձնումն ու ստանձնումը և տեղի ունեցավ հրաժարումը իրեն խաբված հայտարարելու և վերադարձնելու իրավունքից և այսուհետև [գնողը կարող է տիրել նրանց] ինչպես սեփականատերերն են* **(մալիքները)** *տիրում իրենց սեփականություններին* **(մուլքերին)։**

Տեղի ունեցավ այս, Մարգարեի,— փառք նրան և նրա սերունդներին,— փախուստի հազար թվականի մեծ շաբան ամիսն (1592 թ., մայիս 13—հունիս 10)։

Ն ե ր կ ա ն ե ր՝

Փիր Մուհամմադ **բեկ՝,** *Ալի* **բեկ՝,** *Հեյդարկուլի* **բեկ՝,** *Շեյխ-Ավազ, Շահվալադ, Հեյդար, Աբբաս, Սադղկուլի . . . ի որդի Ալի, Շահվալադի որդի Ալի։*

Սույնի բովանդակությանը վկա եմ. Մուրադ Ալի

Սույնի բովանդակությանը վկա եմ. Մուհամմադխան **բեկ։**

կնիքի տեղը

Սույնի բովանդակությանը վկա եմ. Մուհսին (՞) **բեկ։**

կնիքի տեղը

Սույնի բովանդակությանը վկա եմ. Լութֆ—Ալի։

կնիքի տեղը

Սույնի բովանդակությանը վկա եմ. Հակվերդի։

կնիքի տեղը

Սույնի բովանդակությանը վկա եմ. Մուհամմադ Ռզա։

կնիքի տեղը

Սույնի բովանդակությանը վկա եմ. Ալի . . .

կնիքի տեղը

Սույնի բովանդակությանը վկա եմ. Իբրահիմ։

կնիքի տեղը

Սույնի բովանդակությանը վկա եմ. Շահվերդի։

կնիքի տեղը

Սույնի բովանդակությանը վկա եմ. Մուհամմադկուլի։

կնիքի տեղը

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վավերագիր 1. *Լիմի ս. Գևորգա վանքի սույն կալվածագիրը, ներկա ժողովածուի միակ վավերագիրն է, որ վերաբերում է Արևմտյան Հայաստանին և միաժամանակ միակն է Մատենադարանում պահվող կալվածագրերից, որ գրված է մագաղաթի վրա։*

XIV դարի սկզբի այս հետաքրքիր և որոշ առումով ինքնատիպ փաստաթուղթը մեզ է հասել հավանաբար XVI դարից ոչ վաղ հանված շարիաթական-վավերական պատճենով։ Նման ենթադրության համար հիմք են հանդիսանում վավերագրի վերին մասում և լուսանցքում կատարված պատճենի հարազատության մասին վկայող մակագրությունն ու այլ մակագրությունների մեջ «լիվա», «կազա» և Օսմանյան կայսրության մեջ ընդունված այլ վարչական տերմինների առկայությունը։ Նկատելի է նաև կալվածագրի բուն տեքստի և լուսանցքում կատարված մակագրությունների լեզվաոճական որոշ անհամապատասխանություն։

Ձեռագրաց մի քանի հիշատակարաններ և մատենագրական այլ տվյալներ, իրոք վկայում են Աղթամարի Ջաքարիա Ա. Սեյֆեդդինյանի օրոք (1296—1337 թթ.) Լիմ կղզու վրա գտնվող ս. Գևորգա վանքում կատարված վերանորոգչական աշխատանքների մասին (ԺԴ դ. հիշ. 40—42. Այս մասին ավելի մանրամասն տես դկտր. Հ. Ոսկյանի «Վասպուրական—Վանի վանքերը», Ա մաս, Վիեննա, 1940, էջ 6—11)։ Այդ ընթացքում նա զբաղվել է նաև վանքապատկան հողերի հաստատուն շարիաթական կալվածագրերով ամրապընդման և դրանց մուտֆիության հարցով։ Հետաղաղանյան քրիստոնեահալած ժամանակաշրջանում, նա, շնորհիվ իր վայելած մեծ հեղինակության, կարողանում էր արտոնություններ կորզել և վերահաստատելով հայոց եկեղեցու վակֆային-կալվածատիրական իրավունքները, փրկել հողերը հափշտակումից։

Աբրահամ գրիչը Լիմ անապատում ընդօրինակած Մաշտոցի հիշատակարանում նրա մասին գրում է. «... է ամենևին բարի, անննդ և անցասումն, նմանեալ աթոռակալին իւրոյ սուրբ Գրիգորի (Լուսաւորիչ) խոնարհութեամբն և համբերութեամբն, որ և նա ի մէջ թունաւոր օձիցն համբերեալ հնգետասան ամ, նոյնպէս և սա ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, ի մէջ անօրինաց և արիւնարբու դազանաց ազգին նետողաց, որ հանապազ խոցեն և վիրաւորեն ի հոգի և ի մարմին։ Զոր տէր ատուած հալածական և նկուն արասցէ զամենայն թշնամիս իւր՝ զերևելիսն և զաներևոյթսն, և ինքն ընդ երկայն աւուրս արասցէ ի փառս իւրում և ի պարծանս մեր, ամէն» (ԺԴ դ. հիշ. էջ 67—68)։ Նույն գրիչը մի այլ ձեռագրի հիշատակարանում արձանագրում է նրա մասին, որ «զհաւատս Հայոց նոր գնեաց ի յանաւրէն առաջնորդաց, եւ զեկեղեցիքս ազատեաց աստուծոյ տեսչութեամբն եւ ձեռաւք իւրովք» (նույն տեղում, էջ 41)։

Հրատարակվող կալվածագրի վերին ձախ անկյունի մագաղաթյա կարկատանի վրա մանր նոտր գրով մակագրված է. «Մահմեդական մեծացն է, զորս ինքեանք փեխամբար կոչեն, վասն հարկի, որ է վասն խարաջի, զի ըստ կարողութեան տան»։ Անշուշտ այս մակագրության համար հիմք են ծառայել Ջաքարիա կաթողիկոսի վերոհիշյալ գործերի մասին եղած տեղեկությունները, այլապես խարաջի մասին վավերագրի բովանդակության մեջ հիշատակություն չկա։

Առափնյա գյուղերում Լիմի ս. Գևորգա վանքին պատկանող ընդարձակ հողային տարածությունների սույն կալվածագրի մասին հիշատակություն կա Ջաքարիա կաթողիկոսի կողմից նույն թվականին գրի առնված հետևյալ արձանագրության մեջ, որը պահպանված է եղել 1883 թ. Երեմիա եպիսկոպոսի մոտ պահվող մի Մաշտոցի վերջին էջերում, և որտեղից իր ժամանակին Ղ. Փիրղալեմյանը ընդօրինակել է «Նշխարք պատմ. Հայոցի» ներկայումս Մատենադարանում պահվող անտիպ աշխատության Բ հատորում.

«Շնորհօք ամենակալին աստուծոյ, ի թուականութեանս Հայկազեան տումարիս ՉԾԴ (1305) և յաշխարհակալութեան յազգէն նետողաց Աւլչաթու սուլթանին, ես՝ նուաստ տէր Ջաքարիա վերադիտող Աղթամարայ, ի հիմանց նորոգեցաք զտաճարն սրբոյն Գէորգեայ զօրավարին ի Լիմ կոչեցեալ կղզոջ, աջակցութեամբ Յովհաննէս եպիսկոպոսի Արծրունւոյ՝ աղզակցին իմոյ՝ վանահոր սոյն սուրբ անապատիս։ Նաև նորոգեցաք զսուրբ Սահակայ և զէջմիածնայ վանքերն մերձ ի յէյրերուն գիւղ, որք սեպհական կալուածք և ագարակատեղի հաստատեալ կային ի նախնեաց անտի Լիմ սուրբ անապատին։ Ընդ նոցին շինեցաք ըստ խնդրանաց միաբանութեան

զընծայենց սուրբ Աստուածածնի ուխտն, նաև զբազում արտորայս և մարգագետինս գնեցաք ի դաշտին Բաղայ, հանդերձ բոլոր սահմանօք արդեամբք՝ Լիմ սուրբ անապատին, վասն ընծայենց ուխտատեղւոյն, և թողաք զնա իբրև հիւրանոց նոյն անապատին, որպէս յառաջագոյն ի մեծն Ներսէս սրբազան հայրապետէն հաստատեալ կայր։ Բայց վասն ծուլացեալ մեղաց մերոց յազգէն նետողաց՝ չէզիտ ամիրապետէն աւերեալ, քակտեալ և ամայի դարձած էին. զորս ծախիւք մերովք և բազում աշխատութեամբ շինելով թողաք լինել ի շահեցողութիւն միաբան սուրբ հարց և եղբարց և ի հաստատութիւն Լմայ սուրբ մենաստանին, և ի յաւերժական յիշատակ վասն փրկութեան հոգւոյ ծնողաց իմոց Սմբատ պէկին, որդւոյն Կուրջի բեկին, և ազգակցին իմոյ Յովհաննէս եպիսկոպոսի, և ծնողացն նորին հօրն Ջէլալ պէկին և մօրն Խուշխուշ խաթունին։

Եւս և ի սեպհական հայրենի ժառանգութենէ մերմէ կտակ արարաք նոյն Լմայ սրբոյ անապատին զԱտեռ ունեցած մարգագետինս և զանդաստանս մեր, որոց սահմանքն են արևմտեան կողմէն Աղուէս քառն, արևելեան կողմէն Ճանիկայ քառն և ջրաղացք, հարաւային կողմէն արքունական ճանապարհ և հիւսիսային կողմէն Շով և կղզին Լմայ։ Նաև զԱխիլանց ագարակն մեր՝ հանդերձ իւր սահմանօք, և ի Նորավանց գիւղի մերձ Վարշամակավանքն, Աստղ խաչ ագարակներն և մարգագետինքն՝ իւր սահմանօք։ Որոց սահմանագլուխքն են արևելեան կողմէն Մասուր պէկ, արևմտեան Խաբլանձոր, ի հարաւային կողմէ՝ Կարմիր քար՝ մերձ Շահկէլտի գիւղին, և ի հիւսիսային կողմէն Ատէռ գիւղի քառն, ևս և Խլու վանքն և զԱղահանքն, մերձ ի սահմանս Ճանիկ գիւղին. և Արականց վանք ուխտատեղին իւր սահմանօք՝ մերձ ի բերդն Գնունեաց, զորոց մի առ մի գրել և հաստատել տուաք ի կալուածագրին մերում, և ի յամիրապետաց և դատաւորաց հագարացւոց Վան քաղաքի և Մշոյ. և յիշատակութիւն սոցին գրել տուաք համառօտ ի յայսմ տաճարին և զընդարձակն ի կողն ձեռագիր Մաշտոցիս։

Արդ, որք հանդիպիք և ընթեռնուք զայս յիշատակագիրս՝ յիշեցէք զիս և զծնողսն իմ, ևս և զՅովհաննէս եպիսկոպոս գործակիցն իմ, և ծնողսն նորին զեղբարսն և զքոյրսն մեր, զաշխատատրսն և զերախտաւորսն սուրբ տաճարիս ի Քրիստոս աստուած և դուք յիշեալ լիջիք, ամէն։

Եւ դուք, ով միանձունք հարք և եղբարք, որք սիրով սուրբ հոգոյն յօժարիք կրօնաւորիլ ի սուրբ կղզոյս, յիշեցէք և զիս զանարժանս՝ սպասաւոր սուրբ տաճարիս զՅովհաննէս իբր եպիսկոպոս։

Նաև մի մոռանայք զմեծ երախտաւորն սրբոյ անապատիս՝ զտէր Զաքարիայ սրբազան հայրապետն մեր, որ զբազում յիշատակս եթող մեզ։ Աղաչեմ ամենայն զգուշութեամբ ջանալ հաստատուն պահել զյիշատակն և զկտակագիրն նորին, զի և դուք զվարձս ի Քրիստոսէ աստուծոյ մերմէ ընկալջիք, ամէն» (Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք Պատմ. հայոց» հատոր Բ, Մատենադարան, ձեռ. 5415, էջ 62—64)։

Արձանագրության վերջին տողերից երևում է, որ նրա համառոտ բովանդակությունը փորագրված է եղել տաճարի վրա։ Այդ մասին է ակնարկում Փիրղալեմյանը իր «Նոտարք հայոց» աշխատության մեջ (Անդ, էջ 175, ծանոթ. 2), Հ. Ոսկյանը, որ ձեռքի տակ է ունեցել Լիմի վերաբերյալ բոլոր տվյալները, ոչ մի հիշատակություն չի անում նշված վիմագիր արձանագրության մասին։ Հավանաբար այն չի պահպանվել մինչև մեր ժամանակները։

Վավերագիր 2. Պահպանվել է կալվածագրի միայն վերջին մասը, որտեղ խոսվում է կալվածի լրիվ և ամբողջական սեփականության և այդ կապակցությամբ տրված վկայությունների մասին, ինչպես նաև այն մասին, որ տեղի հաքիմը կարգադրել է արձանագրել այդ գործարքը։ Վավերագրի սկզբի կորսված մասը սոսնձված է եղել վերջին մասին և հետագայում պոկվել ու անհետացել է, ուստի հայտնի չէ թե խոսքը ինչպիսի կալվածի մասին է, որտեղ է գտնվել, ում է պատկանել և այլն։

Կալվածագրի պահպանված մասը անվնաս է. հատկապես թվականը պարզ է և միանգամայն ընթեռնելի։ Որպես բնագիր արժեքավոր է իր գրչության յուրահատկությամբ և հնությամբ։

Վավերագիր 3. Այս վավերագրի սկզբի մասը ևս պոկվել է ու անհետացել։ Կորած մասի վրա եղել է միայն նման արձանագրություններին հատուկ սկզբնական տրաֆարետային հատվածը։ Օգտվելով №№ 11, 13 և 18 վավերագրերից վերականգնել ենք այն։

Վավերագիրը նորոգված է XIX դարի 20—30-ական թվականներին։ Հակառակ կողմից փակցված է մի հայերեն նամակ, որը կրում է 1829 թվականը։ Երևում է նաև, որ նորոգման ժամանակ վավերագրի սկզբի մասը արդեն կորսված է եղել. այս մասում եղել են Շար'ի գրասենյակի պետի և այլոց կողմից կատարված մակագրություններ, որոնցից մի քանիսը պահպանվել են բնագրի լուսանցքում։

Հակառակ կողմից փակցված նամակի վրա, հավանաբար հենց նորոգման ժամանակ, կատարված է հետևյալ հայերեն մակագրու-

թյունը. «Ուլթափի սուրբ վանքիս ընդհանուր **վախմ մլքին սահրատ-նամայն է»:**

Վավերագրի թվականը խիստ կասկածելի է. բնագիրը գրված է բավական անգրագետ ձեռքով, ուղղագրական բազմաթիվ սխալներով (ایستقرار. مناصیب معشیت և այլն): Այսպես, վերջում հիջրեթի 803 թվականը (ثلاث و ثمـــانه مایه) աղավաղված ձևով գրված է ثلاثه و ثمانه مایه: Հիմք ունենալով գրագրի կողմից բնագրում թույլ տված վերոհիշյալ և այլ սխալները, այս աղավաղված թվականը միայն կարելի է կարդալ ثلاثه و ثمـــانه مایه (803), որը սակայն չի կարելի վավերագրի գրչության թվական համարել:

Կալվածագրի շարադրման այս ձևը ամբողջապես համապատասխանում է 1504, 1506 և 1554 թթ. (վավ. 11, 13 և 18) երեք այլ արձանագրությունների ձևին և կազմված է նույն տրաֆարետով: Այս փաստը, ինչպես նաև հնագրական այլ հատկանիշներ, կասկած առաջացրին վավերագրի թվականի նկատմամբ: Ուշադիր համեմատությունը ցույց տվեց, որ թղթի միացման տեղում գրված Շար'ի քարտուղարի և լուսանցքում կատարված հաստատման կամ վկայության երկու մակագրությունների կնիքները կան նաև Տաթևի վանքապատկան կալվածների հիջր. 962 (1554 թ.) նույնատիպ կալվածագրի վրա (վավ. 18): Վերջին վավերագրում քարտուղարի կնիքը երկու տեղ է գրված. ա) սկզբի հաստատման գրության տակ, բ) թղթի երեք կտորների միացման տեղում: Սույն վավերագրում, սակայն, հավանաբար երկու տեղ է եղել, որոնցից երկուսն եղել են վավերագրի սկիզբը պարունակող թղթի վրա, որը չի պահպանվել, մնացել է միայն մեկը՝ թղթի երկրորդ և երրորդ կտորների միացման վայրում: 19 մմ տրամագծով կնիքի վրա կա մանր գրությամբ ընդարձակ մի մակագրություն, որ բավական մաշված է ու աղավաղված, կենտրոնում միայն կարդացվում է علی (Ալի) անունը:

Մյուս երկու կնիքները, սակայն, միանգամայն ընթեռնելի են, դրանք են.

1. «الملك بحق. عبده محمد كاظم بن حسين — Իշխանության ճշմարտությանն է. նրա ծառան է Հուսեյնի որդի Մուհամմադ-Քյազիմը»:

2. «الفقير سهراب اورطی — Նվաստ Սոհրաբ Ուռուքցի»

Նույն կնիքների առկայությունը երկու տարբեր վավերագրերի վրա ապացուցում է դրանց ժամանակակից լինելը և քանի որ երկրորդ կալվածագրի (վավ. 18) հիջր. 962 թվականը կասկածի ենթակա չէ, ապա կասկած չի մնում, որ սույն կալվածագրի վրա գրված «803» թվականը ճիշտ չէ: Կարելի է ենթադրել, որ դա XIV դարի վերջի վավերագրի XVI դարի 40—50-ական թվականներին հանված պատճեն է: Պատճենների հաստատման գրությունները սովորաբար գրվում էին վավերագրերի սկզբի մասերում, որն այս վավերագրում չի պահպանվել: Նկատված է նաև, որ պատճենների վրա միայն լինում է պատճենի հարատևությունը հաստատող նոտարական գրասենյակի պաշտոնյայի կնիքը, այլ վկայություններ և կնիքներ չեն լինում: Նշված են լինում միայն բնագրի վրայի հաստատման մակագրություններն ու վկայությունները և նրանց կնիքների տեղերը «محل مهر» կամ «مهر» ձևով: Այս վավերագրի վրա, սակայն, բոլոր մակագրությունները կնքված են:

Ամեն պարագայում «803» թվականը չի կարելի սոսկ անգրագիտության հետևանք կամ գրչական սխալ համարել: Դժվար թե հարյուրերորդական թիվը՝ 900-ը (تسعمـــایه) շփոթությամբ գրված լինի «800» (ثمـــانه مایه): Նույնիսկ եթե ենթադրենք, որ այդպես է եղել, ապա դա համապատասխանում է 1497 թվականին, որը 57 տարով ետ է նույն կնիքները կրող Տաթևի վերոհիշյալ կալվածագրից:

Ինչպես ցույց է տալիս սույն և վերոհիշյալ երեք նույնատիպ կալվածագրերի համեմատությունը նախորդ շրջանի կալվածագրերի հետ, այս կարգի արձանագրությունները, հողային սեփականության և նրանց սահմանների հաստատման գրությունները, տրված՝ «Հաղթական բանակի բանակավարի դատավորների ատյանի» (دار القضاء معسكر ظفر اثر) կողմից, որը պետք է գոնվեր Նախջևանում, վերաբերում են միայն XVI դարին:

Ուրեմն ավելի ճիշտ կլինի մտածել, որ Տաթևի վանքապատկան խոտ, Շնհեր և Հալիձոր գյուղերի սահմանների ընդարձակ նկարագրությունը պարունակող այս արձանագրությունը կամ «սունուրնամեն» (սահմանագիր) կազմվել է XVI դարի 40—50-ական թվականներին, հիմք ունենալով հիջր. 803 (1400) թ. որևէ կալվածագիր կամ այլ փաստաթուղթ, և չնայած որ այն գրված է «բանակատեղի դատավորների ատյանի» կողմից տրվող վճռագրերի համար նախատեսված ձևով, սակայն վերջում հիշված է ոչ թե սույն վավերագրի գրառման թվականը, այլ արձանագրության համար հիմք ծառայող ավելի հին վավերագրի թվականը:

Սահմանների նկարագրության մեջ հիշատակված տեղանունների ընթերցման ժամանակ կարող են վրիպումներ լինել։ Նման վրիպումներից հնարավորին չափ խուսափելու նպատակով, 1960 թ. անձամբ եղել ենք այդ գյուղերում և փորձել տեղում ճշտելու որոշ տեղանունների ճշգրիտ արտասանությունը։ Պետք է ասել սակայն, որ այդ տեղանուններից շատ-շատերը բոլորովին անծանոթ էին գյուղացիներին, իսկ որոշ վայրեր այժմ մտնում են այլ գյուղերի սահմանների մեջ։ Այս փաստը գալիս է ապացուցելու, որ նախապես այդ գյուղերի սահմանները շատ ընդարձակ են եղել, որոնցից անջատվել են որոշ տարածություններ, կցվել այլ գյուղերի, կամ դրանց վրա հիմնվել են նոր գյուղեր։

Կալվածագրում հիշատակված տեղանունների մի մասը նախկին հայկական անունների թուրքերեն թարգմանություններն են, ինչպես օրինակ «Այուզարակ» (Արջաձոր), «Ջողալլու դարակ» (Հոնուտի ձոր), «Դաշխարման» (Քարե կալ), «Կըզըլկայա» (Կարմիր քար), «Գեչի կայասի» (Այծաքար) և այլն։ Իսկ մի մասը զուտ թուրքական են, տրված եկվոր թրքախոս ցեղերի կողմից. «Համիդ գյոլ», «Բեշթափա», «Կարաչանգըլ», «Յանջայազի» և այլն։

Վավերագիր 4. Վաղարշապատ գյուղի հնագույն կալվածագրի այս բնագիրը մեզ հաջողվեց հայտնաբերել 1960 թ. ՀՍՍՀ Պետական պատմական արխիվի անմշակ բաժնում, որ հետո փոխադրելով Մատենադարան, գրանցվեց Կաթողիկոսական Դիվանի «1 գ» թղթապանակում՝ 1044 համարի տակ։ Մինչ այդ սույն կալվածագրի բովանդակությանը մենք ծանոթ էինք միայն էջմիածնի կալվածագրերի մատյանում արտագրված մի պատճենից (թղթ. 1գ, վավ. 928), թեև Ս. Երևանցին «Ջամբռում» բավական մանրամասն խոսում է այս կալվածագրի մասին, վերագրելով այն Գրիգոր Մակվեցի կաթողիկոսին («Ջամբռ», էջ 100, 253)։

1955 թ. հրատարակված մի հոդվածում նշել ենք արդեն, որ Ս. Երևանցին սխալվում է սույն կալվածագրի ստացող պարոն Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսին նույնացնելով Ցախր-ադ-դովլանի որդի, Ջալալբեկի որդի Գրիգոր կաթողիկոսի հետ։ Նա սխալ է համակցել նաև կալվածագրի բովանդակությունը։ Կան անունների, թվականների և վաճառված մուլքերի գների աղավաղումներ (այդ մասին տե՛ս Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքյանքի պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 8)։

Կալվածագրի բնագրի հայտնաբերումը մեծ չափով օգնեց ճըշտելու սույն հատորի, ավելի ուշ շրջանի ընդօրինակությամբ պահ-

պանված, հաջորդ № 5 կալվածագիր-վակֆնամեի բնագրի որոշ աղավաղված մասեր։ Հատկապես կարևոր են նախջևանի կադիի և Շար'ի ատյանի անդամների անուններն ու կնիքները, որոնք № 5 վավերագրում նշված են միայն جای مهر («կնիքի տեղը») մակագրությամբ։

Այս բնագրի վրայի կնիքները մեծ մասամբ վերծանելի են։ Ջորս տեղ, թղթի առանձին կտորների միացման վայրերը կնքված են կալվածագիրը կազմող Ջաման-էդ-դին կադիի և գործարքին ներկա գտնվող ու իրենց մակագրություններով արձանագրության վավերականությունը հաստատող Ալիի որդի Մահմուդի և մի այլ հոգևորականի անընթեռնելի կնիքներով։

Ընդամենը մեկ տարվա տարբերությամբ կազմված այս արձանագրությունները իրենց ձևով և շարադրության եղանակով չափազանց նման են իրար, որը և նպաստում է բնագրի վերծանությանը։ Դրանով հանդերձ սույն կալվածագիրը տարբերվում է հաջորդ և այլ կալվածագրերից հատկապես նրանով, որ այստեղ գրանցվել են ավելի վաղ կազմված երեք տարբեր կալվածագրեր։ Դրանք թեև վերաբերում են նույն Ուչքիլիսա (Վաղարշապատ) գյուղի մուլքի տարբեր մասերի վաճառքին, սակայն երեք դեպքում էլ հանդես են գալիս տարբեր վաճառողներ, փոփոխվում են վաճառքի պայմաններն ու գները։ Իր ձևով հատուկ հետաքրքրություն է ներկայացնում երրորդ կալվածագիրը, որը կարևոր տվյալներ է պարունակում շարիաթական ժառանգական իրավունքի մասին։

Կալվածագրի բնագրից պարզ է դառնում, որ երեք նվագով գնված է Վաղարշապատ գյուղի մուլքի 4/6 մասը։ Առաջին նվագով գնված է ամբողջ գյուղի 1/3-ը, այսինքն 2 դանգը, իսկ երկրորդով ու երրորդով 1/6-րդական մասերը (سدس), այսինքն յուրաքանչյուր անգամ 1 դանգը, որով ընդհանուրը լինում է 4 դանգ։ Սակայն ինչպես գրված է կալվածագրի վերջի վակֆային արձանագրության մեջ, էջմիածնի վանքին վակֆ է արվում ամբողջ գյուղը (جميع القرية المدعوه), որից պետք է եզրակացնել, որ գյուղի 2 դանգը կամ 1/3 մասը նախապես պատկանել է վանքին կամ, որ ավելի ճիշտ է, վանքի վանահայր (متولی) պարոն Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսին։ Այդ մասին սակայն սույն կալվածագրում ոչ մի հիշատակություն չկա։

Այս և շորս այլ կալվածագրերում (վավ. 5, 8, 9 և 23) Արարատյան երկիրը կամ Ջուխուր-Սա'դի վիլայեթը հիշատակված է որպես

«Վրաստանի շրջաններից, ենթակա Ադերբայջանի նահանգին» (من اعمال گرجستان من كوره آذربايجان) «Ա'մալ» բառը ունի «շրջակայք», «շրջան» իմաստը, իսկ «քուրա» նշանակում է վարչական ավելի մեծ միավոր, «նահանգ», «մարզ», «երկրամաս»։ Երկու կալվածագրում (վավ. 5 և 10) զեղչված է «Վրաստանի շրջաններից» (من اعمال گرجستان) խոսքը, որը, ինչպես երևում է դուռ բացատրական բնույթ ունի. նկատի առնելով, որ նախորդ դարերում և հատկապես իլխանության շրջանում Արարատյան երկիրը մտնում էր «Գյուրջիստանի վիլայեթի» մեջ (տե՛ս Համդալլահ Ղազվինի, Նուզհաթ-ալ-կուլուբ, 1958, Թեհրանի հրատ., էջ 108)։

Ինչպես արաբական տիրապետության շրջանում «Արմինիա» երկրամասը, սկզբում Դվին, ապա Պարտավ կենտրոնով, ընդգրկում էր ամբողջ պատմական Հայաստանը, ներառյալ նաև Աղվանքն ու Վրաստանը մինչև Կովկասյան լեռնաշղթան (տե՛ս Յակուբի, Բելազուրի, Յակութ-ալ-Համավի, Աբուլֆիդա, Իբն-Խորդատբե և ուրիշներ. տե՛ս այս մասին Հ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 16, 132), այնպես էլ XV դարից հետո «Ադերբայջանը» Թավրիզ կենտրոնով, վարչական մի խոշոր միավոր էր, որի մեջ մտնում էր ոչ միայն բուն «Ադերբայջանը» կամ «Ատրպատականը», այլ նաև հին Աղվանքն ու Պատմական Հայաստանի Արցախ և Սյունիք նահանգներն ամբողջությամբ և Վասպուրական ու Այրարատ նահանգների արևելյան գավառների մեծ մասը։ Հետևաբար, ինչպես որ արաբական աղբյուրների «Արմինիան» ունի լոկ վարչական իմաստ, այնպես նաև XV դարից հետո «ընդարձակ առումով» «Ադերբայջան» վարչական միավորի հիշատակումը պարսից մատենագրության մեջ և պատմական վավերագրերում, հաճախ ցույց է տալիս միայն տվյալ վիլայեթի կամ շրջանի զուտ ֆինանսական-վարչական ենթակայությունը։

Ըստ Շարդենի Սեֆևիների օրոք ևս երկիրը չորս խոշոր ֆինանսական վիճակների (departemens) էր բաժանված. Իրաք, Ֆարս, Ադերբայջան և Խորասան (հ. 5, էջ 439)։ Ինչպես ցույց է տվել Մինորսկին, համարյա նույն բաժանումը տեսնում ենք նաև Թազքիրաթ-ալ-մուլուքի մեջ (էջ 162)։ Երկրի տարբեր նահանգներից ստացվող եկամուտները թվարկված են վերոհիշյալ չորս տնտեսական շրջանների ներքո։

Վ. Մինորսկին մեկ առ մեկ քննության առնելով այդ ցուցակում թվարկված բոլոր շրջանները, նշում է որ. «Հյուսիս-արևմտյան

շրջանում թվարկված են չորս բեկլարբեկիություններ՝ Թավրիզ, Չուխուր-Սա'դ, Ղարաբաղ և Շիրվան։ «Ադերբայջան» տերմինը, որ այս չորս բեկլարբեկիներին որպես վերնագիր է տրված, հավանաբար վերաբերում է այդ չորս նահանգներին, ինչպես որ «Խորասան» տերմինը վերաբերում է ամբողջ հյուսիս-արևելքին։ Իհարկե հիշյալ տերմինի նման օգտագործումը անտեղի է և սխալ, աշխարհագրական գրքերը այն չեն հաստատում։ Իրականում միայն Թավրիզի բեկլարբեկիությունը առանձին վերցրած, ընդգրկում էր պատմական Ադերբայջանի մեծ մասը» (էջ 164)։ Խոսելով այդ կարգի ստորաբաժանումների զուտ տնտեսական նկատառումների մասին, հարկային հաշվառումներին կամ «ավարեջեններին» վերաբերող գլխում, Մինորսկին հատուկ ուշադրություն է դարձնում այն հարցին, որ «Իրաքի, Ֆարսի և Ադերբայջանի ներքո հիշված է նույն նահանգների «ավարեջենը», Քիրմանի և Խուզիստանի տակ Խորասանն ու Իրաքն է, իսկ Շիրվանի «ավարեջեն» հիշված է Ադերբայջանի ներքո։ Նման դասավորության միակ բացատրությունն այն է,— գրում է նա,— որ տնտեսական հիմքերը ամրացնելու նպատակով, Քիրմանի, Խուզիստանի և Շիրվանի նահանգների եկամուտները հատկացրել են Խորասանին, Իրաքին և Ադերբայջանին, իսկ դրանց հաշիվները «ավարեջենների» մատյաններում արձանագրվում և հաշվվում էին երկուստեք» (էջ 174)։

Հյուսիս-արևմտյան հարկային-ֆինանսական ստորաբաժանման մեջ մտնող չորս վիլայեթները ինքնուրույն քաղաքական-վարչական միավորներ էին։ Ուշագրավ է, որ դրանցից Արարատյան երկիրը կամ Երևանյան նահանգը, որին ենթարկվում էր նաև Նախջևանի օլքան, կոչվում էր Չուխուր-Սա'դի բեկլարբեկիություն, Գանձակն Արցախական աշխարհով՝ Գանձակի կամ Ղարաբաղի բեկլարբեկիություն, Շամախին Աղվանից աշխարհի մեծ մասի հետ Շիրվանի բեկլարբեկիություն և միայն Թավրիզի նահանգը, կամ բուն Ատրպատականը՝ Ադերբայջանի բեկլարբեկիություն (տե՛ս Իսքանդար Մունշի, Թարիխ-ե Ալամարա-յե Աբբասի (ԹԱԱ), էջ 169, 492, 565, 683, 1026, 1030, 1041 և 1085)։ Սակայն այս բոլորն, ինչպես ասվեց, հարկային-ֆինանսական ենթակայության տեսակետից, մեկ ընդհանուր գլխավարություն ունեին և հաշվետու էին հյուսիս-արևմտյան երկրամասի կամ «Ադերբայջանի» վեզիրի առաջ։

Իսքանդար Մունշիի մոտ «Ադերբայջանին» այս երկու՝ աշխարհագրական և վարչա-ֆինանսական հասկացությունները չափազանց որոշ են։ Նա միշտ հյուսիս-արևմտյան նահանգները թվարկելիս

համարյա նույն հերթականությամբ հիշում է «Ագերբայջանը, Շիրվանը և Գյուրջիստանը», երբեմն էլ «Ագերբայջանը, Շիրվանը, Առանը և Գյուրջիստանը», մերթընդմերթ հիշատակելով նաև Ղարաբաղն ու Ջուխուր-Սա'դը (էջ 647, 650, 754, 756, 1026, 1102 և այլն)։ Հատկապես ավելի որոշակի են Ագերբայջանն ու Շիրվանը, որոնք միշտ միասին են հիշվում. گفتار درقضایای آذربایجان و شیروان. تسلط رومیه برانحاء ممالك آذربایجان وشیروان. درمقام تسخیر ممالك آذربایجان وشیروان և այլն։ Ըստ որում Ագերբայջան ասելով նա հիմնականում ի նկատի ունի Արաքսից հարավ գտնվող պատմական Ատրպատականը, իսկ Շիրվանը, դա Քուր և Արաքս գետերի ստորին հոսանքից մինչև Դերբենտ ընկած տերիտորիան է (էջ 101, 228, 230, 232, 235, 255, 259, 270, 504, 636—638, 643, 709, 730 և այլն)։ Մունշիի պատմական բծախնդրությունը այն աստիճանի է հասնում, որ Ագերբայջանի վեզիրի մասին խոսելիս նրան անվանում է «Ագերբայջանի և Շիրվանի վեզիր» (عطاالله اصفهانی که در زمان شاه جنت مکان وزیر آذربایجان وشیروان بود — Աթաուլլա Իսֆահանին, որ դրախտաբնակ արքայի ժամանակ Ագերբայջանի և Շիրվանի վեզիրն էր. էջ 385, համմտ. էջ 172 և 247), որպեսզի սխալմամբ չհասկացվի միայն բուն Ագերբայջանի (Ատրպատականի) իմաստով։ Որ իրոք դրանք տարբեր պաշտոններ էին, այդ երևում է նաև «Սարու խոջա անունով հայտնի խոջա Մուհամմադ Ռզա Ֆադավիի մասին նրա տված այն տեղեկությունից, ըստ որի նա Ագերբայջանի բեկլարբեկի Զոլֆեղար խան Կարամանլուի վեզիրության պաշտոնից՝ թագավորական ծառայության հասավ և Ագերբայջանի անկախ վեզիրը դարձավ (ازوزارت ذوالفقارخان قرامانلو بملازمت اشرف رسیده وزیر مستقل آذربایجان گشت)։ Ինչպես պարզ երևում է Ագերբայջանի վեզիրը այլևս ենթակա չէր բեկլարբեկին, նա արդեն համարվում էր Արքունի դռան պաշտոնյա և ենթարկվում էր մեծ վեզիր է'թեմադ-ուդդովլեին, և հարկային-ֆինանսական գործերում նրա իշխանությունը տարածվում էր նաև հյուսիս-արևմտյան մյուս երեք նահանգների՝ Շիրվանի, Ղարաբաղի և Ջուխուր-Սա'դի վրա։

Վավերագիր 5. Ջալալբեկի որդի Գրիգոր Մակվեցու կամ Արտազեցու կողմից հիջր. 835 թ. ռաբի' II ամսի կեսերին (1431 թ. դեկտ. 20—21) Սյունյաց իշխան Բեշքեն Օրբելյանի որդի Ամիր-Տուստամից «գնած» և էջմիածնին նվիրված 7 գյուղերի կալվածագրի այս պարսկերեն բնագիրը մեզ է հասել ուշ շրջանի ընդօրինակությամբ, կատարված XIX դարում, վանքապատկան այլ կալվածների մի ընդհանուր մատյանում։

Կալվածագրի հայերեն համառոտ թարգմանությունները լույս են ընծայվել ինչպես «Արարատ» ամսագրում (1875, էջ 212—213), այնպես նաև Հ. Աբրահամյանի կողմից 1941 թ. Երևանում հրատարակված «Կալվածագրեր» ժողովածուում (էջ 12)։ Պարսկերեն բնագիրը, սակայն, լույս է տեսնում առաջին անգամ։

Վավերագիրը, սկսած դեռևս Սիմեոն կաթողիկոսի ժամանակներից և էլ ավելի առաջ, ծանոթ է եղել շատերին և բազմիցս վկայակոչվել է մեր պատմական գրականության մեջ։ Սակայն բնագրի սխալ ընթերցումների և օժանդակ գրականության բացակայության կամ անմատչելիության պատճառով, աղավաղվել են այնտեղ հիշված պատմական անձնավորությունների անուններ ու որոշ տեղանուններ, տեղի տալով սխալ մեկնաբանությունների։

Մինչև վերջին ժամանակներս կալվածագրի գրառման պատմական հանգամանքների և նրա հեղինակների մասին մեր տեղեկությունները սահմանափակվում էին Սիմեոն Երևանցու կողմից «Ջամբռում» տրված հետևյալ խիստ համառոտ և թերի նկարագրությամբ. «...յետ երից ամաց ի փոփոխմանէ տիրողաց երկրիս, յառաջանայ այր ոմն տաճիկ յերկրոջս՝ Ռուստամ անուն, և բռնացեալ (ոչ է յայտ թէ որով կերպիւ) տիրէ քանեաց գեղօրէից, յորոց մին լինի և այս մեր կից գեղս Վաղարշապատ, և այս Ռուստամ տաճիկս լինի որդի Ամիրշքեանի և թոռն Ամիր Սմբաթայ և ուստի լինելն անյայտ։ Ապա նոյն Գրիգոր կաթողիկոսն ի յայս տաճկէս վերստին գնէ զգեղս զայս իննսուն հազար դինարի և վախճան առնէ սրբոյ Աթոռոյս։ Եւ ընդ գեղջս այսմիկ գնէ ևս ի նոյն տաճկէն զայսոսիկ գեղօրայս, այսինքն՝ զԱշտարակ, զԲաթոհին, զնորագաւիթ, զԱղունատուն, զՔիրաջլու, զՄուղնի (որոց զորպէսն ի յիւրաքանչիւր տեղւոջն ասասցուք)։ Եւ եօթնից գեղօրէիցս գրելոցս այսոցիկ զղաբայ մի մեծ և կոնդակաձև գրէ նոյն վերոյիշեցեալ Ջամանատին զգին Երևանու և կնքէ, կնքեն և վկայեն ևս Երևանու շխի-խալամ-մօլայ Ռահիմ կոչեցեալն, և Նախջևանու զգին Ահմէտ կոչեցեալն՝ որդի Մահմեթի։ Յորում վճռեն հաստատուն վկայութեամբ և սաստիկ երդմամբ նզովիւք ըստ օրինացն իւրեանց թէ՝ այսոցիկ եօթեանց գեղօրէիցս զշնչդանկ մուլքն գնեաց Գրիգոր խալիֆայն և վախճարար սրբոյ էջմիածնի։ Որ գրի ի տաճկական թուոջն ( ), զոր գացես ցուցական և ( ) համար նշանաւն։ Եւ այս մեծ զգգա-

յայիս սուրաթ մի ևս գոյ գրեցեալ ցուցական և ( ) նշան համարով» («Ջամբռ», էջ 102)։

1955—1960 թթ. լույս տեսած առանձին հոդվածներով քննության ենք ենթարկել այս և նախորդ կալվածագրերը և վերծանված ամրողջական բնագրերի ու XV դարի որոշ հիշատակարանների հիման վրա ապացուցել, որ՝

ա) Սույն կալվածագրում որպես վաճառող կողմ հանդես եկող Ամիր Ռուստամը ոչ թե «այր ոմն տաճիկ» է, այլ որդին է Սյունյաց Սմբատ Օրբելյանի որդի Բեշքենի. Ռուստամի հոր «Ջամբռում» «Ամիր Շբեան» իսկ «Արարատում» և «Կալվածագրերում» «Ամիր Միշկին» անվանումը արդյունք է պարսկերեն բնագրի بیشکین գրության սխալ վերծանման։

բ) Կալվածագրում Ամիր Ռուստամին տրված ճոխ տիտղոսները վկայում են, որ 1431—1437 թթ. նա բարձր դիրքի է արժանացել Կարա-կոյունլու Իսքանդարի կողմից և օգտվելով պատեհ առիթից փորձել է Սյունիքում և Այրարատում ստեղծել հայկական վասալ իշխանություն։

գ) Նա միաժամանակ գործնական քայլեր է արել էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերականգնման և Ամենայն Հայոց կաթողիկոսությունը այնտեղ վերահաստատելու ուղղությամբ։ Օգտագործելով իր ազդեցությունը նա ձեռակերպել է կալվածագրում նշված 7 խոշոր գյուղերի՝ «վաճառքը» և ապա «գնող» Գրիգոր Մակվեցու կողմից դրանց նվիրումը վանքին, նպատակ ունենալով ամուր տնտեսական հենարան ստեղծել եկեղեցական իշխանության համազգային կենտրոնի համար։

դ) Սակայն, դեպքերի հետագա ընթացքը և Ամիր Ռուստամի սյուզերեն Կարա-կոյունլու Իսքանդարի ոզբերդական վախճանը, անկատար թողեցին այդ ծրագիրը, որի իրագործմանը լծվել էին XV դարի հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալականության եռանդուն գործիչներ Օրբելյան Բեշքենի որդի Ամիր Ռուստամն ու Ջալալբեկի որդի Գրիգոր եպիսկոպոսը։

ե) Իսքանդարից հետո Կարա-կոյունլու Ջհանշահի օրոք, սակայն, քաղաքական համեմատաբար ավելի խաղաղ պայմաններում 1441 թ. հնարավոր եղավ միայն հրավիրել եկեղեցական գործիչների ընդհանուր ժողով և իրականացնել կաթողիկոսական աթոռի տեղափոխումը էջմիածին։

զ) Թեև, ինչպես այդ նշել է նաև Օրմանյանը, եպիսկոպոսաց ժողովը աշխատեց միջին ճանապարհ ընտրել և կաթողիկոս ընտրեց

Կիրակոս Վիրապեցուն, սակայն այդ ընտրությունից դժգոհ մնացած Գրիգոր Մակվեցին և իր կուսակիցները, երկու տարի հետո կարողացան բեկանել այն, որից հետո կաթողիկոսական գահը գրավեց Գրիգոր Մակվեցին, որպիսի փոփոխության համար անհրաժեշտ հիմք էին հանդիսացել սույն կալվածագրում նրա անունով արձանագրված և հաստատված իրավունքները (տե՛ս Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 8։ Նույնի՝ Արարատյան երկրում, նույն տեղում, 1960, № 7—8։ «Բեյթ-ուլ-մալի» ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները XV դարում, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2)։

Հայտնի չէ թե երբ և ինչ հանգամանքներում են էջմիածնի դիվանից անհետացել սույն կալվածագրի 1431 թ. բնագիրն ու Սիմեոն Երևանցու նշած պատճենը (սուրաթ)։ Հավանական ենք համարում, որ դրանք ևս այժմ գտնվում են որևէ արխիվում, անմշակ վիճակում և կարող են մի օր լույս աշխարհ դուրս գալ։

Վավերագիր 6. Կալվածագրի բնագիրը պահպանվել է 1892 թ. ընդօրինակությամբ։ Արտագրված է դպրոցական տետրի թերթի վրա։ Առաջին էջում կալվածագրի բնագիրն է, երկրորդում՝ վկայություններն ու կնիքների պատճենները, ընդօրինակության թվականի և տեղի մասին արված հիշատակագրությամբ, որտեղ հիշված է Ավագ-բեկ Մելիք-Փաշայանցի անունը, որի ներկայությամբ էլ կատարվել է ընդօրինակությունը։

Լուսանցքում հայերեն մակագրված է՝ «Մագաղաթի վրայ էր գրուած (յիշեալ) այս կալուածագիրը»։

Մելիք-Փաշայանները սերում էին Վարանդայի Քյոշիզ գյուղի Մելիք Փաշայի կամ Փաշիկի տոհմից։ Վերջինս, ըստ Դավրիժեցու, այն դժգոհ ֆեոդալներից էր, որ ըմբոստանալով Թուրքական իշխանությունների դեմ, XVI դարի վերջերին թողել էր հայրենի տիրույթները և գնացել Շահ Աբբասի մոտ։ Թվարկելով Աղվանից երկրից Սպահան ապաստանած հայ մելիքների անունները, նա հիշում է նաև «Մելիք Փաշիկն ի Քօշիզ գեղջէ» (Դավրիժեցի, էջ 15)։ Ըստ Մ. Բարխուդարյանցի Վարանդայի Քյոշիզ գյուղը հետագայում անվանվել է «Նովատեղ», սակայն նրա գրքում մեջ բերված վիմագիր մի արձանագրության մեջ կարդում ենք. «Երկիրս Վարանդու և Քյոշիզու» («Արցախ», էջ 104)։ Հնչհերը նույնպես թեև հայտնի գյուղ է Վարանդայի գավառում, սակայն սույն կալվածագրում Քյոշիզի հետ միասին հիշատակված է որպես գավառ կամ շրջան։

Վավերագրի մյուս թերթի վրա նույն կիսագրագետ ձեռքով կես պարսկերեն կես ադրբեջաներեն թվարկված են մի քանի հրովարտակներ և կալվածագրեր, որոնք XVII—XVIII դարերում տրված են եղել նույն մելիքական տոհմի տարբեր ներկայացուցիչների։

Դժբախտաբար ոչ մի տեղեկություն չի տրված այն մասին, թե ում ձեռքում է գտնվել կալվածագրի բնագիրը։ Այն հանգամանքը, որ ընդօրինակությունը կատարված է Ավագ-բեկ Մելիք-Փաշայանցի ներկայությամբ, ենթադրել է տալիս, որ վավերագրի բնագիրը պատկանել է վերջինիս, որպես հիշյալ մելիքական տոհմի շառավիղներից մեկի։ Սա անշուշտ Մելիք-Փաշայանների կալվածատիրական վաղեմի իրավունքների մասին վկայող հնագույն վավերագիրն է եղել։ Սակայն պահպանված են եղել նաև հետագա դարերին վերաբերող փաստաթղթեր, որոնք թվարկված են հետևյալ հաջորդականությամբ.

1. *Լավագույն քրիստոնյա* **Մելիք** *Ավանի անունով Ալի շահի (!) կողմից տրված Քյոշկիզի* **մահալի** *մելիքության հրովարտակը. 1019 (1610 ?) թ.։*

فرمان ملكيت باسم زبدة المسيحى آوان به محال كوچز از على شاه (!) در تاريخ ۱۰۱۹ (؟) —١

2. **Մելիք** *Ավանի որդի* **Մելիք** *Փիրիի անունով 1091 (1680 ?) թ. Շահ Աբբասի (!) կողմից տրված Քյոշկիզի* **մահալի** *մելիքության հրովարտակը։*

فرمان ملكيت باسم پيرى ولدملك آوان به محال كوچز در تاريخ ۱۰۹۱ (!) ازشاه عباس (؟) —٢

3. **Մելիք** *Փաշայի անունով 1148 (1735—36 թթ.) Մուստաֆա* **փաշայի** *կողմից տրված հրովարտակը. № 5։*

فرمان ملكيت باسم ملك پاشا در تاريخ ۱۱٤۸ از مصطفى پاشا فى ۵ نومره —٣

4. **Մելիք** *Յուսուֆի անունով 1141 (բնագրում 1161) թ. (մ. թ. 1728—29) Մուստաֆա* **փաշայի** *կողմից տրված վարանդայի* **մահալի** *մելիքության հրովարտակը. № 28։*

فرمان ملكيت يوسف آدينه ورنده محالنه مصطفى پاشادان تاريخ ۱۱٦۱ (!) (۱۱٤۱)—۲۸ نومره —٤

[5] *1144 թ. կալվածագրում գրված* **Մելիք** *Փաշայի որդի* **Մելիք** *Հասանի և* **Մելիք** *Աստղի որդի* **Մելիք** *Հարունի աղդարանությունը։*

[۵] —۱۱٤٤ قباله ايچنده يازيلمش نسب نامهٔ ملك حسن ملك پاشا اوغلى وهارون ملك اسداوغلى

[6] *1141 (բնագրում 1114) թ. (մ. թ. 1728—29) Մելիք* **փիրիյի** *և Մուհամմադ-Շաֆի'* **բեկի** *միջև վեճ է եղել։*

[٦] —۱۱۱٤ ملك پيرى محمد شفيع بيك ايله مرافعه لرى اولوب در

[7] *1139 թ. Շեյխ-Դուսուն (?) գյուղի համար* **Մելիք**-*Ավանի անունով տրված կալվածագիր։*

[۷] —۱۱۳۹ ملك آوان آدينه قباله اولسون (؟) شيخ دوسون كندينه

[8] **Մելիք** *Փաշայի անունով տրված հրովարտակ... քոչելու վերաբերյալ, սակայն առանց թվականի և կնիքը անվերծանելի։*

[۸] —ملك پاشا آدينه فرمان... كوچمك خصوصنده آما بى تاريخ و مهر معلوم اولمور

[9] *Քյոշկիզ-Հերհեր* **մուլքի** *մասին 1228 (1813) թ. հրամանագիր, տրված* **Միրզա**-*Ալիվերդիին Ջավազիզ գյուղի սահմաններին համար Փիրի* **բեկի** *և* **Մելիք** *Ջամշիդի երեխաների գանգատի հիման վրա։ Վերջում հայերեն գրված է «Մեհտիղուլի» — հավանաբար կնիքի մակագրությունն է, որ նշանակում է թե տրված է Ղարաբաղի Մեհտիղուլի խանի (1806—1822 թթ.) կողմից։*

(۹)— كوچز هرهر ملكنده ۱۲۲۸ حكم ميرزاعلى ويردى يه زواذيق قريه سنون سرحدينه... پيرى بيك وملك جمشيد اوشاقلارينين شكايته كوره (*Մէհտիղուլի*)

Վավերագրերի թվականները խիստ պայմանական են, ընդօրինակողը արաբերենով տրված տարեթվերը ճիշտ չի կարողացել կարդալ։ Նա սխալ է հասկացել նաև սույն կալվածագրի թվականը։ Ճիշտ ընդօրինակելով արաբերեն اربعين و ثمانمايه (840) գրությունը, ներքևում թվանշաններով գրել է ١٤٨ (148)։ Ուրիշները մի կետ են դրել ۲-ի և ٤-ի արանքում և դարձրել «1048»։

Ցուցակում առաջինը հիշված Մելիք Ավանի անունով տրված հրովարտակը թվում է թե ավելի հին կարող է եղած լինել։ Դա հավանաբար տրված պետք է լինի Կարա-կոյունլու Հասան-Ալիի կողմից։ Հրովարտակն ստացողը թերևս սույն կալվածագրի տեր՝ Հովհաննեսի որդի Ավանն է։ Երկրորդ հրովարտակը նույնպես ավելի

հին պետք է լինի, քանի որ Շահ Աբբասի օրոք Վարանդայի մելիքը Փաշիկն էր։ Կարծում ենք, որ ճիշտ չի վերծանված հրովարտակի կնիքը։ Ավելի հավաստի են թուրքական փաշաներից ստացված հրովարտակների և մյուս վավերագրերի մասին տրված տեղեկությունները։

Սրանով հանդերձ այս ցուցակը որոշակի արժեք է ներկայացնում և օգտակար է Վարանդայի պատմության և հատկապես Քոչիզի մելիքական տոհմի ճյուղագրության ուսումնասիրության համար։ Առավել արժեքավոր է, սակայն, հրատարակվող կալվածագիրը, որի շնորհիվ մեր առաջին տեղեկությունները մելիքների այս ընտանիքի մասին XVI դարի վերջերից գնում են մինչև XV դարի 30-ական թվականները։

Վավերագիր 7. Տաթևի վանքապատկան կալվածների գնման և նվիրաբերման այս հնագույն պարսկերեն կալվածագիրը պահպանվել ու մեզ է հասել անթերի բնագրով։ Վաճառքի և նվիրաբերության հաստատման արձանագրությունը (զաբալե և վակֆնամե) կազմված է Նախիջևանի Շար'ի ատյանում նույն Ջաման-էդ-դին Կազիի ձեռքով, որը գրել և կազմել էր 1430 թ. Վաղարշապատի հնագույն կալվածագիրը (վավ. 4)։ Ե՛վ գրչությամբ, և՛ արտաքին ձևով և շարադրման եղանակով այս երկու վավերագրերը հար և նման են իրար։

Թղթի առանձին կտորների հինգ միացման վայրերը կնքված են Մուհամմադ Կավամ-էդ-դին Կազիի կնիքով և հաստատված Ջաման-էդ-դինի հետևյալ մակագրություններով.

1. «صح وصل حرره زمان الدين القاضى — Հաստատվում է միացումը. գրեց՝ Ջաման-էդ-դին կազին»։

2. «صح الوصل من كاتب الاصل حرره زمان القاضى—Հաստատվում է միացումը բնագրի գրողի կողմից. գրեց՝ Ջաման կազին»։

1468 թ. Շմավոն վարդապետ Անգեղակոթցին Ստեփանոս եպիսկոպոսի հետ միասին Կարա-կոյունլու Հասան-Ալիից ստանում է մի հրովարտակ, որտեղ 10 այլ գյուղերի հետ միասին վերահաստատվում են վանքի իրավունքները նաև սույն կալվածագրում հիշված Ավարի, Տանձատափ, Տաշու և Ագանց գյուղերի նկատմամբ։ Ըստ այդ հրովարտակի մյուս գյուղերը նույնպես Ամիր Ռուստամն է վաճառել Շմավոն վարդապետին. «Այն հողերի **բահրաչեն,** որ Շմավոն վարդապետը գնել է Բեչքենի որդուց, ըստ կից ցուցակի ողորմածությամբ շնորհեցինք նրան»,— ասված է հրովարտակում (Հրով. I, վավ. 4)։

Կալվածագիրը ուժի մեջ է եղել և կարևոր նշանակություն է ունեցել վանքի համար նաև հետագա դարերում, չնայած՝ ինչպես XV այնպես նաև XVI դարերում հետագա առաջնորդներն ու վանահայրերը ստացել են բազմաթիվ հրովարտակներ թուրքմեն փադիշահներից և Սեֆյան շահերից, որոնց մեջ բազմիցս հաստատվում էին վանքի կալվածատիրական իրավունքները։

Տաթևի վանքի վակֆային կալվածատիրական իրավունքների տեսակետից սույն կալվածագրի բացառիկ կարևոր նշանակության մասին է վկայում վավերագրի հակառակ էջում՝ 1608 թ. կատարված հետևյալ հիշատակագրությունը.

«Ի ժամանակաց թագաւորութեան աւսմանեաց, որ է անուն Կոստանդինոյ, եղև հակառակութիւն վասն սահմանաց Տաթևայ, Սվարանոյց, Տուշուայ և Ագանցոյ։ Եղև դատաւոր մի ազգէն յունաց Աւսման անուն դատաւորի և կացուցեալ եպիսկոպոսն տէր Յովանէսն, թէ հան գիրն սահմանաց որ ցուցանէ զսահման գեղերաց։ Հանեալ զգիրս տէր Յովանէս արհեպիսկոպոսն Սիւն[ե]աց, եդ ի ձեռն դատաւորին։ Կարդաց զսահման գեղերացս, և զգիրս ոչ [ետ] եպիսկոպոսն Սիւնեաց։ Եղև բարկութիւն ժամանակաց, որ զաւրացաւ զաւրս պարսից Խորայսանայ, Շահապան եկեալ առեալ զԴայվր[է]ժ քաղաքն ընախչվան և զԱրարատ[ե]ան գաւառն և գերեցոյց զդատաւորն Աւսման և զգիրս հանն տարեալ ի աշխարհն պարսից զՂազմին և զՀիսպայհան։ Մնաց անդ գերի գիրս ամս չորից և ե (5) ամսոց։ Մնացինք շվար վասն գրոցս։ Ինչ լինի մեզ, որ այսպիսի վիշտ եղև վանացն Տաթևոյ։ Եղև երիտասարդ մի Ներսէս անուն, առեալ աւրհնութիւնս Տաթևոյ վանից և գնացեալ ամիս և հաս անդ և հարցեալ գտ[ե]ալ զգիրս ողորմութեամբն աստուծոյ, առեալ բերեալ ի գուղայքաղաքս յ[ր]զուվերծ, և եկեալ եպիսկոպոսն Տաթևոյ Մարտիրոս միաբանաւքն, զփակակալ տէր Մես[ր]որն, զՀայրապետ զտէր Սիմէոնն, և առեալ զգիրս և տարեալն վանս Տաթևոյ։ Աատուած ամենայնի և սուրբ առաքեալն Թաթէոս և Բարդուղիմէոս ազնական և պահապան լիցի զներսէս երիտասարդին և մաւրն իւր Փաշապակուն։ Դարձեալ յիշեցէք զխոջայ Եսային, զՄասահին, զձանղուլին, զԱհումն և զէվազն և Խոշնատարն և զԻսրայել էրեցս, որ զգիրս գրեցի, թվին ՌՕԷ (1608) էր»։

Ներքևում ավելացված է. «Յիշեցէք զԹոման, զթանկսուղն և զտէր Գրիգոր ժամարարն»։

1437 թ. Սանահնում ընդօրինակած Ճաշոցի հիշատակարանում Շմավոն Անգեղակոթցին, նկարագրելով Շահրուխի արշավանքնե-

րի ժամանակ իրենց գաղթը Լոռի, Ռուսաստամ Օրբելյանին անվանում է իր «հոգևոր որդին» (ժե դ. հիշ., Ա, էջ 468)։ Սյունիք վերադառնալուց հետո, Ջհանշահի օրոք, մասամբ վերականգնված են եղել Օրբելյանների իշխանական իրավունքները։ Սակայն պարզ երևում է, որ Ռուսաստամը այլևս մեծ հեղինակություն չէր վայելում և նրա անվան այլևս չեն նախորդում 1431 թ. Գրիգոր Մակվեցուն վաճառված 7 գյուղերի կալվածագրում (վավ. 5) տրված ճոխ տիտղոսները։ Նա այստեղ արդեն ոչ թե «վեհանձնյա ամիր» է, այլ «հայոց ամիրզադե» (امیرزادهٔ ارمن)։ Ըստ արաբական մատենագրության մեջ ընդունված ավանդույթի «ամիրզադե-յե Արման» արտահայտությունը պետք է թարգմանել «Հայոց», այսինքն «Հայաստանի ամիրզադե»։ Ազգային պատկանելիությունը նշելու համար պետք է ասվեր «ամիրզադե-յե արմանի» (امیرزادهٔ ارمنی)։ Իսկ երկիրը արաբները կոչում էին «Արման — ارمن» կամ «Բիլադ ալ-Արման — بلاد الارمن» և հասկանում էին Արևմտյան Հայաստանը կամ ավելի ճիշտ Շահարմենների երկիրը։ Սակայն դժվար թե այս վավերագրում «Արման» արտահայտությունը այդ իմաստը պարունակի, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է «ամիրզադեին» և ոչ թե «ամիրին», որովհետև չենք ասում «Հայաստանի իշխանազուն» այլ ասում ենք «հայ իշխանազուն»։

Տաթևի առաջնորդ Շմավոն վարդապետ Անգեղակոթցին XV դարի անվանի եկեղեցական գործիչներից մեկն էր և գործոն մասնակցություն է ունեցել էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերականգնման համար ծավալված աշխատանքներում (Թ. Մեծոփեցի, հիշ., էջ 51, 78, 86)։ Նա մեծ դեր է խաղացել ինչպես Տաթևի, այնպես նաև Վաղադնի վանքի կալվածատիրական իրավունքների ամրապնդման գործում (Հրովարտակներ, I, վավ. 2, 4, 11, 15 և նրանց ծանոթագրությունները)։ Այս միակ փաստաթուղթն է, որտեղ հիշված է նրա պապի՝ Հակոբի անունը։

Կալվածագիրը XVI դարում հաստատված է «Ուռուքցի Սոհրաբի» կողմից։ Համարյա նույնպիսի մակագրությամբ հաստատված է նաև վավ. 14-ը, որը շարադրված է 1508 թվականին, սույն կալվածագրի հիման վրա։ (Տե՛ս վավ. 14-ի ծանոթագրութ.)։ Սոհրաբի կնիքը այս կալվածագրի վրա թեև չափազանց մաշված է ու անընթեռնելի, սակայն երևում է, որ դա տարբերվում է վավ. 3-ի և վավ. 18-ի վրա եղած կնիքներից։

Վավերագիր 8. Հավուց-թառի Սբ. Ամենափրկչի վանքի կալվածների պատմության ուսումնասիրության համար բացառիկ արժեք ներկայացնող այս վավերագիրը մեզ է հասել ուշ շրջանի ընդօրինակությամբ։ Թեև բնագրում կան որոշ աղավաղված կամ անընթեռնելի տեղեր, սակայն ամբողջության մեջ դրանք մեծ մասամբ հասկանալի են և չեն խանգարում բնագրի ճշգրիտ ընթերցմանն ու թարգմանությանը։

Աղկոյունյու Յաղուբ փադիշահի անվան տեղը ընդօրինակության մեջ բաց է թողնված։ Նման գրություններում մեծերի անունները գրվում էին լուսանցքում, ոսկեգույն կամ կարմիր թանաքով, բնագրի համապատասխան տեղը ազատ թողնելով։ Այդպես է եղել նաև այս վավերագրում, իսկ լուսանցքում գրվածը հավանաբար ջնջված է եղել կամ պատռված։ Բայց քանի որ վավերագրի թվականը (Հիջր. 894 թ. ռամազան ամսի սկիզբը) որևէ կասկածի ենթակա չէ, ապա վստահորեն բնագրում կարելի է ավելացնել ابو المظفر يعقوب بهادر (Հաղթական Յաղուբ բահադուր) անունը։

Որպես իրավական փաստաթուղթ այս հաշտության գիրը կամ համաձայնագիրը («մուսալիհե — مصالحه») իր շարադրության ձևով տարբերվում է գնման («մուբայիե — مبايعه») կամ նվիրման («վակֆ — وقف») ակտերին վերաբերող արձանագրություններից («զաբալե» և «վակֆնամե»)։

Հատորիս առաջաբանում անդրադարձել ենք սույն վավերագրի պատմա-իրավաբանական շարժառիթներին և ցույց տվել, որ վավերագրի գրառման տարիներին, Աղկոյունյու Յաղուբ Փադիշահի օրոք Հայաստանում բուռն հալածանքներ էին ծավալված հայ ֆեոդալականության աչքի ընկնող առանձին ներկայացուցիչների նկատմամբ։ Այդ ընթացքում Բեյթ-ուլ-մալի կողմից բռնագրավվել էին նաև վավերագրում հիշված Զաքարիա վարդապետի ժառանգական կալվածները, որոնք ըստ սույն վավերագրի 5000 դինար փրկագին վճարելուց հետո ետ էին վերադարձվել (Առաջաբան, էջ 26—30)։

Սիմեոն Երևանցին Զաքարիա վարդապետին համարում է Գրիգոր Մագիստրոսի սերունդներից և նույնացնում 1441 թ. էջմիածնի ժողովի մասնակից Զաքարիա վարդապետի հետ, որին Թումա Մեծոփեցին անվանում է «Տէր Զաքարէն Հաւուց-Թառայ ի յազատորդեաց» (Հիշատակարան, էջ 52)։ Սակայն, ինչպես ժամանակին նշել է Գ. Հովսեփյանը, հիշատակարաններում այս Զաքարիային հա-

ջորդում է ոմն Հովհաննես եպիսկոպոս։ Սրան հաջորդել է սույն կալվածագրում հիշված Շահենի որդի Զաքարիա վարդապետը, որը կարող էր ողջ լինել մինչև 1526 թվականը և Համազասպ վարդապետի հետ միասին նույն թվականին գրված կալվածագրով (վավ. 16) այդ կալվածների մի մասը նվիրել Ամենափրկչի վանքին, իսկ մի տարի առաջ, 1525 թվականին նա Գառնիում գնել էր մի այգի (վավ. 15)։ Կասկածից դուրս է, որ 1441 թ. էջմիածնի ժողովին մասնակցող և «եպիսկոպոսներուն երիցագույնը» համարվող Զաքարիա Հավուց-Թառեցին 1526 թ. չէր կարող ողջ լինել (Գ. Հովսեփյան, Հավուց-Թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, էջ 31, հմմտ. Ալիշան, Այրարատ, էջ 357, Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 2111)։

Սխալ հասկանալով վավերագրի բովանդակությունը Ս. Երևանցին այն անվանում է «զապալայ» և կարծում թե վավերագրի մեջ հիշատակված 9 գյուղերը Զաքարիա վարդապետը 5000 դինարով կարող էր գնած լինել Հաջի-Նովրուզի որդի Ամիր-Քյամալ-էդ-դին Աբդին-բեկից և ապա նշում՝ «Զաքարիա վարդապետս զայսոսիկ ի յառնուլն, յիւր անունն առնու, և զանուն Ամենափրկչին ոչինչ յիշէ ի զապալայջն, և զվախմ անուն ինչ ոչ գրեցուցանէ, որոյ պատճառն է՝ զի սոքա ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շատազգ և հարուստք, յորոց թէպէտ ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք և ընչիւք, և իւրեանց էր համարեցեալ գեօղն և վանքն առանց խորութեան։ Վասն որոյ և ինքն մինչ առաջնորդ իսկ էր սոյն վանքիս, որպէս թէ վասն վանքիս առնոյր զայսքան մուլքս, թէպէտ յանուն վանքին վախմ ոչ գրեցուցանէր ի միամտութենէն» («Զամբռ», էջ 277)։ Իրականում, սակայն, կալվածները Զաքարիայի ժառանգական սեփականություններն են եղել, ընդհանուր հետապնդումների ժամանակ բռնագրավված օտար տիրակալների կողմից։ Իսկ հետագայում արդեն, ինչպես այդ մասին նշում է նաև Ս. Երևանցին, երբ այլևս հնարավոր չի եղել կալվածները պահպանել հափշտակումից, նույն Շահենի որդի Զաքարիան և հավանաբար նրա մերձավոր ազգականներից Համազասպ վարդապետը 1526 թ. ստիպված են եղել այդ մուլքերը մաս առ մաս վակֆ անել Ամենափրկչի վանքին (վավ. 16, հմմտ. «Զամբռ», էջ 277—278)։

Շահ Իսմայիլ Բ-ի օրոք, 1577 թ. բարձրագույն դիվանի կողմից հրապարակված հրովարտակից երևում է, սակայն, որ հետագա տարիներում այդ կալվածները, կամ նրանց մի մասը դեռ շարունակում էին դիտվել որպես նույն ընտանիքի տարբեր մարդկանց պատկանող ժառանգական մուլքեր (Հրովարտակներ, I, վավ. 19), իսկ ավելի ուշ, հավանաբար XVII դարից սկսած դարձել են վանքի վակֆային սեփականություններ։

«Արդ ի մերս ժամանակի,— գրում է Ս. Երևանցին,— մինչ շէն էր վանքս այս, զՀայոց Թառու, զԹառնիսու և զԿուտուց վանքի վեց դանկ մուլքն առնոյր, մինչ սոքա ևս էին շէն և տաճկաբնակ։ Նոյնպէս և Կոխդ գեօղն որ շէն էր, տար զերեք դանկ մուլքն սոյն վանքիս։ Իսկ Մանկուս, Աւանիկ, Քաղբերթ և Սուրբ Սարգիս (զորս ամայի տեսաք մէք) որոց զհողն վարէր վանքս այս, իսկ այժմ մինչ գրէաք, ամենևին ամայի են վանքն և գեօղօրայքն իսպառ։ Ոհ, ոհ։ Բաւ է» («Զամբռ», էջ 278)։

Վավերագիր 9. Օշականի հնագույն կալվածագիրն է, պահպանված անթերի բնագրով։ Գրված է գեղեցիկ նասխ գրությամբ. առանձին հատվածների սկիզբը գեղագրական խոշոր տառերով, գրության մեջ օգտագործված ձայնանիշերի շնորհիվ, հատուկ անունների ու տեղանունների տառադարձությունը կասկածի ենթակա չէ։

Կալվածագրի բուն տեքստից առաջ հիշված է եղել Բեյթ-ուլ-մալի կապիի անունը, որը վավերագրի ամբողջ լայնքով կտրված հանված է և ապա նորից թղթի ծայրերը միացրած իրար։ Բնագրի այդ մասը վերականգնել ենք հիմք ունենալով սույն կալվածագրից ընդամենը երեք շաբաթ առաջ գրված վավ. 8-ի սկզբում նույն անձնավորության կողմից կատարված մակագրությունը։

Այս կալվածագրում, սակայն, ինչպես սկզբի հաստատման մակագրության տակ, այնպես նաև թղթի առանձին մասերի միացման տեղերում, երեք տեղ պահպանված է Բեյթ-ուլ-մալի նույն կապիի կնիքը հետևյալ մակագրությամբ المتوكل على الله الرحمن عبد الاول بن عثمان — «Ողորմած աստծուն ապավինած, Օսմանի որդի Աբդ-ուլ-ավվալ»։

Մյուս կնիքների մեծ մասի վրա կարդացվում են դրանց տերերի անունները։ Լրիվ ընթեռնելի է կալվածագրի վերջում գրված Բեյթ-ուլ-մալի ամիլ Ամիր-Քյամալ-էդ-դին Աբդին-բեկի կնիքը։ 2 սմ տրամագծով փոքրիկ կնիքի վրա փորագրված է հետևյալ երկտողը.

چون شدی برعدوی خود فیروز شکر کن عایدین بن نوروز

«Քանի որ հաղթեցիր քո թշնամուն,
Ուրեմն փառաբանիր աստծուն, ով Նովրուզի որդի Աբդին»։

Բնագրում հիշված տեղանուններից մի քանիսի (Օշական, Կարապի, Ղարաքիլիսե, Աշտարակ) գրությունը զանազանվում է կալվածագրի ընդհանուր ձեռագրից։ Զգացվում է, որ որոշ տեղեր այլ գրչով ուղղված է կամ ջնջված ու նորից է գրված։ Այն տողի դիմաց, որտեղ հիշված է Օշական-ը, լուսանցքում ոմն Մուհամմադ-Շարիֆ արձանագրում է, որ նույն գյուղը բնագրում նշված սահմաններով նախապես հայտնի է եղել Ղազանֆար անունով։ Ուստի հավանական է թվում, որ բնագրում նկատվող այդ ճշտումները, ավելի ուշ կատարվել են նույն արձանագրության հեղինակի կողմից։

Ջամբռի ԻԴ գլխում Ս. Երևանցին, Օշականի կալվածագրերը թվարկելիս ԻԱ համարի տակ սույն կալվածագրի մասին գրում է. «Դարձեալ զապալայ մի մեծ հին և կոնդակաձև վասն վեց դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առեալ են ի հին տերանցն։ Յորում գրի գեղս չորիւք սահմանօքն, գրեցեալ ի յՀՃՂԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԻԱ համարով» (էջ 259)։

Իսկ ԺԹ գլխի, Օշականի պատմության վերաբերող հոդվածում, ավելի մանրամասն խոսելով սույն կալվածագրի մասին, վերանկատագրում է գյուղի սահմանները. «...մի կողմն Հաճիլար կոչեցեալ գեղջն մօտ Ղարաքիլիսէն, մի կողմն՝ Շաղվերթի ջուրն, մի կողմն Թաքեայ կոչեցեալ գեօղն և միւս կողմն Կարփւոյ ճանապարհն և առապարն» (էջ 111)։ Ինչպես տեսնում ենք, այստեղ մոռացության է տրված Աշտարակ գյուղը որպես չորս սահմաններից մեկը և դրա փոխարեն «Թաքիե — تكيه» (մենաստան) բառը ընդունելով գյուղի անուն, ներկայացվել է որպես չորրորդ սահման։

Վավերագրի հակառակ էջում կա Ս. Երևանցու ձեռքով կատարված հետևյալ մակագրությունը. «ԻԱ. յՕշականու գեօղի վեց **դանկ մլքի** հին **ղաբալայն է,** յորում գրի գեօղս այս, սահմանօքն, որ ի յառնուլն մեր **զմուլք** գեղջս այսորիկ, առեալ եմք և զայս հին **ղաբալայս.** 894 թուին տաճկաց»։ Նոտր գրով վերևում գրված է. «յՕշականու **դապալայն»:**

Վավերագիր 10. Այս կիսագրագետ և համառոտ բովանդակությամբ կալվածագիրը, XVI դարից մեզ հասած ամենահին պարսկերեն կալվածագիրն է։ Ընդհանուր շարադրանքով և նոտարական արձանագրություններին հատուկ հակիրճ տրաֆարետով որոշակի կերպով տարբերվում է նախորդ՝ XV և XIV դարերի կալվածագրերից։ Այն սովորական առք ու վաճառքի փաստաթուղթ է «قباله بيع و شراء — ղաբալե-յե բեյ՝ ու շիրա»։ Լեզուն աղքատ է ու լակոնիկ, գրությունը խառը և ոչ գեղագրական։

Շար՝ի նոտարի հաստատող գրությունը կիսով չափ է միայն ընթեռնելի։ Կնիքը թեև ընթերցվում է, սակայն որևէ անուն չի բովանդակում։

Վավերագրի հակառակ երեսին փակցված թղթի շերտի վրա մակագրված է. «Այտին Դաւրիշ կամ Քէշիշքեանտի գիւղի **շէշդանկ մլքի** հին **ղաբալայն է,** զոր Ֆարխատտին հայ ոմն ծախեալ է վեց **թումանով** Եաղուբ **Աղայի** որդի **խալիֆայ** Իբրահիմ **բէկին:** Որոյ կողմունքն են՝ Արմուտ Աղաջին, Իլանլուն, Ղուզուլու-դարայն և Ղարադաշն։ Ի թուին տաճկաց ՋՁ։ Որ է Ղրխբուլախու **մահալն»:** Գրության ձախակողմյան լուսանցքում փակագծում նախապես գրված է եղել «Ծ» (50) համարը, ապա ջնջված է և ներքևում գրված «Գ»։ Նույն տեղում մանր նոտր գրով շեղակի մակագրված է. «Զսորայ նոր **ղաբալայն,** որ մեք զգեօղս առեալ եմք, գոցես (ԺԱ) համարով»։

Ավելի ներքևում այլ ձեռագրով գրված է. «այդին գեղի, որ յապարան **մուլքի ղապալայ** է, 3»։

Բնագրում ինչպես նաև հայերեն համառոտ մակագրության մեջ «Ֆախր-էդ-դին» (فخر الدين) անունը, ժողովրդական աղավաղված ձևով «Ֆարխադին» է գրված, պարսկերեն բնագրում թողնելով فرخدين թարգմանության մեջ այն ուղղել ենք «Ֆախր-էդ-դին»։

Վերևի առաջին մակագրությունը կատարված է Սիմեոն Երևանցու օրոք և համարյա նույնությամբ մեջ է բերված «Ջամբռի» ԺԹ գլխի Քեշիշքյանդի գյուղի սեփականության պատմությանը նվիրված «Յաղագս Քէշիշքեանտ կոչեցեալ գեղջն, որ է ի Ղրխբուլախ նահիէն և կից Ապարանու նահիայինն, որ Այտին-Դաւրիշ և Ջալապիքեանդ ևս կոչի...» խորագիրը կրող ենթագլխում (էջ 120)։

Այս գյուղի մասին Սիմեոն Երևանցին խոսում է Ապարանի մահալի Դիպակլու կամ Սանտ գյուղից հետո, որի հիջր. 983 (1575) թ. կալվածագիրը ևս հրատարակվում է սույն հատորում (վավ. 23)։ Երևանցին չի կասկածել դրանց տարբեր գյուղեր լինելու մասին, այն դեպքում, երբ երկու գյուղերի սահմանների նկարագրությունը նույնն է. «Արմուտ աղաձին, Իլանլուն, Ղուզուլու-դարայն, և Ղարատաշն» («Ջամբռ», էջ 119 և 120)։

Վավերագիր 11. «Բանակավայրի դատավորների ատյանի» կողմից առանձին կալվածների և հողային սեփականությունների հաստատման արձանագրությունների հնագույն վավերագիրն է, գրված հիջր. 909 (1504) թվականին Նախջևանում։ Նույն տրաֆա-

թեով են գրված նաև վավ. 3, 13 և 18 կալվածագրերը: Վերջին երկու վավերագրերը, սակայն, ավելի գրագետ են շարադրված:

Սույն կալվածագրի բնագրում տեղ են գտել բավական շատ ուղղագրական և լեզվական սխալներ: Գյուղերի և ագարակների անվանումները նույնպես մասամբ աղավաղված են: Կնիքները մեծ մասամբ ընթեռնելի են: Վավերագրի վերին մասում երեք հաստատման գրությունները կնքված են նախջևանցի երկու կադիների և Շար'ի քարտուղար Նասրուլլայի որդի Ինայաթուլլայի կնիքներով: Նույն երեք կնիքներով կնքված է նաև թղթի երկու մասերի միացման վայրը: Լուսանցքում են գտնվում օրդուբադցիներ Ֆաթհուլլայի և Խալիլուլլայի կնիքներով հաստատված վկայությունները:

Խոջա Ֆաթհի-բեկ Թուսին, որ կալվածագրում մեծարված է «Վեհանձնյա էմիր և իշխան» տիտղոսներով ամենայն հավանականությամբ XIII դարի մեծ գիտնական, աստղագետ-մաթեմատիկոս և պետական գործիչ Խաջե Նասիր-էդ-դին Թուսիի սերունդներից էր: Թուսիների, Օրդուբադում հաստատված այս ընտանիքը մեծ թվով հոգևորական, մշակութային և պետական գործիչներ է տվել, որոնցից էր նաև Շահ Աբբաս Ա-ի օրոք և նրանից էլ առաջ պետական բարձր պաշտոններ գրաված և ապա տասնյակ տարիներ մեծ վեզիրի կամ է'թեմադ-ուդ-դովլեի պաշտոնը զբաղեցնող Հաթամ-բեկ Օրդուբադին: Իսքանդար Մունշին Շահ Աբբասի պատմության երկրորդ հատորում նկարագրում է 1606 թ. Շահի այցելությունը Օրդուբադ և Վանանդ, որտեղ Հաթամ-բեկն ու նրա ընտանիքի այլ անդամներ կալվածներ ունեին (ԹԱՄ, հ. II, էջ 728):

Այդ կալվածները սույն վավերագրում հիշված գյուղերն ու ագարակներն են եղել, որոնք բոլորն էլ գտնվում են Վանանդի ձորում (տե'ս Ե. Լալայան, Գողթն, էջ 76—79): Այն փաստը, որ սույն կալվածագիրը խոսում է միայն խոջա Ֆաթհի բեկի այդ գյուղերում ու ագարակներում բաժիններ ունենալու մասին, ավելի է համոզում մեզ, որ դրանց ամբողջությունը Թուսիների ժառանգական մուլքերն են եղել, հետագայում տրոհված նրանց ժառանգների միջև, և որոնք մինչև XVII դարի սկզբները և էլ ավելի հետո շարունակում էին մնալ նույն ֆեոդալական ընտանիքի սերունդների ձեռքում:

Վավերագիր 12 — Մակվի Թադեոս Առաքյալի վանքին վերաբերող վավերագրերի մեջ, որոնք մեծ մասամբ ամփոփված են Կաթողիկոսական դիվանի № 4 թղթապանակում, այս վավերագիրը համարվել է ամենահինը և գրանցված է «1» համարի տակ: Թեև թուղթը բավական մաշված է, սակայն մուգ սև թանաքով գրված

բնագիրը ամբողջապես ընթեռնելի է: Գրված է դիվանի-շիքաստե գրությամբ, առանց կետերի, որ մեծ չափով դժվարացնում է վերծանությունը:

«Ագերբայջանի» գործերի վերակացուի 15 մմ տրամագծով կլոր կնիքը, որ դրված է արձանագրության վերջում, չափազանց մաշված է ու անընթեռնելի, վերին մասում միայն կարելի է կարդալ «خادم» (սպասավոր) բառը:

Վավերագրի մյուս երեսում կան տարբեր ժամանակներում կատարված երեք հայերեն մակագրություններ, որոնցից հնագույնը գրված է բավական անվարժ ձեռքով և ոչ գրագետ լեզվով. «Շահ Իսմէիլի **վէքիլի** նշան է: **Մուլքն** յորտեղ որ կէրն է ուտէլ»: Երկրորդ մակագրությունը կատարված է թղթի վերին մասում, մանր նոտր գրով, հավանաբար XIX դարում. «Մակուայ **մուլքնամէնն,** Թաթոս եպիսկոպոսին հաս է այս գիր»: Այլ ձեռքով գրված է «№ 12», իսկ ավելի ներքևում «ՀԱ»: Հազիվ նշմարվում է մատիտով կատարված երրորդ մակագրությունը. «Ղարաքիլիսի գիւղի և առուի մասին, Թադէոս եպիսկոպոսին»:

Վավերագրում հիշատակված անանուն կալվածների սեփականատերեր Մանվելի որդի Թադեոսի և սրա որդի Միրիջանի մասին լրացուցիչ տեղեկություններ չենք գտել: Պարզ է, սակայն, որ XVI դարի սկզբում, Շահ Իսմայիլի թագավորության առաջին տարիներին, երկրում անցկացվող հողերի և այլ եկամտաբեր առարկաների ընդհանուր հաշվառման ժամանակ արձանագրված է, որ ինչ-որ կալվածներ պատկանել են Մանվելի որդի Թադեոսին և սրա որդի Միրիջանին: Պետք է ենթադրել, որ այդ կալվածները հետագայում վակֆ են արվել Թադեի վանքին, որի հետ և սույն վավերագիրը մուտք է գործել վանքի դիվանը:

Վավերագրի վրա կատարված հայերեն մակագրություններից առաջինը, թեև անգրագետ, սակայն ճիշտ է արտահայտում արձանագրության իմաստը: Երկրորդը շատ ընդհանուր է ու նաև սխալ, որովհետև վավերագրում չի նշված Թադեոսի հոգևորական լինելու մասին, մանավանդ որ հիշված է նաև նրա որդու Միրիջանի անունը որպես սեփականատեր: Վերջին մակագրությունները կատարված են այն ժամանակ, երբ արդեն այդ կալվածները պատկանում էին վանքին, ուստի մակագրողները ելնելով այդ փաստից կարծել են թե դա իրենց վանքի ունեցած կալվածների մասին կազմված արձանագրություն է, որված ոմն Թադեոս եպիսկոպոսի (մանավանդ որ դժվար վերծանելի է բնագրի البه ولدمشار ومیریحان(և սրա որդի Միրիջանին) հատվածը):

Թադեի վանքի առաջնորդների մասին եղած տեղեկությունները խիստ կցկտուր են։ Դադյան Խաչիկ վարդապետը, որ անձամբ եղել է Թադեի վանքում և շրջել ամբողջ Մակվի վիճակը, առանձին զննուցագրով հրատարակել է վանքի վիմագիր արձանագրությունները, որոնք և հիմք են հանդիսացել հետագա ուսումնասիրողների համար (տե՛ս «Արարատ», 1898, էջ 89—91, հմմտ. Ե. Ֆրանկյան, Ատրպատական, էջ 28—30, Հ. Ոսկյան, Վասպուրական—Վանի վանքերը, Բ մաս, էջ 457—477)։ Դրանք շատ չեն, մեծ մասամբ վերաբերում են XVII—XVIII դարերին և չեն օգնում լուսաբանելու սույն կալվածագրի ժամանակն ու այնտեղ հիշված անձնավորություններին վերաբերող հարցերը։

Թադեի վանքին վերաբերող բոլոր պարսկերեն վավերագրերը (կալվածագրեր, հրովարտակներ և այլն) հավանաբար այն ժամանակ, երբ վանքը դադարել է Ատրպատականի թեմի կենտրոն լինելուց (XVIII դարի 40-ական թվականներ) տեղափոխվել են էջմիածին և այժմ, ինչպես ասվեց, պահվում են Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի № 4 թղթապանակում։ Նույն դիվանի 1ա, 1բ, 1գ, 1դ և 1ե թղթապանակներում ևս հանդիպում են Թադեի վանքին և Մակվին վերաբերող վավերագրեր, որոնցից երեքը լույս են տեսել «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի Ա և Բ պրակներում (Հրովարտակներ, պրակ Ա, վավ. 7 և 16, պրակ Բ, վավ. 21)։

Այս վավերագրերից միայն Ա պրակի № 16, Շահ Թահմազ Ա-ի 1562 թ. հրովարտակում է, որ հիշատակված են Թադեի վանքի հոգևոր վիճակին ենթակա որոշ գյուղերի անուններ (Ղարաքիլիսա, Գըրխբուլաղ, Արքայուն, Կարիզ, Մահլազան և Կորուղ)։ Անշուշտ այս գյուղերի մեջ եղել են նաև այնպիսիները, որոնք որպես մուլք պատկանել են վանքին, ինչպես օրինակ վանքին կից Ղարաքիլիսա գյուղը։ Ե. Ֆրանկյանի վկայությամբ սակայն, որ վանքում եղել է 1903 թվականին, մի ժամանակ վանքին են պատկանել Մակվի, Չորսի և Խոյի շրջաններում գտնվող հետևյալ գյուղերը՝ Մըզրա, Յումրի-դաշ, Ղարաքիլիսա, Դիպակ-դաշ, Աղբուլաղ, Ղարաթուլքի, Սոնա-բուլաղ, Աղդաշ, Մահլազան, Ղորուղ, Նուշիկ, Քյոհրևան, Չորս, Ռահան (Ատրպատական, էջ 30—31)։

Վավերագիր 13. Համայնքային հողատիրության կամ ազատ գյուղական համայնքների հողատիրական իրավունքների վերաբերյալ պաշտոնական վավերագրերի թիվը մեծ չէ։ Սույն կալվածագիրը, որ տրված է «բանակատեղի դատավորների ատյանի» կողմից, այդ

կարգի փաստաթղթերի մեջ ամենահինն է ու ամենաամբողջականը։ Թեև գրված է բավական անգույն թանաքով, ոչ դիմացկուն թղթի վրա, սակայն «նասխ» գրությամբ բավական գրագետ գրված բնագիրը ամբողջությամբ ընթեռնելի է։

Թղթի առանձին մասերի միացման տեղերը առաջին էջում կնքված են Շար'ի գրասենյակի պետ կազի Ֆաթհուլլայի և վերջինիս կողմից վավերագրի սկզբում կատարած ընդարձակ վկայությանը հաջորդող մի այլ համառոտ վկայության տակ դրված կնիքներով։ Կազիի փորրիկ ձվաձև կնիքի վրա մակագրված է المتوكل بالرحمن الرحيم الفقير فتح‌الله بن ابراهيم («Գթառատ և ողորմած [աստծուն] ապավինած՝ Իբրահիմի որդի կարոտյալ Ֆաթհուլլա»)։ Երկրորդ կնիքի վրա, որն ավելի մեծ է (30 մմ), կենտրոնում կարդացվում է «تاج احمد — Թաջ-Ահմադ» անունը, իսկ շուրջը խիտ գրությամբ մի հատված է Ղուրանից։ Թղթի միացման տեղերը, մյուս էջից հաստատված են արձանագրությունը գրի առնող Զաման-էդ-դին Մուհամմադի հետևյալ մոնոգրամաձև մակագրությամբ. صح الوصل. حرره زمان‌الدين محمد الخطيب الحسيني («Հաստատում եմ միացումը. գրեց՝ Զաման-էդ-դին Մուհամմադ ալ-խաթիբ ալ-Հուսեյնին»)։

Վավերագրի լուսանցքի վերին մասում կա Ազերբայջանի վեզիր Միրզա-Աթաուլլայի հիջր. 964 (1557) թ. մակագրությունը, որը թեև գրված է գեղեցիկ շիքաստեով, սակայն ժամանակի ընթացքում բավական վնասվել է, որոշ հատվածներ հնարավոր եղավ վերականգնել նույն անձնավորության կողմից Տաթևի վանքապատկան մուլքերի 1554 և 1558 թթ. կալվածագրերի (վավ. 18 և 19) վրա կատարված նույնատիպ մակագրությունների օգնությամբ։ 1554 թ. կալվածագրի (վավ. 18) վրայի մակագրության մեջ պարզ ասված է, որ հիջր. 964 թ. ռամազան ամսին (1557 թ. հուլիս 28 — օգ. 27) հրապարակված հրամանագրով կարգադրված է եղել հողային սեփականությունների և կալվածների ընդհանուր ստուգում անցկացնել։ Ստուգողը, կամ ինչպես ասված է վավերագրերից մեկում «մումայիզը» եղել է Ազերբայջանի վեզիր Միրզա Աթաուլլան, որն իրեն ներկայացված փաստաթղթերի կամ կալվածագրերի վրա համանման մակագրություններ է արել և կնքել։ Այդ մակագրությունները, որոնց մեջ փաստորեն վերարտադրված է հիջր. 964 թ. ռամազան ամսին Շահ Թահմազ Ա-ի կողմից տրված հրամանագրի բովանդակությունը, պարունակում են խիստ արժեքավոր տվյալներ

հողային սեփականությունների տարբեր ձևերի, հատկապես պետական և կամ պետականացման ենթակա կալվածների և նրանցից առացվող եկամուտների տնօրինման վերաբերյալ:

Կալվածագրում հիշված Դիբքյանդ գյուղից բացի, Շամբի ձորում գտնվող Բաշքյանդ և Օրթաքյանդ հայաբնակ գյուղերը ևս ազատ գյուղական համայնքներ են եղել, Շարիաթական ձևակերպմամբ դրանք որպես մուլք պատկանել են նույն գյուղի բնակիչներին (տե՛ս Առաջաբան, էջ 39—42): Որովհետև դրանք մոտ էին գտնվում Ստեփանոս Նախավկայի վանքին և իրենց հոգևոր տուրքերը վճարում էին նրան, ապա այդ գյուղերի սեփականությանը վերաբերող մեծ թվով վավերագրեր պահպանվել են վանքի դիվանում, որտեղից և փոխադրվել են էջմիածին:

Բացի էջմիածնից, Հայաստանի և ոչ մի վանքի մասին այնքան շատ թագավորական հրովարտակներ և կալվածագրեր չեն պահպանվել, որքան Նախավկայի կամ Մաղարդա վանքի: Մաղարդա վանքին են վերաբերում նաև բնագրով մեզ հասած հնագույն պարսկերեն հրովարտակները, տրված Իլխան Աբու-Սաիդի կողմից XIV դարի 30-ական թվականներին (տե՛ս Հ. Փափազյան, Երկու նորահայտ իլխանական յառլիղներ, «Բանբեր Մատենադարանի» № 6):

Վավերագիր 14. Տաթևի վանքապատկան գյուղերի և այգու կալվածագրի այս շարիաթական-վավերական պատճենը մեզ է հասել բավական քայքայված վիճակում, բնագրի առանձին հատվածներ համարյա անընթեռնելի են: Թղթի իրար միացրած երկու կտորները ժամանակին պոկված են եղել իրարից և սկզբի մասը № 4-ի, իսկ վերջին մասը № 14-ի տակ, որպես առանձին վավերագրեր գրանցվել են Կաթողիկոսական դիվանի «2ա» թղթապանակում: Պատճենի հարազատությունը հաստատող կնիքը չափազանց մաշված է ու անվերծանելի: Վավերագրի երկու կտորներն էլ ժամանակին նորոգվել են: Առաջին մասի հակառակ կողմից փակցված թղթի վրա, հավանաբար XIX դարում հայերեն մակագրված է. «Բոլոր գիւղօրէից **վախուպլամայն է»:**

Վավերագրի շարադրման ձևը թույլ է տալիս ասելու, որ այն գրված է վավ. 7-ի հիման վրա (տե՛ս վավ. 7-ի ծանոթագրութ.):

Այս վակֆային արձանագրության բնագրի վրա ևս եղել է Ուռուքցի Սոհրաբի վկայությունն ու կնիքը: Ինչպես վավ. 3-ի ծանոթագրության մեջ առիթ ունեցանք նշելու, նրա կնիքը կա XVI դարի 50-ական թվականներին գրված Տաթևի վանքապատկան կալվածների երկու կալվածագրերի բնագրերի վրա (վավ. 3 և 18): Այս

վկայության մեջ, սակայն, նա իրեն անվանում է «Սմբատի որդի ուռուքցի Սոհրաբ»:

Մի քանի կարևոր վավերագրերի հաստատումը Սոհրաբի կողմից, ինքնին գալիս է վկայելու, որ այդ ժամանակ նա եղել է տվյալ շրջանի կարևոր անձնավորություններից մեկը, ամենայն հավանականությամբ Ուռուքի հաքիմը, մարմնավորելով քաղաքացիական դատարանը կամ «ուրֆը»: Ուռուքը, որ «Օրոտի» թուրքական անվանումն է, այն ժամանակ համանուն նահիյայի կամ մահալի կենտրոնն էր, որին ենթակա էին Տաթևի վանքն ու կալվածագրում հիշված գյուղերի մեծ մասը:

Հայտնի է, որ Սյունյաց իշխանական տան այն շառավիղները, որոնք ամրացել էին «Օրոտի» կամ «Որոտանի» ամրոցում, ի վերջո իրենց ենթակա ժողովրդի մի մասի հետ մահմեդականություն ընդունեցին և մնացին իրենց տիրույթներում: Սմբատի որդի Սոհրաբը այդ ֆեոդալական տան կարևոր դեմքերից մեկն է եղել:

Վակֆային արձանագրությունը կազմված է նույն ժամանակի Տաթևի առաջնորդ Շմավոն վարդապետի պահանջով, և հաստատում է այն իրողությունը, որ անգեղակոթցի Հակոբի որդի, Խաչատուրի որդի, Շմավոն վարդապետը այդ գյուղերը վակֆ է արել Տաթևի վանքին: Դրա համար էլ իր վկայության մեջ Ուռուքցի Սոհրաբը հարկ է համարել նշել, որ «երկրորդ Շմավոն վարդապետը նախկին Շմավոն վարդապետի ժառանգն է»: Պարզվում է ուրեմն, որ XV դարի հայ հոգևոր ֆեոդալներից Անգեղակոթցի Շմավոն վարդապետի սերունդները մինչև XVI դարի կեսերը շարունակել են ժառանգաբար տիրել Տաթևի վանքին և նրա կալվածներին, և անշուշտ իրենց այդ իրավունքները ժառանգաբար պահպանելու համար հարկ է եղել կայուն շարիաթական վավերագրերով ապացուցելու, որ վանքապատկան կալվածները նախապես եղել են իրենց նախնիների (այս դեպքում անգեղակոթցի Շմավոն վարդապետի) ժառանգական մուլքերը. «ملك موروثی شرعی که در سلك ملکیت خود در آورده و در تحت تصرف وحیطهٔ ضبط واستقرار واستمرار کرفتهٔ — որ նրա ժառանգական շարիաթական մուլքերն էին, նրա սեփականություններն էին դարձված և գտնվում էին նրա տիրության և տիրապետության տակ»:

Վավերագիր 15. Կալվածագիրը բավական քայքայված է եղել, եզրերը մաշված, որի հետևանքով էլ բնագրի որոշ մասեր խիստ վնասված են: Բնագրի վրա առկա երեք կնիքներից երկուսը թերի են, երրորդը կազիի կնիքն է «القاضی محمد السعدی — Կազի Մուհամ-

մադ ալ-Սա՛դի» մակագրությամբ։ Վավերագիրը նորոգված է XVIII դարում։ Ամբողջ քայքայված բնագիրը խնամքով փակցված է սպիտակ ամուր թղթի վրա։ Հակառակ կողմից ներքևի մասում կա հետևյալ սխալ մակագրությունը. «Մուհամմադ տաճիկ ոմն զայգի մի որ է ի Գառնի ԲՒ դիանով ծախէ Զաքարիա վարդապետին, որոյ կողմունքն են, Ստեփաննոսի այգին, Բախշայիշի այգին, Նաւռուզի այգին»։ Պարզ երևում է, որ վավերագրի առանձին հատվածների վնասված լինելու պատճառով, վաճառողի անունը շփոթված է Կադիի անվան հետ։

Առուծախի այս սովորական արձանագրությունը թեև գրված է ոչ այնքան գրագետ ձեռագրով, սակայն իր շարադրման համառոտ ձևով և պարզությամբ հաղվադեպ է տվյալ ժամանակի համար։

Կալվածագրում որպես գնող հանդես եկող Զաքարիա վարդապետը Հավուց-Թառի հոգևոր ֆեոդալների սերունդներից, նույն Շահենի որդի Զաքարիան է, որ 1489 թ. կարողացել էր 5000 դինար փրկագին վճարելով Բեյթ-ուլ-մալից ետ ստանալ բռնագրավված մուլքերը (վավ. 8) և ավելի ուշ, 1526 թվականին դրանց մի մասը վակֆ անել Հավուց-Թառի Ս. Ամենափրկչի վանքին (վավ. 16)։

Գնված այգու և հնձանի մասին հետագա շրջանի վավերագրերում, ինչպես նաև «Ջամբռում» հիշատակություններ չկան։ Դա նշանակում է, որ այգին Զաքարիայի անձնական սեփականությունն է մնացել և երբևէ չի նվիրվել կամ վակֆ չի արվել վանքին։

Վավերագիր 16. Վակֆային արձանագրության բնագիրը չի պահպանվել։ Խնամքով ընդօրինակված է Կաթողիկոսական դիվանի «1գ» թղթապանակի մեջ պահվող էջմիածնի և Արարատյան երկրում գտնվող այլ վանքերի կալվածագրերի XIX դարում կազմված մատյանում, պահպանելով բնագրի արտաքին ձևը և նշելով հաստատման երկու կնիքների տեղերը։

Այս վավերագրում է միայն հիշատակվում Հավուց-Թառի առաջնորդ Շահենի որդի Զաքարիա վարդապետի եղբոր Համազասպ վարդապետի անունը։ Ուշադրության արժանի է այն փաստը, որ 1489 թ. Բեյթ-ուլ-մալի կողմից բռնագրավված կալվածների ետ ստացման ժամանակ, միայն Զաքարիան է ներկայանում որպես այդ կալվածների սեփականատեր, իսկ այստեղ որպես օտարող կողմ կամ նվիրող հանդես են գալիս երկու եղբայրները միասին։

«Ջամբռի» «Սրբոյն Ամենափրկչի վանից որպիսութիւնք» ենթագլխում Սիմեոն Երևանցին մանրամասն պատմելով Գրիգոր Մագիստրոսից սերող Հավուց-Թառի հոգևոր ֆեոդալների հողային տիրույթների մասին, այս և այլ վավերագրերի հիման վրա փորձում է տալ նաև այդ կալվածների հետագայում աստիճանաբար վանքին նվիրվելու և վակֆային սեփականություններ դառնալու պատմությունը. «Ապա յետ սոյնոյ Զաքարեայ վարդապետիս,— գրում է նա, ի նկատի ունենալով XV դարի Զաքարիա վարդապետ Հավուց-Թառեցուն,— ի փոփոխել ժամանակին, ի նուազել կարողութեանց և իշխանութեանց սոցա, և ի բաժանիլ աղգականացն յիրերաց, սկսաւ խորութիւն անկանիլ ի մէջ վանականացն և աշխարհականացն վասն մլքից և այլոց ընչից, և այլք ևս աստի և անտի դաւ յարուցանէին վասն յիշեցելոց մլքիցդ՝ և յափշտակել կամէին, և կամ գեղականքն զմուլք տալ ոչ կամէին, վասն որոյ յազգականաց սոցա Զաքարիա և Համազասպ վարդապետքն յայնմ ժամանակին, Հայոց թառ, Մանկուս, Աւանիկ, Քաղբերթ և Սուրբ Սարգիս կոչեցելոց գեօղօրէից զկէս մուլքն (որ է երեք դանկն) բաժանեալ՝ յատուկ վախճ գրեն անուն Ամենափրկչի վանիցն տաճկերէն գրով, ի ՋԼԹ թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւ...»։ Այնուհետև խոսվում է այն մասին, որ այս Զաքարիան երկու հրովարտակներ է ստացել Շահ-Թահմազ Ա-ից հիջր. 980 (1573) և 984 (1577) թվականներին, որոնցով հաստատվում էին նրա ժառանգների կալվածատիրական իրավունքները։ Այս հրովարտակներից առաջինը, որ իսկապես պետք է տրված լիներ Շահ-Թահմազ Ա-ի կողմից մեզ չի հասել, իսկ երկրորդը տրված է Շահ-Իսմայիլ Բ-ի օրոք, որի ընդօրինակությունը պահպանվել է նույն մատյանում, որտեղ ընդօրինակված է նաև սույն կալվածագիրը (պարս. բնագիրը հայերեն և ռուսերեն թարգմանությամբ տե՛ս «Հրովարտակներ», I, վավ. 19)։ Այս հրովարտակները ըստ երևույթին Սիմեոն Երևանցու օրոք վանքում գտնվող վերջին պաշտոնական վավերագրերն են եղել, այս և վավ. 8-ում հիշված գյուղերի վերջնականապես և ամբողջությամբ վակֆային սեփականություններ դառնալու մասին։ Սիմեոն Երևանցին դիմում է ենթադրությունների, թե ինչպես «յետ միջոց անցանելոյ, թէ յաղքատութենէ աշխարհական ազգականացն, զրամով ծախե՞ն թէ կամաւ տան, և թէ այլ որպիսեաւ կերպիւ իցէ, ոչ կարացաք գիտել, զՀայոց թառու մնացեալ երեք դանկն, զԿուտուց վանք կոչեցելոյ վեց դանկն, զԹառնիս կոչեցելոյ վեց դանկն, այլ և Կոխդ գեօղի երեք դանկն տան սոյնոյ վանքիս։ Որոց ի հարկէ գիր լեալ է, սակայն թէ ո՞ւր է, ոչ գիտացաք» («Ջամբռ», էջ 277—278)։

Վավերագիր 17. Այս կալվածագիրն ու նվիրման արձանագրությունը (وقفنامه و قباله — ղաբալե և վակֆնամե) էջմիածնի դիվանական նյութերից չէ, այլ մասնավոր անձից ձեռք է բերվել և գրանցվել է Կաթողիկոսական դիվանում 1956 թվականին: Վավերագիրը չափազանց լավ է պահպանված, և չնայած որ գրված է բավական վարժ շիքաստե-նասթա'լիկ գրությամբ և կետերի հազվադեպ օգտագործմամբ, սակայն բնագիրն ամբողջությամբ վերծանելի է, իսկ կնիքները մեծ մասամբ պարզ ու ընթեռնելի:

Իր տեսակի մեջ սույն «ղաբալե-վակֆնամեն» որոշակի կերպով զանազանվում է ներկա հատորի մյուս կալվածագրերից, պարունակելով այնպիսի մանրամասնություններ, որոնք նոր լույս են սփռում առանձին հողակտորների կամ «մաղրանների» սեփականության իրավունքի և նրանց առանձին մասերով օտարման հնարավորության հարցի վրա: Այն միաժամանակ հետաքրքիր է Սեֆեվիների Արդաբիլում ապրող սերունդների, նրանց հողատիրական կարողությունների և հատկապես մեծ սրբավայր Շեյխ Սաֆիի դամբարանի ու մզկիթի վակֆային կալվածատիրության, ինչպես նաև այդ կալվածներից ստացվող եկամուտների տնօրինության (تولیت թավալլիյյաթ, կամ سر کار آستانه — սարքար-ե ասթանե) ուսումնասիրության համար: Այս առումով ուշադրության արժանի են հատկապես երկրորդ էջի համառոտ վակֆային արձանագրությունն ու նույն էջի վրա մզկիթի տնտեսական գործերի վարչության առանձին պաշտոնյաների կամ վերակացուների կողմից կատարված մակագրությունները, որոնց մեջ առկա են իր ժամանակի որոշ տնտեսական և ֆինանսա-հաշվապահական տերմիններ:

Վավերագիր 18. Կալվածագիրը թեև մասամբ վնասված է, սակայն հետազոտում նորոգված է և փակցրած սպիտակ, հասարակ թղթի վրա: Բնագիրը ամբողջությամբ ընթեռնելի է, գրված է ոչ այնքան վարժ շիքաստե-նասթա'լիկ գրությամբ, ուղղագրական և քերականական սխալներով (صحیفه واسیقه. مسجیله և այլն):

Այս վավերագիրը ժամանակակից է Տաթևի վանքապատկան Խոտ, Շնհեր և Հալիձոր գյուղերի ընդհանուր սահմանների հաստատման կալվածագրին (վավ. 3): Շարադրման ձևը, սկիզբն ու վերջավորությունը նման են նաև XVI դարի երկու այլ կալվածագրերի (վավ. 11 և 13), որոնք բոլորն էլ կազմված են բանակատեղի դատավորների ատյանում» (دار القضاء معسکر ظفر اثر): Կալվածագիրը կազմող գրագրի կնիքի և այլ կնիքների մասին տե՛ս վավ. 3-ի ծանոթագրությունը:

Այս կալվածագրի վրա ևս, ինչպես 1506 թ. Դարաշամբի Դիրքյանդի գյուղի կալվածագրի վրա (վավ. 13), կա վեզիր Միրզա-Աֆաուլլայի կողմից 1557 թ. կատարված մակագրությունը, նույն թվականին հրապարակված թագավորական հրովարտակի հիման վրա, երկրում անցկացված բոլոր կալվածների և մուլքերի ընդհանուր սուրհանդման ժամանակ հաստատված, Տաթևի վանքապատկան կալվածների սեփականության օրինականության մասին: Միրզա-Աֆաուլլայի միջոցով կատարված այս սուրհանդների վերաբերյալ երեք վավերագիր է պահպանված, որոնցից երկուսը, ինչպես ասվեց, մակագրություններ են Դարաշամբի հիշյալ և Տաթևի սույն կալվածագրի վրա, իսկ երրորդը ներկա հատորի № 19 վավերագիրն է՝ Տաթևի վանքապատկան կալվածների սուրհանդման արձանագրության շարիաթական պատճենը:

Այս արձանագրությունները առանձնապես հետաքրքիր են այնտեղ հիշատակված հողային սեփականության տարբեր ձևերի և ֆեոդալական մուսուլմանական ինստիտուտների մասին տվյալներով և որոշ տերմիններով, որոնք մենք փորձել ենք բացատրել հատորիս առաջաբանում և տերմինաբանական բառարանում:

Այս կալվածագրից XVII դարում հանված է մի բավական անգրագետ շարիաթական պատճեն, որի միայն սկզբի մասն է պահպանվել և այժմ գրանցված է Կաթողիկոսական դիվանի 2ա թղթապանակում, 17բ համարի տակ: Պատճենի հարազատությունը հաստատված է հետևյալ մակագրությամբ. «سواد مطابق الاصل است — Պատճենը համապատասխանում է բնագրին և բնագիրը գտնվում է Ղափանաթի Տաթևի վանքի Հովհաննես վարդապետի մոտ»: Կնիքի վրա՝ المتوکل علی الله الباری عبده اسمعیل بن محمد الانصاری — Ողորմած աստծուն ապավինած, նրա ծառան Մուհամմադ Անսարիի որդի Իսմայիլ»:

Պատճենը ստացող Հովհաննես վարդապետը Տաթևի վանահայր Հովհաննես Շաբանօղլին է, որ Տաթևում հովվել է բավական երկար ժամանակ: Նրա վանահայրության ժամանակից պահպանվել են մեծ թվով հրովարտակներ և կալվածագրեր, որոնք վերաբերում են Տաթևի վանքի վակֆային կալվածների նկատմամբ գրսևորված ոտնձգություններին և կալվածները հափշտակումից փրկելու ու հայ համայնքի իրավունքների պաշտպանության ուղղությամբ Հովհաննես վարդապետի ծավալած ակտիվ գործունեությանը:

Վավերագիր 19. Արձանագրությունը կազմված է 1558 թ. անցկացված ընդհանուր ստուգումների ժամանակ (տե՛ս վավ. 13 և 18-ի ծանոթագր.) Բնագրից հանված այս պատճենը վերաբերում է XVII դարի երկրորդ կեսին. պատճենի հարազատությունը հաստատող կնիքի վրա կա հիջր. 1072 թվականը (1661—1662 թթ.)։ Թեև գրությունը պարզ է և ամբողջությամբ վերծանելի, սակայն ունի որոշ անհասկանալի բառեր և անծանոթ տերմիններ։

Պատճենը գտնվում է Տաթևի վանքապատկան գյուղերի վակֆային սեփականություն լինելը հաստատող 1662—1663 թթ. Շահ Աբբաս Բ-ի հրովարտակի պատճենի հակառակ էջում, որի բնագիրը վերջից թերի է. պոկված է թղթի ներքին մասը։ Լրիվ բնագիրը պահպանվել է մի այլ պատճենով (թղթ. 2ա, վավ. 23բ)։

Սույն արձանագրության և մյուս էջի հրովարտակի պատճենները հանված են միաժամանակ, նույն գրչի ձեռքով, Հովհաննես վարդապետ Շաբանօղլու օրոք (տե՛ս վավ. 18-ի ծանոթագր.)։ Վավերագրի լուսանցքում են բազմաթիվ մակագրություններ, որոնց մի մասը վերաբերում են սույն արձանագրությանը, իսկ մյուսները հակառակ երեսի հրովարտակի բնագրի հաստատման և դիվանական մատյաններում գրանցված լինելու մասին վկայող մակագրությունների պատճեններն են։

Լուսանցքում և թղթի ներքևի մասում կան հարկային-ֆինանսական պաշտոնյաների կողմից կատարված ստուգումների մասին մակագրությունների և համառոտ զեկուցագրերի պատճեններ, որոնք նույնպես վերաբերում են XVII դարին։

Հովհաննես վարդապետ Շաբանօղլին 1662—1663 թթ. բողոք է ներկայացրել Շահ Աբբաս Բ-ին, որին կցել է նաև Շահ Թահմազի օրոք կազմված 1558 թ. այս արձանագրության պատճենը։ Տեղում կատարված ստուգումներից հետո, որոնց արդյունքների մասին զեկուցված է նույն վավերագրի վրա կատարված մակագրություններով, Շահը տվել է բնագրի հակառակ էջում պատճենահանված հրովարտակը։ Հետագայում ծագած նոր վեճերի ու ոտնձգությունների կապակցությամբ Հովհաննես վարդապետը ստիպված է եղել այդ բոլորի պատճենը հանել տալ մի թղթի վրա և ներկայացնել, վանքի կալվածները Բուրթելլուների և այլոց ոտնձգություններից պաշտպանելու համար։ Դրա մասին է խոսում վավերագրի լուսանցքում կատարված հիջր. 1077 (1666) թ. մակագրությունը, որտեղ ասված է «ինչ կարգով, որ նախկին բեկլարբեկին և նորին սրբություն Աղերբայջանի փառապանծ վեզիրը հաստատել ու թույլատրել են, այնպես վարվեն, խախտում թույլ չտան և իրենց պարտականությունը համարեն»։

Ահա այդ բոլոր գրությունների ամբողջական պատճենն է այս վավերագիրը, որի թղթի ներքին հատվածի կորստյան հետևանքով չկա հրովարտակի վերջավորությունը և ստուգումների կապակցությամբ կատարված մակագրությունների մի մասը։

Վավերագրի վերին աջ անկյունում կատարված հայերեն մակագրությունը՝ «Միրզա Իպրահիմին **սանատին սաւատն է**», վկայում է, որ գրությունը ժամանակին ներկայացվել է Ադերբայջանի վեզիր Միրզա-Իբրահիմին ի հաստատություն։ Ադերբայջանի վեզիրը Սեֆյան Իրանի հյուսիս-արևմտյան նահանգների ֆինանսական-վարչական գործերի ընդհանուր տնօրենն էր (տե՛ս վավ. 4-ի ծանոթագրությունը)։ Ջաքարիա Ագուլեցու վկայությամբ Միրզա-Իբրահիմը այդ պաշտոնում եղել է մինչև XVII դարի 70-ական թվականները (Օրագրություն, Երևան, 1938, էջ 111—112)։

Վավերագիր 20. Կալվածագիրը մեզ է հասել ոչ-շարիաթական, անվավեր պատճենով։ Ընդօրինակությունը կատարված է խնամքով, պահպանելով գրության ձևն ու չափը։ Պատճենահանված են նաև լուսանցքի վկայություններն ու հաստատող կնիքները։ Սակայն կան առանձին բառերի և հատուկ անունների աղավաղումներ։ Բացահայտ ուղղագրական և ոճական սխալները ուղղված են վերծանության մեջ։ Ինչպես վավերագրի թվականը, որտեղ միավոր, տասնավոր և հարյուրավոր թվերի արանքում կետեր են դրված — «٩٠٨٠١», որ անշուշտ հետևանք է ընդօրինակողի անգրագիտության։ Պետք է ուղղել և կարդալ «981»։

Պատճենում աղավաղված է նաև վաճառվող գյուղի անունը, որը հիշված է երեք տեղ خزار. خزار կամ خزاز, ինչպես նաև كوه خزر ձևերով։ Այս անունով գյուղ չի հիշատակված Մ. Բարխուդարյանի «Արցախում»։ Սակայն ներկայիս Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանում կա «Խազազ» անունով լեռ, որի վրա է գտնվել ներկա վավերագրի նույնանուն գյուղի սահմանագլխի անտառը։ Պետք է ենթադրել ուրեմն, որ գյուղը տեղադրված է եղել այդ, ներկայումս էլ անտառապատ լեռան ստորոտում։

Կալվածագրում որպես օտարող և գնող կողմեր հանդես եկողները, ինչպես նաև բնագրի լուսանցքում իրենց վկայությունն ու կնիքները դրած անձինք, Դաշտային Ղարաբաղի օթուզիքի (երեսուներկու) կոչվող մեծ ցեղային միավորման մեջ մտնող ֆախրադդինլու, դիաալու, դիվանլու, և այլ ցեղերից են, որոնք հաստատվել էին

այստեղ XVI դարի սկզբներից։ Նրանց անունով էլ Բարդայի շրջանը և նրանից հարավ մինչև Արաքսի ափը տարածվող երկրամասը կոչվում էր «Օթուզիքի» (И. П. Петрушевский, Очерки... էջ 136, համմտ. ԹԱԱ, էջ 857)։

Վավերագիր 21. Գրված է սովար, ամուր թղթի վրա, մուգ սև թանաքով, պարզ ու ընթեռնելի նասխ գրությամբ։ Բնագիրը անվնաս է և ամբողջությամբ վերծանելի։ Շար՛ի գրասենյակի քարտուղար Մուհամմադ-Շարիֆի կնիքով երկու տեղ կնքված է թղթի միացման վայրը։

Հակառակ էջում, հավանաբար Սիմեոն Երևանցու ձեռքով մակագրված է. «Հովհաննավանքի վեց **դանկ մուլքն** երեք եղբարք թուրք վաճառեալ են հայոյ միոյ»։

Հովհաննավանք գյուղի և Արտենկին ագարակի մուլքերը վաճառողները XV դարում Արարատյան երկրում հաստատված թուրքմենական «Սա՛դլու» ցեղի ամիրների հետնորդներից են։ Նրանք այդպես էին կոչվում XIV դարի վերջերին և XV դարի սկզբներին Արարատյան երկրում իշխող Ամիր Սա՛դի անունով։ Սրա որդիներն ու թոռները երկար ժամանակ շարունակում էին տիրել Արարատյան երկրին, որ հետո Ամիր Սա՛դի անունով սկսեց անվանվել Ջուխուր-Սա՛դ (հայկ. աղբյուրներում «Սահաթա փոս»)։

Սա՛դլուները Արարատյան երկրում և հատկապես Արագածոտնում ու Կոտայքում մեծ թվով մուլքային գյուղեր և ագարակներ ունեին։ Նրանց անունները հաճախ են հիշվում XVI—XVII դդ. կալվածագրերում։

Կալվածագրի լուսանցքում սույն վաճառքի օրինականությունը վկայող Կորխմազ բեկի որդիներ Ղայիթմիշ բեկն ու Ամիր Ասլան բեկը նույնպես Սա՛դլուներ են, որոնք մեծ քանակությամբ մուլքեր ունեին Արարատյան երկրի հիշյալ գավառներում։ Կաթողիկոսական դիվանում պահպանվել են հիշյալ Ղայիթմիշ բեկի մուլքերի հիջր. 1031 թ. (1621—1622), իր մահվանից հետո նրա որդիների և թոռների միջև բաժանելուն վերաբերող վավերագրեր (թղթ. 1ա, վավ. 45 և 46, տե՛ս Առաջաբան, էջ 36), ինչպես նաև նույն թվականին գրված մի կալվածագիր, որով Ղայիթմիշ բեկի որդի Ալի բեկը Ուշքիլիսա (Վաղարշապատ) գյուղի մուլքերից կես դանգ վաճառում է Իմամկուլի բեկ Սա՛դլուի որդի Նաֆաս-սուլթանին (թղթ. 1ա, վավ 43)։

Վավերագիր 22 — Կալվածագիրը պատկանում է Ագուլիսի Թովմա առաքյալի վանքի վավերագրերի խմբին, գրված է մուգ սև թանաքով, ամուր, սպիտակ թղթի վրա, պարզ նասխ գրությամբ, բնագիրը ամբողջությամբ վերծանելի է։ Թղթի միացման տեղը կնքված է Շար՛ի սպասավոր Շահմիրի որդի Խալիլուլլայի և մի այլ անընթեռնելի կնիքով։

Վանանդի ձորում գտնվող մի քանի այլ գյուղերի և ագարակների մուլքերի հետ Բերդակի մուլքը ևս XVI դարի սկզբներում պատկանել է խոջա Ֆաթհի-բեկ Թուսիին, որի ժառանգները տիրել են այնտեղ մինչև XVII դարի վերջերը (տե՛ս վավ. 11-ի ծանոթագրությունը)։ Վաճառվող հողակտորների սահմանների նկարագրությունից երևում է, որ դրանք գտնվել են Բերդակ և Սալ գյուղերի սահմանագլխում։ Հողերը նախապես պատկանել են օրդուբադցի Նուրաբշախին, որը վաճառել է ագուլեցի քյադխուդա Քիշմիրի (կամ Քիշմիրի) որդի Հովհաննեսին։ Վաբելահողերը անկասկած ոռոգվող հողեր են եղել, որոնք թեև գտնվում էին գյուղի ընդհանուր մշակելի տարածության մեջ, սակայն հանդիսանում էին ժառանգական մուլքեր և ենթարկվում էին օտարման։

Այս հողերը հավանաբար հետագայում նվիրվել կամ վակֆ են արվել Ագուլիսի Թովմա առաքյալի վանքին, որոնց վերաբերող այս հին կալվածագիրը պահպանվել է վանքի դիվանում։ Վանանդի ձորում գտնվող գյուղերի մեծ մասում Թովմա Առաքյալի վանքը բավական շատ հողեր և այգիներ ուներ, որոնց մասին հիշատակվում է XVI—XVII դդ. հրովարտակներում (տե՛ս Հրովարտակներ, հ. I, վավ. 20, հ. II, վավ. 4 և 6, տե՛ս նաև Մատենադարան, ԿԹղկ. դիվան, թղթ. 1ա, վավ. 99, թղթ. 1բ, վավ. 171, 202)։

Վավերագիր 23. Գրված է հասարակ գորշ թղթի վրա, պարզ և ընթեռնելի նասխ գրությամբ, Շար՛ի պաշտոնյա Մուհամմադ-Շարիֆի ձեռքով, որը գրել է նաև 1574 թ. Հովհաննավանքի կալվածագիրը (վավ. 21)։ Նրա կնիքները, սակայն, այս երկու վավերագրերում իրար նման չեն։

Վավերագրի հակառակ երեսի վրա մանր նոտր գրով մակագրված է. «Դիպակլուի **շէշդանկ մուլքն**, դուլլահասարլու Վալի **աղի** որդի Մուհամմադ **աղայն** և Ահմադ **աղայն** ծախեն է (7) **թումանով** Ալիփաւուդի **խալիֆայ** Խալիլի որդի Իբրահիմ **խալիֆային**, որոյ կողմունքն են՝ Արմուտ Աղաճին, Իլանլուն, Ղուզուլու Դարայն և Սեքարն։ Ի թուին տաճկաց ՋՂԲ (983 = 1575)»։ Այս անոտացիան համարյա նույնությամբ կրկնված է «Ջամբռի» ԺԲ գլխում։ Այստեղ պարզվում է, որ XVII դարից պահպանված այս գյուղին վերաբերող այլ վավերագրեր էլ են եղել վանքի դիվանում, որոնց մեջ այլ

գյուղերի հետ միասին վերահաստատվել են էջմիածնի իրավունքները այդ գյուղի նկատմամբ (տե՛ս «Ջամբռ», էջ 119, հմմտ. նաև էջ 263)։

Կալվածագրում վաճառվող գյուղը անվանված է «Դիբաքի» և գրված ոչ ճիշտ ուղղագրությամբ՝ «بكى جي»։ Հայերեն մակագրության մեջ, ինչպես նաև «Ջամբռում» գյուղը կոչվում է «Դիբաքլու»։ Անվան հիմքում «դիբակ» բառն է, պարսկերեն «ի» և թուրքերեն «լու» վերջավորությունները նույն իմաստն ունեն և որևէ գոյականի վերջից միանալով տեղանվան իմաստ են տալիս նրան։ Այստեղ գրիչը փորձել է գրականացնել «Դիբակլու» թուրքական անունը և թուրքական «լու» մասնիկը փոխարինել է պարսկական «ի» մասնիկով։ Գյուղի հայկական անունն է «Սանտ». «Դիպակլու կոչեցեալ գեղջն, որ է յԵրևան, յԱպարանու նահիէն, որ հայերէն Սանտ կոչի»,— գրում է Սիմեոն Երևանցին (տե՛ս «Ջամբռ», էջ 119 և 263)։

Ըստ նույն աղբյուրի գյուղը XVIII դարի 80-ական թվականներին շեն է եղել, սակայն XIX դարի սկզբներին այն լքվել է ու ամայացել։ Այդ գյուղի մասին ոչ մի հիշատակություն չկա Ի. Շոպենի «Исторический памятник состояния Армянской области» աշխատության մեջ։ Ալիշանը հիշում է միայն, որ «ի բարձրագոյն ևս կողս լերինն այնորիկ (Արայի լեռ — Հ. Փ.) կայ գիւղ մի ամայի՝ Տիպախլու անուն» («Այրարատ», էջ 252)։

Ինչպես վաճառող և գնող կողմերը, այնպես նաև կալվածագրի վերջում և լուսանցքում վկայությամբ հանդես եկող անձնավորությունները, մեծ մասամբ Արարատյան երկրում հաստատված կղզւբաշ ցեղերի մեջ մտնող մանր ցեղային միավորումների իշխող դասի ներկայացուցիչներից են։ Բացի սա՛դուններից (որոնց մասին տե՛ս վավ. 21-ի ծանոթագրությունը), այստեղ հիշված են կոյլահիսարլու, ալփավութ, խնուսլու և բայբուրդլու ցեղերին (այմաղներ) պատկանող մարդկանց անուններ։ Վ. Ֆ. Մինորսկին հենվելով Խաքանդար Մունշու վրա Թազքիրաթ-ալ-Մուլուքի առաջաբանում կոյլահիսարլուներին համարում է խալիբլու և ռումլու ցեղերին ենթակա ցեղախումբ, իսկ ալփավութցիներին և բայբուրդլուներին անկախ ցեղային միավորներ (Tadhkirat al-mulūk, էջ 16)։ Որ վկայությամբ հանդես եկող անձինք հիշյալ ցեղերի ունևոր և իշխող դասի ներկայացուցիչներից են, այդ երևում է նրանց անուններին կցված «աղա» և «խալիֆե» տիտղոսներից։

Վավերագիր 24. Շահ Իսմայիլ Բ-ի կարճատև թագավորության շրջանից (1576—1577 թթ.) պահպանված այս կալվածագիրը կարևոր է, որպես թագավորական խասսերին պատկանող կալվածների օտարման և անհատ կալվածատերերի սեփականությունները դառնալուց հետո, նրանց մուլքային սեփականատիրական իրավունքները նույն գյուղի ռայաթների կողմից ետգնման մանրամասնությունները պարունակող արժեքավոր սկզբնաղբյուր։

Վավերագիրը գրված է գեղեցիկ նասխ գրով, մուգ սև թանաքով, բարձրորակ սուվար թղթի վրա։ Ղուրանից բերված որոշ հատվածներ և այլ կրոնական արտահայտություններ, ինչպես նաև թագավորի անունն ու տիտղոսները գրված են ոսկեգույն կամ կարմիր թանաքով։ Կալվածագրի ճակատում կա զարդանկար խորան։ Բնագիրը երկու կողմից՝ վերից վար ունի ոսկեգույն, կարմիր, կանաչ և կապույտ գծերով սահմանազատված լուսանցքներ։ Ամբողջ վավերագիրը ժամանակին նորոգվել է և շրեշտով փակցվել նախապես կապտավուն թղթերի և ապա վուշե նուրբ կտորի վրա։ Որպես կարկատան օգտագործված կապույտ թղթերի վրա կան հայերեն գրության հետքեր։ Նորոգումը կատարված է անփույթ, վնասված են բնագրի որոշ մասեր և ջնջված առանձին բառեր։

Բնագրի որոշ մասեր, սակայն, միտումնավոր են ջնջված։ Այսպես, շրեշտով ջնջված է բնագրի սկզբում ոսկեգույն թանաքով գրված Շահ Իսմայիլի ամբողջ տիտղոսը։ Անվնաս է մնացել միայն اسمعيل (Իսմայիլ) անունը։ Նույն ձևով ջնջված են ոսկեգույն թանաքով գրված մի քանի այլ հատվածներ։ Իսկ տեքստի 19-րդ տողը, որտեղ ըստ շարադրանքի հաջորդականության պետք է հիշատակվեր Շահ Իսմայիլի անունը, ամբողջությամբ կտրված, հանված է։ Համապատասխան տեղում լուսանցքից հանված են նաև նրա հասցեին ուղղված օրհնանքի խոսքերը։ Նորոգության ժամանակ վավերագրի այդ մասում թղթի ծայրերը իրար մոտ են բերված և փակցված կտորի վրա։

Դժվար չէ նկատել, որ այդ ջնջումների և վավերագրի «վիրահատման» նպատակն է եղել նրա միջից վերացնել Շահ Իսմայիլ Բ-ի անունը, որի թագադրության օրը, ինչպես այդ մասին նշված է կալվածագրում, տեղի է ունեցել այս վաճառքը և կազմվել սույն արձանագրությունը։ Եվ իրոք, կալվածագրի թվականը՝ հիջր. 984 թ. ջումադի I ամսի 27-ը (1576 թ. օգոստոս 22) համապատասխանում է Շահ Իսմայիլ Բ-ի թագադրության օրվան (ԹԱԱ, հ. I, էջ 201, հմմտ. E. de Zambaur, էջ 261)։

Շահ Թահմազը թագավորեց 54 տարի և մեռավ 1576 թ. 64 տարեկան հասակում: Նրա ավագ որդին՝ Սուլթան Մուհամմադ-Միրզան էր, որ զրկված էր տեսողությունից: Տարիքով հաջորդը Սուլթան Իսմայիլ Միրզան էր, որ իր ըմբոստ և անհնազանդ վարքի համար հոր հրամանով բանտարկված էր Կահկահա բերդում: Երբ Թահմազի առողջական վիճակը անհուսալի էր արդեն, կըզըլբաշ մեծամեծների մեջ վեճ էր սկսվել գահի թեկնածուի շուրջ: Մեծամասնությունը առաջ էր քաշում Իսմայիլի թեկնածությունը: Էմիրների առաջարկով Իսմայիլին շտապ բերեցին Ղազվին: Թահմազի մահվանից անմիջապես հետո նշված թվականին նա գահ բարձրացավ և կարճ ժամանակում ոչնչացրեց իր հինգ եղբայրներին, որը և ծանր տպավորություն գործեց և դժգոհություններ առաջացրեց կըզըլբաշ ավագանու շարքերում: Շուտով Իսմայիլը սկսեց հակադրվել նաև շիա հոգևորականությանը և վիճել նրանց հետ, դավանաբանական հարցերում պաշտպանելով սուննիների սկզբունքները և ապա պաշտոնապես դատապարտեց ու արգելեց ստորացուցիչ արտահայտությունները սուննիների հասցեին: Հակասությունները գնալով սրվեցին և ավարտվեցին միայն Իսմայիլի իր իսկ ննջարանում տեղի ունեցած խորհրդավոր խեղդամահությամբ (1577 թ. նոյեմբեր 24. տե՛ս ԹԱԱ, հ. I, էջ 218):

Իսքանդար Մունշին մոայլ գույներով է նկարագրում Իսմայիլի թագավորության կարճատև շրջանը, չթաքցնելով իր հակակրանքը, որպես սեֆյանների գահին անարժան անձնավորության: Այդ ընդհանուր դժգոհություններին որպես հետևանք և հատկապես կրոնական հարցերում ցուցաբերած շիաների տեսակետից «հերձվածողական» վարքագծի համար էր, որ նրա մահվանից հետո հատկապես, ինչպես բոլոր բռնակալների նկատմամբ, ավելի բուռն կերպով արտահայտվեց տիրող վերնախավի և բարձրաստիճան հոգևորականության ժխտական վերաբերմունքը Իսմայիլի հանդեպ: Այդ վերաբերմունքի որոշակի արտահայտության մասին են վկայում սույն կալվածագրում կատարված ջնջումներն ու Իսմայիլի անունը այնտեղից վերացնելու փորձերը:

Կալվածագրի գրագետ շարադրանքը, գեղեցիկ գրությունն ու արտաքին շքեղ տեսքը, ինքնին ապացույց է այն բանի, որ այն տեղական շարիաթական գրասենյակներում չի շարադրված: Այն հանգամանքը, որ վավերագրում շեշտված է, որ վաճառքը կատարված է Շահ Իսմայիլի թագադրության օրը և վերջում նշված է այդ թվականը (984 թ. ջումադի I, 27), նույնպես ենթադրել է տալիս, որ

վաճառքը կատարվել է այն վայրում, որտեղ տեղի է ունեցել գահակալությունը (جلوس): Իսկ դա կարող էր լինել միայն այն ժամանակվա սեֆյան շահերի մայրաքաղաք Ղազվինը:

Նոր մահմեդականություն ընդունած ջուղայեցի Մուրադ բեկը ըստ երևույթին իրոք ճանաչված անձնավորություն է եղել, ինչպես այդ մասին շեշտված է կալվածագրում (مشهور بين الجمهور), որ ժամանակին անձամբ Մեղրին գնել է Շահ Թահմազից և նրա մահվան, ինչպես նաև որդու՝ Իսմայիլ Միրզայի թագավորության ժամանակ, գտնվել է Ղազվինում:

Թեև այս կալվածագրով Մեղրիի համայնքը կարողացել է նախկինում արքունիքին, ավելի ճիշտ «խասսե-յի շարիֆե»-ին պատկանող գյուղի մուլքային սեփականության իրավունքը ետ գնել Մուրադ բեկից և դառնալ ազատ գյուղական համայնք, սակայն ինչպես երևում է այդ վիճակը երկար չի տևել. XVII դարի աղբյուրներում Մեղրին նորից հիշվում է թագավորական խասերի շարքում (Ադուլեցի, էջ 112, 134):

Կալվածագրի տվյալներով հնարավոր է պարզել, թե ինչ քանակությամբ արծաթ է վճարել Մեղրիի համայնքը իր գյուղի մուլքի կալվածատիրական իրավունքը ետ գնելու համար: Կալվածագրում ասված է, որ վճարված գումարի յուրաքանչյուր 80 դինարը կշռում էր մեկ «սառաֆի մսխալ»: Այդ հաշվով ուրեմն 316 թումանը (յուրաքանչյուր թուման 10 000 դինար) կշռել է 39500 մսխալ: Աղբյուրներից պարզվում է, որ երկու տարբեր քաշերի մսխալներ են եղել: XVII դ. նորջուղայեցի վաճառական Հովհաննեսը իր «Հաշվեմատյանում» դրանցից մեկը անվանում է «պարսկական մսխալ», իսկ մյուսը «գաթուրի մսխալ»: Պախոմովի դրամագիտական աշխատությունների հիման վրա Լ. Խաչիկյանը ճշտել է, որ «պարսկական մսխալի» կշռորդը 4,72 գրամ է, իսկ «գաթուրի մսխալինը» 3,78 գրամ (L. Khatchikian, Le registre d'un marchante armenien en Perse, en Inde et au Tibet, „Anuales economies Sociétés Civilisations, 1967, № 2, էջ 271): Մեղրի գյուղի մի այլ կալվածագրում (վավ. 26), վճարված գումարի յուրաքանչյուր 100 դինարը կշռել է մեկ սովորական մսխալ: Ինչպես տեսնում ենք այստեղ ևս գործ ունենք երկու տարբեր քաշեր ունեցող մսխալների հետ, որոնցից մեկը կոչվում է «մսխալ», իսկ մյուսը՝ «սառաֆի մսխալ», Լ. մեկը մյուսին հարաբերում է այնպես, ինչպես 4-ը 5-ին կամ ինչպես 3,78 գրամը 4,72 գրամին: Այս հաշվով էլ ուրեմն գյուղի մուլքի ետ գնման համար վճարված 316

թումանը, որ ինչպես տեսանք հավասար էր 39500 սառաֆի մսխալի, մետրական հաշվով լինում է 149310 գր. այսինքն մոտ 150 կիլոգրամ։

Ուշագրավ է նաև, որ Մեղրիի բնակչությունը ընդգրկված է եղել երեք՝ Մեծ, Միջին և Փոքր թաղերի առանձին համայնքների մեջ, որոնք առանձին քյադխուդաներ են ունեցել և տնտեսական գործերը վարել են առանձին, արտաքին հարցերում հանդես գալով միասնաբար։ Այդպես է եղել նաև XVII դարում (ժամանակագր. Ստեփ. Օրբելյանի, էջ 41)։ Դա ըստ երևույթին հատուկ է եղել բոլոր մեծ ավաններին, ինչպես նաև քաղաքներին (տե՛ս Հ. Փափազյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1727 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի» № 5)։

Գյուղերի սահմանների նկարագրության մեջ կան որոշ հանդերի, լեռների, ժայռերի և նշանաքարերի անուններ, որոնց արաբատառ գրությունը դժվարացնում է դրանց արտասանության ճշգրտումը։ Տեղում կատարված ստուգումները ևս շոշափելի արդյունք չտվին։ Ուստի դրանց մի մասի արտասանությունը (كوه كازبل. قلعهٔ عرضات. مزرعهٔ كهرام صاحبی) ենթակա է հետագա ճշտման։

Այս և Մեղրիի մյուս կալվածագիրը (վավ. 26) երկուսն էլ կնքված են «Տարազ» հանդեսի կնիքով։ Այդ նշանակում է, որ վավերագրերը նախապես պատկանել են «Տարազի» խմբագիր Տիգրան Նազարյանին։ Հետագայում Տ. Նազարյանը իր ամբողջ գրադարանն ու երկու հանդեսների («Աղբյուր» և «Տարազ») խմբագրությունների արխիվը ուղարկել է Հայաստան (տե՛ս «Տարազ», 1919, № 7), դրանց մեջ են եղել նաև այս վավերագրերը։ Կալվածագրերը կնքված են Հայաստանի «Պետական հանրային գրադարանի» կնիքով։ Սակայն հետո դրանք փոխադրվել են ՀՍՍՀ Գրական թանգարան, որտեղից էլ 1961 թվականին փոխանակվելով այլ նյութերի հետ բերվել են Մատենադարան։

Վավերագիր 25. Գրված է կիսագրագետ ձեռագրով, սովորական սև թանաքով, հասարակ գորշ թղթի վրա, ունի բազմաթիվ ոճական և ուղղագրական սխալներ (قبلی. شرقی. خلفه. مضفات. واصیل. غره ذلك և այլն), սակայն բնագիրը անվնաս է և ամբողջապես վերծանելի։ Ինչպես Շար՝ի պաշտոնյայի, այնպես էլ վկաների կնիքները ոչ գրագետ, գավառական տեսք ունեն։

Վավերագրի մյուս էջում հայերեն մակագրված է. «Սաղմոսավանքի գեղի 2 (6) **դանկ մուլքն** ծախէ Վալի **խալիֆայ** կոչեցեալ, տաճիկ ոմն Ալի **խալիֆայ** կոչեցեալ տաճկի միոյ է (7) թումանի։

Կողմունքն գեղի են, էրզնկան գեղն, Կարփու ձորն, Սարքեօլ, Ղարաղբլ»։ Մյուս ծայրում կան այլ մակագրություններ. «Վասն միոյ **մլքի դապալէն** է», այլ ձեռագրով ավելացրած է «Սաղմոսայվանքիս»։

Խոսելով Սաղմոսավանքին պատկանող մուլքային գյուղերի մասին, Սիմեոն Երևանցին առաջին հերթին հիշում է մերձակա համանուն գյուղը, որն այդ ժամանակ ամբողջությամբ պատկանում էր վանքին։ Սակայն, ինչպես հետո նա ավելացնում է, նրա օրոք վանքում եղել է միայն հիջր. 1042 (1632) թ. մի կալվածագիր, ըստ որի վանքի առաջնորդ Մանվել վարդապետը ոմն Մուրադից և Մարիամից 2 թումանով գնել է այդ գյուղի 1,5 դանգը։ Իսկ մնացյալ 4,5 դանգը, ըստ նույն աղբյուրի, իբր վանքին վակֆ է արված եղել «ի բնէ անտի» («Ջամբռ», էջ 289)։ Այդ կալվածագրի մի պատճենը ներկայումս պահվում է Կաթողիկոսական դիվանի «1ղ» թղթապանակում, 909 համարի տակ։

Ըստ Շահ Աբբաս Ա-ի 1604 թ. հրովարտակի, Սաղմոսավանքի գյուղի 3 դանգը, այսինքն կեսը, այդ թվականին պատկանել է ոմն Քեջավոնի դուստր Վախախի (Հրովարտակներ, II, էջ 81—82)։ Պետք է ենթադրել, որ գյուղի մյուս մասերն էլ պատկանել են նույն ընտանիքի այլ անդամներին (որոնց սերունդներից են նաև վերոհիշյալ 1632 թ. կալվածագրում հանդես եկող Մուրադն ու Մարիամը)։ Նվիրատվությունը կատարվել է XVII դարի առաջին քառորդում, իսկ մնացյալ 1,5 դանգի գնումից հետո գյուղն ամբողջությամբ արդեն պատկանել է վանքին, որի մասին և արձանագրում է Սիմեոն Երևանցին։

Սխալ թվականի տակ, Շահ Աբբասի վերոհիշյալ հրովարտակի հետ միասին, Սիմեոն կաթողիկոսը հիշում է նաև Սաղմոսավանք գյուղի ամբողջ մուլքին վերաբերող 1581 թ. սույն կալվածագիրը. «Գոն ևս վասն սոյն գեղջս հին ղապալայ մի ի ՄՁԹ (պետք է լինի ՋՁԹ) թուին տաճկաց գրեցեալ և ոաղամ մի ևս ի մեծ Շահապասէն ի ՌԺԹ թուին տաճկաց գրեցեալ վասն երեք դանկին սոյն գեղջս»,— գրում է նա (նույն տեղում, տե՛ս նաև Հրովարտակներ, II, էջ 152)։

Կալվածագրում որպես վաճառող և գնող կողմեր հանդես եկող Ալի և Վալի խալիֆաները, ինչպես նաև վկաներից Մուհամմադ-Միրզան կրղրլբաշ ալփավութ ցեղից են, վկաների մեջ են, սակայն, բայրուրդլուներ և սա՛ղլուներ։ Վերջիններիս մասին տե՛ս վավերա-

գիր 21-ի, իսկ ալփավութիների ու բայրուրդուների մասին տե՛ս վավ. 22-ի ծանոթագրությունները։

Վավերագիր 26. Մեղրիի ազատ համայնքին վերաբերող այս երկրորդ կալվածագիրը իր գրության ձևով և այլ արտաքին հատկանիշներով հիշեցնում է XV դարի 30—50-ական թվականներին նախաձեռնում գրի առնված կալվածագրերը (վավ. 4, 7)։ Գրված է մուգ, սև թանաքով, սովորական թղթի վրա, գրագետ, ընթեռնելի ձեռագրով, առանց ուղղագրական և ոճական կոպիտ սխալների։ Վավերագիրը ժամանակին նորոգվել է և փակցվել սպիտակ, ամուր թղթի վրա։ Կալվածագիրը գրի առնող Շար՛ի գրասենյակի քարտուղարի հաստատող մակագրությունը, որ կատարված է վավերագրի վերին ձախ անկյունում, խիստ վնասված է։ Անվնաս են մնացել միայն տողերի սկզբնամասերը և կնիքի ներքևի մասը։ Այս կնիքով թեև չորս տեղ կնքված է թղթի երեք կտորների միացման վայրերը, սակայն վավերագրի մաշվածությունն ու կնիքի բարդ մակագրությունը դժվարացնում է նրա բովանդակության վերծանությունը, հետևաբար և քարտուղարի անվան ճշտումը։

Վավերագիրը նախապես պատկանել է «Տարազ» ամսագրի խմբագիր Տիգրան Նազարյանին։ Նրա վրա առկա են «Տարազի» խմբագրության և Հայաստանի «Պետական հանրային գրադարանի» կնիքները։ Այս, ինչպես Մեղրիի մյուս կալվածագիրը (վավ. 24) Տ. Նազարյանի ամբողջ արխիվի հետ ժամանակին նվիրվել է Հայաստանի պետական գրադարանին (տե՛ս վավ. 24-ի ծանոթագրությունը)։

Կալվածագրում հիշված Սևադան գյուղը, որի սահմաններում գտնվող Քիլվաքաշի կոչվող արոտավայրը գյուղական համայնքը վաճառում է Մեղրիի համայնքին, Ղ. Ալիշանի «Սիսականում» հիշատակված է որպես դեպի Մեղրի հոսող վտակներից մեկի վրա գտնվող «աւերակ գեօղ մի Սեւատան անուն», որը նա նույնացնում է Տաթևի նոր ցուցակում հիշված «Սևատար»-ի հետ (էջ 305)։ Տաթևի թեմից գանձվող «պտուղ»-ին վերաբերող XVII դարի մի այլ ցուցակում կաթավաբերդի, այսինքն Մեղրու գավառում հիշված է «Սևադարայ» գյուղը (Ժամանակագրութ. Սա. Օրբելյանի, էջ 41)։ Այն փաստը սակայն, որ XX դարի սկզբին Մեղրու մերձակայքում գտնվող ավերակ գյուղը անվանվում է ճիշտ այնպես, ինչպես 1587 թ. գրված կալվածագրում, կասկածի տակ է դնում այն «Սևադար»-ի կամ «Սևադարայ»-ի հետ նույնացնելու գաղափարը։ Գյուղը թեև ավերակ, պահպանել է իր ճիշտ անունը, այնինչ Տաթևի վիճակին

ենթակա «Սևադար» կամ «Սևադարայ» գյուղի տեղը չի ճշտված և XX դարի սկզբին այդ անունով գյուղ չի հիշատակվում Մեղրու մերձակայքում։

Որ Սևադան գյուղը իրոք սահմանակից է եղել Մեղրու հետ, այդ երևում է նաև հիշյալ Քիլվաքաշի կոչվող արոտավայրի սահմանների նկարագրությունից, ըստ որի վաճառվող արոտավայրի սահմանն անցնում էր դեպի Մեղրի տանող գլխավոր ճանապարհով և «բերդի» ձորով ու նույն «բերդի» աղբյուրի մոտով, որ հավանաբար Մեղրու բերդն է եղել։

Արոտավայրի սահմանները բավական պարզ են նկարագրված. տեղանունները հեշտ վերծանելի են ու հասկանալի (پالوده درق. آب ریز چشمه، درق قلعه. جبل سرخ և այլն)։ Իսկ Սևադան և Մեղրի գյուղերի համայնքների ներկայացուցիչների անունները, թեև նույնպես բավական պարզ են գրված, սակայն դրանց մեջ կան անհասկանալի անուններ (عیودیار. آهی. دیوان ایناج. جبر. پیر خیار. هیجان)։ Այստեղ ևս, որպես գնող կողմ հանդես եկող Մեղրիի բնակիչները ներկայացնում են երեք թաղերի առանձին համայնքները (տե՛ս վավ. 24-ի ծանոթագր.)։

Վկաների անունները մեծ մասամբ ավելի ծանոթ են։ Իհարկե, ինչպես միշտ, մուսուլմանների անունները ավելի պարզ են։ Ե՛վ մուսուլման և՛ քրիստոնյա վկաների ծագումը (որտեղացի լինելը) ցույց տվող տեղանունների մեջ ևս կան անծանոթ վայրեր (ایکسیونی. کوروشی. کراوی)։ Քրիստոնյա վկաներից երկուսը կոչված են «վուշունբարցի» (وجنباری)։ Պարսիկները «վուշունբար» կամ «մուշունբար» էին անվանում Թավրիզից 35 կիլոմետր հյուսիս գտնվող հայկական «Մուժամբար» գյուղը։ Սույն կալվածագիրը ամենայն հավանականությամբ գրվել է Մեղրիի մոտ գտնվող Օրդուբադ ավանում։ Հանդես եկող վկաները մեծ մասամբ տեղի բնակիչներից պետք է լինեն։ Ե. Լալայանը «Գողթնում» նշում է, որ Օրդուբադի հայերը հիմնականում 1827 թ. գաղթել են Մուժամբարից, Դուխարղանից և Թավրիզից (անդ, էջ 58)։ Մուժամբարցի հայերի որպես վկա հանդես գալը XVI դարի վերջերին գրված կալվածագրում, ենթադրել է տալիս, որ մուժամբարցիների կապը Օրդուբադի հետ ավելի հին պատմություն ունի։

Քիլվաքաշի արոտավայրի համար Մեղրիի համայնքը Սևադան գյուղի համայնքին վճարել է 7,5 թուման (75000 դինար), որը, ինչ-

պես բացատրված է կալվածագրում, բաղկացած է եղել «յոթ հարյուր հիսուն հատ մեկ մսխալանոց Մուհամմադյան դրամից»։ Բնագրում գրված է «زر محمدی یکمثقالی», որ բառացի նշանակում է «մեկ մսխալանոց մուհամմադյան ոսկի», սակայն «զար — زر» բառը, որ «ոսկի» է նշանակում, այստեղ ոսկ որպես «դրամ» է օգտագործված։ Խոսքը վերաբերում է Սուլթան-Մուհամմադ Խուրթանդեի (1578—1587 թթ.) կտրած 100-դինարանոց արծաթ դրամին։ Վավերագիր 24-ի ծանոթագրության մեջ ցույց ենք տվել, որ մսխալի մետրական կշռորդը 4,72 գրամն է։ Ուրեմն արոտավայրի համար վճարվել է 4,72×750 = 3540 գր. արծաթ։

Վավերագիր 27. Սույն պատճենը հավանաբար հանված է XVII դարի 50-ական թվականներին։ Իսկականի հետ ճիշտ լինելը հաստատող Շար'ի պաշտոնյայի կնիքի վրա մակագրված է. لا اله الا الله الملك الحق المبين عبده صلاح الدين—١٠٦٤ — Չկա այլ տեր Աստուծուց բացի, ճշմարտության Արքան, որի ծառան է Սալահ-էդդինը — 1064 (1654) թ.»։

Պատճենը հանված է խառը շիքաստե գրությամբ, որոշ տեղանուններ և անձնանուններ աղավաղված են։ Հատկապես դժվար է ճշտել Օշական գյուղի սահմանների նկարագրության մեջ հիշված անունները։

Սիմեոն Երևանցին վավերագրի մյուս էջում տվել է կալվածագրի համառոտ բովանդակությունը. «(ԺԶ) Այս Յօշականու Գ (3) **դանկ մլքի** և Մանկանոցի **շէշդանկ մլքի** հին **դաբալայի սավատ է,** զոր Սահաթլու Վալի-**բէկն** Թ (9) **թումանով** ծախեալ է Ալիփաւուտի տաճիկ Իբրահիմ **խալիֆային,** ի թուին տաճկաց Ռ (1000)։ Ի կողմանց Մանկանոցին Բ (2) **դաբալայք** ևս գոն, գոցես սոյն համարով»։ Այս մակագրությունը կատարված է հակառակ կողմից սոսընձած թղթի վրա։ Այդպես է արված ծածկելու համար բուն վավերագրի վրա նախապես կատարված ոչ ճիշտ մակագրությունը, որը սակայն լույսի տակ լրիվ ընթեռնելի է. «Այս Յօշականայ Գ (3) **դանկ մլքին** և Մանկանոցի շէշդանկ **մլքի դաբալայի սավատ է,** զորս սահաթլու վալի **բէկն** Թ (9) **թումանով** ծախեալ է Աբրահամ կաթուղիկոսին ( )։ Այսմ կողմանէ Բ (2) **դաբալայք** ևս գոն, զորս գոցես ԻԶ (26) և ԻԷ (27) համարով։ Կողմունք Մանկանոցին են այսոքիկ։ Փարբու գետն, Յօշական գիւղն, Սպիտակ ջուրն և Մեծ ճանապարհն։ Իսկ կողմունքն յօշականու երեք **դանկին**՝ Աշտարակ, Թափայն, Ղարաչ Բուռունն և ճանապարհն»։

«Ջամբռից» պարզվում է, որ այս կալվածագրի բնագիրը Սիմեոն Երևանցու օրոք գոյություն է ունեցել։ Իր գլխի «Ղապալայք Յօշականայ գեղջն, որ է մուլք սրբոյ Աթոռոյս» ենթագլխում, նույն 16 համարի տակ, խոսելով հիշյ. 1078 (1667—1668) թ. ժամանակին Օշականի թաղամասը համարվող Մանկանոցի վեց դանգ մուլքի մի զաբալայի մասին, անմիջապես ավելացնում է. «սորա հին ղապալայն ևս գիտ ցուցական և ԺԶ (16) համարովն»։ Իսկ սույն պատճենի մասին գրում է՝ «Սորա Ա (1) սաւաթ ևս գոյ. գիտ նոյն ԺԶ (16) համարովն» (էջ 258—259)։

Որոշ տարբերություն է նկատվում Օշական գյուղի սահմանների 1489 թ. մեծ կալվածագրում (վավ. 9) և սույն կալվածագրում տրված նկարագրության միջև։ Հիշյալ հնագույն կալվածագրում գյուղի չորս սահմաններն են. ա) Ղարաքիլիսան, բ) դեպի Կարբի տանող մեծ ճանապարհը, գ) դեպի մենաստանի վայրը հոսող և Շահվեր կոչվող առուն և դ) Աշտարակի հողերը։ Սույն կալվածագրի հետ համեմատվում են միայն բ և գ սահմանները, որոնք հիշատակված են «Աշտարակը» և «ճանապարհը» կարճ ձևով։ Եթե առաջին սահմանի «Ղարաքիլիսան» (ուր հավանաբար ներկայումս «Կոնդ» կոչվող սուր բլուրի վրա գտնվող ավերակ մատուռն է և Սիմեոն Երևանցու մոտ կոչվում է նաև «Հաջիլար») նույնացվի «Կարաբուրունի» հետ, ապա մյուս սահմանի՝ Ուրյանկուլիին վերաբերող անընթեռնելի բառը պետք է նշանակի «առու» կամ «գետակ», որովհետև հին կալվածագրում գ սահմանը մի առու է, որ կոչվում է «Շահվեր» և հոսում է մինչև «Թաքիայի (մենաստանի) վայրը»։ Սիմեոն Երևանցին ևս այդ սահմանի վրա հիշում է «Շաղվերթի ջուրն» («Ջամբռ», էջ 111)։ Ըստ Ալիշանի դա Անբերդից բխող ջուրն է, որ Բյուրականի ներքևով հոսելով խառնվում է Տեղերի գետի հետ և անցնում Լաղրևանով, որտեղից և սկսում է կոչվել «Շաղուերդ», ապա գնում և Օշականի ներքևում միանում է Քասախին («Այրարատ», էջ 156, 158)։

Այստեղ ևս վաճառող և գնող կողմերը XIV—XV դարերից Արարատյան երկրում հաստատված կրզըլբաշ սա՛ղլու և ալփավութ ցեղերի տիրող դասի ներկայացուցիչներից են (տե՛ս վավ. 21-ի ծանոթագրությունը)։

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն
ՀԱՐԿԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ

Աբվաբ-ե ջամ' — ابواب جمع *(արաբ.)* — *Հարկերի հաշվառման այն ձևն է, ըստ որի տվյալ հարկատու օբյեկտից, կամ գյուղական համայնքից, ինչպես նաև առանձին տնտեսական շրջաններից գանձվող բոլոր հարկերը մանրամասն հաշվվում էին և առանձին մատյաններում գրանցվելուց հետո դրամական արտահայտությամբ, ընդհանուր գումարով իմ մի էին բերվում և մտցվում նահանգային, երկրամասային կամ ընդհանուր պետական եկամուտների կամ բյուջեի մեջ։ Հարկերի այդ ընդհանուր գումարը երբեմն նաև կրճատ անվանվում էր «ջամ'» (գումար, հանրագումար)։*

Աղա — آغا *(թուրք.)* — *Պարոն, տեր մանր ֆեոդալներին և կրոսեր պաշտոնեությանը տրվող տիտղոս։ Հատկապես այսպես էին կոչվում քրդական և թուրքմենական խոշոր ցեղերի կամ ուլուսներին ենթակա մանր ցեղախմբերի այմաղների կամ թաիֆենների պարագլուխները։*

Ամիլ — عامل *(արաբ.)* — *«Ամալ — عمل» (գործ) բառի ենթակայական ձևն է, որ նշանակում է «գործ կատարող», «գործադրող»։ Սովորաբար այսպես էին կոչվում ֆինանսական-հարկային գործերը տնօրինող պաշտոնյաները, կամ որևէ հաստատության լիազոր-ներկայացուցիչներն ու վերակացուները, որոնք գործադրում էին ստացվող հրահանգները։ Այդպիսին էր նաև վավ. 8-ում և 9-ում հիշված Ամիր Քյամալ-էդ-դին Աբդին բեկը, որ հանդես էր գալիս, որպես «բեյթ-ուլ-մալի ամիլ» (عامل بيت المال)։*

Ամիր — امير *(արաբ.)* — *Բարձրաստիճան զորահրամանատար, ֆեոդալական ցեղային զորամիավորումների առաջնորդ։ Այս տիտղոսը տրվում էր նաև իշխանական լայն իրավունքներով օժտված տեղական ֆեոդալներին, ինչպիսիք էին, օրինակ, վավ. 5-ում և 7-ում հիշված Օրբելյան ամիր Սմբատը, նրա որդին ամիր Բեշքենը և թոռ՝ ամիր Ռուստամը։*

Ամիրզադե — امیرزاده *(արաբ.-պարսկ.)* — *Ամիրի որդի, իշխանազուն, XV դարում այսպես, հայկական աղբյուրներում «ամիրզա», երբեմն նաև կրճատ ձևով՝ «միրզա — میرزا» էին հորջորջվում թուրքմեն տիրակալների, հատկապես Կարա-կոյունլու սուլթանների որդիները։ Սովորաբար նրանք այդ տիտղոսով էին հիշվում նաև թագավորության շրջանում։ Վավերագիր 7-ում այնյա բեշքեն Օրբելյանի որդի Ռուստամը անվանված է «ամիրզադեյե Արման — امیرزاده ارمن», որ մենք թարգմանել ենք «հայոց իշխանազուն» (տե՛ս վավ. 7-ի ծանոթագրությունը)։ Մոտ երկու տասնամյակ առաջ գրված վավ. 5-ում նա հիշվում է որպես «ամիր Ռուստամ»։ Թվում է թե «ամիրզադե» տիտղոսը ավելի բարձր է եղել, քանի որ այդպես են կոչվել արքայազունները, նույնիսկ արքաները, որով ցանկացել են շեշտել նրանց տոհմիկ ծագումը։*

Այաք — آيآ *(արաբ.)* — *Ղուրանի գլուխների՝ «սուրաների» մեջ մտնող և մեկ ամբողջական միտք արտահայտող առանձին տասյակները կամ տուները։*

Աջամ — عجم *(արաբ.)* — *Արաբները այսպես էին անվանում պարսիկներին, սակայն ավելի ուշ արդեն և՛ արաբները և՛ թուրքերը և՛ քրդերը «աջամ» էին կոչում ոչ միայն պարսիկներին, այլ նաև նրանց դավանակից (շիա) ադրբեջանցիներին։ Այդ պարզ երևում է վավ. 5-ից, որտեղ կալվածագրի շարադրողը ադրբեջաներեն տեղանունները հիշատակելիս շեշտում է, որ աջամների լեզվով այն կոչվում էր «Դարաշայ» կամ «Կարագյոլ» և այլն։*

Բահրա — ճիշտը՝ բահրե — بهر *(պարսկ.)* — *Բաժանի նշանակում է մաս, բաժին։ Այսպես, իսկ պաշտոնական վավերագրերում փոքրացված ձևով «բահրաչե — بهرچه» էր անվանվում հողագործ գյուղացիության կողմից պետությանն ու կալվածատիրոջը հատուցվող հողային ռենտան, որի պետությանը հատուցվող մասը կոչվում էր «բահրաչե-յե դիվանի», իսկ կալվածատիրոջը կամ «մալիքին» հատուցվողը՝ «բահրաչե-յե մալիքանե»։*

Բահրաչե — بهرچه *(պարսկ.)* — *տե՛ս Բահրա։*

Բարձրագույն դիվան — ديوان اعلى (արաբ.) — Արքունիքին կից պետության ֆինանսական-հարկային կենտրոնական վարչությունը, իլխանական աղբյուրներում այն անվանվում էր «դիվան-ե բոզորգ — ديوان بزرگ» (մեծ դիվան), որը ենթարկվում էր «մեծ վեզիրին» կամ «սահիբ դիվանին» (صاحب ديوان)։

Բեկ — بيك (թուրք.) — Կրտսեր զինվորականությանն ու մանր ֆեոդալներին տրվող տիտղոս։ Հաճախ այն հատուկ անվան մաս էր կազմում ինչպես օրինակ վավ. 1-ում Ամիր-բեկ, Խազար-բեկ, վավ. 4-ում Բեկ-Ալի, Հաջի-բեկ։

Բեկլարբեկի — بيكلربيكى (թուրք.) — Այսպես էին կոչվում վիլայեթների զինվորական նահանգապետները, որոնք սովորաբար մեծարվում էին նաև «խան» տիտղոսով։ XVI—XVII դդ. Իրանում կային 13 բեկլարբեկիություններ, որոնցից հյուսիս-արևմտյան սահմանի վրա էին գտնվում Ազերբայջանի, Ղարաբաղի, Շիրվանի և Չուխուր-Սա'դի բեկլարբեկիությունները (տե՛ս. վավ. 4-ի ծանոթագրությունը), «բեկլարբեկիի» արաբերեն համանիշն է «ամիր-ուլ-ումարա» (امير الامرا), պարսկ. ձևով «միր-ե միրան» (ميران ميير), որ հիշեցնում է հայոց «իշխանաց-իշխան» հորջորջումը։

Բեյթ-ուլ-մալ — بيت المال (արաբ.) — Բառացի նշանակում է «գանձատուն»։ Խալիֆաթի շրջանում այսպես էր կոչվում արքունի գանձատունը («բեյթ-ուլ-մալ-ե մուսլիմին — بيت المال مسلمين»), որտեղ կուտակվում էր նվաճված երկրներից ստացվող ավարը։ Հետագայում, երբ կողոպուտի քաղաքականությունը փոխարինվեց սիստեմատիկ հարկահանությամբ և ստեղծվեցին «դիվանները» («դավավին-ալ-ամվալ — دواوين الاموال»), «բեյթ-ուլ-մալի» ֆունկցիաները սահմանափակվեցին միայն որոշ հոգևոր տուրքերի դանձումով և անժառանգ մեռնողներին պատկանող կամ սեփականատերերն անհայտ կալվածների պետականացմամբ և դրանց եկամուտների տնօրինմամբ։

Բոլոր վիլայեթներում կային «բեյթ-ուլ-մալի» վերակացուներ՝ «ամիլ» կամ «կազի», որոնք իլխանության շրջանից սկսած կոչվում էին «բեյթ-ուլ-մալչի»։

Դանգ — دانگ (պարսկ.) — Սկսած դեռևս IX—X դարերից յուրաքանչյուր հողային սեփականություն և կամ մուլքային գյուղերից ստացվող ամբողջ կալվածատիրական ռենտան դիտվում

էր որպես մի ամբողջություն և ծանրության մաներ միավոր «մբռխալի» նման (տե՛ս), տարբեր սեփականատերերի միջև տրոհվելու կամ առանձին հատվածներով առուծախի ենթարկվելու դեպքում, բաժանվում էր 6 հավասար մասերի, որոնք կոչվում էին «դանգ»։ Երբ ուզում էին շեշտել կալվածի ամբողջականությունը ասում էին «շեշդանգ — شش‌دانگ» (վեց դանգ)։ Դանգն իր հերթին բաժանվում էր 4 «թասուջի» (طسوج), իսկ թասուջը՝ 2 «հարբեի» (حبه — «հատիկ») կամ «շաիրի» (شعير — «գարի»)։ Այսպիսով մի ամբողջական կալվածը կարող էր բաժանվել 48 մանր մասերի՝ «շա'իրի»։ Պատահում էին նաև կես կամ քառորդ շաիրով առուծախի դեպքեր։ Պարսկական աղբյուրներում սովորաբար գրում են «دانگ» (դանգ), պատահում է նաև արաբական «دانق» (դանկ), հոգն. «دوانق» (դավանիկ) ձևով, իսկ հայկական աղբյուրներում հաճախ դանգի փոխարեն հանդիպում է «ստակ»։

Դարվիշ — درويش (պարսկ.) — Իսլամական որևէ աղանդի, միաբանության կամ եղբայրության պատկանող հավատացյալ։

Դինար — دينار (արաբ.) — Դրամական միավոր, որ հայկական աղբյուրներում անվանվում էր նաև «դեան» կամ «դիան»։ XVII դարում դրամական ամենափոքր միավորը եղել է 5 դինարը, որը կոչվել է «դաղբեկի» այնուհետև մեկ «փարան» հավասար էր 10 — դինարի, 20 դինարը կոչվում էր «բիսթի», 50 դինարը՝ «շահի», 100 դինարը «մահմուդի» կամ «սաննար», 200 դինարը՝ «աբասի», որը արծաթե դրամի հիմնական միավորն էր։ Եղել են նաև 1,5 աբասանոցներ՝ «սիսաննար (300 դինար), 2,5 աբասանոցներ (500 դինար), 5 աբասանոցներ (1000 դինար), խոշոր հաշվումները կատարվում էր «թումանով», որը հավասար էր 10,000 դինարի։ Արծաթե դինարի քաշը XV—XVII դդ. խիստ փոփոխական է եղել։ XVI դարի վերջերին դինարի քաշի մասին տվյալներ կան վավ. 24-ում և 26-ում (տե՛ս նույն վավերագրերի ծանոթագրությունները)։

Դուճի — دونكى (թուրք.) — Հողային տիրույթների ընդհանուր սահագումների ժամանակ թվարկվող այլ կարգի կալվածների շարքին հիշվում են նաև «դունքի» և «սունքի» (صونكى) կալվածները։ Տերմինների «սունք» և «դունք» արմատները թուրքերեն «դյոնմակ» (دونمق) «ետ դառնալ», «վերադառնալ» և «սյոն-

մակ» (صونمق) «խոնարհվել», «հպատակվել», «ենթարկվել» բայերի դերբայական ձևերն են։ «ى» («ի») վերջավորությունը պատկանելիություն ցույց տվող ածանց է։ Ուրեմն «դունքի» նշանակում է «վերադարձնելու», «վերադարձնելիք», իսկ «սունքի»՝ «ենթարկելու», «ենթարկելիք»։

Իսքանդար Մունշին խոսելով Յաղուբ խան Զուլկադարի Ֆարսում մղած կռիվների մասին ավելացնում է, որ նա «Ամբողջ Ֆարսի երկիրը միայն իր սեփականությունը կարծելով մի խումբ զուլկադարների մուլքերը, որոնց նա ոչնչացրել էր, իր սունքը դարձրեց և իր տիրապետությունների մեջ մտցրեց» (كل مملكت فارس را ملك طلق خود پنداشتند و املاك جمعى از ذوالقدران راكه مقتول ساخته بود جهة خود صونك نموده بحيطهٔ ضبط درآورد...)։ Տե՛ս ԹԱՄ, էջ 435։

Մի այլ տեղ նշելով կենտրոնական Իրանի Սավեի շրջանի հաքիմ Սուլթան Մա՛սում խանի անհնազանդությունն ու գործած հանցանքները, որոնց դեմ բողոքում էին նրա ենթակա մարդիկ և Սավեի ռայաթները, պատմում է թե ինչպես շահը ձերբակալում է նրան, որից հետո նրա ամբողջ «հարստությունն ու մուլքերը համարվում է Դիվանի սունքը» (اسباب ومتملكات او بصونك ديوان منسوب شد), ԹԱՄ, էջ 241—242։

«Սունք» տերմինին հանդիպում ենք նաև Արցախի մելիքների կողմից 1726 թ. Էլչի Իվան Կարապետին տրված գրություններում։ Նշելով իրենց հավատարմությունը Ռուսաց կայսրի նկատմամբ մելիքները հայտարարում են. «Այս գիրս դվինք վերայգրեալ էլչիպէկին հրամանոցն, խօսքէն թէ մալահաթէն դուս գանք, թագայօրէն խային լինինք և մեր ապրանք սունկ լինի» („Армяно-русские отнош. в XVIII веке", сборник док., том II, часть II, Ереван, 1967, док. 341, 351)։

Դինաստիական փոփոխություններին և երկարատև պատերազմական գործողություններին հաջորդող տարիներին կատարվող սուգումների ժամանակ պարզում էին բոլոր կալվածների պատկանելիությունը կամ «սուգում էին խալիսե մուլքերն ու սահմանված կալվածքները, կորուսյալ հարստությունները, սունքին և դունքին, սեփականատերերն անհայտ, բեյթ-ուլ-մալի և մուսուլմանների կարիքների համար ծախսվող եկամուտները» (վավ. 19, տե՛ս այս մասին նաև Առաջաբան, էջ 16)։ Այս ընթացքում էր հատկապես, որ

իրենց սեփականության իրավունքը հաստատող հողատերերի կալվածները հայտարարվում էին «դունքի» և վերադարձվում էին իրենց նախկին տերերին, իսկ «սեփականատերերն անհայտ» (مجهول المالك) կամ հակառակորդների (مخالفان) կալվածները հայտարարվում էին «սունքի» ու մտցվում դիվանի հողերի շարքը։

Ջիմմի — ذمى (արաբ.) — Բառացի նշանակում է «պարտապան»։ Այսպես էին կոչվում քրիստոնյա, հրեա և այլադավան մյուս հպատակները, որոնք ի տարբերություն մուսուլման հպատակների, բոլոր հարկերից ու պարտավորություններից բացի, վճարում էին նաև հատուկ գլխահարկ կամ «ջիզյա»։

Թասուջ — طسوج (արաբ.) — տե՛ս Դանգ։

Թուման — تومان (մոնղոլ.) — տե՛ս Դինար։

Իմամ — امام (արաբ.) — Մուսուլմանների հոգևոր առաջնորդ, կրոնապետ։

Լիվա — لواء (արաբ.) — Օսմանյան կայսրության մեջ նահանգները՝ էյալեթները կամ վիլայեթները բաժանված էին ավելի մանր վարչական միավորների, որոնք կոչվում էին «լիվա» կամ «սանջաք» (سنجاق), որոնք երկուսն էլ բառացի նշանակում են «դրոշակ»։ Լիվաների կառավարիչները կոչվում էին «մութասարիֆ» պինվորական կոչումով՝ «միր լիվա» (ميرِ لواء) կամ «սանջաքբեյի» (سنجاق بيگى)։

Որոշ աղբյուրներում լիվաները պարզապես անվանվում են «մութասարիֆլըք» («մութասարիֆություն»)։ «Լիվան» կամ «սանջաքը» ևս բաժանվում էր ավելի մանր վարչական միավորների՝ որոնք կոչվում էին «կազա»։

Խաբիբ — خطيب (արաբ.) — Մզկիթներում քարոզներ կամ կրոնական ճառեր արտասանող ճարտասան հոգևորական պաշտոնյա։

Խաթուն — خاتون (մոնղոլ.) — Ազնվական տիկին։

Խալիսե — خالصه (արաբ.) — Պետական հողերի որոշ տեսակ, որի եկամուտները XVI—XVII դարերում տնօրինվում էր նահանգային կառավարիչների՝ խանների ու բեկլարբեկիների կողմից։

Խալիֆե — خليفه *(արաբ.)* — Բառացի նշանակում է «հաջորդ», «փոխանորդ»։ Մուհամմեդից հետո այսպես էին կոչվում մուսուլմանների առաջնորդները, որոնք համարվում էին մարգարեի հաջորդը։ XV—XVII դդ. պարսկական աղբյուրներում և պաշտոնական վավերագրերում «խալիֆե» են անվանվում նաև հայոց կաթողիկոսները, որպես Քրիստոսի փոխանորդներ։ Սակայն «խալիֆե» հորջորջումը XVI դարում տրվում էր նաև կրզըլբաշ ցեղերի որոշ դերվիշական կրոնավորների, որոնք համարվում էին գլխավոր շեյխի փոխանորդներ։ Այդպիսիք են վավ. 23-ում և 25-ում հիշված «Իբրահիմ», «Յուսուֆջան», «Մանսուր» և «Ալի» խալիֆենները։

Խան — خان *(մոնղոլ.)* — «Ղան» (պետ, իշխան) տիտղոսն է, որով մեծարվում էին բարձրաստիճան զինվորականներն ու ամիրները։ XVI—XVII դդ. այս տիտղոսը շնորհվում էր միայն խոշոր ֆեոդալ-նահանգապետներին ու կուսակալներին՝ բեկլարբեկիներին *(տե՛ս)*։

Խոջա ճիշաը՝ խաջե — خواجه *(պարսկ.)* — Այսպես էին կոչվում խոշոր դրամատերերն ու մեծահարուստ վաճառականները։ Ֆեոդալական հիերարխիայում բարձր դիրքի հասած խոջաները հաճախ կառավարական ապարատում ֆինանսական պատասխանատու պաշտոններ էին գրավում, հասնելով մինչև «սահիբ դիվանի» (صاحب ديوان) աստիճանի։

Կազա — قضا *(արաբ.)* — *տե՛ս Լիվա։*

Կազի — قاضى *(արաբ.)* — *Շար՛իի հոգևորական դատավոր։*

Համեսալեղար — همه‌سالەدار *(պարսկ.)* — Տերմինը կազմված է «համեսալե» (ամենամյա) և «դար» (ունեցող) բառերից։ «Համեսալե» էր անվանվում պետական պաշտոնյաների և զինվորականության ոռճիկների հատուցման այն ձևը, ըստ որի ոռճիկ ստացողը իրավունք էր ստանում, ցնոր տնօրինություն, ամեն տարի նույն վայրի հարկերի հաշվից ստանալու իր ոռճիկի գումարը։ Այդպիսի իրավունքից օգտվողները կոչվում էին «համեսալեղար»։

Հանաֆյան — حنفى *(արաբ.)* — Այսպես են կոչվում այն մուսուլմանները, որոնք հետևում են Աբու-Հանիֆեի *(700—770 թթ.)* աղանդին։ Սուննի մուսուլմանների կեսից ավելին այս դավանանքն ունեն։

Հաջի — حاجى *(արաբ.)* — Մուսուլմանների գլխավոր սրբավայրը՝ Մեքքա այցելած հավատացյալ։ Այդ ուխտագնացությունը կոչվում է «հաջ» (حج), իսկ ուխտավորը «հաջի»։

Հասթ-օ-բուդ — هشت وبود *(պարս.)* — Բառացի՝ «կա և եղել է»։ Այսպես էր անվանվում ռենտայի հատուցման այն ձևը, ըստ որի ամեն տարի չափվում էր ամբողջ գյուղի բերքը և ստացված բերքի նախապես որոշված տոկոսը տրվում էր կալվածատիրոջը, կամ «մալիքին»։

Հաքիմ — حاكم *(արաբ.)* — Իշխանավոր։ Այսպես էին անվանվում հատկապես գավառների,— «նահիաների» կամ «մահալների» կառավարիչները, որոնք ունեին նաև դատական ֆունկցիաներ. երբեմն այս վերջին իմաստով հոգևորական դատավորներին ևս մեծարում էին «հաքիմ» հորջորջմամբ *(վավ. 4)*։

Ղաբալա, ճիշաը՝ ղաբալե — قبالە *(արաբ.)* — *Կալվածագիր։*

Ղոռչի — قورچى *(թուրք.)* — Սեֆևիների օրոք այսպես էին կոչվում հեծելազորի հատուկ զորամասերի զինվորները։

Ղուլամ — غلام *(թուրք.)* — «Ստրուկ», «ծառա»։ Այսպես կամ պարզապես «ղուլ» էին կոչվում այն հեծյալները, որոնք մեծ մասամբ կամ իրենք էին նոր մահմեդականություն ընդունել և կամ մեկ-երկու սերունդ առաջ մահմեդականություն ընդունած քրիստոնյաների զավակներ էին։ Սրանք կազմում էին շահի անձնական թիկնապահ զորամասը՝ «ղուլլար — قللر», որոնց ընդհանուր թիվը տարբեր աղբյուրների վկայությամբ տատանվել է 10—30 հազարի միջև։

Մալ — مال *(արաբ.)* — Գլխավոր եկամտահարկը, որ գանձվում էր եկամտաբեր կալվածներից ու ստացվածքներից։

Մալիք — مالك *(արաբ.)* — Սեփականատեր, անշարժ կալվածների, հատկապես գյուղերի տեր խոշոր կալվածատեր։ Համանիշներ՝ «մալլաք», «արբաբ»։

Մալիքանե — مالكانه *(արաբ.-պարսկ.)* — Հողային ռենտայի այն մասը, որ հատուցվում էր գյուղատիրոջ կամ մալիքին *(տե՛ս)*, լրիվ անվանումն է «բահրաշե-յե մալիքանե» (بهرهٔ چه مالكانه), համանիշներ՝ «մուլք», «ուջրաթ-ուլ-միսլ»։ *Տե՛ս Բահրա։*

Մահալ — محال *(արաբ.)* — Վարչական փոքր միավոր, Վիլայեթները բաժանվում էին մի քանի մահալի կամ նահիեի։

Մանալ — منال *(արաբ.)* — «Ինչք», «ստացվածք», «հարբսություն»։ Սկզբնաղբյուրներում և վավերագրերում երբեմն «մալ և ջհաթ» («մալոջհաթ») հարկային տերմինին փոխարինում է «մալ և մանալ» («մալոմանալ») տերմինը, որից կարելի է եզրակացնել, որ «մանալ»-ը փոխարինում էր «ջհաթ» կամ «մուքաուաջջեհաթ» տերմիններին։

Մելիֆ — ملف *(արաբ.)* — XV—XVIII դդ. մելիքներ էին կոչվում գյուղական կամ քաղաքային ավագները, որոնք ընտրվում էին համայնքի ավագների խորհրդի կողմից և ներկայացնում էին տվյալ համայնքը պետության և նրա պաշտոնյաների առջև, նրանք պատասխանատու էին համայնքից գանձվող հարկերի համար։ Արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում, հատկապես Արցախում և Սյունիքում մելիքությունը ժառանգական բնույթ ուներ։ Այստեղ մելիքները փաստորեն վերածվել էին մանր ֆեոդալ-իշխանների, և մեծ մասամբ սերում էին հին իշխանական տներից։ Նրանք հատուկ ինքնավարական արտոնություններ էին վայելում։

Մեվլա — مولا *(արաբ.)* «Տեր»։ Հոգևորականներին տրվող կոչում։ Հանդիպում է կոչական «մևլևանա» («մեր տեր») ձևով։ Ավելի գործածական է աղավաղ «մոլլա» (ملا) — ձևը։

Մեվլանա — مولانا *(արաբ.)* — տե՛ս մեվլա։

Մթկալ — متقال *(արաբ.)* — Բամբակյա, սպիտակ, խիտ գործված կտոր։

Միրզա — میرزا *(արաբ.-պարսկ.)* — «Ամիր զադե — امیرزاده (իշխանազուն) անվան աղավաղված ձևն է, երբ տրվում է անձնանունից հետո նշանակում է «տեր», «իշխան», «արքայազուն», իսկ երբ հիշվում է անունից առաջ՝ նշանակում է «գրագետ մարդ», «գպիր», «գրագիր»։

Մոլլա — ملا *(արաբ.)* — տե՛ս մեվլա։

Մուբաասադդի — متصدی *(արաբ.)* — Վերակացու։ Այսպես էին կոչվում դիվանական հարկային գործերի լիազոր ներկայացուցիչները՝ «մուքաասադդիան-ե ումուր-ե դիվանի — متصدیان امور دیوانی» *(վավ. 12)*։

Մուբավալի — متولی *(արաբ.)* — Խնամակալ, տնօրեն։ Այսպես էին կոչվում մզկիթների կամ վանքերի առաջնորդները։ Այդ

պաշտոնում գտնվելու ընթացքում, վանքապատկան կամ մզկիթապատկան բոլոր կալվածների ու այլ ստացվածքների իրավասությունը և դրանցից ստացվող եկամուտների տնօրինությունը ամբողջապես նրանց էր վերապահված։

Մուլ — ملك *(արաբ.)* — Սեփականություն, տիրույթ, ժառանգած կամ դրամով գնած անշարժ կալված կամ հող։

Մուլքնամե — ملك‌نامه *(արաբ.-պարսկ.)* — Սեփականության փաստաթուղթ, կալվածագիր, որևէ մուլքի պատկանելիությունը հաստատող վավերագիր։

Մուխալիֆան — مخالفان *(արաբ.)* — Հակառակորդներ։ Սովորաբար մուսուլմանները այսպես են անվանում կրոնի հակառակորդներին՝ ուղղափառ սունիներին, վավ. 12-ում այն կարող է նաև պետության հակառակորդների իմաստն ունենալ։

Մումայիզ — ممیز *(արաբ.)* — «Որոշող», «ճշտող»։ Այսպես էին կոչվում այն պաշտոնյաները, որոնք իշխանության կողմից լիազորված էին ստուգելու, չափելու և ճշտելու յուրաքանչյուր հարկային օբյեկտից գանձվող հարկերի քանակը։

Մուջթեհիդ — مجتهد *(արաբ.)* — Այսպես էին անվանվում իսլամական կրոնի խոշոր տեսաբաններն ու մեկնիչները։

Մուֆրադաթ — مفردات *(արաբ.)* — Հաշվապահական հատուկ մատյան, որտեղ գրանցվում էին տվյալ հաստատության բոլոր եկամուտները։

Մսխալ — مثقال *(արաբ.)* — Ծանրության մանր միավոր, որով կշռում էին թանկարժեք մետաղները։ XVI—XVII դդ. գոյություն են ունեցել երկու տարբեր քաշի մսխալներ, որոնցից մեկը կշռել է 4,72 գ, իսկ մյուսը, որ անվանվել է «սառաֆի մսխալ» (مثقال صرافی) հավասար է եղել 3,78 գրամի։ Տե՛ս վավ. 24-ի ծանոթագրությունը։

Յուրդ — یورد *(թուրք.)* — Հայրենիք, բնակավայր։ Քոչվոր ցեղերը այսպես էին անվանում այն վայրերը, որտեղ նրանք տարիներ շարունակ օգտագործում էին որպես ամառանոց, կամ ինչպես ասում էին «յայլամիշի» էին անում։

Նահիա — ناحیه *(արաբ.)* — Գավառ, շրջան։ Տե՛ս մահալ։

Շա'իր — شعیر *(արաբ.)* — տե՛ս Դանգ։

Շար՝ — شرع *(արաբ.)* — տե՛ս Շարիաթ։

Շարիաթ — شريعت *(արաբ.)* — Մուսուլմանական կրոնական օրենքներ և հաստատված նորմեր, որոնցով առաջնորդվում էր հոգևոր դասի բարձրագույն կրոնական-դատական ատյանը։ Այս հաստատությունը հաճախ անվանվում էր հենց այդ օրենքների անունով, սակայն աղբյուրներում, սովորաբար այն կոչվում է «շար՝»։ Շար՝ի հոգևոր դատարաններում էին քննվում մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջը քաղաքացիների միջև առաջացած վեճերը։ Այդ ատյանին կից կային նաև նոտարական գրասենյակներ՝ «մահզարներ», որտեղ տեղի էին ունենում անշարժ կալվածների առուծախի, վարձակալման, փոխատվության, ամուսնության և քաղաքացիների սոցիալական դրության վերաբերող այլ ակտեր, կազմվում էին արձանագրություններ և տրվում էին համապատասխան փաստաթղթեր և նոտարական պատճեններ։

Շեշդանկ — شش‌دانگ *(պարսկ.)* — տե՛ս Դանգ։

Ջամ՝ — جمع *(արաբ.)* — տե՛ս Աբվաբ-ե ջամ՝։

Ռայաթ — ճիշտը՝ ռաիյյաթ — رعيت *(արաբ.)* — Հպատակ, հարկատու ժողովուրդ, հատկապես այսպես էր անվանվում գյուղական աշխատավոր ժողովուրդը։

